ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ԼԻԶԻՆԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02 “Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում” մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԷԴՈՒԱՐԴ ՍԵՐԳԵՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
1.1 ՀՀ գյուղատնտեսության դրսևորման առանձնահատկությունները և ոլորտի բարեփոխումների իրականացումը 11
1.2 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդի վիճակի տնտեսական վերլուծությունը 25
ԳԼՈՒԽ 2 ԼԻԶԻՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
2.1 Լիզինգի պատմական զարգացման էվոլյուցիան և էությունը 51
2.2 Լիզինգի ձևերը և դրանց դասակարգման չափանիշները 74
2.3 Լիզինգի կիրառման միջազգային փորձի վերլուծությունը 90
ԳԼՈՒԽ 3 ԼԻԶԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
3.1 Հայաստանում լիզինգի ձևավորման ու զարգացման խնդիրները . 109
3.2 Լիզինգային գործունեության կիրառման հնարավորությունները և մեխանիզմները ՀՀ գյուղատնտեսությունում 129
3.3 Լիզինգի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 144
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 161
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 172

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը</u>: Շուկայական հարաբերությունների և սեփականության տարբեր ձևերի արմատավորումը, ձեռներեցների հարաբերական անկախությունը նոր խնդիրներ առաջադրեցին Հայաստանի Հանրապետության տնտեսագիտության առջև՝ կապված ամբողջ ազգային տնտեսության և նրա առանձին ճյուղերի ու ոլորտների արդյունավետության բարձրացման հետ: Հայաստանում իրականացվող տնտեսական բարեփոխումների արդի փուլում առավել հրատապ է դարձել հիմնական կապիտալի նորացման և բարեփոխման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով միջոցների ներգրավումը:

Հանրապետությունում, ֆինանսական միջոցների սղության պայմաններում, արտադրության վերազինումը կարող է իրականացվել ոչ միայն ավանդական տնտեսական մեխանիզմների կիրառումով, այլ նաև համաշխարհային տնտեսության մեջ լայնորեն օգտագործվող լիզինգի միջոցով:

Լիզինգը ֆինանսավարկային և վարձակալագույքային հարաբերությունների կառուցակարգ է, ձեռներեցության ձև, վարկավորման եղանակ և ներդրումների իրականացման պայմանագրային մեթոդ, որոնք լիզինգի շնորհիվ ինտեգրված են մեկ միասնական համակարգի մեջ: Լիզինգը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել ճկունություն ռեսուրսների ընտրության,արտադրության կազմակերպման և կառավարման հարցերում, որոնք հանդիսանում են ձեռնարկատիրական գործունեության իրականացման անհրաժեշտպայման:

Լիզինգն արդյունավետտնտեսական լծակներից է,որը կարող է ներգրավել միջոցներ, նպաստել արտադրության զարգացմանը, տնտեսության առանձին ճյուղերին հագեցնել կապիտալ, իրական աջակցություն ցուցաբերել փոքր և միջին ձեռներեցության, ապահովել կայուն եկամուտ առևտրային բանկերին, ինչի շնորհիվ երկրում կբարձրանա սոցիալ-տնտեսական ցուցանիշների

մակարդակը, կնվազի գործազրկությունը, աղքատության չափը և այլն:

Միջազգային փորձը լիովին ապացուցել է, որ լիզինգն ունի լայն հնարավորություններ արտադրական կարողությունների վերազինման, արտադրության միջոցների նորացման, մրցունակ արտադրանքի թողարկման, հայրենական արտադրության վարկանիշի բարձրացման գործում:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսվարող սուբյեկտների զգալի մասը ներդրումների համար ֆինանսական և տեխնիկական միջոցների խիստ կարիք ունի, ինչը հնարավորություն չի տալիս ձեռնարկություններին փոխարինել մաշված տեխնիկան և սարքավորումները նորերով:

Լիզինգը համարվում է ներդրումային գործընթացի կիրառման առաջադիմական մեթոդ, որը հնարավորություն է տալիս իրականացնել կապիտալ ներդրումներ արտադրության նյութատեխնիկական բազայի զարգացմանը և ընդլայնմանը, ինչպես նաև նպաստել շրջանառու միջոցների շրջանառելիության տևողության և ոչ նորմատիվային պահուստների կրճատմանը, արտադրանքի իրացման գործընթացի արագացմանը և այլն: Ծուկայական տնտեսավարման արդի պայմաններում, հանրապետության շատ կազմակերպություններ և տնտեսություններ, հատկապես ագրարային ոլորտի, խնդիրներ ունեն նյութատեխնիկական մատակարարման, դրանց բարձ գների հետ կապված հարցերի լուծման հետ, ինչը սեփական ռեսուրսների հաշվին լուծելը գրեթե անհնարին է:

Անժխտելի է, որ ժամանակակից տնտեսության զարգացումն անմիջապես կախված է գիտատեխնիկական առաջադիմության արդյունքների կիրառումից: Դրանց ներդրումն արտադրության մեջ նույնպես պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը պատկանում է անբարենպաստ ներդրումային դաշտ ունեցող երկրների շարքին, ինչի համար պահանջվում է ավելի ճկուն և համակողմանի մոտեցում,

ինչպես միջոցների ձեռք բերման, այնպես էլ դրանց արմատավորման հարցում: Այս իրավիճակում ամենաընդունելի և ամենաերաշ-խավորված մեթոդը համարվում է լիզինգը, որն արտադրողներին հնարավորություն է տալիս ձեռք բերել նոր սարքավորումներ և առաջադիմական տեխնոլոգիաներ առանց դրանց արժեքներին համապատասխան դրամական միջոցների առկայության:

Լիզինգը թեև լայն տարածում է ստացել աշխարհի շատ երկրներում, Հայաստանի համար որակապես նոր տնտեսական և իրավական կատեգորիա է, որը պահանջում է իրականացնել բազմակողմանի ուսումնասիրություն, ինչից էլ բխում է թեմայի արդիականությունը և պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- ✓ ՀՀ-ում համեմատաբար նոր է ձևավավերվել լիզինգային ծառայությունների շուկան, այն համարվում է դեռևս չկայացած,
- ✓ ազգային տնտեսության բոլոր ճյուղերում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, հիմնական կապիտալի տեխնիկական վիճակը գնահատվում է ֆիզիկապես և բարոյապես մաշված,
- ✓ գյուղատնտեսության ոլորտի առևտրային կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի մոտ առկա է ֆինանսատնտեսական անկայուն վիճակ,
- ✓ լիզինգային ծառայությունների շուկայի զարգացմանը խոչընդոտում են պետության տնտեսական բնույթի թույլ միջամտությունը և օրենսդրական դաշտի անկատարությունը,
- ✓ լիզինգը պարունակում է տնտեսավարման ֆինանսական, արտադրական, ներդրումային գործառույթներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տնտեսության առաջատար ճյուղերում ներգրավել անհրաժեշտ ռեսուրսներ,
- ✓ լիզինգի շուկան հանդիսանում է հեռանկարային նաև մասնագետների ընդգրկման հարցում՝ նպաստում է

ֆինանսատնտեսագիտական կադրերի զբաղվածության աստիճանի բարձրացմանը և այլն:

Ընդհանրապես շուկայական տնտեսավարման պայմաններում ավելի է արժեվորվում ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը: Այդ պատճառով լիզինգային կառուցակարգերով արդյունավետ ներդրումային ծրագրերը հնարավորություն են տալիս ներմուծել բարձորակ ու առաջավոր տեխնոլոգիական հատկանիշներով օժտված սարքավորումներ և հիմնական միջոցներ: Անցումային երկրների տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն են ստանում կապիտալի ներքին շուկայի ձևավորումը, բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը:

Լիզինգային գործունեության զարգացմանը խոչընդոտող գործոններից են իրավական դաշտի անկատարությունը, երկրում տիրող ներդրումային անբարենպաստ վիճակը, կադրերի և որակյալ մասնագետների պակասը, պետական թույլ միջամտությունը, լիզինգի միջազգային շուկային բնորոշ փորձի ոչ արդյունավետ կիրառությունը, ՀՀ վարկային կազմակերպություններում կառավարման արդյունավետության ցածր մակարդակը և այլն:

Հայաստանի ազգային տնտեսության և բանկային համակրգի համար լիզինգը համեմատաբար նոր ֆինանսական գործիք է, որի կիրառության մասշտաբների ընդլայնման համար՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ, ստեղծել օրենսդրական հիմք, խթանել զարգացումը և ձեռնարկել միջոցառումներ հանրապետության ագրարային ոլորտում լիզինգի համակողմանի ու շուտափույթ ներդրմանը:

Նշված հիմնախնդիրների որոշ մասը հետազոտվել են հայրենական և օտարերկրյա տնտեսագետների կողմից, ստացվել են համապատասխան գիտագործնական արդյունքներ, սակայն նրանցում դեռևս առկա են չլուծված հարցեր՝ կապված տեխնիկայի և տեխնոլոգիաների նորացման ու արմատավորման հետ: Դա հատկապես վերաբերվում է ագրարային ոլորտին, որում նշված հարցերի

լուծումը գտնվում է ավելի վատթար վիճակում, քան ազգային տնտեսության մյուս ճյուղերում են: Աշխատանքում քննարկված հիմնահարցերի զգալի մասը մեր հանրապետությունում չեն հետազոտվել ամբողջական և համակարգված ձևով, չեն կրկնում ուրիշների կողմից առանձին հարցերի շուրջ իրականացված ուսումնասիրությունները: Այս առումով ատենախոսությունը նվիրված է հիմնախնդրի բացահայտմանը, տնտեսագիտական վերլուծությանը, գնահատմանը, համարժեք միջոցառումների և լուծումների մշակմանը՝ նպատակ ունենալով նպաստել լիզինգի արմատավորմանը ՀՀ ագրարային ոլորտում:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները</u>: Հետազոտության հիմնական նպատակն է լիզինգային գործունեության վերլուծության հիման վրա բացահայտել ներդրումային այդ գործարքի առավելությունները, վեր հանել հանրապետության տնտեսությունում լիզինգի առանձնահատկությունները, լիզինգային շուկայի ձևավորման անհրաժեշտությունը գյուղատնտեսության զարգացման և գյուղացիական ձեռնարկությունների ու տնտեսությունների հիմնական կապիտալի նորացման գործում: Ատենախոսության նպատակն է նաև հետազոտել լիզինգի տնտեսական և իրավական հիմքերը, հիմնավորվելով դրա առավելությունները, մշակել համալիր առաջարկներ հանրապետության ագրարային ոլորտում լիզինգի ներդրմանը և խթանմանը՝ լիզինգային հարաբերությունների մասնակիցների գործունեության շահագրգռվածության բարձրացման գործում:

Առաջադրված նպատակի իրականացման համար աշխատանքում տրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել լիզինգի տնտեսական էությունը, լիզինգային գործառնությունների աստիճանաբար զարգացումը, դրանց առանձնահատկությունները և բնորոշ գծերը;

- ✓ ներկայացնել և վերլուծել ՀՀ վարկային շուկայում լիզինգային կազմակերպությունների մասնակիցների գործունեության շրջանակները,
- ✓ բացահայտել լիզինգային կազմակերպությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները և ներկայացնել բարելավման ուղիները,
- ✓ վերլուծել լիզինգի զարգացման նախադրյալները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում,
- ✓ բացահայտել լիզինգի արմատավորմանը խոչընդոտող գործոնները և դրաընդլայնման ուղիները,
- ✓ բացահայտել հանրապետությունում լիզինգային շուկայում իրավական դաշտի առկա բացթողումները, թերությունները և դրանց հիման վրա կատարել համապատասխան առաջարկություններ այդ դաշտի կատարելագործման ուղղությամբ:

<u>Հետազոտության օբյեկտ և առարկան:</u> Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսություններն ու լիզինգային կազմակերպություններն են, իսկ հետազոտության առարկան դրանց միջև առաջացող լիզինգային հարաբերություններն են՝ ուղղված լիզինգային շուկայի ձևավորմանը, արմատավորմանը և հետագազարգացմանը:

<u>Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը:</u> Ատենախոսության տեսական և մեթոդական հիմքեր են հանդիսացել տնտեսագիտության տեսության, լիզինգին վերաբերվող հայրենական ու արտասահմանյան հետազոտությունների գիտական աշխատանքները, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգը, իրավական ակտերը և բնագավառը կարգավորող նորմատիվ ակտերը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և համակարգային վերլուծության, պոզիտիվային և նորմատիվային, վիճակագրական նյութերի խմբավորման, հեղինակի սեփական դիտարկումների համար մշակված

մեթոդներն ու մոտեցումները: Աշխատանքում զետեղված տեսական դրույթները հիմնված են գիտական ուսումնասիրություններում տեղ գտած սահմանումների և բնութագրումների վրա, որոնք հիմք են հանդիսացել հետազոտության հիմնական սկզբունքների ձևավորման համար: Հաշվի են առնված նաև գյուղատնտեսության ոլորտի ու լիզինգային կազմակերպությունների մասնագետների կարիծիքները, նրանց կողմից առաջ քաշված դրույթները և մոտեցումները:

<u>Ատենախոսության համար տեղեկատվական հիմք</u> են ծառայել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերի պաշտոնական տվյալները, ՀՀ գյուղատնտեսական նախարարության, ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրատարկված տեղեկատվական նյութերը և հաշվետությունները, ինչպես նաև առանձին առևտրային բանկերի ու լիզինգային կազմակերպությունների հաշվետվությունները:

<u>Հետազոտության հիմնական գիտական նորույթը</u>:

Լիզինգային շուկայի վերլուծության փորձը Հայաստանում ամբողջովին չի ուսումնասիրված, դրա առանձին հիմնախնդիրների վրա հայ տնտեսագետների կողմից իրականացվել են որոշակի ուսումնասիրություններ, սակայն դրանք չեն կրում համակողմանի և ամբողջական վերլուծություն:

Աշխատանքում հանգամանալից հետազոտության են ենթարկել ագրարային ոլորտում լիզինգի արմատավորման հիմնախնդրները և որոնց արդյունքում էլ ձևավորվել է հետևյալ գիտական նորույթը.

- ✓ ելնելով լիզինգի համաշխարհային շուկայի ուսումնասիրության արդյունքներից հստակեցվել են ՀՀ գյուղատնտեսության ոլորտում լիզինգային գործարքների կնքման, դրանց գծով վճարումների հաշվարկման մեթոդաբանական հարցերը և կիրառման հնարավորությունները,
- ✓ հիմնավորվել է գյուղատնտեսական տեխնիկայի արդիականացման ու օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով կոոպերացիայի հենքով լիզինգային

գործունեության աջակցության հիմնադրամի ստեղծման անհրաժեշտությունը,

- ✓ հիմնավորվել է լիզինգային հարաբերությունների հետագա զարգացման նպատակով միջբանկային լիզինգային ընկերությունների ստեղծման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կընձեռի լիզինգի գծով իրականացվող ծրագրերի հիման վրա կենտրոնացնելու ֆինանսական կապիտալը, նվազեցնելու ռիսկի աստիճանը, դիվերսիֆիկացնելու գործունեության ոլորտը և արդյունավետ համագործակցելու օտարերկրյա գործընկերների հետ՝ օգտագործելով լիզինգային գործարքների տարաբնույթ ձևեր:
- ✓ առաջարկվել է պետության կողմից լիզինգային գործարքների մասնակիցների միջև տնտեսական շահերի կարգավորման գործում իրականացնել անհրաժեշտ համարժեք քաղաքականություն՝ լիզինգային ընկերություններին և առևտրային բանկերին օրենսդրորեն հարկային և վարկային արտոնություններ տրամադրելու, ազատ մրցակցային դաշտ ձևավորելու և օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով:

<u>Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը</u>: Կատարված հետազոտությունների և դրանց հիման վրա ստացած եզրահանգումների և առաջարկությունների տեսական ու գործնական նշանակությունը որոշվում է Հայաստանի հանրապետության ազգային տնտեսության անցումային շրջանում գոյություն ունեցող տնտեսական համակարգի պայմանների համար կիրառելի լիզինգային գործարքների ներդրման պահանջների հետ դրանց համապատասխանությամբ: Ճուտ տեսական առումով հետազոտությունում փորձ է արված կոնկրետ հարցադրումների և հիմնավորումների միջոցով նպաստել լիզինգային գործարքների առավելությունների բացահայտմանը և լիզինգային հարաբերությունների տեսության զարգացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառություն գտնել լիզինգային հարաբերությունները լուսաբանող այլ գիտական և ուսումնական աշխատանքներում:

Ատենախոսությունում կատարված առաջարկությունները կարող են օգտագործվել վարկային և լիզինգային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների, առևտրային բանկերի և այդ հիմնախնդրով հետաքրքրվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Ուսումնասիրության արդյունքում արված առաջարկությունները կարող են կիրառություն ստանալ հանրապետության գյուղատնտեսության ոլորտում: Հետազոտության արդյունքային դրույթները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների կողմից տնտեսական քաղաքականությունների մշակման, լիզինգային և ներդրումային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների, մասնագետների ու փորձագետների կողմից հետազոտությունների ժամանակ, ինչպես նաև գիտական աշխատողների, ասպիրանտների, ուսանողների և ուղղակիորեն այդ հիմնախնդրով զբաղվող մարդկանց համար:

<u>Հետազոտության արդյունքների փորձաքննություն և հրապարակում:</u> Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ԱԱՀ էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կազմակերպման և Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնների համատեղ նիստում:

Հետազոտության հիմնական արդյունքները և դրույթները հրատարակվել են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

<u>Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:</u> Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է նրա հետազոտության տրամաբանությամբ և խնդիրներով: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, շարադրված է 179 էջի վրա, ընդգրկում է 16 աղյուսակ և 9 գծապատկեր:

ԳԼՈՒԽ 1

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆՈՒ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1.1 ՀՀ գյուղատնտեսության դրսևորման առանձնահատկությունները և ոլորտի բարեփոխումների իրականացումը

Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգը ազգային տնտեսության առաջատար ոլորտներից է, որի առանցքային ճյուղը գյուղատնտեսական արտադրությունն է: Դրա համաչափ և կայուն զարգացմամբ է պայմանավորված գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացումը, գյուղի սոցիալ-տնտեսական իրավիճակի և իհարկե, ամբողջ երկրի հետագա զարգացումը:

Գյուղատնտեսությունը սննդի և թեթև արդյունաբերության համար թողարկում է գյուղատնտեսական ծագման հումք, իսկ երկրի բնակչության համար՝ պարենային ապրանքներ: Պարենամթերիքի նկատմամբ բնակչության պահանջարկը բավարարվում է գյուղատնտեսության զարգացման պայմաններում: Գյուղատնտեսական արտադրության հիմնական խնդիրը կայանում է պարենամթերքի ու գյուղատնտեսական հումքի նկատմամբ պահանջարկի բավարարման մեջ, որի լուծմանն է ուղղված տնտեսական քաղաքականությունը ոչ միայն գյուղատնտեսության, այլ նաև ամբողջ ագրոպարենային համալիրում:

Ագրոպարենային համալիրը միշտ էլ հանդիսացել է երկրի տնտեսության առաջատար ոլորտներից մեկը: Իսկ, երբ 1991 թվականից սկսած վարչահրամայական համակարգից աստիճանաբար անցում կատարվեց շուկայական տնտեսավարմանը, այդ ժամանակից սկսած իրականացվում են ոլորտի բարեփոխումները, որոնք վայրի-վերումներով տալիս են որոշակի արդյունքներ: Վերափոխումների սկզբնական փուլում կատարված միջոցառումները կրեցին "շոկային թերապիայի" մոտեցումները: Պետական սեփականության ապապետակա-նացումը և մասնավորեցումը իրականացվեց հապճեպորեն, որը թեև

ունեցավ բազմաթիվ բացասական հետևանքներ, այնուհանդերձ այդ ժամանակ ապահովեց պարենային ճգնաժամի որոշակի թեթևացմանը:

Հիշատակված պատճառները դարձան այն հիմնական խոչընդոտները, որոնք նկատվում էին տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքում շուկայական հարաբերություններին անցման շրջանում: Հանրապետությունում բարեփոխումների սկզբնական շրջանում առաջնային տեղ հատկացվեց շուկայական տնտեսավարմանն անցման առավել հիմնանար խնդիրներին՝ ապապետականացում և սեփականաշնորհում, գների ազատականացում, կառուցվածքային վերափոխումներ, անցում ազգային դրամին և այլն: Ագրարային ոլորտում բարեփոխումներն իրականացվեցին ոչ համակարգված ձևով՝ տարերայնորեն, շուկայական մեխանիզմի տարերրի պահանջներին չհամապատասխանող մոտեցումներով, որի հետևանքով պարենային շուկայում կրճատվեց առաջարկը պահանջարկի նկատմամբ, մեծացավ սոցիալական լարվածությունը, տեղի ունեցավ համարժեքայնության խախտում արդյունաբերական, էներգետիկ և գյուղատնտեսական ապրանքների գների միջև:

Անցումը շուկայական հարաբերություններին պահանջում էր այնպիսի նախապայմաններ, ինչպիսիք են ռացիոնալ ապապետականացումը, ապամենաշնորհումը և սեփականաշնորհումը, ապրանք արտադրողների տնտեսական գործունեության ազատության ու պետական միջամտության շրջանակների նեղացում: Բացի դրանից անհրաժեշտ էր շուկայական զարգացած ենթակառուցվածք, արտադրության միջոցների, աշխատանքի, հողի, ֆինանսական շուկաների (երկրորդային շուկաների) լիարժեք գործունեություն: Այս պարագայում առաջին հերթին անհրաժեշտ էր արմատապես վերափոխել վարչահրամայական համակարգի սեփականության ինստիտուտը՝ վերացնելով պետական սեփականության մենաշնորհը:

Տնտեսագիտորեն հիմնավորված է, որ տնտեսական բարեփոխումների առանցքը, բազան հանդիսանում են պետական միջոցների ապապետականացումը և մասնավորեցումը, քանի որ տնտեսական բոլոր հարաբերությունները ձևավորվում են սեփակա-

նատիրական հարաբերություններով: Դեռևս անցյալ դարի 70-90-ական թվականներին համաշխարհային տնտեսագիտությունը փաստեց ամբողջ աշխարհում պետական սեփականության անարդյունավետությունը, որի վերջակետը դրվեց 1990-ական թվականների սոցիալիստական համակարգի փլուզումով:

Պետական սեփականության ձևափոխման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այն իրականացվում է պրիվատիզացիայի տեսքով (լատ. privatus-մասնավոր), որը հաճախ կոչում են խաղաղ հեղափոխություն: Ներկայումս այդ գործընթացին մասնակցում են ավելի քան 50 երկիր՝ վաճառվում է պետական ձեռնարկությունները, գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը դուրս է բերվում պետական հսկողությունից, վարձակալության է տրվում կառավարական ծառայությունները: Սեփականաշնորհումը ստացել է համընդհանուր տարածում Եվրոպայում, քանի որ պետական սեփականությունը չբերեց սպասվելիք արդյունքները[1]: Դրա համար, համատարած ձեռնարկվեց պետական միջոցների մասնավորեցում, կիրառելով տարբեր մեթոդներ:

Այսպես, Գերմանիայում, նրա միավորումից հետո, գործում էր մեկ սկզբունք՝ առք ու վաճառք, ոչ մի բաշխում: Հունգարիայում կառավարությունը խիստ կերպով որոշել է՝ միայն վճարման միջոցով: Լեհաստանում առաջարկվում է սեփականաշնորհման երեք ուղի: Առաջին, կապիտալացում՝ խոշոր պետական ձեռնարկությունները վեր են ածվում բաժնետիրական ընկերությունների և ապա վաճառվում բաժնետոմսերը, երկրոդ, վնասով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունները վաճառվում են աճուրդի միջոցով, երրորդ, ինվեստիցիոն կուպոններ՝ (մեր սերտիֆիկատների նման) անվճար բաշխում: Ռումինիայում 30 %-ը բաշխվում է անվճար, մնացածը վճարման միջոցով Լիտվայում իրականացվում է աճուրդով՝ բաժնետոմսերի բաց բաժանորդագրումով:

[1] Борисов Е.Ф. Экономическая теория. Юрист. Москва, 1997, էջ 97

Ռուսաստանի Դաշնությունում հիմնականում սեփականաշնորհումը իրականացվեց վաուչերների միջոցով:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ սեփականաշնորհումը իրականացվում է երեք տարբերակներով: Մի դեպքում պետական սեփականությունը դառնում է վերջին հաշվով մասնավոր սեփականություն, մյուս դեպքում՝ առանձին անձինք ձեռք են բերում պետական բաժնետոմսեր և դառնում այդ բաժնետիրական ընկերության անդամ, երրորդ դեպքում պետական բաժնետոմսերը ձեռք են բերում մասնավոր կորպորացիաները:

Խոշոր տնտեսական միավորումները բաժանեցին մասերի, որպեսզի հասանելի լինի անհատ սեփականատիրոջը, ինչն ագրարային ոլորտում փոշիացրեց անասնապահությունը, գյուղատնտեսական տեխնիկական, ենթակառուցվածքների զգալի մասը՝ պահեստներ, մեքենատրակտորային կայաններ, անասնագոմեր, ոռոգման համակարգը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման գործընթացը սկսվեց 1990 թվականի հոկտեմբերի 31-ին, երբ Գերագույն խորհուրդը ընդունեց “Հայաստանի Հանրապետության սեփականության մասին” օրենքը, որը հիմք ծառայեց բոլոր տեսակի սեփականությունների ձևավորման համար:

Պետք է նշել, որ սեփականաշնորհման բնագավառում ձեռք բերված համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այդ գործընթացի իրականացումն արդյունավետ լինում երկու դեպքում.

1. Եթե տվյալ երկրում գոյություն ունի արտադրության գործոնների զարգացած շուկաներ;
2. Սեփականաշնորհումն իրականացվում է տնտեսության վերելքի պայմաններում:

Հասկանալի է, որ մեր հանրապետությունում նշված երկու պայմաններն գոյություն չունեին, դեռ ավելին չկար տնտեսության կայունացման տեսանելի միտումներ, երկիրն ընկղմված էր խոր տնտեսական ճգնաժամի մեջ:

Հայաստանում սեփականաշնորհման գործընթացը սկսվեց գյուղատնտեսությունից՝ հողի, անասնաբլխաքանակի, գյուղատնտեսական կառույցների, տեխնիկայի և մյուս հիմնական միջոցների օտարումով: Սեփականաշնորհումն իրականացվեց հապճեպորեն, առանց նախօրոք ուսումնասիրության և վերլուծության, չկատարվեց հիմնովին գույքագրում, առավել ևս հիպերինֆլյացիայի պայմաններում հնարավոր չէր ստույգ գնահատել սեփականաշնորհվող օբյեկտների արժեքը, այդ պատճառով էլ շատ ձեռնարկություններ, դրանց կապիտալը, հիմնական միջոցները, հարստությունը դարձան ճարպիկ գնորդների ավարներ՝ չնչին գումարներով:

Ագրարային ոլորտում սեփականաշրոհման տնտեսական քաղաքականության ամենամեծ բացթողումն այն էր, որ ճյուղի սեփականաշնորհմանը զուգահեռ չսեփականաշնոհրվեցին գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպություն-ները և սննդի արդյունաբերության ձեռնարկությունները: Դրա հետևանքով անհամապատասխանություններ առաջացան մասնավոր սեկտորի և պետության միջև, մասնավորապես պետական մթերումների դիմաց տնտեսություններին հասանելիք գումարները չվճարելու, մատակարարման գծով պարտավորությունների չկատարման և մի շարք այլ հարցերի շուրջը:

Այստեղից կարելի է կատարել մասնակի եզրակացություն, համաձայն որի, հապճեպ և չհիմնավորված սեփականաշնորհումը սկզբից որոշակի կործանեց գյուղատնտեսությունը, իսկ վաուչերային սեփականաշնորհումը՝ արդյունաբերությունը: Վաուչերային սեփականաշնորհման հիմնական փաստարկը կայանում էր նրանում, որ հետսոցիալիստական երկրների բնակչությունը չուներ համապատասխան չափի ֆինանսական միջոցներ, որպեսզի վճարեին ձեռք բերվող գույքի դիմաց: Սակայն գոյություն ունեին այլ ուղիներ, որոնց կիրառումով ավելի քիչ կորուստներով կարելի էր հասնել մեծ արդյունքների: Դրանցից էր առաջին հերթին վարկը, որովհետև պարտադիր չէր, որ այն ներկայացնի երրորդ

կողմը: Այստեղ պետությունը կարող էր հանդես գալ որպես վարկատու, իսկ գույք ձեռք բերողները վարկը կարող էին մարել տարիների ընթացքում և մինչև վարկի մարումը բաժնետոմսերի ձևով կպահվեն վաճառողի՝ տվյալ դեպքում պետության մոտ: Այս դեպքում գնորդը շահագրգռված կլինի մարելու վարկը և դառնալու իսկական սեփականատեր:

Սեփականաշնորհման գործընթացի վերլուծությունն առաջ է բերում կոնկրետ հարցադրում: Հայաստանի Հանրապետությունն ուներ արդյոք սեփականաշնորհման այլընտրանքային տարբերակ: Միանշանակ կարելի է ասել այո, եթե Հայաստանի այն ժամանակվա իշխանությունները տեղյակ լինեին լիզինգի մասին: Այսպես, դեռևս վերակառուցման տարիներին Խորհրդային Միությունում մշակվել էր "վարձակալություն գնման իրավունքով" մասնավորեցման մեթոդը, որն ուներ սեփականաշնորհման փուլային մոտեցումներ: Միայն 1987-1989 թվականներին Հայաստանում վարձակալված էր գյուղմթերքների վերամշակման, առևտրի, կենցաղային սպասարկման տասնյակ օբյեկտներ, որոնց մի մասը հետագայում սեփականաշնորհվեցին և հաջողությամբ գործում են ներկայումս, բացելով նոր աշխատատեղեր և վճարելով հարկեր ու հատկացումներ պետական նաև տեղական բյուջեներին: Օրինակ, ագրարային ոլորտում 2001 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում է 45 ձեռնարկություն, հիմնականում սննդի արդյունաբերությունում, որոնք մասնավորացվել են "վարձակալություն գնման իրավունքով" սկզբունքի վրա Օրինակ, ագրարային ոլորտում 2001 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում է 45 ձեռնարկություն, հիմնականում սննդի արդյունաբերությունում, որոնք մասնավորացվել են "վարձակալություն գնման իրավունքով" սկզբունքի վրա[2]:

Բարեփոխումների սկզբնական փուլում այդ ծրագիրն ընդհատվեց, քանի որ պետական սեփականության մի մասը պետք է թողնվեր վաուչերային սեփականաշնորհման համար, ինչն ավելի

[2] ՀՀ Գյուղատնտեսության նախարարության տվյալներից

շուտ հարվածեց գյուղմթերքների վերամշակման և սննդի արդյունաբերության ձեռնարկություններին, դրանով իսկ նաև ամբողջ գյուղատնտեսական արտադրությանը: Այսպիսով, հանրապետությունն այդ ժամանակ ուներ մասնավորեցման առավել արդյունավետ եղանակ, հանձինս՝ վարձակալության գնման սկզբունքով, որը կարող էր դառնալ սեփականաշնորհման հաջող նախագծերից մեկը, ինչպես արագության, այնպես էլ խորության իմաստով: Այնուամենայնիվ այն հերքեց որոշ "իշխանավորների" կողմից՝ արևմտյան խորհրդատուների հավանության ու պարտադրանքի ներքո:

Ագրարային ոլորտը միշտ էլ պահանջում է անընդհատ բարեփոխումներ, կախված նրա բնորոշ գծերից և առանձնահատկություններից: Վերջին տարիներին ոլորտում իրականացվող տնտեսական վերափոխումների արդյունավետության բարձրացման, շուկայական տնտեսության իրավահարաբերությունների արմատավորման, տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման և մի շարք այլ գոր-ծոնների կիրառման շնորհիվ, անհրաժեշտ նախադրյալներ են ձևավորել ագրարային ոլորտի կայուն զարգացման համար: Համակարգի համալիր զարգացումը մշտապես պայմանավորված է նրա հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության համաչափ զարգացմամբ, ի նկատի ունենալով տնտեսության այդ հատվածում բնական, աշխատան-քային ռեսուրսների առկա հնարավորությունը և այն փաստը, որ գյուղական բնակչության հիմնական մասի կենսամակարդակի բարձրացման աղբյուրը հանդիսանում է գյուղատնտեսությունից և գյուղմթերքների վերամշակումից ստացված եկամուտները:

Ներկայումս շուկայական տնտեսավարման պայմաններում, երբ հիմնովին փոխվել են գյուղատնտեսական արտադրության, հողօգտագործման համակարգերը, մշակովի հողատարածքները մասնատվել են շուրջ 1200 հազար հողակտորների, մեծ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկման ենթակառուցվածքների արդիականացումը:

Սեփականաշնորհման և աստիճանաբար հողային բարեփոխումների իրականացման ընթացքում զգալիորեն փոխվել են հողօգտագործման ձևերը, որոնք առաջին հերթին բխում են հողասեփականության և հողօգտագործման կատեգորիաների համատեղ կիրառման հետ: Դրանց միջև ձևավորվեցին տնտեսական որոշակի հարաբերություններ՝ կապված հողի սեփականության, վարձակալության և եկամտի բաշխման ու օպտիմալ օգտագործման հետ: Հողի բազմասեփականության և օգտագործման տարբեր ձևերի հետ առաջացան նոր հասկացություններ՝ տնօրինում, տիրապետում, օգտագործում, կառավարում, վարձակալում, սերվիտուտ, հիպոտեք և այլն:

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդերի մեջ գերակշռող են պետական սեփականության հողերը, որոնք հիմնականում ընդգրկում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածքներ, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում պատկանում են գյուղացիական անհատական տնտեսություններին, որոնց վրա էլ իրականացվում է արտադրությունը:

Հայաստանի Հանրապետությունը խիստ սակավահող երկիր է, ընդհանուր հողատարածքը կազմում է 2974259 հա 1 շնչին բաժին ընկնող հողային տարածքի ցուցանիշով՝ 0,4 հա, ՀՀ-ն աշխարհում զբաղեցնում է վերջին տեղերից մեկը: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, ըստ հողատակային նշանակության տարբերակվել են բնակավայրերի, գյուղատնտեսության, արդյունաբերության, ընդերքաօգտագործման և այլ արտադրական նշանակության, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողեր:

Գյուղատնտեսական նշանակության հողեր են գյուղատնտեսության կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեության ծավալելու նպատակով

մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման և այլն:[3]

Գյուղատնտեսությունն ազգային տնտեսության այն ոլորտն է, որն ավելի շատ է ենթարկվում բնական և մարդկային գործոնների ազդեցությունը: Դրա համար էլ այստեղ ստացված արդյունքների մակարդակների տատանումները առավել զգալի են լինում, քան նյութական արտադրության մյուս ոլորտներում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում առաջավոր տեխնոլոգիաների օգտագործումը բերում է տնտեսավարող սուբյեկտների թվի կրճատմանը, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին՝ զբաղվածների թվաքանակի կրճատմանը: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նման օրինաչափությունները չունեն ցայտուն դրսևորումներ, քանի որ փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարումը պետք է նպաստի շուկայական ենթակառուցվածքների ընդլայնմանը և մրցունակության բարձրացումը:

Համակարգի հետագա զարգացմանը խոչընդոտում է մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը, հողաբաժինների մասնատվածությունը, հարաբերական սակավությունը ու սակավաջրությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, ենթակառուցվածքների թերզարգացվածությունը և այլն: Այստեղ տեղին է բերել ՀՀ գյուղատնտեսության նախկին առաջին փոխնախարար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ավետիսյանի դիպուկ գնահատականը. “Եթե բիզնեսի մյուս ոլորտներում գործարարը տարբեր պատճառներով տանուլ է տալիս, ապանավատագույն դեպքում սնանկանում է ու հեռանում բիզնեսից: Գյուղատնտսության մեջ այդ երևույթը, բացի տնտեսական հետևանքից, նաև սոցիալ-ժողովրդական լուրջ հիմնախնդիրներ է

[3] “Գյուղատնտեսական Հանրագիտարան”, ՀՀ ԳԱԱ. Եր., Հայկական հանրագիտարան հրատ., 2015, էջ 10

ստեղծում: Այս ոլորտում ցածր եկամտաբերությունը և տարբեր ռիսկերի ազդեցությամբ պայմանավորված վնասները գյուղացուն ուղղակիորեն հարկադրում են հեռանալ գյուղից: Ուստի, բնավ պատահական չէ, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում շատ երկրներում ընդունվում է գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալության սկզբունքը և պետության ագրարային քաղաքականությունը համապատասխանեցվում այդ սկզբունքի պահանջներին: Այսինքն գյուղատնտեսությունը դիտարկվում է ոչ թե որպես նյութական արտադրության սովորական, այլ առանձնահատուկ ոլորտ, որի գործառույթը չի սահմանափակվում միայն գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ: Այդ կարևոր առաքելության հետ միասին, գյուղատնտեսության կայուն զարգացումն ապահովում է գյուղական տարածքների զարգացում, գյուղական լանդշաֆտների և ռեկրացիոն ռեսուրսների, գյուղի որպես ազգային դիմագծի, կենցաղի, ավանդույթների ու ծեսերի սկզբնական կրողի պահպանությունը ու զարգացում»[4]:

Գյուղատնտեսության ոլորտում արդյունավետ տնտեսական քաղքականություն վարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գյուղատնտեսությանը: Դրանք բազմաթիվ են, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Գյուղատնտեսությունում գործում են մրցակցային բազմաթիվ սուբյեկտներ, որի պատճառով ճյուղը դառնում է կատարյալ մրցակցային, (բացառությամբ այն դեպքերի, երբ շուկա են ներխուժում վերավաճառողներ, խեղաթյուրում ազատ մրցակցության հատկանիշները, որի դեպքում տվյալ շուկան դառնում է ոչ կատարյալ՝ չենթարկվելով շուկայական մեխանիզմի տարրերի պահանջներին): Գյուղատնտեսական ազատ մրցակցային շուկաներում վաճառողները և գնորդները հանդես են գալիս ոչ թե գին կազմավորողներ, այլ գին

[4] Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր.,: "Լիմուշ", 2010, էջ 27

վերցնողներ, քանի որ շուկան է սահմանում գինը առաջարկի և պահանջարկի հիման վրա:

2. Գյուղատնտեսական արտադրության կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ արտադրության հիմնական գործոնը՝ հողը, լինելով բնության բարիք, սահմանափակ է, որի հետևանքով գյուղատնտեսական մթերքների առաջարկի ճկունությունը թույլ է, իսկ հողի բերքատվության տարբեր աստիճանների պատճառով, այս ոլորտում ձևավորվում են ռենտային հարաբերություններ: (Հիմնականում դիֆերենցիալ ռենտա 1-ինը կապվում է հողի բնական բերրիության և իրացման շուկաների հեռավորությունների տարբերությունների առկայության հետ): Հողի սահմանափակությունը պահանջում է ճյուղի զարգացումն ապահովել ինտենսիվացման ճանապարհով, ասինքն՝ միավոր հողատարածության վրա կիրառել ավելի շատ կապիտալ և աշխատանք: Հետևաբար ագրարային քաղաքականությունն մշակելիս պետք է նկատի ունենալ, որ գյուղատնտեսության մեջ ներդրված միջոցներից ստացվող արդյունքները կարող են փոքր լինել և ուշ փոխհատուցվել: Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես հարկային և ներդրումային քաղաքականությունն իրականացնելիս:

3. Գյուղատնտեսական արտադրության իրականացումը հիմնականում կողմորոշվում է բնակլիմայական պայմաններով: Բանն այն է, որ հողն ունի ունիվերսալ հատկություն՝ նույն հողակտորի վրա կարելի է աճեցնել բազմատեսակ մշակաբույսեր, սակայն հողի բաղադրության և կլիմայի տարբերությունների պատճառով ապահովվում է բերքատվության տարբեր մակարդակներ: Այստեղ խնդիրն այն է, որ յուրաքանչյուր հողատարածության վրա աճեցվի այնպիսի մշակաբույս, որը կապահովի բարձր արդյունավետություն:

Այս առանձնահատկության պատճառով լինում են բարենպաստ և անբարենպաստ տարիներ, այսինք ժամանակի մեջ

արդյունքները տատանվում են, ինչը նշանակում է, որ պետք է գյուղատնտեսական արտադրությունն ապահովագրել կայուն արտադրական միջոցներով, իսկ շուկայական առաջարկի ու պահանջարկի հարաբերությունը կարգավորել պետական միջամտությամբ: Դա կարելի է, մի կողմից երաշխավորված գներով պետական գնումներ կատարելու, իսկ մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքների պետական պաշարներ ստեղծելու միջոցով:

4. Բնակլիմայական առանձնահատկություններով է պայմանավորված նաև գյուղատնտեսական արտադրության սեզոնայի նբնույթը: Դա առաջին հերթին բերում է աշխատանքային ռեսուրսների և հատկապես գյուղատնտեսական տեխնիկայի (կոմբայներ, տրակտորներ և այլն) անհավասարաչափ օգտագործմանը տարվա ընթացքում, ինչպես նաև այն հանգամանքը, որ գյուղմթերքը հիմնականում արտադրվում են անհավասարաչափ տարվա ընթացքում, սակայն դրանց հանդեպ պահանջարկը ամբողջ տարվա ընթացքում կամ կայուն է (հաց, մսամթերք, կաթնամթերք), կամ էլ շեղվում է քիչ չափերով (միրգ, բանջարեղեն, ձավարեղեն, կարտոֆիլ և այլն):

   Քանի որ տարվա տարբեր ժամանակահատվածներում արտադրված գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերը տարբեր են, դրա համար գնային քաղքականությունը պետք է ուղղված լինի գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի և պահանջարկի հարաբերակցության սեզոնային գործոնի ազդեցության մեղմացմանը:

5. Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից է նաև այն, որ դրանում գործող տնտեսությունները համեմատաբար փոքր են և ՀՀ-ում հիմնականում կազմավորված են գյուղական մեկ ընտանիքի շրջանակներում: Այդ հանգամանքը դժվարեցնում է գյուղատնտեսական արտադրության մեքենայացումը, մելիորացումը, ոռոգման իրականացումը և այլն: Փոքր

հողակտորների վրա, առավել ևս ձեռքի աշխատանքի հիման վրա դժվար է ոչ միայն ապրանքային արտադրություն ապահովել, այլ, ընդհանրապես արդյունավետ արտադրություն կազմակերպելը: Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման դժվարությունները, դրանց սպասարկման և շահագործման թանկության պայմաններում, գյուղատնտեսությունը վարողները շատ դեպքերում հարկադրված են լինում անմշակ թողնել իրենց հողերը և նույնիսկ հրաժարվել հողի սեփականության իրավունքից:

Այս իրավիճակում գյուղատնտեսության արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել գյուղացիական տնտեսությունների խոշորացում, որը հնարավոր է կոոպերացման միջոցով: Մեր կարծիքով, սկզբնական փուլում անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման կոոպերատիվներ, միավորելով համայնքում առկա տեխնիկան մեկ կոոպերատիվի շրջանակներում: Ֆինանսական ռեսուրսների սղության պայմաններում, դա այնուհետև հնարավորություն կտա լիզինգի միջոցով ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ վարձավճարային սկզբունքով օգտագործել ամբողջ համայնքին և նույնիսկ նրա շրջանակներից դուրս ծառայություններ մատուցել:

6. Գյուղատնտեսական արտադրության ամենահիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ դա իրականացվում է կենսաբանական օրենքների պահանջների շրջանակներում, որի պատճառով արտադրության գործընթացը տևում է բավականին երկար, զգալի ժամանակային տարբերություն կա աշխատանքի իրականացման և արտադրության ընդհանուր տևողության միջև: Դա բերում է աշխատանքի ու կապիտալի օգտագործման արդյունավետության կրճատմանը և, որ ամենակարևորն է կապիտալ ներդրումների լագի*

* "Լագը" տնտեսագիտության մեջ կոչվում է կապիտալ ներդրումների ետգնման ժամկետ

երկարացմանը, այն է ներդրվախ միջոցների փոխհատուցման ձգձմանը:

7. Բացի նշված առանձնահատկություններից, գյուղատնտեսական արտադրությունն ունի նաև մի շարք բնորոշ գծեր, որոնցով այս ոլորտը տարբերվում է ազգային տնտեսության մյուս ճյուղերից, մասնավորապես.[5]

- ✓ գյուղատնտեսության մեջ արտադրությունից ստացված արտադրանքի մի մասը մասնակցում է վերարտադրության գործընթացին, օրինակ սերմերը, մատղաշը և այլն;
- ✓ գյուղատնտեսական արտադրությունը կրում է համալիր բնույթ, քանի որ նույն արտադրությունից ստացվում է միաժամանակ տարբեր տեսակի մթերք, որն էլ առաջացնում է ըստ արտադրատեսակների ծախսերի բաշխման բարդություններ;
- ✓ գյուղատնտեսությունը բաղկացած է երկու խոշոր ենթաճյուղերից՝ մշակաբուծությունից և անասնաբուծությունից, որոնց միջև պետք է ապահովել օպտիմալ համամասնություն և այլն:

Այս ամենը ևս մեկ անգամ հաստատում է, որ գյուղատնտեսական արտադրությունը նման չէ մյուս արտադրություններին, այն կարիք ունի բարեփոխումների և կատարելագործման, նրա հանդեպ պետք է ցուցաբերել մշտապես ուշադրություն տնտեսավարման բոլոր մակարդակներում՝ սկսած գյուղապետարաններից մինչև երկրի կենտրոնական կառավարություն:

Հաշվի առնելով, որ ագրարային ոլորտը մշտապես կարիք ունի բարեփոխումների, ՀՀ Կառավարությունը 2008 թվականին մշակել է «գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» հայեցակարգ,[6] որում նշվում են երկրի գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

---

[5] "Տնտեսագիտության տեսություն" դասընթացի սեմինար պարապմունքների մեթոդական ձեռնարկ: Եր., ՀՊԱՀ, 2008, էջ 152

[6] "Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մասին" ՀՀ կառավարության 2008 թ. որոշում

- ✓ գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարման տարբեր ձևերի ձևավորման դանդաղ ընթացքը: Ներկայումս հանրապետությունում գյուղատնտեսությունը վարվում է փոքր հողակտորների վրա, որը հնարավորություն չի ընձեռնում իրականացնել արդյունավետ տնտեսավարում և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում;
- ✓ գյուղատնտեսական հողատարածքների, մասնավորապես՝ վարելահողերի շուրջ 30% ոչ նպատակային օգտագործումը, գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքի բարելավման անհրաժեշտությունը;
- ✓ գյուղատնտեսության ճյուղում զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակի (տնտեսության մեջ զբաղվածների 45,8 %-ը) հետ մեկտեղ գյուղատնտեսությունում աշխատուժի թերբեռնված և ցածր արդյունավետությամբ օգտագործումը;
- ✓ գյուղատնտեսության ինտենսիվացման դեռևս ցածր մակարդակի, սերմնաբուծության և տոհմային գործի կազմակերպման համակարգի անկատարության, արտադրության գործընթացում ագրոտեխնիկական ու անասնապահական կանոնների խախտման հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության ցածր մակարդակը,
- ✓ ագրոպարենային համակարգում տնտեսվարողների վարկավորման պահանջարկի բավարարման գործում առկա դժվարությունները, մասնավորապես՝ գյուղացիները յուրաքանչյուր տարի շրջանառու միջոցների խիստ կարիք են զգում, իսկ գործող բանկային համակարգի կողմից վարկավորման պայմանները՝ գրավի առարկայի շրջանակներ, վարկավորման ժամկետ, տոկոսադրույք և այլն, դժվարամատչելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար,

- ✓ գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում առկա լուրջ խոչընդոտները: Գյուղատնտեսական տեխնիկայի սարքավորումների ավելի քան 95%-ի շահագործման ժամկետները լրացել է, որի պատճառով ցածր է սարքինության մակարդակը և արտադրողականությունը, հետևաբար՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները,
- ✓ ոռոգման համակարգի վերականգնման և զարգացման առկա բազմաթիվ հիմնախնդիրները: Հանրապետության 232.9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 150 հազ.հա,
- ✓ անասնապահության ճյուղում անասնապահական առանձին մթերքների՝ կաթի և ձվի արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ տոհմային գործի կազմակերպման, անասնաբուժական համակարգի ամրապնդման և ոլորտի պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման գործում առկախնդիրները,
- ✓ պարենամթերքի իրացման շուկայի ձևավորման դժվարությունները, որը մի կողմից պայմանավորված է տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ գյուղատնտեսական մթերքի պահանջարկով, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ, դրանց ձևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարություններով,
- ✓ գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում առկա խնդիրները, մասնավորապես՝ նոր տեխնոլոգիաների ներդրում, արտադրանքի մրցունակության բարձրացում,
- ✓ գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների ոչ լիարժեք գործունեությունը, արտադրության մեջ գիտական նորույթների դանդաղ ներդրումը, կիրառվող մեխանիզմների անկատարությունը,

- ✓ գյուղատնտեսության ոլորտում բնական աղետներից կորուստների ապահովագրման բացակայությունը և կանխարգելման կառույցների ձևավորման անկատարությունը:

Նշված գործոնները բացասաբար են ազդում գյուղատնտեսության արդյունավետության, ճյուղի կառուցվածքի բարելավման և հետագա զարգացման վրա:

1.2 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդի վիճակի տնտեսական վերլուծությունը

Հայաստանի Հանրապետությունն անկախության հռչակումից հետո ընտրեց շուկայական հարաբերություններով կարգավորվող տնտեսական համակարգ, որը ներկայումս ընդգրկում է շուրջ 340 հազար անհատական գյուղացիական տնտեսություն, հազարից ավելի գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսությանը սպասարկող գյուղատնտեսական մթերքների իրացման և վերամշակման ընկերություններ: ՀՀ 915 համայնքներից 866-ը գյուղական է: Գյուղատնտեսությունում զբաղված է 370.0 հազ.մարդ, ընդհանուրի 35.3 % (2015թ.):

ՀՀ գյուղատնեսությունն առանցքային տեղ է ունեցել երկրի ընդհանուր տնտեսության կառուցվածքում: 1991-1995 թվականներին Հայաստանի ագրո-պարենային համալիրը (ԱՊՀ) միջին հաշվով երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ ունեցել է 52, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 32.1 % տեսակարար կշիռ: 1995-2001 թվականներին ԱՊՀ բաժինը միջին հաշվով երկրի ընդհանուր ՀՆԱ-ում կազմել է շուրջ 40%, որից 75% (ընդհանուր ՀՆԱ-ի 30%) պատկանում էր զուտ գյուղատնտեսությանը: 2002-2008 թվականներին, ինչպես ամբողջ հանրապետության տնտեսության իրական հատվածի, այնպես էլ գյուղատնտեսության համար արձանագրվել է որոշակի կայուն զարգացում: Այդ ժամանակահատվածում ԱՊՀ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 27,7 %, որից գյուղատնտեսությանը՝ 20.8% (թեև այդ ժամանակահատվածում 2 տարի եղել է խիստ անբարենպաստ գյուղատնտեսական տարիներ՝ 2003-ին կապված երաշտի և 2006 թ-ին՝ ցրտահարության հետ):

Գնալով տարեց-տարի նվազում էր գյուղատնտեսության տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ի մեջ, բայց բացարձակ թվերով այն աճում էր: 2002-ին երկրի ՀՆԱ-ն կազմել է 1362.5 մլրդ դրամ, որի մեջ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 377.6 մլրդ, 2003-ին համապատասխանաբար՝ 1624.6 և 410.1 մլրդ (25.2%) 2006-ին՝ 2657.1 և 555.9 մլրդ (20.9%)[7], 2007-ին՝ 313,4 և 547.1 մլրդ (17.4%), 2008-ին՝ 3646.1 և 628.0 (17.2%)[8]: 2009-ին 3141.7 և 552.1 (17.6%), 2010-ին՝ 3460.2 և 637.7 (18.4%), 2011-ին 3776.4 և 795.0 (21.0%), 2012-ին՝ 3997.6 և 841.5 (21%), 2013-ին՝ 919.1 (21.5%), 2014-ին՝ 4843.2 և 993.5 (20.5%), 2015-ին 5032 և 1001.2 (19.9%)[9]: Դա բացատրվում է նրանով, որ վերլուծման ենթակա ժամանակահատվածում երկրի տնտեսության մյուս ճյուղերը զարգացել են ավելի բարձր տեմպերով, քան գյուղատնտեսական արտադրությունը: Այս միտումը հետագայում նույնպես կշարունակվի: Դրա համար էլ ՀՀ գյուղատնտեսության և գյուղի զարգացման 2012-2025 թթ. զարգացման ծրագրով նախատեսված է, որ 2017թ. գյուղատնտեսությունում ստեղծված առավելագույն արժեքը կկազմի 1159.8 մլրդ դրամ (երկրի ՀՆԱ-ի 17.3%), 2021-ին համապատասխանաբար 1556 մլրդ. դրամ (15.7%), իսկ 2025-ին՝ 2068,9 մլրդ. դրամ (14.0%): Օրինակ, 2007 թվականին 2006-ի նկատմամբ ընդհանուր աճը կազմել է 113.7 %, իսկ գյուղատնտեսությունը՝ 109.6 %, 2008-ին նախորդ տարվա համեմատ՝ համապատասխանաբար 115.8 և 99.1 %[10]:

2009 և 2010 թվականներին իրավիճակը բարդացավ նախ, համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պատճառով և ապա 2010 թվականի աննախադեպ գյուղատնտեսության համար անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: 2010 թվականին ագրոպարենային համակարգը տվեց երկրի ՀՆԱ-ի 21.0%, որից գյուղատնտեսության բաժինը կազմեց 16.2 %: 2010 թվականին գյուղատնտեսական արտադրությունն անկում ապրեց՝ 2009 թվականի նկատմամբ՝ գյուղատնտեսական արտադրության համախառն

[7] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007, էջ. 207, 274
[8] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, էջ. 210, 275
[9] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 227, 291, 2013 թ. էջ 227, 297, 2014 էջ 224, 293, 2015 էջ 223, 290, 2016, 15 247, Գյուղատնտեսությունը ՀՀ-ում, 2011-2015, Եր 2016, էջ 113
[10] Ա.Մելքոնյան Պետության ձեռքը՝ գյուղատնտեսության գլխից անպակաս, “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթ. 12 ապրիլ 2014 թ.

արտադրանքը կրճատվեց 13,4 տոկոսով, կազմելով 637,6 մլրդ դրամ[11]: Հայաստանի հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշները, ըստ մարզերի 2008-2015 թվականների համար բերվում է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1

Գյուղատնտեսության համախառն արտադրանք ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2008-2014 թվականներին [12]

ընթացիկ գներով մլրդ դրամ

Մարզեր	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
1	2	3	4	5	6	7	8	9
ք.Երևան	6.6	5.0	5.4	6.5	8.2	8.5	11.3	16.3
Արագածոտն	57.3	54.6	61.4	76.8	86.0	89.2	98.8	100.2
Արարատ	100.5	89.1	108.5	11.6	125.3	136.2	141.4	134.8
Արմավիր	119.9	109.1	104.5	135.0	148.4	163.7	173.7	180.5

աղյուսակ 1.1 շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9
Գեղարքունիք	111.7	94.6	125.7	152.8	152.7	165.3	188.7	190.8
Լոռի	39.4	37.3	41.8	57.1	57.4	67.5	73.8	73.3
Կոտայք	47.2	39.9	40.6	50.8	53.0	56.3	59.8	61.3
Շիրակ	65.1	56.4	71.2	93.0	94.0	106.3	109.0	108.9
Սյունիք	39.1	33.8	36.3	50.4	57.7	62.4	70.2	68.9
Վայոց Ձոր	12.8	11.5	13.9	16.9	18.4	19.9	21.4	21.4
Տավուշ	28.5	24.4	28.3	38.9	40.4	43.8	45.4	45.8
Ընդամենը ՀՀ	628.1	555.7	637.6	795.0	841.5	919.1	993.5	1001.2

[11] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2010 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 20

[12] Աղյուսակը կազմվել է ըստ՝ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009, էջ 38: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար դեկտեմբեր, էջ 20, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, էջ 39, Գյուղատնտեսական հանրագիտարան 2015 թ., էջ 22, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թ. հունվար-դեկտերմբեր, էջ 20

Պետք է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը հաշվարկվել է ընթացիկ գներով, որի պատճառով էլ 2010 թվականի ցուցանիշը արհեստականորեն աճել է 2009-ի համեմատ: Համադրելի գներով հաշվարկի համար պետք է հաշվի առնվի ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ և համադրելի գներով ՀՆԱ-ի ծավալների հարաբերակցությունը), որը 2011 թվականին 2009-ի նկատմամբ կազմել է 143.1%[13]:

Հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացումն ունի ավելի շատ ինտենսիվ զարգացման հնարավորություն, նրա բնական (հողային, ջրային) ռեսուրսները խիստ սահմանափակ են, ի տարբերություն նյութական արտադրության մյուս ոլորտների (արդյունաբերություն, շինարարություն), որոնք դեռևս կարող են զարգանալ և էքստենսիվ և ինտենսիվ ճանապարհներով: Թեև չի կարելի ժխտել, որ կան զգալի ռեզերվներ՝ լքված հողերի վերականգնման, բուսաբուծության արտադրության կառուցվածքի բարելավման, ցանքաշրջանառության կատարելագործման, նոր սորտերի և տոհմացեղերի արմատավորման և մի շարք այլ ուղղություններով:

Հայաստանի Հանրապետությունը, որը զբաղեցնում է 29743 քառ.կմ տարածք, ռելիեֆը կազմված է բարձրադիր լեռներից և հարթավայրերից, ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 1750 մետր, ունի մայրցամաքային կլիմա, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ, հիմնականում կրում է չոր ցամաքային, քիչ տեղումներով տարածաշրջան: Տարեկան տեղումները Արարատյան դաշտավայրում կազմում է շուրջ 300 մմ, իսկ մյուս շրջաններում՝ մինչև 600 մմ: Արարատյան դաշտավայրում գերակշռում են հարուստ ու խորը հողաշերտերը, իսկ բարձրադիր գոտիներում և թեք սարալանջերում՝ մակերեսային հողաշերտերը: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերը և դրանց կառուցվածքը 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բերվում է աղյուսակ 1.2-ում:

[13] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար դեկտեմբեր, էջ 7

Աղյուսակ 1.2

ՀՀ գյուղատնտեսության նշանակության հողերը և դրանց կառուցվածքը 2015 թ. հուլիսի 1-ի դրությամբ[14]

Հողի տեսակները	Զբաղեցրած տարածքները, (հազ.հա)	Կառուց-վածքը, (%)	Այդ թվում՝ ոռոգման ենթակա հողատարածքները	
			Տարածություն (հազ.հա)	Կառուց-վածքը (%)
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր	2045.7	100	155.76	100
այդ թվում				
-վարելահողեր	446.7	21.8	122.42	78.6
-բազմամյան տնկարկներ*	34.4	1.7	31.84	20.44
-խոտհարք	121.1	5.9	1.5	0.96
-արոտավայրեր	1051.3	51.4	-	-
-այլ հողեր	392.2	19.2	-	-
2. Անտառային հողեր	369.76	-	0.43	-

*չի ներառում տնամերձ հողամասերի բազմամյա տնկարկները:

Երկրի հողային ռեսուրսների կառուցվածքում 2006 թվականից հետո արոտավայրերի տարածքն ավելացավ 1,6 անգամ: Այդ փոփոխությունը պայմանավորված է նորացված հաշվառման միջոցով արոտավայրերի տարածության 423.1 հազ. հա-ով ավելացմամբ: Նախկին, մինչև 2006 թվականը մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հողատարածքները որպես արոտավայրեր չէր ներկայացված: Առկա 446.7 հազ.հա վարելահողերի զգալի մասը տարբեր պատճառներով՝ պահուստային հողային ֆոնդեր, սահմանամերձ և բարձրլեռնային հողատարածքներ, մշակման հնարավորության բացակայություն և այլն, նպատակային չեն օգտագործվում: Վարելահողերի գրեթե 50%-ը երկրագործության համար կարելի է օգտագործել միայն ոռոգման պայմաններում: Իսկ բերված աղյուսակի տվյալները վկայում են, որ վարելահողերի միայն 27.3 %-ն է ենթական ոռոգման:

[14] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, էջ 293 և www.minargo.am

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 24 %-ը սևահողեր են, որոնք ունեն բավականաչափ խորություն, հարուստ են օրգանական նյութերով, տարածված են մինչև 2000 մետր բարձրության վրա: Լեռնամարգագետնային և մարգագետնատափաստանային հողերը տարածված են բարձրադիր գոտիներում՝ 2000 մետրից բարձր, որոնք օգտագործվում են հիմնականում որպես արոտավայրեր և մարգագետիններ:

Անհրաժեշտ է փաստել, որ գնալով վատանում է հանրապետության բնապահպանական վիճակը: Արարատյան դաշտավայրում անբավարար է գործում դրենաժային աշխատանքները, որը բերում է հողերի աղակալման աստիճանի բարձրացմանը: Դեգրադացվել են արոտավայրերի զգալի մասը, իսկ հողերի սեփականաշնորհումից հետո լեռնային շրջաններում ուժեղացել է հողատարման գործընթացները, որի հիմնական պատճառն այն է, որ փոքր տնտեսությունները չեն պահպանում հողօգտագործման կանոնները և ցանքաշրջանառությունը:

Ծուկայական տնտեսավարման անցման հետևանքով զգալի փոփոխությունների ենթարկվեց գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը: Այսպես, եթե 1990 թվականին ՀՀ գյուղատնտեսության ընդհանուր կառուցվածքում բուսաբուծության տեսակարար կշիռը կազմում էր 49.4, իսկ անասնաբուծությանը՝ 50.6 %, ապա 2005 թվականին այն համապատասխանաբար կազմում էր 58.4 և 41.6, 2008 թվականին՝ 63.9 և 36.1, 2010-ին՝ 61.6 և 38.4%, 2011-ին՝ 58.5 և 41.5%, 2012-ին՝61.4 և 38.6 2013-ին 62.3 և 37.7, 2014-ին՝ 61.0 և 39.0, 2015-ին՝ 60.5 և 39.5:[15] Ավելացնենք, որ 2005 թվականից, համաձայն ԵԳՀԴ դասակարգման, գյուղատնտեսության համախառն արտադրանքը ներառում է նաև որսորդության և անտառային տնտեսության ցուցանիշները:[16]

Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումների սկզբնական փուլի հետ համեմատ զգալի փոփոխությունների են ենթարկվել: Բուսաբուծության ցանքատարածությունները

[15] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 291, 2014 էջ 293, 2016 թ. էջ 294ՀՀ մարզերը և Երևան քաղաքը 2010-2014 թթ., էջ 39

[16] Տես պարենային ապահովություն և աղքատություն, 2007 թ. հունվար-դեկտեմբեր, Եր. 2008, էջ 9

ավելացան ավելի քան 20%-ով, շուրջ 40%-ով ընդլայնվեցին կարտոֆիլի ցանքատարածությունները: Դրա հետ մեկտեղ շուրջ երեք անգամ կրճատվել են կերային մշակաբույսերի տարածքները: 2007 թվականի տվյալներով գյուղատնտեսության մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում հացահատիկի ցանքատարածությունների բաժինը կազմում էր 56.7, կերային մշակաբույսինը՝ 21.4, կարտոֆիլինը՝ 10.4 և բանջարեղենի ցանքատարածությունները՝ 11.3 %:[17]

Սակայն սկսած 2006 թվականից ՀՀ գյուղատնտեսության բուսաբուծության ոլորտում տեղի է ունենում հակառակ միտումը: Տարեց տարի նվազում են հացահատիկային և հատիկաընդեղային, կարտոֆիլի ցանքատարածությունները: Այդ միտումը շարունակվում է, քանի որ 2010 թվականին կատարված աշնանանցանը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 10.8 %-ով, ինչը նշանակում է՝ 2011 թվականին հացահատիկի ցանքատարածությունները նորից կրճատվում են:[18] Դրա փոխարեն ավելանում են բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները, պտղի և հատապտղի, խաղողի տնկարկների տարածությունները:

ՀՀ գյուղատնտեսական արտադրության բուսաբուծության ոլորտի ցանքատարածությունների բերքատվության և համախառն բերքի վերաբերյալ 2008-2015 թվականների ցուցանիշները բերվում են աղյուսակ 1.3-ում:

Հանրապետության գոյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի 75.9, բազմամյա տնկարկների՝ 74.7, խոտհարքների 44.9 տոկոսը[19]:

[17] Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Եր., 2009, էջ 279
[18] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերն, Եր. 2011, էջ 22
[19] Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2013 էջ 298

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասը (96.5%-ը) արտադրվում է մասնավոր հատվածի կողմից:[20]

Ինչպես արդեն նշել ենք այս ոլորտում գործում են շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսությունների առևտրային կազմակերպություններ: Տնտեսություններն ունեն փոքր չափեր, մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին է ընկնում 1.43 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից վարելահողեր՝ 1.11 հա, միջին հաշվով մեկ հողակտորի մակերեսը կազմում է 0.35 հա[21]: Այս վիճակը դժվարեցնում է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, արդյունավետ ցանքաշրջանառության կիրառումը և խոչընդոտում է ագրոտեխնիկական պահանջների խելացի իրականացմանը:

Ներկայումս միայն Արարատյան դաշտավայրի և հանրապետության նախալեռնային գոտու ոռոգվող հողատարածքների տնտեսություններն, անկախ դրանց չափերից, հիմնականում չեն հրաժարվում հողերը մշակելուց, ստանում են համեմատաբար բարձր բերք ու կայուն եկամուտներ՝ նպաստավոր պայմանների առկայության շնորհիվ (արևի էներգիա, ջրովի հողեր, մատչելի իրացման շուկաներ և այլն): Սակայն Հայաստանի հողատարածքների միայն 12%-ն է գտնվում հարթավայրերում, մնացածը տեղաբաշխված է ուղղաձիգ գոտիականությամբ, տարբեր աստիճանի թեքությունների վրա, որն էլ առաջին հերթին դժվարեցնում է տեխնիկայի կիրառությունը:

Արարատյան դաշտավայրում գրանցված է շուրջ 103 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնք զբաղեցնում են 59 հազ.հա հողատարած (հանրապետության ընդհանուր հողատեսքերի 15.6%-ը): Այստեղ է կենտրոնացված բազմամյա տնկարկների 42.3, վարելահողերի 13.5 և միայն խոտհարքների 4.6%-ը:

---

[20]ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (վերանայված տարբերակ): Հաստատված ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 30-ի N1826-Ն որոշմամբ:

[21]ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (վերանայված տարբերակ): Հաստատված ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 30-ի N1826-Ն որոշմամբ, էջ 8

Աղյուսակ 1.3

ՀՀ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը 2007-2015թթ*

		Հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսեր	Կարտոֆիլ	Բանջարաբոստանային մշակաբույսեր	Բոստանային մշակաբույսեր	Պտղի և հատապտղի տնկարկներ	Խաղող
1	2	3	4	5	6	7	8
Ցանքատարածություններ, հազ.հա	2007	176.2	31.7	25.6	5.88	38.0	15.9
	2008	172.8	34.3	24.2	5.45	36.7	16.8
	2009	171.6	32.0	23.9	6.16	37.0	16.5
	2010	159.3	28.3	23.5	4.47	37.7	17.4
	2011	157.8	28.7	25.0	5.76	37.1	16.3
	2012	172.2	28.7	25.2	5.1	39.3	17.4
	2013	178.4	30.7	25.4	5.1	40.2	17.5
	2014	188.7	31.6	26.4	5.8	40.1	17.2
	2015	199.7	37.2	28.9	6.8	40.2	17.5
Բերքատվությունը, գ/հա	2007	25.9	183.3	324.0	350.6	79.7	153.6
	2008	24.1	188.4	321.4	334.5	101.2	128.0
	2009	22.6	184.4	327.1	350.6	104.4	144.9
	2010	20.5	170.0	301.1	296.6	349.2	134.5
	2011	27.9	194.3	306.7	313.8	34.5	65.4
	2012	26.5	206.7	325.0	399.9	97.0	151.3
	2013	30.8	214.3	333.7	388.5	95.0	149.8
	2014	31.8	232.2	350.5	421.4	80.8	157.7
	2015	31.9	230.3	356.9	421.7	96.1	176.7

Աղյուսակ 1.3 շարունակություն

1	2	3	4	5	6	7	8

* Աղյուսակը կազմվել է ըստ՝ "Պարենային ապահովություն և աղքատություն" 2007 թվականի հունվար-դեկտեմբեր, Եր., 2008., էջ 41: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009, Եր. 2010, էջ 38-41: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին. Եր. 2011, էջ 21-22, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2007-2011, էջ 40-43, ՀՀ մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2010-2014 էջ 39-42, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2011-2015, Եր. 2016, էջ 39-42

Հայաստանի բնակչության, հազ. մարդ	2007	452.5	583.9	845.3	206.3	260.2	218.9
	2008	415.4	648.6	825.3	182.2	317.8	185.8
	2009	374.9	593.6	819.8	216.1	332.2	208.6
	2010	326.4	481.1	707.7	132.6	129.2	222.9
	2011	440.7	557.7	787.1	180.9	239.4	229.6
	2012	456.1	647.2	849.0	205.1	331.7	241.4
	2013	548.8	660.5	876.0	206.1	338.1	240.8
	2014	590.6	733.2	954.6	245.8	291.0	261.3
	2015	637.9	764.5	1031.5	286.8	386.5	309.2

Նախալեռնային գոտում են գտնվում 55570 գյուղացիական տնտեսություններ, որոնք տնօրինում են 56.0 հազ.հա հողատարածքներ (14.9%), որից վարելահողերը 8.46 հազ. հա (15.1%), իսկ տնկարկները 12.7 հազ.հա (30.3%): Ըստ Եության, Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում են տեղաբաշխված գյուղացիական տնտեսությունների մոտ 46.6, այգիների 73.0 և վարելահողերի 23.5 %-ը:

Ընդհանուր առմամբ, հանրապետության գյուղատնտեսության վերջին տարիներին (բացառությամբ 2010 թվականը), առանց էական նահանջների, գրանցում է զարգացում և տնտեսական աճ թե բուսաբուծության, թե անասնաբուծության, ինչպես նաև գյուղմթերքների վերամշակման բնագավառում:

Ուղղաձիգ գոտիականությունը և բնակլիմայական պայմանների բազմազանությունը պայմաններ են ապահովում կորիզավոր ու հնդավոր պտղատեսակների հետ միասին աճեցնելու նաև ընկուզապտուղների և մերձարևադարձային պտղատեսակներ: Պտղատու այգիների մոտ 70%-ը տեղաբաշխված է ծովի մակերևույթից 400-1000 մետրի, 23 %-ը՝ 1000-1500, 4.5%-ը՝ 1500-2000 և 2.5%-ը՝ 2000 մետրից բարձր մակերևույթի վրա:

Հողի և գյուղատնտեսության մյուս արտադրության միջոցների սեփականաշնորհումից հետո կրճատվեցին հանրապետության այգետարածքները, իսկ մասնատման հետևանքով, ոչ ճիշտ ագրոտեխնիկական միջոցառումների պատճառով դուրս մնաց շրջանառությունից: Միայն 1999 թվականից հետո սկսեցին վերականգնել և ընդլայնել այգետարածքները: 2015 թվականի դրությամբ հանրապետության շուրջ 112 հազար գյուղացիական տնտեսություններ, այլ գյուղացիական գործունեության հետ միասին, զբաղվում են նաև պտղաբուծությամբ, որոնց միջին տարածքը կազմում է 0.31 հա:

Վերջին տարիներին պետության կողմից իրականացվող քաղաքականության շնորհիվ ամեն տարի վերակառուցվում և հիմնվում են միջին հաշվով հազար հեկտար պտղատու այգիներ, ինչի արդյունքում ստեղծվում են պոտենցիալ հնարավորություններ - պտղի բերքի ծավալները մեծացնելու համար: Հանրապետությունում որոշակի զարգացում է ապրում նաև ոչ ավանդական

մերձարևադարձային պտղատեսակների (պիստակենների, ձիթենի, կիվի, կիտրոնի) մշակությունը Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերի ցածրադիր գոտիներում:

Բնակլիմայական տարբեր պայմանների շնորհիվ ստացվում է մրգերի և հատապտուղների բազմատեսակ սորտեր, ինչը ճիշտ ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման պարագայում հնարավորություն է տալիս տարվա մեջ 7-8 ամիս ունենալ թարմ միրգ և հատապտուղ:

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է ծիրանով, դեղձով սալորով, խնձորով, տանձով, ընկույզով, նուշով, թզով, նռով և այլ մրգերով: Ցրտադիմացկուն սորտերի տեղայնացման նպատակով իրականացվում են սելեկցիոն աշխատանքներ, որը կնպաստի նոր տարածքների նվաճմանը՝ հետագայում նաև ներքին ու արտաքին շուկաներ թարմ մրգերի երկարաժամկետ մատակարարում:

Բուսաբուծության ոլորտում առանձնահատուկ տեղ ունի խաղողագործությունը: Այն միաժամանակ հանդիսանում է և միրգ և տեխնիկական մշակաբույս: Խաղողը որպես գյուղատնտեսական արդյունք տնտեսական վերլուծության և վիճակագրական տեղեկատվության մեջ ներկայացվում է առանձին տողով:

Հայաստանը համարվում է խաղողագործության երկիր, խաղողը նրա այցեքարտերից է, որը գալիս է դարերի խորքից և միշտ հանդիսացել է գյուղատնտեսական արտադրության հիմնական ճյուղերից մեկը: Խաղողագործությունը հանրապետությունում կայուն զարգացում ապրեց անցյալ դարի երկրորդ կեսում: Այդ ժամանակ սննդարդյունաբերության ամբողջ արտադրանքի 37.4 %-ը կազմում էր խաղողից ստացված գինու և կոնյակի արտադրությունը: 1970-1985 թվականներին տարեկան միջին հաշվով վերամշակվում էր 210 հազար տոննա խաղող: Սակայն 1986 թվականից ԽՍՀՄ-ում իրականացված հակաալկոհոլային քաղաքականությունը և 1990-1997 թթ. գինու և կոնյակի իրացման դժվարությունների հետևանքով զգալիորեն տուժեց խաղողի արտադրությունը: Քանդվեցին ավելի քան 7 հազ. հեկտար խաղողի այգիներ, խաղողի վերամշակման ծավալը

1998 թվականին կազմեց ընդամենը 41938 տոննա՝ խորհրդային ժամանակաշրջանի վերջին տարիների 20 տոկոսի չափով:

Խաղողի մշակման աշխատանքներում գերակշռող դարձավ ձեռքի աշխատանքը, կրճատվեցին բուժամիջոցների, պարարտանյութերի օգտագործման հնարավորությունները, ինչը բերեց արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը և արտադրության եկամտաբերության նվազմանը:

Հայաստանում խաղողագործությունը մասնագիտացված է սեղանի խաղողի և տեխնիկական սորտերի գծով: Արարատյան դաշտավայրում մշակվող խաղողն ունի բարձր շաքարայնություն, որից ստանում են կոնյակ, թնդեցված քաղցր և աղանդերային գինիներ: Նախալեռնային, հյուսիս-արևելյան և Վայքի տարածաշրջաններում աճեցրած խաղողից ստացվում են անապակ գինիներ և շամպայն, որոնք ունեն բարձր պահանջարկ Եվրոպական շուկաներում:

Վերջին տարիներին Հայաստանում խաղողագործության գծով մեծ ուշադրություն է դարձվում սելեկցիոն նոր սորտերի ստացմանը և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմանը: Դրա լավագույն օրինակը արգենտինահայ գործարար Էդուրադո Էռնեկյանի նախաձեռնությամբ Արմավիրի մարզում՝ նախկին անմշակ հողերի վրա իրականացվող □Տիեռաս դե Արմենիա□ ՓԲԸ (□Հայաստանի հողեր□) ծրագիրն է: Ընկերությունը 2004 թվականին ձեռք բերեց 2301 հա անմշակ հողատարածք: Ծուկայի ուսումնասիրության և գյուղատնտեսական արտադրության պայմանների (հողի, ոռոգման ջրի, կլիմայի և տեղագրական) ուսումնասիրության հիման վրա մշակվել է 15-ամյա ծրագիր: Նախատեսվում է այդ ընթացքում իրացնել հողատարածքի 80 տոկոսը, իսկ մնացած 20 տոկոսը բոլորովին գյուղատնտեսության համար անպիտան լինելու պատճառով օգտագործել ենթակառուցվածքների կառուցման գոտու համար: Ընկերության տարածքում կառուցվել է երկու ջրամբար՝ 90 և 105 հազար մ^3 ծավալներով՝ խաղողի առաջին (400 հա) և երկրորդ (150 հա) այգիները ջրով ապահովելու համար: Երրորդ փուլում (2011 թ.) նախատեսվում էր հիմնել ևս 100 հա տեխնիկական սորտերի խաղողի այգիներ: Ամբողջ տարածքը ոռոգվում է կաթիլային համակարգով՝

ապահովելով բարձր արդյունավետություն, ջրի և էներգիայի զգալի խնայողություն: Ընկերությունը նախատեսում է խաղողի հիմնական մասը՝ 95 տոկոսը, մատակարարել կոնյակի տեղական գործարաններին, իսկ մնացած 5 տոկոսն օգտագործել սեղանի բարձորակ գինիների ստացման փորձնական ծրագրի համար:

Այգետարածքում տնկված են տեղական խաղողի (Ոսկեհատ, Գառան դմակ, Ռքաշիթելի, Կանգուն), իսկ հիմնականում ֆրանսիական պատրաստված Շենին, Ունի Բլանկ, Ֆոն Բլանշ, Կոլոմբար և Ալիգոտե սորտերը: Բարձորակ գինի ստանալու նպատակով 20 հա-ի վրա տնկվել են Կաբեռնե Սավինյոն, Սիրահ, Մեոլոտ, Կոտ Մալբեկ, Պինո Գրիս, Վիոնիեռ, Շառդոնե, Սավինիոն Բլանկ սորտերի խաղողի տնկիներ: Ընկերությունը գյուղատնտեսական տեխնիկա է ձեռք բերում արտերկրից՝ հիմնականում ԱՄՆ-ից և Իտալիայից[22]:

Գյուղատնտեսական արտադրության կարևոր ոլորտ է հանդիսանում անասնաբուծությունը, որը ներկայումս թողարկում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 40 տոկոսը: Բուսաբուծության բարձր ռիսկայնության համեմատ անասնաբուծությունն ունի ավելի ցածր ռիսկայնության աստիճան, առկա ռեսուրսների լիարժեք օգտագործման պայմաններում անասնապահությունը գյուղատնտեսության արտադրանքի ծավալների մեծացման գործում կարող է դառնալ կայուն զբաղմունք: 1990-ական թվականների սկզբից սկսած վերափոխումները բացասականորեն ազդեց անասնապահության ոլորտի վրա:

Հողի սեփականաշնորհման պատճառով խիստ կերպով կրճատվեց կերային մշակաբույսերի արտադրության ծավալները, իսկ դա իր հերթին, ինչպես նաև անասնագլխաքանակի հապճեպ մասնավորեցումը, բերեցին անասունների թվի կտրուկ կրճատմանը: Այսպես, 1992 թվականին նախորդ տարվա համեմատ խոշոր եղջերավոր անասունների թիվը կրճատվեց 67,5 հազարով, խոզերինը 80,1, ոչխարներինը՝ 140.1 հատով, իսկ թռչուններին 6.4 միլիոնով[23]: 1990

[22] Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը. Եր., "Լիմուշ", 2010, էջ 43-45

[23] Армения в цифрах. Краткий статистический сборник. Госдарственное управление по статистике, государственному регистру и анализу Республики Армения. Ер., 1992, с.174

թվականի տվյալներով ՀՀ-ում ցանովի կերային մշակաբույսերի տարածությունը կազմում էր 251.3 հազ.հա կամ ամբողջ ցանքատարածությունների 57.5 տոկոսը: 2009 թվականի տվյալներով ցանովի կերային մշակաբույսերի տարածությունը կազմում է 63.9 հազ.հա, ընդհանուր ցանքատարածությունների (300 հազ.հա) 21.3 տոկոսը:

Հայաստանում անասնագլխաքանակի անկումը շարունակվեց մինչև 1998 թվականը, որի ընթացքում գլխաքանակը կրճատվեց 3 անգամ, դրանից հետո մինչև 2002 թվականը տեղի ունեցավ կայունացման գործընթաց և միայն բեկումնային եղավ 2003-2007 թվականները, ինչը բնութագրվեց անասնագլխաքանակի և անասնաբուծական մթերքների ծավալների աճով:

1991-1997 թվականներին խոզերի գլխաքանակը կրճատվեց շուրջ 4 անգամ, ոչխարներինը՝ 3 անգամ, ածան հավերինը՝ 4 անգամ, իսկ խոշոր եղջերավոր անասուններինը գրեթե 2 անգամ: Այդ ընթացքում երկրում մսի արտադրության ծավալը կրճատվեց ավելի քան 2 անգամ, այդ թվում թռչնամսինը՝ 10 անգամ, կաթինը՝ 40 տոկոսով, իսկ ձվինը՝ շուրջ 3.4 անգամ[24]:

Հայաստանի Հանրապետության անասնագլխաքանակի և անասնաբուծական մթերքների արտադրության ցուցանիշները 1991-2016 թվականների համար բերվում են աղյուսակ 1.4-ում և 1.5-ում[*]:

Աղյուսակ 1.4

ՀՀ անասնագլխաքանակը 1991-2016 թթ.
(հունվարի 1-ի դրությամբ)

հազ. գլուխ

[24] ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագիր (2007-2015 թթ.), 2007, էջ 4772.1

[*] Աղյուսակները կազմվել են՝ ըստ □Հայաստանի վիճակագրական տարեգիրք□ 2007թ., էջ 287-288; 2009թ. էջ 288-289; Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2005-2009թ., Եր., 2010, էջ 42; ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 23; Ս.Ավետիսյան Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., Լիմուշ, 2010, էջ 55-56: ՀՀ ԱՎԾ □Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում□, 2006-2010, Եր.2011, էջ 126, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի թվերով 2010-2014, էջ 43, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016 թ., էջ 307

Տարեթիվ	Խոշոր եղջերավոր անասուն-ներ	այդ թվում՝ կովեր	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Ձիեր	Թռչուններ
1991	640	250.9	310.9	1186.3	-	-
1999	461.9	256.2	86.1	546.3	12.0	3190.2
2003	535.7	280.7	111	602.6	12.1	4625
2007	620.2	310.0	152.8	632.9	12.6	4098.1
2008	629.1	310.6	86.7	637.1	11.8	4450
2009	584.6	283.3	84.8	559.2	13.0	4188.2
2010	570.6	273.9	112.6	511.0	11.3	4134.6
2011	571.4	272.6	114.8	532.5	10.0	3462.5
2012	599.2	283.3	108.8	590.2	9.9	3548
2013	661.0	303.3	145.0	674.7	108	4050
2014	677.6	309.6	139.8	717.6	11.7	4109.2
2015	688.6	313.9	142.4	745.8	11.4	4242
2016	701.5	318.6	174.8	772.1	11.4	3942

Աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ ներկայիս ցուցանիշները զգալիորեն զիջում են խորհրդային ժամանակաշրջանի վերջին տարվա ցուցանիշներին, բացառությամբ կովերի գլխաքանակի և տեսակարար կշռին: 1991 թվականի հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների 640 հազար գլխաքանակից կովերինը կազմել է 250.9 հազար (38%), իսկ ներկայումս այն կազմում է շուրջ 50 տոկոս: Հայաստանի համար անասնագլխաքանակի ամենաբարձր ցուցանիշը հանդիսացել է 2008 թվականը, որի մակարդակը գերազանցել է ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդ տարիներին (բացառությամբ խոզերի հաշվով, որոնց անկման պատճառը եղել է խոզերի “աֆրիկյան ժանտախտ” հիվանդությունը): 2009 և 2010 թվականներին գլխաքանակի անկման հիմնական պատճառը հանդիսացել է ֆինանսա-տնտեսական ճգնաժամը և աննախադեպ վատ կլիմայական պայմանները՝ հատկապես 2010 թվականին:

Աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ ներկայիս ցուցանիշները զգալիորեն զիջում են խորհրդային ժամանակաշրջանի վերջին տարվա ցուցանիշներին, բացառությամբ

կովերի գլխաքանակի և տեսակարար կշռին: 1991 թվականի հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների 640 հազար գլխաքանակից կովերինը կազմել է 250.9 հազար (38%), իսկ ներկայումս այն կազմում է շուրջ 50 տոկոս: Հայաստանի համար անասնագլխաքանակի ամենաբարձր ցուցանիշը հանդիսացել է 2008 թվականը, որի մակարդակը գերազանցել է ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդ տարիներին (բացառությամբ խոզերի հաշվով, որոնց անկման պատճառը եղել է խոզերի "աֆրիկյան ժանտախտ" հիվանդությունը): 2009 և 2010 թվականներին գլխաքանակի անկման հիմնական պատճառը հանդիսացել է ֆինանսա-տնտեսական ճգնաժամը և աննախադեպ վատ կլիմայական պայմանները՝ հատկապես 2010 թվականին:

Աղյուսակ 1.5

Անասնապահական հիմնական մթերքների արտադրությունն ըստ տեսակների 1990-2015 թվականներին *

	Չափ. միավոր	1990	1999	2003	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Միս (կենդանի քաշով)	հազ. տոննա	145.1	49.1	52.6	125.9	126.2	69.5	71.7	73.9	83.4	92.7	100.4
Կաթ	հազ. տոննա	441.9	456.2	513.7	661.9	653.0	600.9	601.5	618.2	657.0	700.4	728.6
Բուրդ	հազ. տոննա	2.8	1.31	1.18	1.3	1.2	1.2	1.2	1.2	1.3	1.5	1.6
Ձու	մլն հատ	512.9	325.9	502.2	576.1	630.1	719.2	633.6	658.1	615.2	641.8	659.8

Անասնաբուծության բնագավառում, որպես դրական երևույթ կարելի է համարել անասունների մթերատվության մակարդակի բարձրացումը: Այսպես, եթե մեկ կովի միջին կաթնատվությունը 2003 թ-ին կազմել է տարեկան 1728 լիտր, 2004-ին՝ 1772, 2005-ին՝ 1877, 2006-ին՝ 1890, ապա 2007-ին հասել է 1957, 2008 թ-ին՝ 1992, իսկ 2012-ին անցել է

* Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015 թ., էջ 304, 2016թ. էջ 308

2000 լիտրի սահմանը՝ կազմելով 2036 լիտր, 2013-ին՝ 2054 և 2014-ին՝ 2102 լիտր, 2015-ին՝ 2144: Մեկ հավի ձվատվությունն այդ ժամանակահատվածում աճել է 180 հատից 241-ի:

Այստեղ պետք է փաստել, որ համաձայն ՀՀ-ում տավարաբուծության զարգացման 2007-2015թթ. ծրագրի ՀՀ-ում միջին հաշվով մեկ կովից ստացվում է 1870 լիտր կաթ և 300 կգ միս, իսկ խոշոր եղջերավոր անասնագլխաքանակ տնօրինող գյուղացիական տնտեսությունների հաշվով՝ համապատասխանաբար 3100 լիտր կաթ և 490 կգ միս[25]: Դա վկայում է այն մասին, որ անհատական գյուղացիական տնտեսությունները անասնապահությունը հիմնականում վերաբերվում է ոչ թե որպես ապրանքային տնտեսության վարման ձև, այլ որպես սեփական կարիքները բավարարելու բնատնտեսություն: Հանրապետությունում անասունների մթերատվության ներկա մակարդակը զիջում է ոչ միայն տարածաշրջանի և թույլ զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներին, այլ նաև հանրապետության լավագույն տարիների մակարդակին՝ միջին կաթնատվությունը 15 %-ով և մսատվությունը 30 տոկոսով: Մթերատվության անկումը պայմանավորված է նաև տոհմասելեկցիոն անբավարար աշխատանքներով:

ՀՀ-ում բնական սահմանափակ ռեսուրսների շրջանակներում գյուղատնտեսության վարման արդյունավետությունը կարելի է բարձրացնել մշակաբույսերի բարձր բերքատվության և անասունների բարձր մթերատվության միջոցով: Թեև կրճատվել են կերային մշակաբույսերի ցանքատարածությունները և նվազել բնական կերհանդակների բերքատվությունը, այնուհանդերձ ներկայիս ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մթերատվության բարձրացման միջոցով կարելի է նշանակալի չափով մեծացնել անասնաբուծության մթերքների արտադրության ծավալները: Հանրապետության համարյա բոլոր տարածաշրջաններում բնական արոտները ծանրաբեռնված են 50-70 տոկոսով, իսկ խոտհարքներն ամբողջությամբ չեն օգտագործվում:

[25] ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագիր (2007-2015 թթ), 2007 թ. էջ 12

Հայաստանի համար շատ կարևոր է բնական կերհանդակների և արոտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացումը: 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում բնական կերահանդակների տարածությունը կազմել է 1177.9 հազ. հա, որի 89.8 %-ը պատկանում է արոտավայրերին, իսկ 10.2-ը խոտհարքներին: Ընդհանուր գյուղատնտեսական օգտագործելի հողերից (2049.4 հազ. հա) բնական կերահանդակների տեսակարար կշիռը կազմում է 58.7 %: Ընդ որում ցուցանիշը, կախված գյուղատնտեսության մասնագիտացումից և բնակլիմայական պայմաններից, ըստ մարզերի զգալիորեն տարբերվում են (տես աղյուսակ 1.6):

Աղյուսակ 1.6

ՀՀ կերահանդակներն ըստ մարզերի

2015 թ. դրությամբ [26]

ՀՀ մարզեր	Գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր (հազ.հա)	Այդ թվում՝ վարելահողեր	Վարելահողերի տես.կշիռը, (%)
Արագածոտն	218.2	54.1	24.7
Արարատ	156.9	25.4	16.2
Արմավիր	97.0	41.4	42.8
Գեղարքունիք	345.6	81.7	23.7
Լոռի	251.1	42.1	17.1
Կոտայք	154.6	37.8	24.4
Շիրակ	214.5	78.4	36.6
Սյունիք	306.9	43.8	14.2
Վայոց Ձոր	190.3	16.2	8.0
Տավուշ	110.8	25.6	23.3
ք.Երևան	3.4	0.9	26.5
Ընդամենը ՀՀ	2049.4	447.5	21.9

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում գոյություն ունի անասնագլխաքանակի ավելացման նշանակալի հնարավորություն: Ոլորտի մասնագետները գտնում են, որ եթե արոտավայրերն օգտագործվեն լրիվ ծանրաբեռնվածությամբ (1 հա-ի հաշվով 1 պայմանական գլուխ), ապա մի շարք մարզերում, հատկապես Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու և Տավուշի մարզերում խոշոր եղեջավոր անասունների գլխաքանակը կարելի է ավելացնել 1,5-2 անգամ, ինչի մասին վկայում է աղյուսակ 1.7-ի տվյալները:

[26] ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2011-2015, Եր. 2016, էջ 231-312

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման հիմնական գրավականը, թե բուսաբուծության և թե անասնաբուծության ոլորտներում, հանդիսանում է արտադրության գործընթացի մեքենայացումը և տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացմանը: Խորհրդային ժամանակաշրջանում գյուղատնտեսության նյութատեխնիկական մատակարարումն իրականացվում էր հատուկ կառույցի՝ ԽՍՀՄ Պետմատի և հանրապետությունների նյութատեխնիկական մատակարարումների կոմիտեների կողմից: Այդ գործընթացը վերահսկվում էր համապատասխան նախարարությունների և պետական պլանային կոմիտեի կողմից: Գյուղատնտեսության մեքենատրակտորային պարկը համալրվում էր տվյալ ժամանակաշրջանի առաջավոր տեխնիկայով և մեքենաներով:

Աղյուսակ 1.7

Հայաստանի հանրապետության անասնագլխաքանակի և արոտավայրերի ցուցանիշները 2015թ. հունվարի 1-ի դրությամբ [27]

ՀՀ մարզեր	Խոշոր եղջերավոր անասունների (հազ. գլուխ)	Ոչխարներ և այծեր (հազ. գլուխ)*	Արոտներ (հազ. հա)	Պայմանական գլուխ, հազար	Արոտների ծանրաբեռնվածությունը (գլ/հա)
Արագածոտն	86.7	98.3	137.5	87.55	0.63
Արարատ	46.5	93.3	78.8	47.81	0.61
Արմավիր	58.2	97.4	22.5	48.23	2.14
Գեղարքունիք	120.9	11.4	177.6	103.08	58.6
Լոռի	81.0	38.3	145.8	72.57	0.50
Կոտայք	59.4	45.2	83.9	60.49	0.72
Շիրակ	107.9	90.5	125.0	103.61	0.83
Սյունիք	63.3	125.7	175.2	58.52	0.33
Վայոց Ձոր	24.9	25.1	108.9	27.19	0.25

[27] Աղյուսակը կազմվել է ըստ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2010-2014թթ., Եր., 2015

* Համաձայն անասնատեսակների պայմանական խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի վերածելու գործակիցների 10 ոչխարը հավասարեցվում է մեկ եղեջերավոր անասունի:

Տավուշ	37.1	17.0	60.3	35.26	0.58
ք.Երևան	2.7	3.6	1.1	1.81	1.64
Ընդամենը ՀՀ	688.6	745.8	1116.6	624.65	0.56

Բարեփոխումների ընթացքում իրականացված սեփականաշնորհման ժամանակ գյուղատնտեսության համար ամբողջ տեխնիկան իրական արժեքից շատ ցածր գներով վաճառվեց մեխանիզատորներին: Ըստ էության դա գյուղատնտեսական տեխնիկայի լուծարման առաջին հարվածն էր, որը հետագայում բարդությունների առջև կանգնեցրեց գյուղացիներին, որոնք նորից դիմեցին պարզունակ աշխատանքային գործիքներին՝ կրճատելով արտադրության ծավալները և բարձրացնելով արտադրանքի ինքնարժեքը: Սկզբնական փուլում փորձ կատարվեց նախկին "Հայագրոսերվիսի" տեղական միավորումների բազայի վրա ստեղծել մեքենատրակտորային կայաններ: Սակայն դա չարդարացրեց սպասելիքները կառավարման և ծառայությունների բարձր սակագների պատճառով, դրանք չկարողացան մրցակցել մասնավորների հետ: Անշուշտ, մասնավոր մեխանիզատորները հասկանում են տեխնիկայի և հիմնականում նրանց ջանքերի շնորհիվ է, որ հին, "ծերացած" գյուղտեխնիկան այսօր էլ օգտագործվում է արտադրության մեջ: Սակայն այդ տեխնիկան պահանջում է շահագործման բարձր ծախսեր և ունենում է ցածր արտադրողականություն[28]:

Ամբողջ տրակտորային պարկից (15115) միայն 20.8 տոկոսը (3143 միավոր) ունեն 20 տարուց փոքր տարիք, մնացածը դրանից ավել է, իսկ 15.5 տոկոսը (2342 միավոր)՝ 30 տարուց ավելին է շահագործվում: Ամբողջ տրակտորային պարկի մոտ կեսն ունենալով 25-ից բարձր տարիք շահագործման ծախսերը մեծացնում են շուրջ 48-55 տոկոսով, միաժամանակ ավելացնելով վառելիքի ծախսը 55-60 տոկոսով: Եթե հաշվի առնենք, որ դրանք արտադրված են խորհրդային տարիներին նրա տարբեր քաղաքներում, որոնց հետ չկան առևտրային կապեր կամ այլևս չեն գործում այդ գործարանները, ապա հասկանալի է թե ինչ՞ բարդությունների առջև են կանգնում տեխնիկայի սեփականատերե-

[28] Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրոմշակումը. Եր. «Լիմուշ», 2010, էջ 112

որը պահեստամասեր ձեռք բերելիս: Այս դեպքում ասում են մեկնաբանություններն ավելորդ են:

Աղյուսակ 1.8-ում բերվում են գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և տեխնիկական վիճակը ՀՀ-ում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

Աղյուսակ 1.8

Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և տեխնիկական վիճակը ՀՀ-ում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ [29] (%-ով)

	Առկաքանակը (հատ)	Սարքինության մակարդակը (%)
Տրակտորներ	15115	79.2
Բեռնատար մեքենաներ	15213	75.9
Հացահատիկյաին կոմբայներ	1355	73.8
Տրակտորային կցասայլեր	6143	87.0
Տրակտորային խոտհնձիչներ	2080	85.9
Կերահավաք կոմբայներ	407	70.9
Հատիկազտիչ մեքենաներ	423	84.3
Տրակտորային շարքացաներ	1857	86.5
Տրակտորային գութաններ	3949	89.9
Կուլտիվատորներ	2289	85.9

Ինչպես տեսնում ենք հանրապետության գյուղատնտեսական տեխնիկան սարքինության աստիճանով գտնվում է ցածր մակարդակի վրա: Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի քանակը բարվոք է, սակայն անհանգստացնում է դրանց սարքինության աստիճանը, որը

[29] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016 թ., էջ 296, Գյուղատնտեսությունը ՀՀ-ում 2011-2015, Եր. 2016 էջ 124-132

տատանվում է ըստ տեխնիկայի տեսակների 70-89,9%: Դրանք հիմնակա-նում արտադրվել են 1976-1991 թվականներին և թարմացման խիստ կարիք ունեն: Սակայն տնտեսավարման ներկա փուլում գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակությունը և կոոպերացիայի զարգացման դանդաղ տեմպերը սահմանափակում են նոր տեխնիկա գնելու հնարավորությունները, ինչի պատճառով էլ գյուղացիական տեխնիկայի պարկը ոչ թե համալրվում է, այլ քանակապես նվազում է:

Վերջին երեք տարվա ընթացքում տրակտորների թիվը պակասել է 786 միավորով (շուրջ 5 %), իսկ կերահավաք կոմբայնինը՝ ավելի քան երկու անգամ:

Գյուղատնտեսական տեխնիկայի համալրման խնդիրը մասնակիորեն լուծվում է ճապոնական "Աջակցություն սակավապահով ֆերմերներին" ծրագրի և Չինաստանի ու Հնդկաստանի կառավարությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների միջոցով: Այդ տեխնիկան շուկայականից շատ ցածր գներով, աճուրդով վաճառվում է գյուղացիական տնտեսություններին: Նշված ծրագրերով 1998-2012 թվականներին ներմուծվել է շուրջ 1000 տրակտոր և 120 հացահատիկային կոմբայն, որոնք կազմում են առկա տեխնիկայի մոտ 4-5 տոկոսը:

Ագրոպարենային ոլորտի վերլուծությունը չի կարող պարփակվել միայն գյուղմթերքների արտադրության շրջանակներով, այն ամբողջական լինելու համար պետք է ընդգրկի նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառը: Դեռևս խորհրդային տարիներին Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը հանդիսանում էր տնտեսության հիմնական ճյուղերից մեկը՝ ընդգրկելով խաղողի, պտղի, բանջարեղենի, կաթի, խորդենու և ծխախոտի վերամշակման ենթաճյուղերը: Այդ ժամանակ արդյունաբերական արտադրանքի շուրջ 30 տոկոսը պատկանում էր ագրարային ոլորտին: Խորհրդային ժամանակներում համակարգում գործում էին արտադրական մեծ կարողություններով ձեռնարկություններ (գինու, կոնյակի, պահածոների, հյութերի), որոնց արտադրանքը մեծ պահանջարկ էին վայելում ամբողջ Խորհրդային Միությունում:

1990-ական թվականների սկզբին, երբ հանրապետությունը հայտնվեց խոր շրջափակման մեջ, ամբողջովին վերացավ արտաքին իրացման շուկաները, ագրովերամշակող ձեռնարկությունները կտրուկ կերպով կրճատեցին արտադրության ծավալները: Միայն 1998 թվականից սկսած մասնավոր ձեռներեցների կողմից ներդրումների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, որոշակիորեն բարելավվեց սննդարդյունաբերության վիճակը:

1999 թվականին Շվեյցարական Անդրե Գրուպ ընկերությունը Հայաստանի պտղաբանջարեղեն վերամշակող 4 ընկերություններին (Արարատի, Արտաշատի, Արմավիրի պահածոների և Արմավիրի գինու գործարաններին) տրամադրեց լոլիկի մածուկի, պտղախյուսի ասեպտիկ փաթեթավորման սարքավորումներ: Դա հնարավորություն տվեց մթերել և վերամշակել շուրջ 40 հազ. տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա համեմատ ծավալն ավելացնելով շուրջ 10 անգամ:

Սննդարդյունաբերության ծավալների մեծացումը նպաստեցին նաև շուկայական հարաբերությունների խորացումը, համատեղ ձեռնարկությունների կառուցումը, հների վերակառուցումը և տեխնիկական վերազինումը, առաջավոր տեխնոլոգիաների ու որակի կառավարման համակարգերի ներդրումը, արտադրանքի որակի բարելավումը, արտահանման հնարավորությունների մեծացումը, պորտֆելային կապիտալի ներդրումը և այլն:

Առանձին արտադրությունների գծով խոշոր ներդրումներ են կատարվել՝

- ✓ Լինսի հիմնադրամի միջոցով՝ 6 մլն ԱՄՆ դոլար (պահածոների արտադրություն),
- ✓ Պեռնո Ռիկար ընկերության՝ 30 մլն դոլար (գինեգործություն),
- ✓ Ֆրանսիական Կաստել ընկերության՝ 18 մլն դոլար (գարեջրի արտադրություն),
- ✓ Հայ-ռուսական, հայ-հունական Մասիս-տաբակ և Կոկա-կոլա ընկերություններ

Օտարերկրյա ներդրումների հաշվին նոր տեխնոլոգիաներ են ներդրվել “Եվրոթերմ” ՓԲԸ-ում, “Թամարա-Ֆրութ” ՍՊԸ-ում, “Երևան գինու, օղու, կոնյակի կոմբինատ”-ում, “Գրեյթ Վելլի”, “Վեդի ալկո”,

“Արտաշատ վինկոն” “Արտաշես”, “Ջերմուկ գրուպ”, “Բջնի”, “Զոնք”, “Երևանի գարեջուր”, “Աշտարակ կաթ”, “Գեղարդ”, “Լինդա” և մի շարք ընկերություններում:

Գյուղմթերքների վերամշակման արտադրության զարգացմանը զգալիորեն նպաստել են Համաշխարհային բանկը (ՀԲ) և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD), որոնց միջոցներով գյուղնախարարությունը մշակեց “Հայաստանի Հանրապետության մարզերում փոքր և միջին ձեռներեցության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգի” շրջանակում տրամադրված 8 մլն դոլարի վարկային մրջոցների, միջազգային այլ կազմակերպությունների ու սեփական ներդրումների շնորհիվ վերազինվել են պահածոների, գինեգործության, պանրի, կաթնամթերքի, մսամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 170 փոքր ու միջին ձեռնարկություններ: Այս ամենի արդյունքում ներկայումս հանրապետությունում գործում են պահածոների 30, գինեգործական 40, կաթի վերամշակման ավելի քան 250, մսամթերքի 70 և ծխախոտի վերամշակման 4 ընկերություններ: Դրանց շնորհիվ տարեց տարի ավելանում է խաղողի, պտղի և բանջարեղենի վերամշակման ծավալները, ինչի մասին վկայում են աղյուսակ 1,9-ի տվյալները:

Բերված տվյալներից տեսնում ենք, որ անցած 10-12 տարվա ընթացքում խաղողի գնումների ծավալները, հետևաբար նաև վերամշակման արտադրությունն ավելացել է ավելի քան 3 անգամ, պտղինը՝ 1,5-2 անգամ, իսկ բանջարեղենինը՝ բազմաթիվ անգամ: Դա միաժամանակ բերել է նրան, որ վերամշակող ձեռնարկությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրեր կնքել գյուղացիական և ագրարային տնտեսությունների հետ, ինչն էլ իր հերթին խթանում է գյուղատնտեսական մթերքների արտադրության ընդլայնմանը:

Սակայն, դրա հետ միասին, ոլորտի առջև ծառացած խնդիրների լուծումը չի կարելի համարել մատչելի, քանի որ “Գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացման և ապրանքայնության մակարդակի բարձրացման համար մեծ խոչընդոտ է հանդիսանում գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը,

դրանց թույլ նյութատեխնիկական բազան, արտադրության մեքենայացման ցածր մակարդակը”:[31]

Աղյուսակ 1.9

ՀՀ ագրովերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողի, պտղի և բանջարեղենի գնումների ծավալները 1998-2015 թվականներին*

տոննա

Տարեթիվ	Խաղող	Պտուղ	Բանջարեղեն
1998	41938	9077	4200
1999	50300	12918	39226
2000	50714	21003	39440
2001	37032	10248	26142
2002	47026	5900	52065

Աղյուսակ 1.9-ի շարունակություն

1	2	3	4
2003	50947	4362	96570
2004	79539	4394	35806
2005	95592	20715	42925
2006	106055	12789	67563
2007	144389	148444	57111
2008	137356	19406	38999
2009	127740	11255	32309
2010	134968	3626	29681
2011	128927	14285	50987
2012	156590	25620	33645
2013	167184	28791	27970
2014	184149	13875	34076
2015	217980	15268	38146

Այս պարագայում մտահոգիչ հարց է առաջանում՝ ինչպես վարվել, ինչ կլինի հետագայում, եթե վերամշակող կազմակերպությունները չկարողանան ավելացնել իրենց կարողությունները, չկառուցվեն նոր ձեռնարկություններ, չստեղծվեն

[31] Ս.Ղազարյան, Գ.Դավթյան “Գյուղատնտեսության զարգացման մի քանի հիմնահարցեր և դրանց լուծման ուղիները”: ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտի գիտաժողովի նյութեր, 2009թ., էջ 377, 376-382:

* Տվյալները վերցված են www.minargo.am կայքից

լրացուցիչ հզորություններ: Մեր կարծիքով դրան կարող է նպաստել լիզինգը, որը հնարավորություն կտա, առանց գյուղատնտեսության արտադրության ծավալների կրճատման, լիզինգային ներդրումների միջոցով մեծացնել վերամշակվող հզորությունները: Իրենց հերթին գյուղացիական տնտեսությունները նույնպես կարող են օգտվել լիզինգից, նրա միջոցով ձեռք բերել նոր տեխնիկա և առաջավոր տեխնոլոգիա, ընդլայնել գյուղատնտեսական արտադրության չափերը, մեծացնել իրենց եկամուտները, ժամանակի ընթացքում դառնալ գյուղատնտեսական տեխնիկայի իրական սեփականատեր:

Լիզինգի էության, առավելությունների, դերի և նշանակության, ինչպես նաև կիրառության հարցերը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում, քննարկում է սույն աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում:

ԳԼՈՒԽ 2

ԼԻԶԻՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

2.1 Լիզինգի պատմական զարգացման էվոլյուցիան և էությունը

Շուկայական տնտեսավարման արդի փուլում գիտատեխնիկական հեղափոխության ազդեցության ներքո տեղի է ունենում արտադրության ինտենսիվության գործընթաց՝ կապված նոր տեխնիկայի կիրառման և առաջավոր տեխնոլոգիաների ներդրման հետ, որոնք պայմանավորում են ցանկացած ձեռնարկության, ֆիրմայի տեղը տվյալ շուկայում, ինչի համար էլ այդ տնտեսվարող սուբյեկտները ձգտում են այս կամ այն ճանապարհով նորացնել, արդիականացնել սարքավորումները, հիմնական կապիտալը, այլապես շուկան իր "դաժան" օրենքներով (սանիտարական գործառույթով) դրանց դուրս կմղի այդ ոլորտից, տեղը զիջելով առավել մրցունակ արտադրանք թողարկողներին, որոնք տվյալ պահին չեն վախենում ձևավորվող մրցակցային հարաբերություններից: <u>Նոր տեխնիկայի կիրառման, սարքավորումների օգտագործման արդյունավետության բարձրացման բնագավառի տնտեսական գործունեության վերլուծությունը ցույց է</u> տալիս, որ այստեղ վճռական դեր կարող է խաղալ լիզինգը՝ որպես ներդրումների իրականացման փորձված և հուսալի միջոցի:

<u>Լիզինգ</u> տերմինը առաջացել է անգլերեն ***<u>Lease</u>*** բառից, որը նշանակում է "վարձակալություն": Լիզինգային գործարքները վաղուց արդեն դարձել են զարգացած երկրների տնտեսությունների անբաժան մասը: Սակայն պատմությունը վկայում է, որ լիզինգային հարաբերությունների նախատիպեր են հանդիսացել տարբեր տեսակի գույքի ձեռք բերման կամ վարձակալության տարաբնույթ գործարքների ֆինանսավորման ձևերը: Լիզինգ հասկացությունը հիմնված է սեփականության իրավունքի դրսևորման վրա, որն ընդգրկում է տիրապետման, տնօրինման և օգտագործման հատկանիշները: Պատմաբան տնտեսագետները վկայում են, որ դեռևս մ.թ.ա 350 թվականին Արիստոտելը իր "Ռիտորիկայում" նշում էր՝."ազգի

հարստությունը կայանում է իրի օգտագործման, այլ ոչ թե դրա տնօրինման իրավունքի մեջ”[33]:

Անգլիացի պատմաբան Թոմ Կլարկը, որին հղում է կատարել ռուս իրավաբան-հետազոտող Ե.Կաբատովան, հայտնագործել է լիզինգի մասին որոշ դրույթներ Համուրապիի օրենսգրքում՝ ընդունված մեր թվարկությունից առաջ 1760 թվականին[*]: Իրականում, ամենահին փաստաթղթերը վարձակալության վերաբերյալ հիշատակվում է շուրջ 2000 թվին մ.թ.ա., համաձայն որի Անտիկ Շումերական Ուր քաղաքում հայտնաբերվել էին գյուղատնտեսական գործիքների, հողի, ջրային ռեսուրսների, ուղտերի և այլ կենդանիների վարձակալության տվյալներ: Հին քաղաքակիրթ ազգերը, ինչպիսիք են հռոմեացիները, եգիպտացիները, վարձակալությունը համարել են գրավիչ և հասանելի միջոց սարքավորումների, հողի, տնային կենդանիների ձեռք բերման համար: Հնագույն ֆինիկցիները լայնորեն կիարռում էին նավերի վարձակալությունը, որն իր տնտեսական ու իրավական բնույթով շատնման է սարքավորումների ժամանակակից լիզինգի դասական ձևին: Ընդ որում, այդ վարձակալության պայմանագրում, գործնականում արտացոլվում են հիմնախնդիրների նույն շրջանակները, որոնք ներկայումս էլ հանդիսանում են քննարկման առարկա վարձատուի ու վարձակալի միջև հարաբերություններում[34]:

Միջնադարում վարձակալությամբ հիմնականում տրվում էին ձիերը և գյուղատնտեսական գործիքները: Սակայն ֆեոդալական ֆորմացիայում իշխում էր ոչ թե շուկայական հարաբերությունները, այլ վաշխառուական ձևը, որտեղ վարձակալողը տնտեսական կանխման մեջ էր մնում վարձատուից, վճարելով մի քանի անգամ մեծ գումար, քան գույքի սկզբնական արժեքն էր:

Կարելի նշել, որ այդ ժամանակաշրջանում վարձակալությունն օգտագործվում էր անազնիվ նպատակներով հարստություն

---

[33] Аристотель. М., Сочинения (политика): в 4-х томах. М. Мысль. 1984, с. 645-681

[*] Кобатова Е.В. Лизинг: правовое регулирование, практика. М., 1998, с. 12

[34] Францева Е.Ф. Лизинг. Справочное пособие. М., 1998, с.3

կուտակելու համար և հաճախ հնարավոր չէր տարբերել ու ճանաչել գույքի իրական սեփականատիրոջը կամ տիրապետողին, դրանով իսկ շփոթության մեջ դնելով վարկատուին, երբեմն էլ պարտապանին: Այդ պատճառով ընդունվեցին լիզինգի վերաբերյալ օրենքներ, ընդ որում առաջինն ընդունվեց Անգլիայում 1284 թվականին, որը եղել է ժամանակի պահանջ: 1571 թվականին ընդունվեց լիզինգի հետկապված նոր օրենք, որով արգելվում էր ապորինի գործարքները և թույլատրում էր միայն իրական լիզինգը[35]:

19-րդ դարի սկզբին Անգլիայում արդյունաբերության զարգացման և տարբեր տեսակի սարքավորումների արտադրության ավելացման հետ միասին մեծացավ լիզինգով տրվող ապրանքների քանակությունը: Երկաթուղային տրասպորտի և քարածխի արդյունահանման զարգացումը խթանիչ դեր խաղաց լիզինգային գործարքների պայմանագրերի զարգացման համար: Ածխարդյունաբերության զարգացմանը զուգընթաց ավելացավ այն ձեռնարկությունների թիվը, որոնք գնում էին քարածխի տեղափոխման համար վագոններ և դրանց տալիս վարձակալության: Այդ հիմքի վրա ձևավորվեցին կոմպանիաներ, որոնց նպատակը հանդիսանում էր կապիտալի շահավետ ներդրումը գույքի և սարքավորումների վարձակալության բիզնեսի մեջ: Պայմանագրում նախատեսվում էր նաև օպցիոն (իրավունք)՝ իրավունք տալով օգտագործոին գնել օբյեկտը լիզինգի ժամանակ: Այդ փաստը նպաստեց նրան, որ օգտագործողը առավել խնայողաբարու սրտացավ էր օգտագործում գույքը, քանի որ կար հնարավորություն հետագայում այն ձեռք բերելու որպես սեփականություն: Նման տիպի պայմանագրերը ստացան □վարձակալություն-գնում□ անունը: Դրանից հետո վարձակալության և վարձակալություն-գնում ձևերի զարգացումը անհարաժեշտություն առաջացրեցին տարբերակել պայմանագրերը՝ նախատեսվող այդ հարաբերությունները:

1938 թվականին Անգլիայում ընդունվեց օրենք վարձակալություն-վաճառք գործարքի մասին, որն ակտիվի վարձակալության վերաբերյալ պայմանգիր էր, ինչը հնարավորություն էր տալիս

[35] Бутенина Н.В. Лизинг в Великобритании// Лизин ревью 2000 N 3-4, с. 27

վարձակալին ձեռք բերել գույքը պայմանագրում նշված բոլոր պարտավորությունները կատարելու դեպքում:

Ոլորտի մասնագետները պնդում են, որ ժամանակակից լիզինգն առաջացել է հենց վարձակալություն-վաճառք գործարքից [36]: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ լիզինգի հայրենիքը Մեծ Բրիտանիան է, իսկ նրա հետագա զարգացումները ընթացել են Եվրոպական երկրներում, հետագայում ընդգրկելով նաև Միացյալ Նահագները և աշխարհի մյուս երկրները:

Այսպիսով, կարելի է միանշանակ հավաստել, որ սեփականության տնօրինման և տիրապետման իրավունքի հատկանիշների տարբերակման գաղափարը հայտնի է անհիշելի ժամանակներից, իսկ ներկայիս լիզինգի ծնունդը և արագ տարածումը դարձել է ժամանակի պահանջ, որի կիրառության անհրաժեշտությունը բխում է ներդրումների համար ֆինանսական միջոցների սակավությունից: Ժամանակակից լիզինգը ավանդաբար ընդունված է համարել ամերիկյան ձեռք բերում, ինչն ամերկյան ձեռնարկատերերի կողմից Եվրոպա է արտահանվել 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Սակայն անգլիացիները հավաստում են, որ լիզինգը ծնվել է Մեծ Բրիտանիայում, տեղափոխվել է Հյուսիսային Ամերիկա և հետո միայն որոշակի փոփոխությունների ենթարկվելով 20-րդ դարի երկրորդ կեսին վերադարձել Եվրոպական երկրներ:

Որոշ տնտեսագետներ գտնում են, որ լիզինգ հասկացությունը լայն կիրառություն է ստացել 1877 թվականից, երբ ամերիկյան "Բել Թելեֆոն քոմփանի" ընկերությունը իր արտադրած հեռախոսները ժամանակավոր տիրապետման սկզբունքով տրամադրել է մարդկանց, իսկ այնուհետև վարձակալության, որը խթանել է հետագայում հեռախոսների արտադրության և վաճառքի ծավալների մեծացմանը[37]: Դրանով առաջացավ լիզինգի զարգացման պատմության նոր ժամանակաշրջան:

Տնտեսագետների որոշակի զանգված պնդում են այն տեսակետը, որ լիզինգն առաջացել է ԱՄՆ-ում 1952 թվականի, երբ լիզինգի հայր համարվող Հենրի Ծոնֆելդը հիմնադրեց "Յունաթեդ Սթեյդ Լիզինգ

[36] Газман В.Ф. Финансовый лизинг. М., 2005, с. 20

[37] Хойек В. Как делать бизнес в Европе. – М., 1990, с. 253; Шпитлер Х. Практический лизинг, пер. с немецкого.– М., 1991; Чекмарева Е. Лизинговый бизнес: практическое пособие. М., 1994, с.127

Ինտերնեշնլ” ընկերությունը[38]: Սակայն շատ շուտով նա հասկացավ, որ հարաբերությունների այս ձևը իր մեջ պարունակում է մեծ հնարավորություններ, որոնք դեռևս բացահայտված չեն:

1950-ական թվականներին լիզինգային ընկերությունների արտասահմանյան շուկաներ դուրս գալու ձգտումներն ավելի է ուժեղանում: 1959 թվին ամերիկյան “United States Leasing Corp” ընկերությունը Կանադայում ձևավորում է մասնաճյուղ: Այդ նույն տարում տեղի է ունենում հանդիպում, որն իր նշանակությամբ մեծ դեր է խաղացել լիզինգի զարգացման գործում: Անգլիական վարկային առևտրային ընկերության տնօրենը այցելելով ԱՄՆ, հանդիպեց Միացյալ Նահանգների “Լիզինգային ընկերության” ղեկավարության հետ: հանդիպման արդյունքը դարձավ “Merchantile Credit Company” լիզինգային ընկերության ստեղծումը, որի բաժնետոմսերի 80 տոկոսը պատկանում էր իրենց, իսկ 20 տոկոսը՝ “US Leasing Corp” ընկերությանը: Այդ համագործակցության արագ արդյունքները խթանեցին անգլիական մյուս ֆինանսական կազմակերպություններին ուշադրություն սևեռել այդ ոլորտի վրա: Պետք է նշել, որ լիզինգի զարգացման անգլիական և ամերիկյան ուղղությունների □հանդիպումն□ անցավ բնականոն ձևով, առանց իրավական լուրջ խոչընդոտների:

Եվրոպական առաջին լիզինգային ընկերությունը ստեղծվել է 1962 թվականին Դյուսելֆորդում, որը հետագայում միավորվեց ուրիշ ընկերությունների հետ, հիմնավորվեց Ֆրանկֆուրտում և կոչվեց “Դոյչե Լիզինգ ԱԳ” “Դոյչե Անլագեն-լիզինգ ԳՄԲԽ” և “Միտֆինանց ԳՄԲԽ”: Առաջին ֆրանսիական լիզինգային ընկերությունը ստեղծվել է 1982 թվին, իսկ արդեն 1987-ին երկրում գործում էր 56 լիզինգային ընկերություն, որոնք տարեկան ապահովում էին շուրջ 57 մլրդ ԱՄՆ դոլարի պայմանագրային շրջանառություն: Իտալիայում առաջին լիզինգային կազմակերպությունը հիմնադրվել է 1963-ին, հետագա 20 տարվա ընթացքում դրանց թիվն անցավ 2000-ից:

[38] Киркорова Н. Направления совершенствования нормативной базы лизинга. М., 2004, с. 21; Прилуцкий Л. Лизинг: правовые основы лизинговой деятельности в РФ. – М., 1996, с. 128: Лещенко М. Основы лизинга. М., 2004, с. 9; Харитонова Ю. Договор лизинга. – М., 2002, с.224. Сидельникова Л и др., Бухгалтерский учет лизинговых операций. – М., 2001, с.203

Շվեդիայում 60-ական թվականների սկզբին լիզինգային գործարքների իրականացման դեպքում, կնքվում էին պայմանագրեր կրկնակի գնման վերաբերյալ, համաձայն որի մատակարարն իր վրաէր վերցնում պարտավորվածություն ետ գնել գույքը, եթե օգտագործողը լիզինգի գծով չի կատարում իր պարտականությունը: Ճապոնիայում առաջին լիզինգային կազմակերպությունը ստեղծվեց 1969 թվականին՝ անմիջապես պետության հովանության ներքո: Ռուսաստանում 15-րդ դարում է սկսել կիրառվել ֆեոդալական հողերի վարձակալություններ անհատական և կոլեկտիվ ձևերով, որոնք հիմնականում տրվում էին համայնքային հողերից[39]: Ըստ էության դա դարձավ լիզինգի կիրառման առաջնեկը գյուղատնտեսության ոլորտներում:

Խորհրդային միությունում լիզինգն առաջին անգամ օգտագործվել է ՆԷՊ-ի շրջանում: 1921 թվականին վերականգնվեցին վարձակալական հարաբերությունները, որոնք դարձան շուկայական տնտեսության անխախտելի տարր և տնտեսական ազատության խորհրդանիշ: Գույքի վարձակալությամբ հանձնումը իրականացվում էր մրցույթային կարգով այն թեկնածուների միջև, որոնք իրենց վրա էին կրում ավելի մեծ պարտավորություն արտադրանքի թողարկման գծով: Վարձակալական պայմանագրի ժամկետը տատանվում էր 1-ից 6 տարվա միջև: Սակայն 1929 թվականից Ստալինը առաջ քաշեց գյուղատնտեսության մեջ վարձակալության գաղափարի վերացումը և բռնի ուժով կոլեկտիվացման իրականացումը: Դա վերջնականապես վերացրեց աշխատանքի և գույքի վարձակալության հասկացությունը գյուղատնտեսության մեջ[40]:

Եվ միայն դրանից կես դար հետո՝ 1988 թվականին, արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով, նորից թույլատրվեց կոլտնտեսություններին ու մյուս գյուղատնտեսական ձեռնարկություններին վարձակալել կամ էլ գյուղատնտեսական հողատարածքները երկար ժամանակով վարձակալությամբ տրամադրել կոպերատիվներին, պետական,

[39] Горемыкин В.А. Лизинг. “Дашков и К°”. – М., 2003. с. 105-106
[40] Горемыкин В.А. Лизинг. “Дашков и К°”. – М., 2003. с. 105-106

հասարակական ձեռնարկություններին, ինչպես նաև անհատ քաղաքացիներին գյուղատնտեսական մթերքների արտադրության համար: Հողի հետ միասին կարող էին վարձակալությամբ տրվել նաև շենքեր, կառույցներ, մեքենաներ, սարքավորումներ և այլ նյութական արժեքներ, որոնք անհրաժեշտ են գյուղմթերքներ արտադրելիս: Քաղաքացիներին թույլատրվում էր գնել ձիեր, բանվորական անասուններ, գյուղատնտեսական տեխնիկա, ավտոմեքենաներ և հող անձնական սեփականության ձևով՝ օգտագործելով գյուղացիական և օժանդակ տնտեսություններում, վարձակալական պայմանագրերով աշխատանքներ կատարելիս:

Վարձակալական գործի զարգացման գործընթացի արագացման նպատակով 1989 թվականի ապրիլի 7-ին հրապարակվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ "ԽՍՀՄ-ում վարձակալության և վարձակալական հարաբերությունների մասին" հրամանագիրը, որը սակայն չէր ընդգրկում գործուն մեխանիզմ հողի սեփականության ապապետականացման վերաբերյալ՝ այլ կրեց ընդամենը դեկլարատիվ հնարավորություն արտադրության վարձակալական ձևի կիրառման համար: Միայն Խորհրդային Միության փլուզումից հետո, ՌԴ-ի արտաքին առևտրային մակարդակով ձևավորվեցին մի շարք ընկերություններ (Ավիաէքսպորտ, Տրակտորէքսպորտ, Սովտրանսավտո), որոնց գործարքները հիմնականում ուղղված էին զարգացած երկրներից ակտիվներ ներմուծելուն: Այսինքն Ռուսաստանի Դաշնությունը համարվում է լիզինգառու պետություն[41]:

ԽՍՀՄ-ում "լիզինգ" հասկացությունը անուղղակիորեն շրջանառության մեջ է դրվել 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Lend-lease ծրագրով իրականացվեցին ամերիկյան տեխնիկայի մատակարարում, որի ծավալը կազմեց 49.1 մլրդ ԱՄՆ դոլար[42]:

1970-80-ական թվականներին խորհրդային արտաքին առևտրի կազմակերպությունները լիզինգը դիտարկում էին որպես

[41] Гуккаев В.Б. Лизинг. Правовые основы, учет, налогообложение. "Главбух", М., 2002, с.14
[42] Трушкевич Е.В., Трушкевич С.В. Лизинг. – Минск. Амалфея, 2001, с.36-39

թանկարժեք սարքավորումների, հաստոցների, հոսքային գծերի, դարբնամամլիչների, նորոգման արհեստանոցների, ինքնաթիռների, ծովային նավերի, ավտոմեքենաների, հաշվողական տեխնիկայի ձեռք բերման և իրացման ձև: Սովորաբար լիզինգը գրանցվում էր որոշակի կոնկրետ ժամկետի համար վարձակալության խորհրդային և արտասահմանյան գործակալների միջև կնքված պայմանագրերում:

1991 թվականին ստեղծվեց սովետա-ֆրանս-գերմանական միջազգային "Եվրոլիզինգ" լիզինգային ընկերությունը, որի հիմնադիրները հանդիսացան ԽՍՀՄ արտաքին առևտրի բանկը, ԽՍՀՄ Պետմատը և ֆրանսիական խոշորագույն բանկերից մեկը՝ Փարիզի ազգային բանկը: Ներքին շուկայում լիզինգային գործարքների սկիզբ կարելի է համարել 1989 թվականը, երբ ձեռնարկություններին թույլատրվեց անցում կատարել տնտեսավարման վարձակալական ձևերին:

Այսպիսով, միանշանակ չի կարելի պնդել, որ նախկինում մեզ մոտ չկար լիզինգային գործարքներ: Դրանք որոշակի չափով իրականացվել են տարբեր ոլորտներում նպաստելով ներդրումային գործընթացի զարգացմանը:

Ներկայումս լիզինգը համարվում է ամենատարածված բիզնեսի ձևերից մեկը: Եվրոպական երկրներում ներդրումների ավելի քան 40%-ը կատարվում է լիզինգի միջոցով: Վերջին 20 տարիների ընթացքում լիզինգային գործարքների ծավալն աճել է շուրջ 10 անգամ:

Լիզինգը հանդիսանալով ներդրումային գործունեության անբաժանելի տարրը, նպաստում է արտադրության աշխուժացմանը և զարգացմանը, տնտեսության ճգնաժամային երևույթների հաղթահարմանը: Ֆինանսական ռեսուրսների պակասուրդի պայմաններում, լիզինգը հնարավորություն է տալիս բարձրացնել արտադրանքի մրցունակությունը, ապահովելու ներդրումների կառուցվածքի խնդիրների լուծումը: Բացի դրանից, լիզինգը թույլ է տալիս պայմանագրի գործունեության ամբողջ ժամկետի ընթաց-քում ծանոթանալ սարքավորումների աշխատանքի հետ, փորձարկել նրա շահագործումը և հետո, եթե դա բավարարում է իր պահանջները, ձեռք բերել սեփականության իրավունքով, ընդ որում հաշվի

առնելով նախկին վճարումները: Նորացվող տեխնիկայի արագացման պայմաններում լիզինգային գործարքները հնարավորություն են տալիս առավել ակտիվ կերպով օգտագործել գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները, արդյունավետ թարմացնել արտադրական բազան, էականորեն կրճատել սարքավորումների բարոյական մաշվածքի բացասական ազդեցությունն արտադրության ծախսերի վրա և միաժամանակ հնարավորություն ընձեռնում ձեռք բերելու սարքավորման համար ոչ թե կուտակելով գումարներ միանգամից վճարել, այլ աստիճանաբար օգտագործելով այդ միջոցները՝ կատարել մասհանումներ: Այսպիսով, լիզինգառուի համար, ստեղծվում է իրավիճակ, երբ սկսում է օգտագործել գույքը արտադրական նպատակների համար ավելի շուտ, քան իրականացրել է գնումները: Պետք է նշել, որ լիզինգը թույլ է տալիս ըստ լիզինգառուի ցանկության, ձեռք բերել գույքը այնպիսի չափանիշներով, որոնք առավելագույնս համապատասխանում են նրա ֆինանսական և արտադրական հնարավորություններին: Լիզինգը նաև հնարավորություն է տալիս ձեռք բերել սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են կոնկրետ ժամանակի ընթացքում, սեզոնային աշխատանքներում (օրինակ կոմբայնը հնձի ժամանակ), կամ էլ որոշակի աշխատանքների կատարման համար (օրինակ շինարարական կռունկներ, բուլդոզերներ և այլն), որոնց պահպանումը աշխատանքների կատարումից հետո շահավետչ է:

Լիզինգը, որպես տնտեսական կատեգորիա, յուրահատկությունը կայանում է նրանում, որ տնտեսական հարաբերությունների համակրգում լիզինգային սուբյեկտների գործարքների ընթացքում տեղի է ունենում կապիտալ-սեփականության և կապիտալ-գործառույթի գործընթացների տարանջատում: Գույքային հարաբերությունների տեսանկյունից լիզինգային գործարքը բաղկացած է երկու փոխկապակցված բաղադրիչներից.

- ✓ հարաբերություն առքուվաճառքի,
- ✓ հարաբերություն կապված գույքի ժամանակավոր օգտագործման հետ:

Այսպիսով, լիզինգը գույքային և տնտեսական հարաբերությունների համալիր է. որի դեպքում մեկ

կազմակերպություն (օգտագործող) դիմում է ուրիշ կազմակերպությանը (լիզինգային ընկերությանը) խնդրանքով ձեռք բերել անհրաժեշտություն և փոխանցել նրան ժամանակավոր օգտագործման:

Արդյունավետ լիզինգային գործունեություն ծավալելու համար էական նախապայման է հանդիսանում լիզինգի բովանդակության և առանձնահատկության ճիշտ բնորոշումը: Քանի որ լիզինգը գոյություն է ունեցել տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում, յուրաքանչյուրում հանդես է եկել յուրովի՝ կախված տվյալ ժամանակաշրջանի ու երկրի տնտեսական, ազգային, տարածաշրջանային, քաղաքական և այլ առանձնահատկություններից, դրա համար էլ լիզինգի բնորոշման վերաբերյալ կան բազմաթիվ մեկնաբանություններ: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Լիզինգն արտադրական նշանակության կառույցների, տրանսպորտային միջոցների, մեքենաների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն է, ներդրումների ֆինանսավորման և իրացման ակտիվացման համեմատաբար նոր եղանակ, որը հիմնված է ապրանքների նկատմամբ վարձատուի սեփականության իրավունքի պահպանման վրա: Լիզինգային գործառույթներն իրագործվում են ոչ միայն մասնագիտացված ընկերությունների, այլև խոշոր առևտրային բանկերի կողմից: Լիզինգը հնարավորություն է ընձեռնում անհրաժեշտ սարքավորումներ ստանալ՝ առանց զգալի դրամական միջոցների միանվագ ծախսման, որն անխուսափելի է սովորական գնման ժամանակ[43]:
2. Լիզինգը՝ մեքենասարքավորումների, տրանսպորտային միջոցների, արտադրական նշանակության կառույցների երկարաժամկետ վարձակալություն է (6 ամսից մինչև մի քանի տարի ժամկետով)՝ նախատեսելով վարձակալի կողմից դրանց հետագա գնում: Լիզինգն իրականացվում է լիզինգային ընկերության (լիզինգատու) կողմից, որն իր հաշվին ձեռք է բերում սարքավորումներ և դրանք վարձակալության տալիս մի քանի տարով, և վարձակալող ֆիրման (լիզիգառու), պարբերաբար իրականացնում է վճարումներ լիզինգային գույքի

[43]Կիրակոսյան Գ., Ղուշչյան Հ, Տիգրանյան Ի. Տնտեսագիտական բացատրական բառարան: Եր. “Տնտեսագետ”, 1999, էջ 176

օգտագործման դիմաց, մինչև կնքվող երկարաժամկետ պայմանագրի հիման վրա: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո վարձակալը կամ վերադարձնում է գույքը լիզինգային ընկերությանը, կամ երկարացնում է պայմանագրի գործողության ժամկետը (կնքում նոր պայմանագիր), կամ գնում է գույքը մնացորդային արժեքով[44]:

3. Լիզինգն՝ ակտիվների (հիմնականում շինությունների, տրանսպորտային միջոցների) գնում է լիզինգային ընկերության կողմից, որի արդյունքում մնալով այդ ակտիվ-ների սեփականատերը՝ դրանք փոխառությամբ տրամադրում է իր հաճախորդներին սահմանված վճարի դիմաց: Լիզինգը լավ ներդրումային աղբյուր է, քանի որ առանձին անձանց կամ ընկերություններին թույլ է տալիս օգտագործել ակտիվներ՝ առանց դրանցում խոշոր կապիտալ ներդնելու[45]:
4. Լիզինգը նյութական հարաբերությունների այն ամբողջությունն է, որի դեպքում մի կազմակերպություն դիմում է մեկ այլ կազմակերպության խնդրանքով իրեն անհրա-ժեշտ սարքավորումներ տրամադրել ժամանակավոր օգտագործման համար[46]:
5. Լիզինգը պայմանագիր է, որի համաձայն մի կողմը մյուս կողմին է տրամադրում տիրապետելու գույք կամ առարկա՝ սահմանված վճարի դիմաց տարբեր նպատակներով օգտագործելու համար[47]:
6. Լիզինգը վերադարձելիության հիմունքներով միջոցների ներդրման ձև է, այսինքն որոշակի ժամկետով միջոցների տրամադրումն է, որը լիզինգատուն ետ է ստանում նշված ժամկետում, իր ծառայության համար ստանում պարգևատրում միջնորդային վճարի տեսքով[48]:
7. Լիզինգի տնտեսագիտական իմաստը կայանում է նրանում, որ լիզինգառուն երկարաժամկետ վարձակալության է վերցնում կոնկրետ գույք և վարձատուի հանձնարարությամբ

[44] Райзберг Б., Лозовский Л., Стародубцева Е. Современный экономический словарь. – М., 2001, с. 206
[45] COLLINS Словарь по экономике. – Санкт-Петербург, 1998, с. 249
[46] Кобатова Е. Лизинг: правовое регулирование, практика. – М., 1998, с.18
[47] Трушкевич Е.В., Трушкевич С.В. Лизинг. – Минск. Амалфея, 2001, с. 27
[48] Лещенко М. Основы лизинга. М., 2004, с.10

պարտավորվում է այդ գույքի միջոցով կատարել նախանշված աշխատանքներ և չկատարել այնպիսի աշխատանքներ, որոնք համաձայնեցված չեն պայմանագրի պայմաններով: Լիզիգատուն հանդիսանում է լիզինգի օբյեկտի լիակատար սեփականատեր և կարող է համաձայնել սարքավորման շահագործման ընթացքում լիզինգառուի կողմից առաջարկվող մոդերնացման պայմաններին: Լիզինգառուն, պայմանագրի պայմանների համաձայն իր վրա է վերցնում պարտավորություններ՝ կապված սեփականության իրավունքի, գույքի կորուստի, տեխնիկական սպասարկման հետևանքներ[49]:

8. Լիզինգը տնտեսական առումով իրենից ներկայացնում է ձեռնարկատիրական գործունեության տեսակ, ըստ որի վարձատուն ժամանակավորապես ազատ կամ ներգրավված միջոցները վարձակալության հիմունքներով ձեռք է բերում նախատեսված գույքը և որոշակի վարձավճարով տրամադրում վարձակալին ձեռնարկատիրական նպատակներով ժամանակավոր օգտագործելու համար[50]:
9. Լիզինգը գույքային (ունեցվածքային) հարաբերությունների հատուկ ձև է, որը նախատեսում է ոչ միայն սարքավորման տրամադրում ժամանակվոր օգտագործման համար, այլև պայմանագրի ճամկետը լրանալուց հետո օգտագործվող սարքավորման վաճառքի հնարավորություն[51]:
10. Լիզինգի տակ հասկացվում է արտադրության հիմնական միջոցների և այլ ապրանքների վարձակալություն՝ արտադրական օգտագործման նպատակով: Ընդ որում ապրանքները գնվում են վարձատուի կողմից և նա պահպանում է գույքի հանդեպսեփականության իր իրավունքը[52]:

Լիզինգի բնորոշման վերաբերյալ առանձին տնտեսագետների կողմից տրված մոտեցումների ցուցակը կարելի է շարունակել, դրանց թիվը հասցնելով մի քանի տասնյակի: Սակայն բացի անհատ տնտեսագետներից, լիզինգի բնորոշումներ են տրված նաև

[49] Стровский Л. Внешэкономическая деятельность предприятия. М., 199, с. 661
[50] Կոմերցիայի հիմունքները Ս.Բուլանիկյանի խմբ. Եր."Տնտեսագետ", 2003, էջ 163
[51] Մելքումյան Մ. Բիզնեսի էկոնոմիկա, Եր. 2002. էջ 211
[52] Фаминский И. Международные экономические отношения. м., 2004, с.739

մասնագիտական կազմակերպությունների և առանձին երկրների կողմից:

Դրանցից կարելի է առանձնացնել.

ա) լիզինգի ազգային ասոցիացիաների եվրոպական ֆեդերացիայի (Leascurope) սահմանման համաձայն, լիզինգը գործարանի, արդյունաբերական ապրանքների, մեքենասարքավորումների, անշարժ գույքի, ինչպես նաև վարձակալի կողմից արտադրական նպատակներով կիրառվող այլ ապրանքների վարձակալության պայմանագիր է, երբ ապրանքները գնվում են վարձատուի կողմից, և նա մինչև գործարքի ավարտը պահպանում է սեփականության իրավունքը;

բ) լիզինգի վերաբերյալ 1988 թվականի մայիսի 26-ին Օտտավայում կնքված միջազգային կոնվենցիայի համաձայն, լիզինգի պայմանագրով լիզինգատուն լիզինգառուի հետ կնքում է պայմանգիր, ինչպես նաև երրորդ կողմի (մատակարար) հետ, համաձայն որի լիզինգատուն ձեռք է բերում սարքավորումներ, արտադրության միջոցներ կամ այլ սարքավորումներ այնպիսի պայմաններով, որոնց հավանություն է տալիս լիզինգառուն այնքանով, որքանով դրանք առնչվում են իր հետաքրքրություններին: Միաժամանակ կնքվում է պայմանագիր (լիզինգի պայմանագիր) լիզինգառուի հետ՝ վերջինիս տրամադրելով սարքավորման օգտագործման իրավունք պարբերական վճարների դիմաց[53]:

Առանձին երկրներում տրված են լիզինգի օրենսդրական հետևյալ բնորոշումները՝

- ✓ լիզինգը սարքավորումների և մեքենաների օգտագործումը տրամադրում է պայմանագրային տարբեր ժամկետներով, որն առաջացնում է փոխադարձ պարտավորություններ լիզինգատուի և լիզինգառուի միջև (ԱՄՆ),
- ✓ լիզինգը երկարաժամկետ վարձակալություն է, որի դեպքում լիզինգառուն պատասխանատվություն է կրում լիզինգի օբյեկտի պահպանման, հարկերի և ապահովագրական վճարների իրականացման համար (Գերմանիա),

[53] Герчикова И. Международное коммерческое дело. – М., 1999, с.383

- ✓ Լիզինգը դա անշարժ և շարժական գույքի օգտագործման և տիրապետման տրամադրում է օբյեկտի ամորտիզացիոն ժամկետի պայմանով (Ֆրանսիա)[54]:

Լիզինգային գործառնությունների հստակ սահմանումն ունի կարևոր կիրառական նշանակություն, քանի որ դրա ձևակերպմանն ուղղված օրենսդրական պահանջների չպահպանման դեպքում այն չի կարող ճանաչվել լիզինգային գործարք:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 677 հոդվածի, ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշված գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար[55]:

ՀՀ Հաշվապահական Հաշվառման թիվ 17 ստանդարտում լիզինգը (ֆինանսական վարձակալությունը) սահմանվում է հետևյալ կերպ՝ "Ֆինանսական վարձակալություն՝ վարձակալության տեսակ է, որի դեպքում վարձակալին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել":

Համաձայն ՌԴ "Լիզինգի մասին" ֆեդերալ օրենքի, լիզինգը ձեռնարկատիրական գործունեության ձև է՝ ուղղված ժամանակավոր ազատ կամ փոխառված ֆինանսական միջոցների ներդրմանը, երբ ըստ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի, վարձատուն (լիզինգատուն) պարտավորվում է սեփականության իրավունքով ձեռք բերել պայմանագրում նշված գույքը որոշակի վաճառողից և տրամադրել այդ գույքը վարձակալին (լիզինգառու) ձեռնարկատիրական նպատակներով ժամանակավոր օգտագործման համար վճարի դիմաց[56]:

Ինչպես տեսնում ենք, լիզինգի իրավական սահմանումը Հայաստանում և Ռուսաստանում համարյա համընկնում են, ինչը վկայում է այն մասին, որ նշված երկու օրենսդրական դաշտերը քիչ են տարբերվում այս բնագավառում:

---

[54] Макеева Б.Г. Лизинг. – М., 2003, с.15
[55] ՀՀ Քաղաքացիական օրենգիրք, գլուխ 35, հոդված 677
[56] ՌԴ Քաղաքացիական օրենգիրք, բաժին IV, գլուխ 36, հոդված 655

Վերոնշյալ կարծիքների բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր տնտեսագետ-վերլուծաբան տարբեր տեսանկյունից է դիտարկում լիզինգը, որպես տնտեսական հարաբերությունների բնույթ: Այսպես, լիզինգային ընկերության ձեռնարկատիրական գործունեություն է, լիզինգառուի համար՝ գույքի երկարաժամկետ վարձակալություն, մատակարարի համար (գույքի վաճառող)՝ արտադրանքի իրացում և այլն: Որոշ մասնագետներ էլ գտնում են, որ հայացքների տարակարծություն-ների բազմաքանակությունը մեթոդաբանական հարցերի մշակման, հետևաբար նաև պրակտիկայում ընդհանուր մեթոդաբանական մոտեցման հետևանք է[57]:

Վերլուծելով լիզինգի ձևավորման և զարգացման պատմական էվոլյուցիան, մասնագետների կողմից լիզինգի վերաբերյալ տրված բնորոշումները, վեր հանելով դրանց հատկանիշները և մի շարք առանձնահատկություններ կարելի ներկայացնել լիզինգի ամբողջական էությունը: Լիզինգը, դա գույքային, վարձակալական, վարկային, ներդրումային, սեփականատիրական և ձեռնարկատիրական հարաբերությունների առանձնահատուկ համակարգ է, որը կիրառական դրսևորում է ստանում լիզինգային գործարքի միջոցով: Իր հերթին լիզինգային գործարքն իրենից ներկայացնում է պայմանագրերի ամբողջականություն, որն անհրաժեշտ է լիզինգատուի, լիզինգի առարկայի վաճառող-մատակարարի և լիզինգառուի, ինչպես նաև ֆինանսավորվող ընկերության (առևտրային բանկ) ու ապահովագրական ընկերության միջև լիզինգային պայմանագրի իրականացման համար: Լիզինգային գործարքը գծապատկերի ձևով ներկայացվում է հետևյալ կերպ:

[57] Горемыкин В. Лизинг: Учебник “Дашков и К°”. М., 2003, с. 22



Գծապատկեր 1. Լիզինգային գործարքի կառուցվածքը

Բերված գծապատկերում տրված է լիզինգային գործարքի տիպային կառուցվածքը, որին մասնակցում են հինգ տնտեսվարող սուբյեկտներ՝ լիզինգատուն, լիզինգառուն, մատակարար-վաճառողը, ֆինանսավորող ընկերությունը (առևտրային բանկ) և ապահովագրական ընկերությունը: Առանձին դեպքերում դրանք կարող են փոփոխվել կախված լիզիգառուի ցանկությունից և լիզինգային գործարքի ճյուղային առանձնահատկություններից: Այսպես, եթե լիզինգառուն ցանկություն չի ցուցաբերում ապահովագրել իր գործարքը, ապա տվյալ դեպքում ապահովագրական ընկերությունը դուրս է մնում պայմանագրային համակարգից: Իսկ եթե լիզինգն իրականացվում է ռիսկային արտադրություններում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ապա այդ դեպքում հարաբերությունների մեջ պետք է մտնի պետությունը, որպես երաշխավոր՝ գործարքի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Մեր կարծիքով, ելնելով ԻՍՕ 9000 ստանդարտների պահանջներից անհրաժեշտ է կիրառել հետևյալ մոտեցումները (սկզբունքները)

1. Ուղղվածություն դեպի սպառող՝

- պահանջարկի ուսումնասիրություն՝ հասկանալու համար սպառողներին, նրանց սպառումներն արտադրանքից (ինքնարժեքը, գինը և այլն):
- “հետադարձ կապ” արտադրանքի բարելավման նպատակով՝ համեմատելով նույնականացված արտադրանքի հետ:

2. Փոխշահավետ հարաբերություններ մատակարարների հետ՝
   - համապատասխան մատակարարի ընտրություն,
   - մատակարարների հետ գործընթացային հարաբերությունների հաստատում,
   - բաց և հասարակ կապերի հաստատում,
   - արտադրանքի և գործընթացների համատեղ կատարելագործման նախաձեռնում,
   - սպառողների պահանջմունքների համատեղ որոշում,
   - ապագայի վերաբերյալ ծրագրերի և տեղեկատվության փոխանակում,
   - մատակարարների նվաճումների ընդունում*:

Լիզինգի էությունն ամբողջությամբ ներկայացնելու համար, պետք է դիտարկել նրա առանձնահատկությունները՝ առավելություններով և թերություններով հանդերձ: Լիզինգի բնորոշ առանձնահատկություններից են.

1. Լիզինգը հիմնական կապիտալում միջոցների ներդրման յուրահատուկ ձև է, ֆինանսավորման ավանդական մեթոդների լրացում: Լիզինգառուն հնարավորություն ունի օգտվել տվյալ պահին իրեն անհարժեշտ գույքից՝ առանց սեփական միջոցները այդ նպատակով հավաքագրելու, ինչը նրան ազատում է գույքի արժեքը միաժամանակ ամբողջությամբ վճարելուց: Այս դեպքում լիզինգը տարբերվում է սովորական առք ու վաճառքից: Լիզինգի ամենաէական հատկանիշներից մեկը վճարումների իրականացման կարգն է: Վճարումների չափն ու ժամկետները հանդիսանում են կողմերի փոխադարձ պայմանավորվածության առարկա, այդ պատճառով կարող են

* Վ.Բեգլարյան, Գ.Հայրապետյան, Հ.Մանուկյան Որակի կառավարման համակարգի անընդհատ բարելավման սկզբունքները. Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանի տարեկան գիտաժողով: Նյութերի ժողովածու, 2 հատորով: - Եր.: ՀՊՃՀ, 2005, էջ 586-589

ճկուն կերպով հաշվի առնել յուրաքանչյուր կողմի շահերը: Լիզինգային վճարումները կարող են իրականացվել գույքի շահագործելուց հետո: Վճարումները կարող են կրել ոչ միայն դրամական բնույթ, այլ նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն ապրանքների կամ հանդիպակած ծառայությունների տեսքով: Օրինակ, ՌԴ-ում տարածված է գյուղատնտեսության ոլորտում լիզինգային վճարումները կատարել նաև գյուղատնտեսական արտադրանքի ձևով:

2. Լիզինգն արտադրության նյութատեխնիկական բազայի լրացման առավել առաջադիմական մեթոդ, որն օգտագործողին հնարավորություն է տալիս կիրառել նոր տեխնիկա և առաջավոր տեխնոլոգիա, արդյունավետ կերպով թարմացել հիմնական կապիտալը, զգալիորեն կրճատել սարքավորումների բարոյական մաշվածության ամորտիզացիոն ծախսերի բացասական ազդեցությունը՝ նվազեցնելով այդ սարքավորման միջոցով թողարկվող արտադրանքի ինքնարժեքը:
3. Լիզինգի գործարքը գույքային հարաբերությունների տեսանկյունից կազմված է առքուվաճառքի պայմանագրից և գույքի ժամանակավոր օգտագործման պայմանագրից, ինչի համար էլ տեղի է ունենում տնօրինման իրավունքի տարանջատում օգտագործման իրավունքից:
4. Լիզինգը թույլ է տալիս պայմանագրի գործողության ընթացքում ծանոթանալ սարքավորման գործունեության ու սարիքինության աստիճանի հետ, փորձարկել այն աշխատանքի մեջ, և նոր դրանից հետո եթե կհամապատասխանի պահանջներին, ձեռք բերել որպես սեփականություն՝ հաշվի առնելով նախապես տրված վարձավճարները:
5. Սարքավորման ձեռք բերումը ֆինանսավորվում է ամբողջությամբ, չի պահանջում կանխավճար, ինչը շատ է կանչ է շուկայական հարաբերությունների նոր զարգացող սուբյեկտների համար[58]:
6. Լիզինգային գործարքների ժամանակ, չնայած այն հանգամանքներին, որ պայմանագրի ավարտից հետո կարող է

[58] Лаврушина О. Банковское дело. М., 2005, с.619

նախատեսվել լիզինգառուի կողմից պայմանագրի օբյեկտի գնում մնացորդային արժեքով, դա չի նշանակում սեփականության իրավունքի փոխանցում պայամանագրի կնքման պահին: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի գործողության ընթացքում շարունակում է պահպանել լիզինգատուն: Միաժամանակ, գույքի թերությունների համար լիզինգառուի հանդեպ պատասխանատվություն է կրում ոչ թե լիզինգատուն (եթե մատակարարին ընտրել է լիզինգառուն) այլ մատակարարը:

7. Լիզինգային գործառնությունների հետ կապված ծախսերը չնչին են, պայմանագրի կնքելուց հետո բավական է միայն նախատեսված ժամկետում հաշվեգրել վարձավճարը[59]: Նման գործառնությունների կատարումն ավելի դյուրին է, քան կարճաժամկետ վարկեր տրամադրելու դեպքում բանկերի կողմից հաճախորդների հաշիվները վարելը:
8. Լիզինգատուն առավել լավ է ապահովագրված լիզինգառուի չվճարումներից, քան վարկատուն վարկառուի չվճարումներից, որոհետև տրամադրվում են ոչ թե դրամական միջոցներ, որոնց օգտագործումը դժվար է վերասկել, այլ տրամադրվում է արտադրության միջոց կամ գույք, որոնց օգտագործումը կրում է նպատակային և տեսանելի բնույթ: Լիզինգառուի պարտավորությունների մարման համար լիզինգատուն կարող է հետվերցնել լիզինգային պայմանագրի օբյեկտը, այն տրամադրել ժամանակավոր օգտագործման ուրիշ լիզինգառուի կամ էլ նույնիսկ վաճառել:

Վարկային և լիզինգային հարաբերությունները հիմնվում են երեք հիմնական սկզբունքների վրա:

ա) ժամկետայնություն, որը լինում է՝

- ✓ կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի
- ✓ միջնաժամկետ՝ 1-3 տարի
- ✓ երկարաժամկետ՝ լիզինգի համար մինչև 6-8 տարի, իսկ վարկի դեպքում՝ մինչև 10, 20, 50 և ավելի տարիներ

[59] Жарковская Е., Арендс И., Банковское дело. М., 2002, с.240

բ) վերադարձելիություն՝ ենթական է վերադաձման նախատեսված ժամկետում,

գ) վճարելիություն՝ վճարվում է փոխհատուցվող տոկոսներ:

9. Այսպիսով եթե լիզինգը որակենք որպես գույքի տրամադրում ժամանակավոր օգտագործման՝ ժամկետայնության, վերադաձելիության և վճարելիության պայմաններով, ապա այն կարելի է բնորոշել որպես ձեռնարկության հիմնական կապիտալում ապրանքային վարկ[60]:

10. Լիզինգի հիմնական առավելությունը դրսևորվում է վարկավորման այդ ձևի շրջանակներում տրամադրվող ծառայությունների լայնամասշտաբ փաթեթով [61], հատկապես՝ տեղափոխման, տեղադրման աշխատանքերի կազմակերպում, տեխնիկական սպասարկում, լիզինգի առարկայի ապահովագրում, պահեստամասերով ապահովում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և այլն:

Միջազգային պրակտիկայում լիզինգի դեպքում, սովորաբար, օրենսդրորեն տրամադրվում են արտոնություններ, հիմնականում հարկային և մաքսային ոլորտներում, մասնավորապես նախատեսվում են՝

- ✓ արագացված ամորտիզացիա,
- ✓ լիզինգավճարների ընդգրկում լիզինգառուի կողմից թողարկված արտադրանքի կամ ծառայությունների ինքնարժեքում,
- ✓ արտոնություններ մաքսատուրքերի գծով,
- ✓ միջպետական գործարքների դեպքում հարկային արտոնություններ լիզինգառու երկրում:

Լիզինգի առավելություններից է նաև այն, որ միջպետական լիզինգային գործառնությունների հետ կապված պարտավորությունները, համաձայն միջազգային պրակտիկայում ընդունված չափանիշների, չեն մտցվում երկրի արտաքին պարքի մեջ, որն էական է վճարային հաշվեկշռի բացասական սալդոյի դեպքում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ լիզինգն ընդգրկում է վարկավորման գործարքներին բնորոշ գծեր, այնուամենայնիվ

[61] Красавина Л. Международные валютно-кредитные и финансовые отношения. М., 2000, с. 274

զգալիորեն տարբերվում է դրանցից, ինչի մասին վկայում է աղյուսակ 2.1-ում բերված տվյալները:

Աղյուսակ 2.1

Լիզինգի համեմատությունը սովորական վարձակալության և վարկավորման հետ

Հ/Հ	Համեմատության հատկանիշը	Լիզինգ	Սովորական վարձակալություն	Առևտրային կամ բանկային վարկ
1	2	3	4	5
1	Սեփականության իրավունքը պատկանում է	Լիզինգատուին	վարձատուին	գնորդին
2	Գործարքի մասնակից-ները թիվը	երեք՝ լիզինգատու, մատակարար, լի-զինգառու	երկու՝ վարձակալ, վարձատու	երկու՝ վարկատու (բանկ), վարկա-ռու (գնորդ)
3	Սկզբունքները (պայ-մանները)	վճարելիություն, ժամկե-տայնություն, վերա-դարձելիություն		նպատակայնու-թյուն (բիզնես-ծրա-գիր) վճարելի-ություն, ժամ-կետայնութ-յուն, վերա դարձելիու-թյուն, գրա-վադրում
4	Ֆինանսավորման չափը	100%	-	75-80%
5	Սարքավորումների բարոյական մաշվածության ռիսկը ձեռք բերողի համար	փոքր, քանի որ ձեռք է բերում ոչ թե որպես սեփականու-թյուն, այլ ժամանակավոր օգտագործելու	փոքր	մեծ, քանի որ գույքը ամբողջությամբ պատկա-նում է գնորդին

աղյուսակ 2.1 շարունակություն

1	2	3	4	5

6	Մատչելիությունը փոքր ու միջին ձեռ-նարկատիրությունների համար	շատմատչելի	մատչելի	ոչ միշտ է մատչելի
7	Արտոնություններ	հարկային և մաքսային	չկա	կարող է լինել արտոնյալ վարկեր
8	Տեխնիկական սպասարկում	պայմանագրից կախված կարող է իրականացնել լիզինգատուն	վարձակալ, կամ էլ ըստ պայմանագրի	գնորդ
9	Գույքի ապահո-վագրումն իրականացնում է	օգտագործողը, եթե այլ բան նախատեսված չէ	որպես կանոն սեփականատերը	ըստպայմանա-գրի վարկատուն կամ վարկառուն
10	Գործարքի արժեքը սահմանելիս հաշվի է առնվում	ձեռք բերվող գույքի արժեքը, պայմա-նագրի ժամկետը, փո-խառնության տոկոսա-դրույքը	շուկայում առաջարկի և պահանջարկի հա-րաբերակցությունը	նպատակայնությունը, ժամկետայ-նությունը, վճարելիությունը (վարկի %-ով)
11	Պայմանագրի վերջում	լիզինգառուն կարող է ձեռք բերել գույքի մնացորդային արժեքով	գույքը վերադարձ-վում է վար-ձատուին	գույքը մնում է գնորդի սեփա-կանություն-յունը

Բացի նշված տարբերություններից լիզինգը և վարձակալությունն իրարից տարբերվում են նաև այլ հատկանիշներով՝ թե ի՞նչ սկզբունքով են կատարվում դրանց օբյեկտների ամորտիզացիոն մասհանումները, ինչպիսի

պայմանագրային հարաբերություններ են կիրառվում հաշվապահական և հարկային հաշվառումներն և այլն:

Լիզինգային և վարձակալական հարաբերությունները տարբերվում են իրարից մասնագիտացման աստիճանով: վարձակալությունը չի համարվում մշտական գործունեության ձև, որի նպատակը ժամանակավոր ազատ միջոցներից եկամուտ ստանալն է: Լիզինգատուն գույքը ձեռք է բերում անմիջականորեն լիզինգառուի օգտագործմանը հանձնելու նպատակով, լիզինգատուի հիմնական նպատակը գործարքի կազմակերպումն է: Այնուհանդերձ, չի նշանակում, որ լիզինգային ընկերությունը շահույթ չի հետապնդում: պարզապես եկամուտի (շահույթի) ստացումը լիզինգառուի համար հեռանկարային հասկացություն է, իսկ վարձատուի համար՝ կրում է միանգամյա բնույթ, ուստի լիզինգատուի հետաքրքրությունների ու խնդիրների շրջանակն ավելի լայն է: Այս ամենից կարելի է եզրահանգել, որ լիզիզնգի ու վարձակալության միջև կան ընդհանուր հատկանիշներ, բայց երբեք չպետք է նույնացնել:

Լիզինգն ունի ընդհանրություններ նաև ապրանքային և առևտրային վարկերի հետ: Ամենից առաջ լիզինգը և վարկը հանդիսանում են որպես ֆինանսավորման աղբյուր: Լիզինգի դեպքում գույքի սեփականատեր (լիզինգատուն) ֆինանսական ծառայություն է մատուցում գույք օգտագործողին (լիզինգառուին): Այստեղ որպես փոխատու հանդես է գալիս լիզինգատուն, փոխառու՝ լիզինգառուն և որպես փոխատվության առակա՝ լիզինգի օբյեկտը: Ֆինանսական տեսանկյունից լիզինգը ֆինանսական վարկն է հիմնական ֆոնդերում օգտագործման տրամադրելու ձևով: Այն վաճառողը տալիս է գնորդին վճարման հետաձգման պայմանով:

Տնտեսագիտական տեսանկյունից լիզինգը և վարկը շատ նման են իրար, սակայն իրավական տեսանկյունից առկա են էական տարբերություններ: Այսպես, գույքն օգտագործողը լիզինգատուի հետ չի կնքում փոխառության պայմանագիր: Սեփականության իրավունքի առումով՝ լիզինգի դեպքում գույքը սեփականությամբ ձեռք բերելու օպցիոնը չի նույնացվում սեփականության իրավունքի փոխանցման հետ, օբյեկտի օգտագործման իրավունքը տարանջատվում է սեփականության իրավունքից և վերջապես

սեփականության իրավունքը պատկանում է լիզինգատուին հիմնականում լիզինգի օբյեկտի, իսկ վարկի դեպքում՝ սեփականության իրավունքը փոխանցվում է փոխառուին պարտքի լրիվ մարումից հետո, որտեղ չի տարանջատվում գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքները:

Լիզինգի պարագայում ներդրումներն ուղղվում են հիմնականում արտադրական գործունեության ակտիվացման և վերազինման, իսկ վարկի դեպքում՝ ցանկացած ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Գործնական կյանքում յուրաքանչյուր ձեռներեց իր տնտեսական գործունեությունը սկսելուց առաջ, սովորաբար, համեմատություն է անցկացնում լիզինգի և բանկային վարկի միջև՝ որպես ֆինանսավորման աղբյուրներ: Անկախ դրանց դրական և բացասական հատկանիշների կան որոշ գործոններ, որոնք կարող են փոխել արդյունավետության աստիճանը, գործարքի բոլոր կողմերի տեսանկյունից, օրինակ՝

- ✓ հարկային համակարգը և հարկային արտոնությունները,
- ✓ ներդրումային նախագծերի իրացման իրավական պայմանները,
- ✓ սեփականության իրավունքը կարգավորող կանոնները և այլն:

Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մասնագետները հաշվարկել են, որ հիմնական միջոցների ձեռք բերման առումով ֆինանսական լիզինգն ավելի արդյունավետ ուղի է, քան վարկը:

Այսպես ՌԴ-ում գործող “Ինկոմլիզինգ” ընկերության մասնագետների հաշվարկով հիմնական ֆոնդեր ձեռք բերելու համար հինգ տարի ժամկետով լիզինգային գործարքը 10.6 տոկոսով արդյունավետ է վարկի նկատմամբ, իսկ սեփական միջոցների արդյունավետությունը վարկի հանդեպ՝ 14%-ով: “Պրոդմաշլիզինգ” ընկերության հաշվարկով սարքավորումները լիզինքով ձեռք բերելու դեպքում վերջիններիս արժեքը նվազում է 20%-ով: Համաձայն “Պրոմստրոյբանկի” հաշվարկների երկամյա լիզինգային գործարքը 17 %-ով արդյունավետ է վարկի նկատմամբ: “Ռոսլիզինգսվյազ” ընկերության ստեղծման տնտեսական նպատակահարմարության հիմնավորման նպատակով կատարված մասնագիտական հաշվարկները վկայում են, որ լիզինգով ձեռք բերվող սարքավորումների արժեքը հնարավոր է իջեցնել 15 %-

ով՝ապրանքային վարկի հետ համեմատած: “Ինտեռոսլիզինգ” և “Ինտեռլիզինգ” ընկերություններում հաշվարկվել են, որ իրենց տրամադրած լիզինգային ծառայությունները հաճախորդների համար վարկի հանդեպ շահավետ է 7-15%-ով: ”Գառնինվեստ” խորհրդատվա-ներդրումային ընկերությունում հատուկ մասնագիտացված “Լիզինգը և տարաժամկետ վճարումը” ծրագրով հաշվարկել է, որ ավտոտրասպորտային միջոցների ձեռք բերման շահավետությունը վարկի հանդեպկազմում է 8-16% տոկոս[62]:

Բայց, քանի որ իրական կյանքում, բացարձակ իմաստով, կատարյալ ոչինչ չկա, ուստի, լիզինգը նշված առավելություններով հանդերձ, նույնպես զերծ չէ թերություն-ներից: Նշենք դրանցից մի քանիսը՝

- ✓ եթե սարքավորումը ձեռք է բերվել ֆինանսական լիզինգով և բարոյապես մաշվել է մինչև պայմանագրի ավարտը, ապա միևնույն է լիզինգառուն վճարում է վարձավճարները (ի տարբերություն գործառնական լիզինգի, որի դեպքում սարքա-վորման բարոյական մաշվածության ռիսկը կրում է լիզինգատուն),
- ✓ որպես կանոն, սարքավորման շարքից դուրս գալու դեպքում լիզինգառուի կողմից շարունակվում են իրականացվել վճարումները, պայմանագրով սահմանված ժամկետում՝ անկախ սարքավորումների իրական վիճակից,
- ✓ եթե լիզինգային պայմանագրի առարկան խոշոր և առանձնահատուկ մեքենասարքավորում է, ապա պահանջվում է բավականին ժամանակ ու միջոցներ դրանց պայմանագրի պատրաստման և շահագործման իրականացման համար,
- ✓ լիզինգառուի համար գույքի ձեռք բերումը հաճախ հանդիսանում է թանկ □հաճույք□, քանի որ նա վճարում է ոչ միայն սարքավորման արժեքը, այլև ապահովում է լիզինգատուի եկամուտը, վերջինիս կողմից կատարվող տարբեր ծախսերը, փոխառու միջոցների ներգրավման դեպքում վարկային տոկոսները և այլն: Սակայն, այս պարագայում կարող են փոխհատուցվել տրանսակցիոն ծախսերի կրճատման հաշվին,

[62] Газман В. финансовый лизинг. М., 2005. с.199

- ✓ ի տարբերություն վարկի, լիզինգային վճարի մեջ մտնում են վարկի տոկոսները, ապահովագրական վճարները, իսկ գյուքահարկը հարկվում է ավելացած արժեքի հարկով (ԱԱՀ), եթե լիզինգի օբյեկտը գտնվում է լիզինգառուի հաշվեկշռում: Առանձին երկրների օրենսդրությունները թույլ են տալիս վճարված ԱԱՀ-ի փոխհատուցում: Նման մոտեցումը շատ ձեռնարկությունների համար ձեռնտու չէ այն պատճառով, որ պետք է շրջանառությունից դուրս բերել դրամական միջոցներ թեկուզ կարճ ժամկետով:
- ✓ միջազգային տարադրամային լիզինգային գործարքների դեպքում բացակայում է տարադրամային ռիսկերից երաշխիքները, որի համար լիզինգատուի ռիսկը մեծանում է հատկապես արտաժության փոխարժեքի արագ փոփոխման պայման-ներում և այլն:

Այսպիսով, ընդհանրացնելով այս վերլուծությունը, կարելի է նշել, որ ինչպես շատերևույթների դեպքում, այնպես էլ լիզինգի պարագայում, բացասական հատկանիշները հարաբերական են, քանի որ թերությունները և առավելությունները վերագրում են տարբեր սուբյեկտների, դինամիկ են՝ կապված տվյալ երկրի գործող իրավական, տնտեսական, հարկային, մաքսային դաշտերի հետ: Տնտեսվարող սուբյեկտին անհրաժեշտ է միայն համակողմանի վերլուծություն կատարի, բացահայտի, թե լիզինգի առավելությունները երբ են իր համար դառնում թերություն, իսկ թերություններն՝ առավելություն: Նա պարտավոր է ցանկացած մեթոդով գնահատի ներդրումների արդյունավետությունը, կատարի համեմատական վերլուծություն, ուսումնասիրի գործարքի առանձնահատկությունը, դրանից բխող դրական և բացասական կողմերը և այնուհետև կայացնի որոշում:

Լիզինգի էությունը վերջնականապես պարզաբանելու համար անհրաժեշտ է բացահայտել, վերլուծել լիզինգի տարբեր տեսակների և ձևերի դրսևորման առանձնահատկությունները, վերհանել դրանց դասակարգման չափանիշներն ու մոտեցումները:

2.2 Լիզինգի ձևերը և դրանց դասակարգման չափանիշները

Լիզինգի էության դրսևորման բազմատեսակայնությունը, նրա վերաբերյալ տեսակների բազմաքանակությունը, կիրառման ոլորտի շրջանակների հսկայական չափերը և մյուս հատկանիշներն ինքստինքյան ցույց են տալիս, որ լիզինգը չի կարող լինել միատեսակ, սահմանափակ ձևրով՝ ունենալով գործունեության նեղ շրջանակներ, այլ դա մի յուրահատուկ տնտեսական կատեգորիա է, որը ներկայանում է բազմաթիվ ձևերով, տեսակներով ու ենթաձևերով:

Պատմականորեն լիզինգային գործունեության զարգացումը հանգեցրել է լիզինգի տարբեր ձևերի ու պայմանների առաջացմանը, որոնք առաջին հերթին բաժանվում են երկու հիմնական ձևի.

1. Ֆինանսական (կապիտալ) լիզինգ:
2. Գործառնական (սերվիսային) լիզինգ:

Ֆինանսական լիզինգը երկարաժամկետ համաձայնագիր է, որը նախատեսում է դրա գործողության ժամանակաշրջանի ընթացքում վճարել սարքավորման իրական արժեքը կամ դրա մեծ մասը, ինչպես նաև վարձառուի շահույթը: Նման համաձայնագրի գործողության ժամկետը լրանալիս հնարավոր են սարքավորումների գնում վարձակալի կողմից մնացորդային արժեքով (սեփականության իրավունքն անցնում է նոր տիրոջը), վարձակալության օբյեկտի վերադարձ վարձատուին, ժամկետի երկարացում՝ նոր համաձայանագրի կնքմամբ:[63] Ֆինանսական լիզինգի դեպքում լիզինգատուի ռիսկը նվազում է, քանի որ պայմանագրով հատուկ նախատեսված չլինելու դեպքում չի թույլատրվում պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծարել պայմանագիրը, և նախատեսվում է սարքավորման գրեթե ողջ արժեքի մարում լիզինգառուի կողմից: Լիզինգի այս ձևը նման է երկարաժամկետ բանկային վարկավորմանը և չի նախատեսվում վարձակալության վաղաժամկետ դադարեցում, վարձավճարների արժեքը ներառում է վարձակալվող գույքի արժեքը և տոկոսները: Ֆինանսական լիզինգը հիմնականում կրում է միջնաժամկետ և երկարաժամկետ բնույթ և որպես, կանոն, սարքավորումների տեխնիկական սպասարկման ու ապահովագրության ծախսը կրում է

[63] Կիրակոսյան Գ., Ղուշչյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան: Եր., 1999, էջ 176

լիզինգառուն, այստեղ տեղի է ունենում օբյեկտի արժեքի փոխհատուցում և սեփականության իրավունքի փոխանցում: Ֆինանսական լիզինգի ընդհանուր սխեման ներկայացվում է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Ֆինանսական լիզինգի ընդհանուր տեսքը

Ֆինանսական լիզինգն իր հերթին բաժանվում է բազմաթիվ տեսակների[64], որոնցից կարելի է առանձնացնել.

ա) *Ուղղակի լիզինգ*, որի դեպքում արտադրողն առանց լիզինգային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության միջնորդությամբ կնքում է լիզինգային պայմանագիր լիզինգառուի հետ, փաստորեն մատակարարը (արտադրողը) ինքնուրույն իր գույքը տրամադրում է լիզինգով: Ըստ էության դա չի համարվում դասական լիզինգ, քանի որ բացակայում է լիզինգային կազմակերպությունը: Սովորաբար նման գործարքներ կնքում են այնպիսի հայտնի ֆիրմաներ, ինչպիսիք են IBM, XEROX, GATX, նաև ավիացիոն, նավաշինարարական և ավտոմոբիլային ընկերությունները[65]: Ուղղակի լիզինգն ունի հետևյալ գծապատկեր (գծապատկեր 3):

Ուղղակի լիզինգի դեպքում հեշտացվում է լիզինգի իրականացման կառուցակարգը, ապահովվում է լիզինգավճարի ցածր

[64] Райзберг Б., Лозовский Л., Стардубцова Е. Современный экономический словарь. М., 2001., с. 206
[65] Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, հոկտեմբեր-նոյեմբեր, 2004, էջ 57

մակարդակ՝ միջնորդավճարի բացակայության պատճառով, որից ուղղակիորեն օգտվում է արտադրողը:



Գծապատկեր 3. Ուղղակի լիզինգի ստանդարտ տեսքը

Լիզինգի այս տեսակն արտադրողին տալիս է մի շարք առավելություններ, մասնավորապես.

- ✓ լիզինգային գործընթացի կազմակերպումն ավելի դյուրին է,
- ✓ արտադրողն օգտվում է լիզինգի տնտեսական արդյունքներից, այնպես ինչպես, եթե դալիներ լիզինգային ընկերություն,
- ✓ առաջացած տնտեսական օգուտները կարելի է ուղղել արտադրության ընդլայնման և տեխնիկական վերազինման համար:

Լիզինգի այս տեսակի բացասական կողմն այն է, որ գործարքի կազմակերպմամբ զբաղվող ստորաբաժանումների ստեղծումը, որոնք զբաղվում են նաև լիզինգային շուկայի ուսումնասիրությամբ, հասու են միայն խոշոր ֆիրմաներին:

բ) *Անուղղակի լիզինգ:* Այս դեպքում արտադրող-օգտագործող հարաբերություններում կապող օղակ է հանդիսանում միջնորդը, որն էլ հանդես է գալիս լիզինգատուի դերում: Գործնականում լիզինգային հարաբերություններում գերակշռող են հանդիսանում անուղղակի լիզինգի գործարքները, որոնց ժամանակ մասնակցում են երկուսից ավելի սուբյեկտներ (տես գծապատկեր 4-ը):



գ) *Ստանդարտ կամ դասական լիզինգ*, երբ սարքավորում արտադրողը վաճառում է այն ֆինանսավորվող ընկերությանը, որն էլ իր լիզինգային ընկերությունների միջոցով տրամադրում է վարձակալության, իսկ արտադրող ընկերությունը մասնակցում է միայն սարքավորման տեխնիկական սպասարկմանը:

դ) *Վերադարձվող լիզինգ:* Այս լիզինգի էությունը կայանում է նրանում, որ գույքի սեփականատերը վաճառում է սարքավորումը լիզինգային ընկերությանը կանխիկ հաշվարկով, միաժամանակ վարձակալում այն նույն լիզինգային ընկերությունից: Նման առևտրական գործարքը վարձակալողին հնարավորություն է տալիս տնտեսել կապիտալ ներդրումները և միաժամանակ շահագործման հանձնել մեծ քանակությամբ տեխնիկա[66]: Հետևաբար վերադարձվող լիզինգը կիրառվում է այն դեպքերում, երբ պայմանագրի առարկայի սեփականտերը դրամական միջոցների խիստ կարիք ունի և լիզինգի այս ձևի միջոցով բարելավում է իր ֆինանսական վիճակը[67]: Այս դեպքում լիզինգային պայմանագրի առարկա կարող են դառնալ նաև ամբողջական ձեռնարկություններ: Պայմանագիրը կազմվում է այնպես, որ ժամկետի ավարտից հետո լիզիգառուն իրավունք ունենա հետ գնելու նույն գույքը՝ վերականգնելով սեփականության իրավունքը: Օրինակ, Մերսեդես ֆիրման Ե դասի վերջին մոդելի ավտոմեքենայի արտադրության ժամանակ կիրառեց այդ լիզինգի տեսակը (ապագայում վերականգնելով նաև սեփականության իրավունքը): Սա ևս լիզինգի բազմաֆունկցիոնալության ապացույց է և ևս մեկ անգամ համոզում է. որ լիզինգի կիրառությունը ոչ միայն արտադրանքի վաճառքի, կամ ներդրման ծավալների մեծացման մեջ է, այլ նաև ընդունելի է արտադրության կազմակերպում

[66] Կիրակոսյան Գ., Ղուշչյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան: Եր., 1999, էջ 176

ձևերում: Վերադարձելի լիզինգը սխեմատիկորեն պատկերվում է հետևյալ կերպ.



Գծապատկեր 5. Վերադարձվող լիզինգի ընդհանուր տեսքը

Վերադարձվող լիզինգի դեպքում գնորդի դերում հաճախ հանդես են գալիս առևտրային բանկերը, ներդրումային, ապահովագրական կամ լիզինգային կազմակերպությունները: Լիզինգի այս տեսակը հիմնականում օգտագործվում է գործարարության անկման պայմաններում՝ ֆինանսական վիճակի կայունացման նպատակով:

ե) *Լիզինգ մատակարարին* դեպքում սարքավորում արտադրողն ինքն է դառնում լիզինգառու, ինչպես և վերադարձելի լիզինգի դեպքում, սակայն վերադարձվող գույքն օգտագործվում է ոչ թե իր, այլ ուրիշ վարձակալի կողմից, որի համար նա պարտավոր է փնտրել և գտնել վարձակալության օբյեկտ: Սովորաբար վերադարձելի լիզինգի և մատակարարին լիզինգի ձևերը դասակարգվում են ըստ կազմակերպման ձևի չափանիշի: Մեր կարծիքով, նշված ձևերն ընդհանուր հատկանիշ չունեն, քանի որ վերադարձվող լիզինգը և լիզինգ մատակարարին ձևերը կոնկրետ գործարքի տեսակներ են: Դրանց խմբավորելու համար անհրաժեշտ է չափանիշ ընտրել մատակարարի դերակատարությունը, այսինքն՝ մատակարարն ինչ դեր ունի լիզինգային գործարքում: Այս գործարքի ժամանակ ենթավարձակալությունը համարվում է պարտադիր պայման:

զ) *Ենթալիզինգը* լիզինգային հարաբերությունների յուրահատուկ տեսակ է, որը ձևավորվում է լիզինգի օբյեկտի օգտագործման իրավունքը երրորդ կողմին զիջելու արդյունքում և ձևակերպվում է ենթալիզինգի պայմանագրով[68]: Ենթալիզինգ իրականացնող անձը լիզինգային պայմանագրով ժամանակավոր օգտագործման է հանձնում լիզինգառուին լինզինգատուից վերցրած լիզինգի առարկան, որի դեպքում պարտադիր է լիզինգատուի գրավոր համաձայնությունը: Ընդ որում, պայմանագրով նախատեսված է, որ միջնորդ ընկերության ժամանակավոր անվճարունակության կամ սնանկացման դեպքում լիզինգային վճարները վճարվում են հիմնական լիզինգատուին: Միջնորդը հետևում է սարքավորումների օգտագործման տեխնիկական պահանջների պահպանմանը, վարձավճարների գրաֆիկով վճարմանը և մյուս ընթացիկ հարցերի լուծմանը:

Ըստ մասնակիցների ընդգրկման աստիճանի լինում է եռակողմ և բազմակողմ:

Եռակողմ լիզինգն անուղղակի լիզինգի դասական ձևն է, որտեղ մասնակցում են երեք հիմնական կողմերը՝ լիզինգատու, մատակարարող և լիզինգառու:

Բազմակողմ լիզինգը ենթադրում է չորսից յոթ մասնակիցների առկայություն: Որպես կանոն, այդ կարգի հարաբերություններ կայանում են օտարերկրյա ներդրումների կամ էլ ենթալիզինգային գործարքների դեպքում, որտեղ առկա են երկրորդական նշանակության մասնակիցները՝վարկատու բանկ, ապահովագրական ընկերություն, օտարերկրյա ներդրող և այլն:

Բազմակողմ լիզինգի անհրաժեշտությունն առաջանում է հատկապես մեծածավալ աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես օրինակ, գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգն է: Եթե լիզինգային ընկերությունը չի տիրապետում բավարար ֆինանսական միջոցների, ապա դրանք կարելի է ձեռք բերել արժեթղթերի թողարկման և վաճառքի ճանապարհով:

Գոյություն ունի նաև կոմերցիոն, կենցաղային և պայմանագրային վարձույթի լիզինգներ:

---

[68] Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, հոկտեմբեր-նոյեմբեր, 2004, էջ 57

Կոմերցիոն վարձույթն իրականացվում է հատուկ մասնագիտացված լիզինգային ընկերության կողմից բազմակի անգամներ գույքը վարձույթով տրամադրելու ձևով՝ մեքենաներ և ավտոճանապարհաշինարարական տեխնիկան:

Կենցաղային վարձույթի դեպքում գործարքի կողմեր հանդես են գալիս անհատ անձինք, իսկ գործարքի օբյեկտը հիմնականում երկարաժամկետ օգտագործման սպառողական ապրանքներ, ժամկետը մինչև մեկ տարի, պայմանագրի վերջում օբյեկտը չի գնվում: Պետք է նշել, որ 1970-ական թվականներին Հայաստանում վարձույթի այս ձևը շատ տարածված:

Պայմանագրային վարձույթը լիզինգային գործարքի յուրահատուկ տեսակ է, որի դեպքում լիզինգատուն վարձակալությամբ տրամադրում է գյուղատնտեսական տեխնիկայի, տրակտորների և տրանսպորտային միջոցների պարկեր:

Պայմանագրային վարձույթն օպերատիվ լիզինգի տեսակ է, որը ներառում է մի շարք լրացուցիչ ծառայություններ, ինչպես նաև վերանորոգում, տեղադրում, սարքավորման շահագործման վերահսկում և այլն[69]:

Գործառնական լիզինգ ընթացիկ վարձակալության մասին համաձայնագիր է, որի գործողության ժամկետը փոքր է սարքավորման ամորտիզացիոն ժամանակահատվածից՝ պայմանագրով նախատեսված վարձակալման վճարումը ամբողջությամբ չի ծածկում ակտիվի արժեքը, ինչն անհրաժեշտություն է առաջացնում այն լիզինգով հանձնել մի քանի անգամ[70]: Լիզինգի այս տեսակի դեպքում լիզինգատուի ծախսերը՝ կապված գույքի ձեռք բերման և պահպանման հետ, մեկ պայմանագրի ընթացքում հետչեն վերադարձվում: Այս ձևը սովորաբար կիրառվում է այն դեպքում, երբ պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրի առարկայի ֆիզիկական մաշվածության ժամկետից ավելի կարճ է լինում՝ օրինակ, սեզոնային աշխատանքները, սարքավորումների կարճաժամկետ նպատակային օգտագործում և այլն, ինչպես նաև այնպիսի սարքավորումների կիրառման դեպքում, որոնք պահանջում են հատուկ տեխնիկական սպասարկում: Այս պարագայում վերանորոգման,

[69] www.ist-leasing.co.uk/howitworks Leasing Asset finance online
[70] Tom Dark Leasing Finance. – London: Euromoney Books, 1990, p.12

ապահովագրության, սպասարկման ծախսերը կատարվում է լիզինգատուի կողմից, քանի որ նա սարքավորումները ձեռք է բերում նախօրոք՝ նույնիսկ չճանաչելով ապագա լիզինգառուին: Բացի այդ, անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում վարձատուն կարող է դադարեցնել տվյալ գործունեությունը՝ վերադարձնելով գույքը սեփականատերերին և զգալիորեն կրճատել արտադրության վերակազմակերպման ու լիզինգի իրականացման հետ կապված ծախսերը:

Ֆինանսական լիզինգից գործառնական լիզինգի էական տարբերություններից է այն, որ վերջինիս դեպքում լիզինգային վճարների տոկոսադրույքներն ավելի բարձր են, ինչը փոխհատուցում է առևտրային ռիսկերը՝ կապված գույքի ողջ արժեքը փոխհատուցելու համար լիզինգառու չգտնելու հետ, սարքավորման վնասման կամ էլ ժամանակից շուտ պայմանգրի լուծարման հետ, իսկ վարձակալի կողմից պահանջարկի բացակայության դեպքում՝ կապված մնացորդային վճարների փոխհատուցման անհրաժեշտության հետ:

Սովորաբար գործրանական լիզինգի պայմանագրի առարկա են հանդիսանում, առաջին հերթին, բարոյական մաշվածության վտանգ պարունակող սարքավորումներն ու տեխնիկան՝ էլեկտրոնիկա, գիտական հետազոտությունների համար նախատեսվող սարքավորումներ, տրանսպորտային միջոցները և այլն:

Կախված շուկայի սեգմենտներից, լիզինգի կիրառման տնտեսական նշանակությունից, ժամկետայնությունից, ընդգրկման ծավալներից և մի շարք այլ հատկանիշներից, գործառնական լիզինգը դասակարգվում է ըստ հետևյալ տեսակների: Այսպես, ըստ լիզինգի իրականացման տարածքային հատկանիշի այն լինում է ներքին և արտաքին:

Ներքին կամ ներպետական լիզինգի իրականացման դեպքում լիզինգատուն ու լիզինգառուն հանդիսանում են նույն երկրի ռեզիդենտներ, իսկ ինչ վերաբերվում է վաճառողին, ապա դա ունի առանձնահատուկ մոտեցում, որը, ինչպես և նաև ամբողջ ներքին լիզինգային հարաբերությունները կարգավորվում են տվյալ երկրի ներքին օրենսդրությամբ: Օրինակ, “Լիզինգի մասին” ՌԴ օրենքով նաև վաճառողը պետք է լինի երկրի ռեզիդենտ:

Արտաքին կամ միջազգային լիզինգի դեպքում լիզինգատուն և լիզինգառուն հանդիսանում են տարբեր երկրների ռեզիդենտներ: 1998 թվականին Օտտավայում (Կանադա) ընդունվեց “Միջազգային ֆինանսական լիզինգի մասին կոնվենցիան”, որը թույլ տվեց սահմանել միջազգային լիզինգային գործարքի բոլոր մասնակիցների իրավական հարաբերությունները կարգավորող միասնական նորմեր և վերացնել դրա զարգացումն արգելակող խոչընդոտները[71]: Համաձայն այդ կոնվենցիայի, եթե լիզինգատուն գույք է ձեռք բերում օտարերկրյա ֆիրմաներից, ապա լիզինգը կոչվում է ներմուծվող, իսկ եթե ձեռք է բերում հայրենական ընկերություններից և դրանք տրամադրում՝ արտասահմանյան ընկերությանը՝ կոչվում է արտահանող: Միջազգային են կոչվում նաև անդրազգային կորպորացիաների և բանկերի դուստր ձեռնարկությունների ու դրանց տեղակայման երկրի ռեզիդենտ ֆիրմայի միջև կնքված լիզինգային գործառնությունները:

Եթե լիզինգատուն ՀՀ ռեզիդենտ է, այսինքն լիզինգի առարկան ՀՀ ռեզիդենտի սեփականություն է, ապա միջազգային լիզինգային հարաբերությունները կարգավորում է ՀՀ օրենսդրությամբ, իսկ եթե լիզինգատուն ՀՀ ռեզիդենտչէ (լիզինգի առարկան համարվում է ՀՀ ոչ ռեզիդենտի սեփականություն), ապա միջազգային լիզինգային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ արտաքին տնտեսական գործունեության բնագավառում գործող օրենքով:

Ներկայումս միջազգային լիզինգային հարաբերություններում լայն տարածում է ստանում փոխհատուցման լիզինգը, ինչի պայմաններով լիզինգառուն որպես վարձավճար կարող է լիզինգային ֆիրմային մատակարարել վարձակալված սարքավորումների միջոցով արտադրված արտադրոնքով: Դալուծում է վարձավճարի հետկապված արժութային խնդիրները:

Ծառայությունների մասնակի սպասարկմամբ լիզինգը ենթադրում է պայմանագրի կողմերի միջև որոշակի

[71] Синяев И., Осипова Л. Основы коммерческой деятельности. М., 1997, с. 260

ծառայությունների մատուցում և գործառույթների իրականացում[72]:

Լրիվ ծառայությունների ծավալի մատուցմամբ լիզինգի դեպքում կատարվում է տեխնիկական ծառայությունների սպասարկում ամբողջական մատուցում՝ անհրաժեշտ գույքի, որակյալ մասնագետների տրամադրում, գովազդային, տեղեկատվական ծառայություններ և այլն: Դրա ապահովումն իր վրա է վերցնում լիզինգատուն՝ ծառայությունների արժեքն ընդգրկելով լիզինգավճարի մեջ:

Ընդհանուր լիզինգի ժամանակ թույլատրվում է մասնակից կողմերի միջև կնքել լիզինգային գույքի տրամադրման ընդհանուր համաձայնություն՝ առանց նոր պայմանագրի վավերացման: Այս ձևը հատկապես կարևորվում է անընդհատ արտադրական տեխնոլոգիայով ձեռնարկությունների համար, հետևաբար կիրառվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է սարքավորումների շտապ մատակարարում կամ լիզինգով ձեռք բերվածների փոխարինում, իսկ նոր պայմանագրի մշակման և կնքման ժամանակ, որպես կանոն չի լինում[73]:

Ըստ գործարքի օբյեկտի լիզինգն առանձնանում է անշարժ և շարժական գույքի տրամադրման տեսակների:

Անշարժ գույքի լիզինգի դեպքում լիզինգատուն լիզինգառուի հրահանգով գնում է կամ կառուցում է անշարժ գույք և տրամադրում լիզինգառուին ժամանակավոր օգտագործմանը, հետագայում գնման իրավունքով՝ արտադրական ու առևտրային նպատակներով: Այս դեպքում, համաձայն անշարժ գույքի դասակարգման, լիզինգը լինում է.

- ✓ արդյունաբերական ձեռնարկությունների լիզինգ;
- ✓ արտադրական շինությունների լիզինգ;
- ✓ առևտրային, գրասենյակային, պահեստային լիզինգ և այլն:

Շարժական գույքի լիզինգը ստորաբաժանվում է արդյունաբերական և շինարարական գույքի լիզինգի, համակարգիչների, տրանսպորտային միջոցների, հաստոցների, սարքա-

[72] Кисурина Л. Лизинг; налоговые, бухгалтерские и правовые аспекты. 2-е издание. М. Экономико-правовой бюллетень. 2007. с.16
[73] Лапыгин Ю., Сокольских Е. Лизинг. М., 2005, с.146

վորումների լիզինգի և այլն: Շարժական գույքի լիզինգի տարատեսակ է համարվում հատուկ լիզինգը[74], որի դեպքում լիզինգի օբյեկտը պատրաստվում է միայն լիզինգառուի պահանջներին համապատասխան, գույքը միայն պետք է օգտագործվի պատվիրատուի կողմից, հետևաբար գույքի սեփականության իրավունքի անցումը պարտադիր պայման է:

Լիզինգի հանձնման ենթակա գույքի նկատմամբ ծառայությունների մատուցման ծավալի հետ կապված լիզինգը լինում է մաքուր, թաց և մասնակի:

Մաքուր լիզինգը գործում է այն դեպքում, երբ օգտագործվող գույքի շահագործման, նորոգման, պահպանման և ապահովագրման ամբողջ ծախսերն իրականացնում է վարձակալը, դրանք չեն ներառվում լիզինգային վճարների մեջ, այսինքն, դրանք "մաքրվում են" բոլոր նմանատիպ լրացուցիչ ծախսերից: Վարձակալը պարտավոր է գույքը պահել աշխատունակ վիճակում, համակողմանիորեն սպասարկել այն և գործարքի ժամկետի ավարտից հետո լիզինգատուին վերադարձնել նորմալ վիճակում (հաշվի առնելով ֆիզիկական մաշվածքը): Դա ավելի շատ բնորոշ է օպերատիվ լիզինգին: Մաքուր լիզինգը կոչվում է նաև "չոր" լիզինգ, քանի որ կիրառվում է հատկապես տրասպորտային միջոցների, ավիացիոն տեխնիկայի, նավերի և այլ օբյեկտների, առանց անձնակազմի և ուղեկցող ծառայությունների վարձակալության[75]:

Թաց լիզինգի դեպքում լիզինգատուն կրում է գույքի սպասարկման հետ կապված բոլոր ծախսերը և դրա գործընթացում իրականացվող ծառայությունների ամբողջությունից և շրջանակների ծավալներիվ կախված տարբերվում են.

- ✓ ծառայությունների լրիվ հավաքածուով լիզինգ;
- ✓ ծառայությունների ոչ լրիվ հավաքածուով լիզինգ;

Լրիվ հավաքածուով լիզինգն ընդգրկում է տեխնիկական սպասարկման, նորոգման, հումքի մատակարարման, մասնագետների պատրաստման, գովազդային ու մարքետինգային և այլ ծառայությունների մատուցման, ինչը նպաստում է օգտագործվող տեխնիկայի շահագործման հնարավորությունների բարելավմանը,

[74] www.imorent.cr (glossary)
[75] Газман В. Финансовый лизинг. М., 2005, с.46

արտադրանքի ծավալների, որակի և մրցունակության բարձրացմանը: Գործնական կյանքում, ելնելով կոնկրետ պայմաններից, լիզինգի օբյեկտի սպասարկումը կարող են իրականացնել.

- ✓ լիզինգային ընկերություններ, որոնք իրենց կառուցվածքում ստեղծում են մասնագիտացված նորոգման և սպասարկման ծառայություններ;
- ✓ գույք արտադրող ֆիրմաները, դրանց մասնաճյուղերը, դիստրիբյուտորները;
- ✓ մասնագիտացված կազմակերպությունները, որոնք կառավարվում են լիզինգային ընկերություններից կողմից, կամ էլ համագործակցում նրանց հետ:
- ✓ գույք օգտագործողները:

Լրիվ հավաքածուով ծառայությունների լիզինգի դեպքում էական նշանակություն ունի շահագործվող գույքի երաշխիքային սպասարկումը, ինչի էությունը կայանում է նրանում, որ օբյեկտը տրամադրվում է սպառողին երաշխիքով կոնկրետ ժամանակի համար: Ընդ որում, երաշխիքային պարտավորություններ կարող են տրամադրել լիզինգային կազմակերպություններին արտադրողները և նույնիսկ մասնագիտացված ֆիրմաները: Լիզինգի այս տեսակը կոչում են լիզինգ փաթեթում:

Ոչ լրիվ հավաքածուով լիզինգն ենթադրում է նախօրոք պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված առանձին գործառույթների իրականացում՝ օբյեկտի տեխնիկական սպասարկման գծով: Թաց լիզինգով հիմնականում վարձակալության են տրվում բարդ սարքավորումները, ուստի ֆինանսական հաստատությունները, առևտրային բանկերը սակավ են օգտագործում թաց լիզինգը, քանի որ իրենք չեն տիրապետում համապատասխան տեխնիկական բազայի:

Մասնակի լիզինգի պարագայում լիզինգատուն կրում է լիզինգի առարկայի սպասարկման հետ կապված գործառույթների միայն մի մասը, վարձակալության տալով սարքավորման առանձին մասեր, հանգույցներ և մեխանիզմներ: Օրինակ, գյուղատնտեսության ոլորտում ցանքի ժամանակ կարող են վարձակալության տրվել շարքացաններ, գութաններ և այլ հանգույցներ:

Լիզինգի առանձնահատուկ տեսակներից է *փոխառու միջոցների ներգրավմամբ լիզինգը,* որը հիմնականում նախատեսված է թանկարժեք ծրագրերի վճարման համար, որտեղ լիզինգատուն գույքի ձեռք բերման համար ֆինանսական միջոցներ է ներգրավում մեկ կամ մի քանի վարկատուներից: Լիզինգատուն վարկի մարման համար պատասխանատվություն չի կրում, փոխարենը նա լիզինգային պայմանգրի առարկան ձևակերպում է որպես գրավ վարկատուի համար և լիզինգային վճարումների ստացման իրավունքը զիջում վերջինիս՝ վարկի մարման գումարի չափով:

Լիզինգային հարաբերությունների այս տեսակը աչքի է ընկնում իր կազմակերպման բարդությամբ կապված մասնակիցների բազմաքանակության հետ(վեց և ավելին): Գործարքի ռիսկայնության մեծ մասն ընկնում է վարկատուի վրա, իսկ վարկի վերադաձման երաշխիք են ծառայում լիզինգային վճարները և լիզինգի օբյեկտը:

Ֆինանսավորման ձևերից ելնելով լիզինգը լինում է.

- ✓ *ժամկետային,* երբ տեղի է ունենում գույքի մեկամյա փոխարկում,
- ✓ *ոևոլվերային* լիզինգը կամ գույքի հաջորդական փոփոխմամբ լիզինգը կիրառվում է այն դեպքում, երբ լիզինգառուին արտադրության տեխնոլոգիական երթուղիով անհրաժեշտ է սարքավորումների տարբեր տեսակներ կամ ավելի կատարելագործված ու առաջավոր մոդելներ: Տվյալ դեպքում լիզինգառուն իրավունք է ստանում վարձակալած սարքավորումները որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխարինել այլ տեսակներով[76]: Նման պարագայում լիզինգառուն իր վրաէ վերցնում օբյեկտի փոխանակման հետկապված բոլոր ծախսերը: Պայմանագրով լիզինգի օբյեկտի քանակը և դրանց օգտագործման ժամկետները նախապես չեն սահմանափակվում:

Հարկային և ամորտիզացիոն առանձնահատկություններից ելնելով՝ առանձնացնում են կեղծ և իրական լիզինգներ:

Կեղծ լիզինգը[77] կրում է սպեկուլյատիվ բնույթ, կիրառվում է առավելագույն շահույթ կորզելու նպատակով՝ չարաշահելով գործող հարկային և ամորտիզացիոն արտոնությունները: Նման

[77] http//www.nootage.com/Lease Glossary

դեպքեր լինում են հատկապես վճարման հետաձգումով ապրանքների առքուվաճառքի ժամանակ, երբ այդ գործարքը ձևակերպվում է որպես լիզինգային գործարք և գործարքի մասնակիցներն օգտվում են լիզինգին տրվող արտոնություններից: Սովորական առքուվաճարքը ձեվակերպվում է որպես լիզինգ՝ մտցնելով լիզինգային արտոնությունների տակ: Դրա համար շատ երկրներում նման խորամանկությունները կանխելու համար կիրառում են սահմանափակ դրույթներ: Այսպես ՌԴ-ի քաղաքացիական օրենսգրքի վարձակալության մասին բաժնում նշվում է, որ եթե վարձակալության պայմանագիրը նախատեսում է սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին, ապա այն պետք է ձևակերպվի որպես առքուվաճառքի պայմանագիր: Այս դրույթը տարածված է նաև ֆինանսական վարձակալության մասին ՌԴ օրենքի վրա[78]:

1977 թվականին ԱՄՆ-ում ընդունվեց կեզծ լիզինգի կարգավորման օրենք՝ մտցնելով հետևյալ չափանիշները.

- ✓ Գործարքի վերջում սեփականության իրավունքն անցնում է վարձակալին,
- ✓ Թույլատրվում է գործարքի վերջում գնել օբյեկտը մնացորդային գնով,
- ✓ Գործարքի ժամկետը հավասար կամ անհավասար 75%-ի չափով ավելին պետք է լինի օգտակար ծառայության ժամկետից,
- ✓ Լիզինգային վճարների ընթացիկ արժեքն առանց ապահովագրական վճարների պետք է կազմի շուկայական գնի 90%-ից ավելին:

Եթե գործարքը բավարարում է նշված չափանիշներից որևէ մեկին, ապա գույքը ձեվակերպվում է վարձակալի ակտիվում, իսկ եթե ոչ, ապա գործարքը ձևակերպվում է որպես լիզինգ: Փաստորեն դրանով սահմանափակում է դրվում լիզինգի առավելություններից մեկի՝ պայմանագրի ժամկետից հետո օբյեկտի ձեռքբերման վրա:

Չնայած, որ կեզծ լիզինգն իր բնույթով բացասական երևույթ է, այն այնուհանդերձ մեր հանրապետությունում տնտեսվարող սուբյեկտները դեռևս հեռու են նման հարաբերություններից, քանի որ մեզանում լիզինգն այնքան կիրառություն չի ստացել, որ

[78] Закон РФ “О финансовой аренде”, статья 2, пункт 5, с.15

տնտեսվարողները մտածեն օբյեկտի բացթողումներից օգտվելու մասին: Բացի այդ լիզինգը մեզ մոտ այնքան շահութաբեր չէ, որպեսզի առքուվաճառքի գործարքը ձևակերպվի որպես լիզինգ:

Այնուհանդերձ Հայաստանի Հանրապետության լիզինգային շուկայում կեզծ լիզինգի դեպք տեղի է ունեցել: 1998 թվականին Հայաստանի ավիաուղիների (ՀԱՈՒ) ՓԲԸ-ն ձեռք է բերել Ֆրանսիականն A-310 մակնիշի ինքնաթիռ՝ որը տեղի է ունեցել կեղծ լիզինգի կիրառում, ինչը բխում է իրավական դաշտի անկատարությունից:

Իրական լիզինգի դեպքում վարձատուն իրավունք ունի օգտվել այնպիսի հարկային արտոնություններից, ինչպես ներդրումային զեղչեր և արագացված ամորտիզացիոն նորմաները, իսկ վարձակալին որպես արտոնություն կարող են թույլատրվել վարձակալական վճարից հարկվող շահույթի դուրս գրումը: Փաստորեն իրական լիզինգն իրավական տեսանկյունից պետք է համապատասխանի գործող օրենսդրությանը, իսկ տնտեսական առումով՝ ձեռնարկատիրական գործունեության լիզինգային ձևերին: Համաշխարհային պրակտիկայում հարկային արտոնություններով լիզինգը հայտնի է որպես *“դաբլ դին” կամ “դաբլ դիֆինգ”* գործարք, որտեղ կողմերը օգտվում են հարկային արտոնություններից մեկից ավելի երկրում: Այսպես հաշվի առնելով իրավիճակը՝ լիզինգային պայմանագիրը կարող է կառուցված լինել ենթալիզինգային սխեմայով: Լիզինգային ընկերությունը գնում է սարքավորումներ և տալիս վարձակալության այլ երկրի ընկերությանը, որն իր հերթին հանձնում է սարքավորումները վարձակալության (լիզինգ) վարձաակալին: Արդյունքում գործարքի արդյունավետությունը բարձրանում է [78]:

Առանց հարկային արտոնությունների լիզինգն իրենից ներկայացնում է պայմանական վաճառք, որը ձևակերպվում է լիզինգային գործարքի տեսքով, ինչն ի սկզբանե նախատեսվում է պայմանագրի ժամկետի վերջում վարձահատույց օբյեկտի սեփականության իրավունքի անցում վարձակալին:

[78] Серегин В., Халевинская Е. Организация, учет и налогообложение лизинговых операций. – М., Юрист, 2001, с.21

Գոյություն ունի նաև *տարանցիկ միջազգային լիզինգ*, որը գործում է այն դեպքում, երբ մի երկրի լիզինգատուն վարկ է վերցնում կամ ձեռք բերում անհրաժեշտ սարքավորումներ մեկ այլ երկրում դրանք տրամադրում երրորդ երկրում գտնվող լիզինգառուին:

Այս տեսակի լիզինգի կիրառումը համեմատած ուղղակի գործարքների հետ, լիզինգատուի համար որոշակի առավելություններ ունի՝

- ✓ հնարավորություն է տալիս օգտվելու լիզինգառու երկրի տեղական ֆինանսական միջոցներից;
- ✓ նվազում է արտարժույթի փոխարժեքի տատանման հետ կապված ռիսկը;
- ✓ ընդլայնվում է լիզինգով տրվող օբյեկտների ցանկը;
- ✓ նվազում են լիզինգային վճարների հետ կապված սահմանափակումներն այլ երկիր տեղափոխելիս:
- ✓ հեշտացնում է օտարերկրյա սեփականատիրոջ անունով գույքի գրանցման գործընթացը;
- ✓ ընդլայնվում է սպառման շուկան;
- ✓ նվազեցնում է քաղաքական ռիսկերը:

Լներիջ լիզինգ (հարկային լծակներով լիզինգ) պահանջում է խոշոր կապիտալ ներդրումներ, ինչի համար օբյեկտի արժեքի 80-90%-ի չափով փոխառություն է վերցվում երրորդ կողմից՝ ներդրվողից: Լիզինգային պայմանագրի գործողության առաջին փուլում մեծ չափերով կատարվում է ամորտիզացիոն մասհանումներ և վարկի տոկոսի մարում: Դա նվազեցնում է հարկվող շահույթը և առաջացնում "հարկային խնայողության էֆեկտ": Պետք է նշել, որ նվազեցված հարկվող շահույթը հետաձգվում է լիզինգային գործարքի երկրորդ փուլի համար, երբ ամորտիզացիոն և վարկային վճարումներն արդեն նվազել են: Այս "էֆեկտը" լիզինգառուն կարող է կիրառել ցածր լիզինգային վճար սահմանելու համար հօգուտ լիզինգառուի: Տվյալ դեպքում լիզինգային ընկերությունն օգտվում է բոլոր հարկային արտոնություններից օբյեկտի արժեքի 100 տոկոսի չափով, այլ ոչ թե իր ներդրած գումարի չափով: Նման գործարքի օբյեկտներ են հանդիսանում հիմնական կենցաղ-սպասարկման ոլորտի սարքավորումներ, բեռնատար մեքենաների, գյուղատնտեսական տեխնիկայի պարկեր, նավեր և այլն:

Լիզինգի առանձնահատուկ տեսակ է համարվում, աշխարհում նոր զարգացում ստացած և մեր հանրապետության համար հեռանկարային, աշխատուժի օգտագործման լիզինգն անձնական, անձնակազմի, հեղինակային և համանման տեսակները:

Անձնական լիզինգը պայմանագրի միջոցով մասնագետի ապահովումն լիզինգառուին, որի դեպքում լիզինգառուի մոտից աշխատավարձի հաշվանցում այդ անձին չի կատարվում:

Անձնակազմի լիզինգը նույն անձնական լիզինգն է, սակայն այստեղ որպես լիզինգի օբյեկտ ոչ թե անհատ աշխատողն է, այլ անձնակազմը:

Հեղինակային իրավունքի լիզինգը ենթադրում է լիզինգառուի կողմից մտավոր տեղեկատվության պաշարների մուլտիպլիկացիա (բազմապատկում), ինչը կիրառելի է արտադրության կազմակերպման ինչպես առաջնային փուլում, այնպես էլ կայացած ձեռնարկություններում: Դրամեջ է մտնում նաև "Նոու-Հաուի" լիզինգը՝ արտադրության նորովի կազմակերպման գիտելիքների օգտագործման իրավունքի տրամադրումն է:

Եվ վերջապես, այս խմբի մեջ կարելի է մտցնել շուկայում նմանատիպ *աշխատանք կատարելու ընդունակության լիզնգը*, որը հիմնականում բնորոշ է անցումային փուլում գտնվող երկրների՝ այդ թվում Հայաստանի, համար: Ելնելով նույն աշխատանքի կատարման դիմաց վարձատրվող աշխատանքի տարբերություններից առանձին երկրներում կամ տարածաշրջաններում, տնտեսվարող սուբյեկտը դիմում է լիզինգային ընկերությանը (հնարավոր է նաև միգրացիա) աշխատավարձի ավելի բարձր մակարդակի ապահովման համար: Դրա վառ ապացույցը հանրապետությունում բացված օտարերկրյա ընկերությունների ներկայացուցչություններն են և նույնիսկ Հայաստանի աշխատուժի կազմակերպված միգրացիան (խոպանչիներ) տարբեր երկրներում:

Այսպիսով, վերլուծելով լիզինգի հիմնական ձևերը և տեսակները, կարելի եզրահանգել, որ լիզինգի ամենահիմնական ձևերն են օպերատիվ և ֆինանսական լիզինգները, իսկ մնացածը դրանց տարատեսակներն են՝ հանդես գալով այս կամ այն չափանիշի ներքո: Ինչ վերաբերվում է օպերատիվ և ֆինանսական լիզինգների

տարբերությանը, ապա ներկայումս դեռևս առկա է դրանց սահմանազատման խնդիրները, որոնք կախված են տարբեր երկների օրենսդրությունների առանձնահատկություններից:

Որպեսզի որոշակի չափով պարզեցվի այդ հարցը, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև լիզինգի ձևավորման ու զարգացման փորձը տարբեր երկրներում, ինչին նվիրված է գլխի հաջորդ պարագրաֆը:

2.3 Լիզինգի կիրառման միջազգային փորձի վերլուծությունը

Լիզինգային հարաբերությունների շուկան հանդիսանում է շուկայական համակարգի ամենադինամիկ զարգացող հատվածներից մեկը, հետևաբար լիզինգի ինստիտուտի փորձի ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել խոր և համակողմանի ծանոթանալ նրա առանձնահատկությունների և դրսևորման հետ, դրանց դրական արդյունքներն օգտագործել Հայաստանում լիզինգային գործի զարգացման համար: Միջազգային փորձը վկայում, որ լիզինգային գործառնությունները դարձել են երկրների զարգացման և բարգավաճման կարևոր խթաններ: Տնտեսագետների գնահատմամբ միայն 1988 թվականին կնքվել են 250 մլրդ ԱՄՆ դոլարի լիզինգային պայմանագրեր, 1979 թվականի 50 մլրդ-ի դիմաց: 2000 թվականին լիզինգային գործառույթների 89 տոկոսն իրականացվել էր աշխարհի 10 երկրներում և կազմել էր 445.1 մլրդ դոլար: Այնուհանդերձ լիզինգի գործառույթների ավելի քան 80%-ն իրականացվում է հինգ երկրներում՝ ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և Ֆրանսիա[79]:

Համաշխարհային փորձը հաստատում է, որ լիզինգի զարգացումը պայմանավորված է ներդրումների նկատմամբ տնտեսության պահանջարկի կտրուկ աճով, իսկ դասավելի խիստ սկսեց դրսևորել 20-րդ դարի 50-ական թվականների գիտատեխնիկական հեղափոխության բուռն զարգացման շնորհիվ: Այդ պահանջարկն այլևս հնարավոր չէր բավարարել ֆինանսավորման ավանդական ճանապարհով: Ֆինանսական լիզինգն առաջարկում էր

[79] Малышева А. Мировой рынок услуг по лизингу оборудования// Основные средства. N 7, 2003, с.41-55

ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման ավելի ձեռնատու պայմաններ, քան բանկային վարկավորումն էր:

Հենց դրա համար էլ անցյալ տասնամյակում ԱՄՆ-ի, Ճապոնիայի և մյուս արդյունաբերական զարգացած երկների ներդրումների ընդհանուր ծավալի մինչև 25 տոկոսը ֆինանսավորվել է լիզինգի միջոցով[80]:

Ներկայումս աշխարհի բոլոր զարգացած երկրներում լիզինգը բավականաչափ ձևավորված գործիք է, սակայն յուրաքանչյուր երկրում լիզինգն ունի իր կիրառության առանձնահատկությունները, կառուցակարգը և մոտեցումները: Լիզինգային շուկայի կառուցվածքը պայմանավորված է կոնկրետ երկրի ու տարածաշրջանի առանձնահատկություններով: Այսպես, եվրոպական երկրներում առավել տարածված է անձնական և արտադրական նպատակներով ավտոմեքենաների լիզինգը: Դա բացատրվում է նրանով, որ այդ տարածաշրջանում մեքենաշինական ձեռնարկությունները ստիպված են արտադրանքի իրացման համար ուղիներ որոնել լիզինգի միջոցով՝ որպես արդյունավետ ծակի:

Եվրոպայում և ԱՄՆ-ում լիզինգի բովանդակությունն ընդգրկում է և ֆինանսական և գործառնական լիզինգը, որտեղ վերջինս ընդունվում է որպես սովորական վարձակալություն, իսկ մեխանիզմում դրանք ներկայացվում են ֆինանսական լիզինգի տակ:

Լիզինգի համաշխարհային շուկայում առաջատարը հանդիսանում է Միացյալ նահանգները, որին բաժին է հասնում համաշխարհային լիզինգի ավելի քան 52 տոկոսը[81]:

2004 թվականի դրությամբ, Եվրոպական երկրների լիզինգային շուկայի ընդհանուր շավալը կազմել է 229532 մլն եվրո, որտեղ չորս առավել զարգացած երկրներին բաժին է ընկնում եվրոպական լիզինգային շուկայի 71 տոկոսը, որից՝ Մեծ Բրիտանիա՝ 53651 մլն եվրո (23.1%), Գերմանիա՝ 44410 մլն եվրո (19.3%), Իտալիա՝ 38040 մլն (16.6%), Ֆրանսիա՝ 26915 մլն (16.6%): Ընդհանուր առմամբ եվրոպական 31 երկրներում գործում է շուրջ 1300 խոշոր լիզինգային ընկերություններ, որոնք հիմնականում մտնում են ազգային լիզինգային ընկերությունների ասոցիացիաների մեջ և

[80] Долан Э., Линдсей Д. Рынок: Макроэкономическая модель. Пер. с. англ. – СПб. 1992, с.8
[81] www.Leasing.ru (Лизинг за рубежом)

համարվում են Եվրոպայի լիզինգային ընկերությունների ասոցիացիաների եվրոպական ֆեդերացիայի (Leaseurope) անդամ: Եվրոպայում լիզինգ տրամադրող ընկերությունների 60 տոկոսը մասնագիտացված լիզինգային ընկերություններն են, իսկ դրանցից բացի կան նաև ունիվերսալ լիզինգային ընկերություններ[82]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպական մի շարք առաջատար երկրներ (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Դանիա) չեն ընդունել լիզինգային գործառնությունները կարգավորող հատուկ օրենսդրություն և դա իրականացնում են գործարարական իրավունքի շրջանակներում, իսկ Ֆրանսիայում, Շվեդիայում, Պորտուգալիայում գործում են հատուկ օրենքներ, որոնցում արտացոլվում են լիզինգային հարաբերությունների սուբյեկտների իրավունքները, պարտականությունները լիզինգի առարկայի արտադրողի հետ:

Առանձին երկրներում լիզինգային օրենսդրություններն ունեն որոշակի տարբերություններ: Օրինակ, ֆրանսիական լիզինգի մոդելը թույլատրում է պայմանագրի ավարտին գնման իրավունքով (օպցիոն) գույքի ձեռք բերումը, Մեծ Բրիտանիայում կիրառվում է ոչ թե լիզինգային գործառնություն, այլ վարձակալություն-վաճառք[83]:

ԱՄՆ-ում օպցիոնը չի համարվում լիզինգի պարտադիր պայման: Բելգիական, Իտալական ու Ֆրասիական օրեսդրություններն օպցիոնը համարում են լիզինգային հարաբերությունների պարտադիր պայման:

Ընդհանրապես, լիզինգը որպես տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ ձև, արտացոլվում է իրավաբանական և օրենսդրական նորմատիվ փաստաթղթերում: Որոշ երկրներում, լիզինգային հարաբերություններում կարևորվում է գույքի տնտեսական, իսկ մյուս երկրներում՝ իրավական սեփականատիրոջը:

Մի շարք երկրներում լիզինգի պետական կարգավորումն իրականացվում է բանկային համակարգին հավասարազոր պահանջներով, մյուսներում՝ դրանք ավելի մեղմ են: ԱՄՆ-ի,

[82] www.setcom.com (Лизинг в цифрах и фактах)
[83] Рынок капитала в Армении, август 2002, с. 32

Ֆրանսիայի, Իտալիայի օրենսդրությունները հատուկ պահանջներ են ներկայացնում լիզինգային հարաբերություններին, լիզինգային գործարքները ենթակա են պարտադիր գրանցման դատական մարմիններում, որի հիմնական նպատակը լիզինգի օբյեկտի կոնկրետ սեփականատիրոջ մասին տեղեկացումն է: Գերմանիայում, Դանիայում և Նիդեռլանդներում լիզինգային գործարքները չեն կարգավորվում և չեն սահմանափակվում:

Մեծ Բրիտանիայում լիզինգի իրավական կարգավորումը պայմանավորված է լիզինգային պայմանագրի սուբյեկտների իրավական կարգավիճակով և գույքի արժեքով: Օրինակ, եթե լիզինգային պայմանագրի օբյեկտի արժեքը չի գերազանցում 2 հազար ֆունտ ստերլինգը, իսկ օգտագործողը հանդիսանում է իրավաբանական անձ, ապա այդ դեպքում կիրառվում է վարձակալություն-վաճառքի օրենքը: Այդ պատճառով էլ լիզինգային գործարքում ենթադրվում է գույքի արժեքի մասնակի փոխհատուցում, իսկ լիզինգային պայմանագրի արտոնյալ պայմաններում հնարավոր է երկարաձգում, եթե պայմանագիրը կնքված է գույքի տնտեսական օգտագործման ժամկետի 75%-ից պակաս ժամանակահատվածի համար:

Արտասահմանյան երկրների փորձը վկայում է, որ լիզինգի ընդլայնման գործում առավել չափով կարևորվում է ոչ թե օրենսդրական բազան, այլ երկրի մակրոտնտեսական վիճակը և պետության աջակցության ներդրումային գործունեությունը, այդ թվում նաև լիզինգին: Նման բարենպաստ պայմաններ ունեն հատկապես ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան: Այսպես, Մեծ Բրիտանիայում լիզինգի զարգացումը պայմանավորված էր հարկային արտոնյալ համակարգի ներդրման հետ: Ձեռնարկությունները կարող էին արտադրման առաջին տարում ներդրումների ողջ արժեքը դուրս գրել հարկվող շահույթից: Արտոնություններից կարող էին օգտվել միայն հաշվետու տարվա վերջում: Դրա համար լիզինգային ընկերությունները բացում էին մասնաճյուղեր ֆինանսական տարվա տարբեր ժամանակահատվածներում, որն ինքնաբերաբար բերում էր լիզինգային գործարքների ծավալների մեծացմանը:

Միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից մշակվել են հաշվապահական հաշվառման ստանդարտներ, որոնք ընդլայնվել և կիրառվում են ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, Բելգիայի,

Հոլանդիայի, Իռլանդիայի, Հունաստանի և մի շարք այլ երկրների կողմից: Դրանց հիմքում ընկած է լիզինգի օբյեկտի տիրապետման տնտեսական իրավունքը, սակայն որոշ երկրներ դեռևս շարունակում են հենվել տիրապետման իրավունքի վրա: Դրա համար էլ առանձնացվում են նաև հաշվապահական հաշվառման մեթոդները: Տնտեսական կոնցեպցիայի համաձայն գույքը պետք է արտացոլվի լիզինգառուի հաշվապահական հաշվեկշռում, իսկ իրավականի համաձայն՝ լիզինգատուի հաշվեկշռում:

Լիզինգի համաշխարհային փորձը համակողմանի ներկայացնելու համար համառոտակի վերլուծենք զարգացման տարբեր մակարդակների վրա և տարածաշրջաններում գտնվող երկրների լիզինգային հարաբերությունների վիճակը:

Լիզինգը Միացյալ Նահանգներում

Լիզինգային հարաբերությունների ամենադինամիկ զարգացող շուկան ամերիկյանն է: Թեև լիզինգի հայրենիքը չի համարվում ԱՄՆ-ը, այնուհանդերձ այժմյան լիզինգն ամերիկյան ձեռքբերում է: Դաբնական է, քանի որ երկրում արագորեն զարգանում էր բանկային բիզնեսը, այստեղ են առաջին անգամ կիրառվել վարկային քարտերը: Վարկով ապրելու ավանդույթը դարձել է բազմաթիվ ամերիկացիների ապրելակերպ: Այդ պատճառով էլ լիզինգն այդտեղ արագորեն դարձավ լայնորեն կիրառվող ապրանք:

Երբ 1952 թվականին ԱՄՆ-ում ձևավորվեց առաջին անկախ լիզինգային ընկերությունը, լիզինգային գործունեությունը աստիճանաբար արտադրող-վաճառող մեթոդից վերածվեց մասնագիտացված ֆինանսական ծառայության: Եվ արդեն 1960-ական թվականներին ԱՄՆ-ում առանձնանում էին երեք տեսակի լիզինգային ընկերություններ՝ անկախ լիզինգային ընկերություններ, արտադրողների դուստր կազմակերպություններ և բանկերի մասնաճյուղեր[84]: Տարատեսակ սարքավորումների և տեխնիկայի վարձակալության գործարքների ֆինանսավորումը ԱՄՆ-ում նույնպես ակտիվորեն կիրառվել է:

[84] Лапыгин Ю., Сокольских Е. Лизинг. М., 2005, с.264

ԱՄՆ-ում լիզինգը համարվում է հիմնական ներդրումային գործիք: Դեռևս 1950-ական թվականների վերջին այդ երկրի ներքին շուկայում լիզինգով առաջարկվում էր բազմատեսակ տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ[85], իսկ 70-ական թվականներին ամերիկյան լիզինգային կազմակերպություններն իրենց մասնաճյուղերը բացեցին Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, որի շնորհիվ ԱՄՆ-ի լիզինգային գործարքների շուրջ 15 տոկոսն իրականացվում էր արտասահմանում: 1996 թվականին լիզինգի ծավալները ԱՄՆ-ում կազմում էին գրեթե 130 միլիարդ դոլար[86], 2005 թվականին՝248 մլրդ. դոլար, սարքավորումների լիզինգը կազմում է սարքավորումներում ներդրումների 22 տոկոսը, ապահովում է իրական ՀՆԱ-ի 1-3 տոկոսը: Ամերիկյան բիզնեսի 80 տոկոսն օգտվում է լիզինգից: Առանց լիզինգի չէր լինի 3-6 մլն աշխատատեղ, յուրաքանչյուր 70 հազար արժողությամբ լիզինգային գործարք ստեղծում է մեկ աշխատատեղ [87]:

ԱՄՆ-ում մինչև 1963 թվականը բանկերին արգելվում էր ֆինանսական գործարքներին մասնակցել որպես լիզինգատու, սակայն չհրաժարվելով ձեռներեցության այս ձևից, ակտիվորեն հանդես են եկել որպես լիզինգային ընկերությունների վարկատուներ: Լիզինգը հնարավորություն էր տալիս կիրառել վճարումների ճկուն համակարգ, պետությունը նախատեսում էր հարկային, ներդրումային և ամորտիզացիոն արտոնություններ: Որպես օրինակ պետք է նշել ներդրումային հարկային արտոնությունը (ինչը կարելի է կիրառել մեր հանրապետությունում), համաձայն որի տվյալ տարվա ընթացքում կատարված ներդրումների ընդհանուր արժեքը 10 տոկոսի չափով նվազեցնում է շահութահարկը: Դա զգալիորեն նպաստեց ԱՄՆ-ում լիզինգային բիզնեսի արագ զարգացմանը:

1970 թվականին ԱՄՆ-ում ընդունվեց օրենք բանկային հոլդինգային ընկերությունների մասին, ինչը սահմանեց ազգային մակարդակով լիզինգային գործարքների ծավալը: Բանկային

[85] World Lessors: View from the top. Asset Finance and Leasing Digest, N 22, Sept 1999, p.18
[86] Грейсон Дж., Оделл К. Американский менеджмент на пороге XXIвека. – Экономика, 1999, с. 45
[87] www.setcom (Лизинг в цифрах и фактах)

հոլդինգային ընկերություններն իրավունք ունեն իրականացնել ինչպես անշարժ, այնպես էլ շարժական գույքի լիզինգ, իսկ ազգային բանկերը՝ միայն շարժական գույքի լիզինգ: 1972-ին ֆեդերալ ռեզերվային համակարգն ընդունեց որոշում, որը բանկային հոլդինգային ընկերություններին թույլատրեց հանդես գալ լիզինգային գործարքների հետկապված գործակալ-բրոքեր կամ խորհրդատու [88]: 1977-ին ուժի մեջ մտավ և ներկայումս գործում է Պետական ֆինանսական հաշվապահական ստանդարտը (FAS 13), որը կարգավորում է լիզինգային գործարքների հաշվառման իրականացումը Միացյալ Նահանգներում:

ԱՄՆ-ում լիզինգի զարգացման գործում կարևոր քայլ կարելի է համարել "Հարկային համակարգում ռեֆորմների մասին" օրենքում լիզինգային գործառնություններին, ինչպես նաև լիզինգի հետ կապված հարկային արտոնությունների կիրառման համակարգի ազատականացմանը վերաբերող չափանիշների մատնանշումը: Առաջին անգամ հարկերի մասին օրենքում հայտնվեց "Ֆինանսական լիզինգ" տերմինը, ինչը սահմանում էր որպես գործարք, որի դեպքում գույքը լիզինգառուին փոխանցվում է դրա կյանքի ցիկլի տևողությանը հավասար ժամկետով, լիզինգավճարներն ամբողջությամբ փոխանցվում են լիզինգատուին, այլ ոչ թե վարկատուին, լիզինգառուն պատասխանատվություն է կրում սարքավորման տեխնիկական սպասարկման, ապահովագրության և հարկային վճարման համար, լիզինգավճարները ծածկում են սարքավորման սկզբնական արժեքը և ապահովում լիզինգատուի եկամուտը: Հետագայում լիզինգի ոլորտում կատարվեց հարկային բարեփոխումներ, քանզի ԱՄՆ-ի կառավարությունը դա գնահատեց որպես սուբսիդավորում այլ երկրների օգտին (հարկային արտոնությունների արտահանում), և հարկային արտոնությունների զգալի մասը կրճատվեց ամորտիզացիոն գործարքների միջոցով:

20-րդ դարի 90-ական թվականների վերջին բարելավվեց լիզինգային գործունեությունը կարգավորող օրենսդրությունը: Մասնավորապես, 1999 թվականի մարտի 11-ին ԱՄՆ-ի ներքին եկամուտների ծառայության կողմից ընդունվեցին միջազգային

[88] Газман В. Финансовый лизинг. М., 2003, с.236

լիզինգային գործառնությունները կարգավորող նոր կանոններ: Այստեղ յուրաքանչյուր նահանգ ինքնուրույն է սահմանում լիզինգի մասնակիցների համար հարկային դրույքաչափը, որոնք տատանվում են ըստնահանգների 0-7 տոկոսի շրջանակներում:

Որպեսզի գործարքը համապատասխանի ֆինանսական լիզինգի պայմաններին, պետք է բնութագրվի հետևյալ հատկանիշներով[89]

- ✓ լիզինգատուի կողմից լիզինգի առարկայում ունեցած ներդրումը չպետք է լինի 20 տոկոսից ցածր;
- ✓ լիզինգառուն իրավունք ունի գնել գույքն ավելի ցածր գնով, քան դրաշուկայական գինն է;
- ✓ լիզինգառուն իրավունք չունի ներդրում կատարել վարձակալած սարքավորման մեջ, բացառությամբ որոշ կատարելագործում իրականացնելիս;
- ✓ լիզինգի ժամկետը չպետք է գերազանցի սարքավորման ծառայության ժամկետի 80 տոկոսը;
- ✓ լիզինգային պայմանագրի վերջում սարքավորման մնացորդային արժեքը չպետք է ցածր լինի սկզբնական արժեքի 20 տոկոսից;
- ✓ լիզինգատուն պետք է ունենա դրամական հոսքերի աճ, եկամտի ստացում՝ անկախ հարկային արտոնություններից:

Երբ լիզինգը չի համապատասխանում նշված պահանջներին, ապա կողմերի համաձայնությամբ ելնում են ԱՄՆ-ի դատարանների տարբեր մեկնաբանություններից, կարևորելով հետևյալ պահանջները.

- ✓ համաձայնության ձևը հանդիսանում է լիզինգ;
- ✓ լիզինգը հետապնդում է առևտրային նպատակ;
- ✓ լիզինգատուն տիրապետում է սեփականության իրավունքի որոշ հատկանիշների, ինչպիսիք են կորստի ռիսկը և տնտեսական շահը:

Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր տարի կազմվում է խոշորագույն լիզինգային ընկերությունների ցուցակ, որպես չափանիշ ընդունելով բիզնեսի տարեկան ծավալը և ընկերության զուտ ակտիվները: Պետք է նշել, որ ԱՄՆ-ի 100 առաջատար լիզին-

[89] Лапыгин Ю., Сокольский Е. Лизинг. М., 2005., с.265

գատուների գործունեության տարեկան ընդհանուր արդյունքները 88.8 մլրդ դոլարից աճեցին մինչև 212.5 մլրդ-ի, իսկ զուտակտիվներն ավելացան 221.2 մլրդ դոլարից 479.4 մլրդ-ի՝ ավելի քան երկու անգամ[90]:

Տեղի են ունենում նաև որակական փոփոխություններ: Այսպես, “Top-100”-ում ընդգրկված ընկերությունների մասնաբաժինը լիզինգի շուկայում 58.7%-ից բարձրացել է մինչև 91.2 տոկոսը, ունենալով ավելի քան 88 հազար աշխատող:

ԱՄՆ-ի լիզինգային շուկայի գործարար ակտիվության աճին խթանող էական գործոն է հանդիսանում միջազգային լիզինգի զարգացումը: Օրինակ, երեք տարվա ընթացքում (1998-2001 թթ.) “GE Capital” ընկերությունը շուրջ 3 անգամ ընդլայնել է գործարքների ծավալը օտարերկրյա լիզինգառուների հետ, ինչը կազմել է նրա ընդհանուր բիզնեսի 42 տոկոսը:

ԱՄՆ-ում լիզինգի զարգացման մակարդակի մասին են վկայում նաև մեկուկես տասնյակից ավելի ասոցիացիաները, որոնք միավորում են լիզինգային բիզնեսի զարգացմամբ հետաքրքրվող ընկերություններին: Դրանք ձևավորվում են ինչպես ֆեդերալ մակարդակով, այնպես էլ առաձին նահանգների շրջանակներում, նաև ըստսարքավորումների տեսակների:

Համաշխարհային տնտեսագիտությունը նշում է, որ ԱՄՆ-ի տնտեսությունն ամբողջ աշխարհի երկրների համար հանդիսանում է “բարոմետր”, քանզի ցանկացած երկիր էլ ձգտել է հասնել ԱՄՆ-ի տնտեսության չափանիշներին[91]: Դա վերաբերվում է նաև լիզինգային բիզնեսին:

Ներկայումս բոլոր երկրներում այս կամ այն չափով ձևավորվել է լիզինգային բիզնեսը, որոնցից յուրաքանչյուրը ձգտելով օգտագործել ամերիկյան լիզինգի փորձը և առավելությունները, այդուհանդերձ պահպանում է որոշակի առանձնահատկություններ՝ կապված տվյալ պետության զարգացման մակարդակից, անցած ուղուց, համաշխարհային շուկայում զբաղեցրած դիրքից, տարածաշրջանից և այլ պայմաններից: Այդ

[90] Газман В. Финансовый лизинг. М., 2003, с.243
[91] Ломакин В. Мировая экономика. – М., Финансы. ЮНИТИ, 1998, с. 433

պատճառով անհրաժեշտ է վերլուծել նաև լիզինգի զարգացման վիճակը մի շարք երկրներում:

Լիզինգային բիզնեսի առանձնահատկությունները Եվրոպական երկրներում:

Մեծ Բրիտանիա: Դեռևս հնագույն ժամանակներից Մեծ Բրիտանիայում իրականացվել են լիզինգին նմանվող վարձակալական գործառնություններ: Իսկ ներկայիս լիզինգի սկիզբը դրվեց 1960 թվականի հունիսի 8-ին, երբ ստեղծվեց "Լիզինգային առևտրային ընկերությունը":

Մեծ Բրիտանիայում կիրառվում են երեք տեսակի լիզինգային արդյունքներ.

- ✓ ֆինանսական լիզինգ;
- ✓ գործառնական լիզինգ;
- ✓ ապրանքների վարձակալության համաձայնագիր՝ գնման օպցիոնով (իրավունքով):

Բրիտանական սահմանմամբ ֆինանսական լիզինգն ավելի նեղ հասկացություն է, քան համապատասխան սահմանումները շատ երկրներում:[92] Լիզինգի և վարձակալություն-վաճառք պայմանագրերը կարգավորվում են SSAP 21 հաշվապահական ստանդարտով, որը կիրառվում է 1984 թվականից, համաձայն որի ֆինանսական լիզինգը լիզինգառուի կողմից պետք է հաշվառվի որպես ակտիվ և ապագայում վարձակալական վճարները վճարելու համար: Այդ ակտիվը ենթակա է ամորտիզացիայի, իսկ լիզինգատուն լիզինգառուից ստացված միջոցներն արտացոլում է որպես ֆինանսական ակտիվներ:

Կարճաժամկետ վարձակալության ժամանակ հակառակն է տեղի ունենում՝ վարձատուն իր կողմից վարձակալության հանձնվող գույքը հաշվառում է որպես հիմնական միջոց, որը ենթակա է ամորտիզացիոն նորմերին, իսկ վարձակալական վճարներն արտացոլվում են որպես եկամուտ վարձատուի մոտ և որպես ծախս վարձակալի մոտ[93]:

---

[92] Газман В. Финансовый лизинг. М., 2003, с. 249
[93] Лапыгин Ю., Сокольских Е. Лизинг. М., 2005, с. 279

Մեծ Բրիտանիայում լիզինգի զարգացման խթան են հանդիսացել հարկային արտոնությունների կիրառումը: 1970-ական թվականներին լիզինգային ընկերություններն իրավունք ունեին հաշվետու տարվա վերջում հարկվող գումարից հանել կապիտալ ներդրումների 100%-ը, որը հետագայում վերադարձվում էր կորպորացիոն հարկի տեսքով: Այստեղ լիզինգային վճարներն առաջին տարում չէին հարկվում: Այնուհետև այդ արտոնության 100 տոկոս նորմատիվը փոխարինվեց 75%-ով, հետո՝ 50%-ով: Հետագայում արտոնությունները սկսեցին տրամադրվել ամորտիզացիայի ավելացմամբ՝ դուրս գրված ամորտիզացիայի նախորդ տարվա վերջում կուտակված գումարի 25%-ի չափով:

Մեծ Բրիտանիայի լիզինգային ընկերությունները վճարում են հետևյալ հարկերը.

- ✓ կորպորացիոն հարկ,
- ✓ հարկ կապիտալից՝ 1 տոկոսի չափով,
- ✓ ավելացված արժեքի հարկ՝ ստանդարտ 15 % տոկոսադրույքով,
- ✓ տեղական հարկեր (հիմնականում անշարժ գույքից):

Այստեղ գործում է ֆինանսների և լիզինգի ասոցիացիա, որում ընդգրկված է 71 ընկերություն (2000 թ.), որոնք իրականացնում են երկու լիզինգային գործարքների արժեքի 93%-ը: Մեծ Բրիտանիան այս ցուցանիշով աշխարհում երկրորդն է ԱՄՆ-ից հետո: 2004 թվականին լիզինգային գործարքների ծավալը կազմել է 53651 մլն եվրո:

Ինչպես Մեծ Բրիտանիայում, այնպես էլ ամբողջ Եվրոպայում, լիզինգի զարգացման կտրուկ աճ նկատվեց 1980-ական թվականներին: 1985-1990 թվականներին լիզինգային գործարքների միջին տարեկան ծավալներն ավելացան միջին հաշվով 4.8 տոկոսով: Բայց 1994 թվականից հետո իրավիճակը փոխվեց, լիզինգային գործարքների ծավալը կրճատվեց և նույնիսկ մեծ թվով լիզինգային կազմակերպություններ լուծարվեցին: Երկու տարվա ընթացքում անկումը կազմեց 32.5 տոկոս, իսկ հետագայում դա հարթվեց, տեղի ունեցավ լիզինգի ծավալների մեծացում, ինչի մասին վկայում է աղյուսակ 2.2-ի տվյալները:

Աղյուսակ 2.2

Եվրոպական երկրներում լիզինգային ծառայությունների աճի դինամիկան նախորդ տարվա համեմատ (%-ով)

Տարիներ	1998-1999	1999-2000	2000-2001	2001-2002	2002-2003	2003-2004	2004-2005	2005-2006	2006-2007	2007-2008	2009-2010	2011-2012	2013-2014
Աճը նախորդ տարվա նկատմամբ	14.3	17.7	9.6	12.5	14.1	7.23	17.35	15.3	12.4	11.9	12.2	12.8	13.1

Եվրոպայում "Եվրոլիզինգ" կազմակերպությունն առաջին լիզինգային շուկան էր, որը ստեղծվել էր 1977-ին, գլխամասը գտնվում է Բրյուսելում: 2008 թվականի տվյալներով այն իր մեջ պարունակում է Եվրոպայի լիզինգային շուկայի շուրջ 93%-ը: 2007 թվականին Եվրոմիության 24 երկրներում կնքվել են 338.9 մլրդ եվրոյի պայմանագրեր, որը 12.4 %-ով աճել է նախորդ տարվա համեմատ (297.5 մլրդ եվրո), որից 250.7 մլրդ-ը կազմել են տրանսպորտային միջոցները, իսկ 46.8 մլրդ-ը՝ անշարժ գույքի լիզինգը: Նույն տարվա տվյալներով լիզինգի պորտֆելը լիզինգային կազմակերպություններում կազմել է 630 մլրդ եվրո:[94]

20-րդ դարի վերջում Եվրոպայում ձևավորվել էր լիզինգային ծառայությունների շուկայի հետևյալ հատվածները՝ առաջին տեղում էր ավտոմեքենաների լիզինգը, երկրորդ տեղում՝ արդյունաբերական սարքավորումների, երրորդում՝ համակարգիչների պայմանգրերի լիզինգները, դրանցից հետո որոշակի տեղ են զբաղեցնում արտադրական նշանակության տրանսպորտային միջոցները, նավերը, ինքնաթիռները, երկաթուղային վագոնները: 1999 թվականին Եվրոպայում լիզինգի միջոցով

[94] "European Leasing", a joint Leascurope and KPMG publication, 2008, p.8

իրականացվում էր ամբողջ արտադրական ներդրումների շուրջ 20 տոկոսը:[95]

Եվրոպայում լիզինգային ծառայությունների շուկայի կառուցվածքում առանձին հոդվածով չի առանձնացվում գյուղատնտեսության ոլորտի լիզինգը: Այն ըստ բաղադրիչների ընդգրկվում է թվարկած լիզինգների շարժում: Այսպես, գյուղատնտեսական մեքենաների (բեռնատար ավտոմեքենա, տրակտոր, կոմբայն և այլն) լիզինգը դասվում է ավտոմեքենաների լիզինգի շարքին, գյուղհումքի վերամշակման սարքավորումների, որից համեմատաբար շատ օգտվում նաև ՀՀ ագրոարդյունաբերական համալիրը, ընդգրկվում է արդյունաբերական սարքավորումների լիզինգի խմբում, իսկ ինչ վերաբերվում է համակարգիչների լիզինգին, ապա այն մեծ տարածում չի ստացել գյուղատնտեսության համաշխարհային պրակտիկայում, առավել ևս մեր հանրապետությունում:

Լիզինգային գործառնությունների զարգացման մակարդակով Եվրոպայում երկրորդ, իսկ աշխարհում երրորդը Գերմանիան է, որտեղ լիզինգային բիզնեսը սկսել է զարգանալ 1962 թվականից, երբ հիմնադրվեց առաջին լիզինգային ընկերությունը՝ "Գերմանական լիզինգը" մեկ մլն գերմանական մարկ կանոնադրական կապիտալով[96]:

2001 թվականին արդեն գրանցվել էին 2038 լիզինգատուներ, սակայն դրանցից միայն 200 ունեն իրական ազդեցություն շուկայի վրա: Գերմանիայի լիզինգային ընկերությունների ազգային ասոցիացիայի անդամ են 121 ընկերություններ, որոնցից 15 զբաղվում են անշարժ գույքի լիզինգով: 2000 թվականին լիզինգային գործարքների գումարը կազմել է 86.5 մլրդ մարկ, իսկ 2004-ին՝ 44410 մլն եվրո, տարեկան միջին աճը կազմում է 6 տոկոս[96]:

Գերմանական լիզինգային ընկերությունները վճարում են հետևյալ հարկատեսակները.

- ✓ հարկ կապիտալի դիմաց՝ 1% հարկադրույքով,
- ✓ շահութահարկ՝ չբաշխված շահույթից 50 %,
- ✓ տեղական արդյունագործական հարկ՝ կապիտալի 0.2 %-ը,

[95] Циренщиков В., Антюшина Н. Лизинг в Западной Европе: выводы для Росии. – М., Доклад- институт Европы. 1999, с.16
[96] Лапыгин Ю., Сокольских Е. Лизинг. М., 2005, с. 272

- ✓ ավելացված արժեքի հարկ՝ 14%,
- ✓ գույքահարկ՝ զուտակտիվների 0.45-0.6%:

Իտալիայի լիզինգային շուկան իր ծավալներով երրորդն է Եվրոպայում: 2004 թվականին լիզինգային գործարքների ծավալը կազմել է 38040 մլն եվրո: Առաջին լիզինգային ընկերությունը ստեղծվել է 1963 թ. և արագորեն աճել է 20-րդ դարի վերջում, հատկապես, 2001 թվականին լիզինգային շուկան նախորդ տարվա հանդեպ աճեց 20%-ով՝ հասնելով շուրջ 32 մլրդ եվրո:

Իտալիայում որպես լիզինգառուներ հանդես են գալիս իրավաբանական անձինք՝ ներառյալ փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք լիզինգը կիրառում են որպես իրենց կապիտալ ներդրումները ֆինանսավորելու միջոց: Իտալիայի փորձն ուսանելի կլինի մեր հանրապետության համար, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այստեղ հիմնականում իշխում են բանկային խմբերի սեփականություն համարվող ընկերությունները: Լիզինգային ընկերությունները գտնվում են Իտալիայի կենտրոնական բանկի մշտական հսկողության ներքո:

Ֆրանսիայում առաջին լիզինգային պայմանագիրը կնքվել է 1961թվականին: 1965-ին արդեն գործում էր 28 լիզինգային ընկերություն: 1966-ին ընդունվեց լիզինգի մասին օրենք: 1987 թվականին Ֆրանսիայում գործում էր 56 լիզինգային կազմակերպություն՝ տարեկան 57 մլրդ ֆրանկ պայմանագրերի ծավալով: Ֆրանսիայի կառավարությունը խթանում է լիզինգային ընկերությունների զարգացմանը՝ դիտարկելով այն որպես տարածաշրջանային քաղաքականության մի մաս: Ֆրանսիայի առավել խոշոր լիզինգային կազմակերպություններն են՝ “Լոկաֆրանս”, “Լոկաբայ”, “Սոֆիմոբայ”, “Ալիմինկո” և այլն: Ֆրանսիայում լիզինգի կիրառման կառուցվածքում զգալի տեղ է զբաղեցնում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում ֆինանսական լիզինգի կիրառությունը:

Ֆրանսիական լիզինգային ընկերությունների 64 տոկոսն ունի բանկի կարգավիճակ կամ պատկանում է բանկերին: 17 խոշորագույն լիզինգային ընկերություններին բաժին է հասնում կնքվող գործարքների ծավալի 50 տոկոսից ավելին:

Լիզինգի զարգացման միտումները Ճապոնիայում և Ասիական տարածաշրջանում

Ճապոնիայում լիզինգային բիզնեսը սկսել է զարգանալ 1960-ական թվականներից, 1963-ին ստեղծվեց առաջին մասնագիտացված լիզինգային կազմակերպությունը, 1986 թվականին լիզինգային պայմանագրերի ծավալներն ավելացան ավելի քան 18 անգամ, կազմելով 4758 միլիարդ իեն, որը Ճապոնիային հնարավորություն տվեց այդ շուկայում աշխարհում զբաղեցնել 2-րդ տեղը: 2000 թվականին կնքված պայմանագրերի արժեքը կազմել է 69.61 մլրդ դոլար, ինչը 7.3%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշին:

Լիզինգի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների ծավալում կազմել է 9.1 տոկոս: Երկրում լիզինգի զարգացմանը աջակցում է Ճապոնիայի լիզինգային ասոցիացիան (Japan Leasing Association), որը ստեղծվել է 1972 թվին և ներկայումս միավորում է ավելի քան 90 լիզինգային ընկերություն:

Խոշոր ընկերություններին, որոնք ունեն 100 մլն իենից (850 հազ ԱՄՆ դոլար) ավելի կապիտալ, բաժին է ընկնում երկրի լիզինգային պայմանագրերի 47.5 տոկոսը[97]: Ճապոնական երեք լիզինգային ընկերություններ դասվում են աշխարհի առաջատար լիզինգային ընկերությունների շարքին, իսկ պորտֆելի մեծությամբ (25 մլրդ դոլար) աշխարհում երկրորդ ընկերությունը Ճապոնական “Orix Corporation”-ն է:

Սկզբնական շրջանում լիզինգային կազմակերպությունները մասնաճյուղեր էին բացում Ասիական տարածաշրջանում, այնուհետև ԱՄՆ-ում և Եվրոպայում: 1987-ին Ճապոնական լիզինգային կազմակերպությունները 17 երկրներում ստեղծել էին 104 մասնաճյուղ: Մինչև վերջերս Ճապանական լիզինգային շուկայում գերիշխում էր կենցաղային տեխնիկայի, համակարգիչների և հաշվողական տեխնիկայի լիզինգը, այստեղ որպես լիզինգի առարկա առավելապես տարածված է տեղեկատվական միջոցները[98]:

---

[97] Газман В. Финансовый лизинг. М., 2003. с.256

[98] Малышев А. Мировой рынок услуг по лизингу обордования// Основые средства, N7, 2003

Փոքր ու միջին լիզինգային ընկերություններին աջակցելու նպատակով Ճապոնիայի կառավարությունը մշակել է հատուկ հարկային և վարկային ծրագրեր երկու տարվա կտրվածքով: Այսպես, 2001 թվականին սկսվել է և 2003-ին ավարտվել է լիզինգային ընկերությանը տրվող հատուկ հարկային վարկ ծրագիրը, որով նրանք ստանում են ընդհանուր լիզինգավճարների 4.2 տոկոսի չափով վարկ: Կառավարությունը հիմնել է Վարկային ապահովագրական ընկերություն լիզինգային գործառնությունների համար: Դա իրավունք է տալիս լիզինգառուի անվճարունակության դեպքում ստանալ ապահովագրական փոխհատուցում ընթացիկ լիզինգավճարի 50 տոկոսի չափով:

Այս առումով Ճապոնիայի փորձը ուսանելի կարող է լինել ՀՀ-ի համար, քանի որ մեզ մոտ լիզինգային կազմակերպությունները աջակցության կարիք ունեն պետության կողմից:

Ընդհանրապես ասիական տարածաշրջանում լիզինգայինգործունեության 93.6 տոկոսն իրականացվում է չորս երկներում՝ Ճապոնիա, Հարավային Կորեա, Հոնկոնգ և Ինդոնեզիա: Սակայն երկրների միջև նկատվում է մեծ տարբերություններ: Հարավային Կորեայում մասնավոր կապիտալի ներդրումների լիզինգի բաժինը գերազանցում է 20 տոկոսը, Հոնկոնգում այն երկու անգամ ցածր է: 1993 թվականին Ասիան առաջին անգամ լիզինգային գործարքների ծավալով հասավ Եվրոպային, իսկ 1999 թվականին գերազանցեց Եվրոպային լրիվ 3 տոկոսով, ունենալով համաշխարհային լիզինգի 28 տոկոսը:

Ավստրալիայում, 200 թվականի տվյալներով, աշխարհում լիզինգային գործարքների ծավալով զբաղեցնում էր 9-րդ տեղը, այստեղ նորագույն սարքավորումների պետական ներդրումների 20 տոկոսն իրականացվում է լիզինգի միջոցով: Լատինական Ամերիկայի բաժինը լիզինգի համաշխարհային շուկայում 20-րդ դարի վերջին տասնամյակում 0.8 տոկոսից բարձրացավ մինչև 4.2 տոկոսի: Աֆրիկայի մասնաբաժինը դեռևս շատ ցածր է կազմում է 1.5-2.0 տոկոս, ընդ որում այդ աշխարհամասի 2/3-ն իրականացվում է Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում:[99]

[99] Грейсон Дж., О'Делл К. Американский менеджмент на пороге 21 века. М. Экономика, 1999, с. 44

Այսպիսով, վերլուծելով լիզինգի զարգացման համաշխարհային փորձը, կարելի է միանշանակ պնդել, որ վերջին 30 տարիների ընթացքում, լիզինգը դառնալով ֆինանսական ներդրումների լուրջ գործիք և ներկայումս էլ ունենալով շուկայական տնտեսության կարգավորման գործընթացում էական դերակատարություն, ունեցել է զգալի աճ աշխարհի բոլոր տարածաշրջաններում: Սակայն մեզ համար այդ հարցը կմնաբաց, եթե վերլուծության չենթարկվի նախկին սոցիալիստական համակարգի, հատկապես ԱՊՀ երկրների փորձի ուսումնասիրությունը: Մեր կարծիքով, դա կլրացնի տվյալ հարցի հետազոտության բացը, ինչի համար ցանկանում ենք ներկայացնել Բելառուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրինակները լիզինգային հարաբերությունների զարգացման բնագավառում, որպես ոլորտի առաջատար երկրների ԱՊՀ-ում:

Ուշագրավ է լիզինգային հարաբերությունների զարգացման Բելոռուսիայի օրինակը, երբ 1990 թվականից արձանագրվեցին լիզինգային գործարքներ:[100] Առաջին լիզինգային ընկերությունը՝ □Պրիոր-լիզինգը□ ստեղծվեց Պրիոր բանկի աջակցությամբ: Դրանց զուգահեռ գործում էին նաև մասնագիտացված լիզինգային կազմակերպություններ, հիմնադրված բանկային կապիտալի աջակցության բացակայությամբ: 1994 թվին ուժի մեջ մտավ ֆինանսների նախարարության կողմից հաստատված լիզինգային գործառնություններին վերաբերվող մեթոդական ցուցումները, որն առաջին էր ԱՊՀ տարածքում:

1996 թվականին ընդունվեց լիզինգի զարգացման վերաբերյալ որոշում, որով դասական համարվող եռակողմ սխեմային (վաճառող, լիզինգատու, լիզինգառու) անհրաժեշտության դեպքում հնարավոր է վարկատուի ներգրավում: Դրանք նույնպես որակվում էին որպես լիզինգային հարաբերություններ:

Բելառուսիայում գործում է լիզինգային գործակալների ատեստավորման հատուկ համակարգ: Բելոռուսիայի լիզինգային ընկերությունների միության նախագահության հավաստմամբ միջազգային լիզինգային գործընթացները (Բելոռուսիայում

[100] Прилуцкий Л. Финансовый лизин. М. 1997 с. 67-72

զգալիորեն բարձր է միջազգային լիզինգային հարաբերությունների մակարդակը, որն առաջին հերթին կապված է նրա աշխարհագրական դիրքի հետ) պետք է կազմակերպել լրացուցիչ կողմի տեղական լիզինգային ֆիրմայի մասնակցությամբ, այն է սուբլիզինգային գործարքի սխեմայով: Լրացուցիչ օղակի ընդգրկումը բացասական ազդեցություն չի թողնում ծախսերի վրա, դեռ ավելին՝ նվազեցնելով ռիսկայնությունը, լրացուցիչ գրավչություն կապահովի նման պայմանգրերի համար:

Բելառուսի հանրապետությունում լիզինգին վերաբերվող միջազգային հարցերը զերծ չեն պետական ուշադրությունից: Դրանք գտնվում են Արտաքին գործերի նախարարության ուշադրության ներքո: Այստեղ աշխատանքներ են տարվում ընդլայնելու միջազգային լիզինգի գործարքների շրջանակները:

Ռուսաստանի Դաշնությունում առաջին լիզինգային գործընթացները ստեղծվեցին բանկերի մասնակցությամբ ("Բալթյան լիզինգ", "Լիզինգ-բիզնես", "Ինտերրոսլինգ", "ՌԳ-Լիզինգ" և այլն), ինչը օրինաչափ էր, քանի որ այդ ժամանակ միայն բանկերն էին տիրապետում ազատ դրամական միջոցներ: Կառավարությունը փորձում էր այդ գործընթացը, որի համար էլ վարչապետի կողմից ընդունվեց որոշում բանկերի կողմից ֆինանսական լիզինգի գործարքներ կնքելու վերաբերյալ [101]: ՌԴ-ում լիզինգային բիզնեսի առաձնահատկությունը կայանում էր նրանում, որ ուներ ճյուղային մասնագիտացված բնույթ ու ֆինանսավորվում էր բյուջետային միջոցներից:

1998 թվականին Ռուսաստանում ընդունվեց "Լիզինգի մասին" ֆեդերալ օրենք, որը նախատեսում էր երեք տեսակի լիզինգներ՝ ֆինանսական, գործառնական և վերադարձվող: Սակայն գործառնական լիզինգն էական զարգացում չապրեց, որի հետևանքով 2002-ի հունվարի 29-ին ընդունվեց "Լիզինգի մասին" նոր օրենք, որից հանվեցին գործառնական և վերադարձվող լիզինգ հասկացությունները, ինչը լիզինգային շուկայի ձևավորման բնական էվոլյուցիոն ընթացքի արտացոլումն է: Այդ օրենքի ընդունման շնորհիվ "եթե մի քանի տարի առաջ հիմնական լիզինգային կազմակերպությունները

[101] Распоряжение премьера Правительства от 13 мая 1996г. N442-РП О привлечении средст банков для финансирования лизинга

կենտրոնացված էին միայն Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում, ապա ներկայումս տարածաշրջանային լիզինգային կազմակերպությունները զարգանում են և հասնում էական արդյունքների”[102]:

1994 թվականին ստեղծված “Ռոսլինգ” ասոցիացիան ներկայումս միավորում է 70 ընկերություններ (500 մլն ԱՄՆ դոլար գործարքային ծավալներով), ընդգրկում է գրանցված լիզինգային ընկերությունների ընդամենը 5%[107]: 2002 թվականի տվյալներով ՌԴ-ում լիզինգի տեսակարար կշիռը ներդրումներում կազմում էր 3%՝ 1999-ի 1.5%-ի դիմաց[108] ընդհանուր առմամբ հիմնական միջոցների ձեռք բերման լիզինգի մասնաբաժինը Ռուսաստանում կազմում է 9-15%, չնայած արտադրական ֆոնդերը մաշված են 60-80 տոկոսով[109]: 2007 թվականը ռուսական լիզինգային բիզնեսի համար արդյունավետ էր: Լիզինգային պայմանագրերի ծավալը 2007 թվականի առաջին կիսամյակում լիզինգի ընդհանուր ծավալը կազմել է 14 մլրդ դոլար, որը համարյա նույն չափն է, ինչ գրանցվել է 2006 թվականին: 2007 թվականի տվյալներով ռուսական լիզինգային շուկան զարգացող և անցումային տնտեսության երկրների մեջ գրավում է առաջատար դիրք[110]:

Եթե մի քանի տարի առաջ Ռուսաստանի լիզինգային շուկայում հիմնական սպառողները խոշոր ֆիրմաներն էին, ապա ներկայումս գերակշռում են փոքր ու միջին ընկերությունները, որոնց մոտ լիզինգային պայմանագրերի արժեքը չի գերազանցում 500 հազար դոլարը:

Ընդհանրացնելով լիզինգային ծառայությունների ռուսաստանյան շուկայի արդյունքները կարելի է եզրակացնել, որ այն դեռևս գտնվում է կայացման փուլում և դրան խոչընդոտում են հետևյալ գործոնները[111].

- ✓ լիզինգային գործարքներում առկա առևտրային ռիսկերի ապահովագրման համակարգի փաստացի բացակայությունը,

---

[102] Ковынев С. Лизинговые сделки. Рекомендации по избежанию ошибок. 2-ое изд. М., Вершина, 2008, с. 8
[107] Лизинг в России в 2000 г. //Вестник Российской ассоциации лизинговых компаний. Технологии лизинга и инвестиций. 2001, с.1-3.
[108] Малышев А. Мировой рынок услуг по лизингу оборудования. 2003
[109] Адамов Н., Тилов А. Лизинг./ 2-ое исд. – ЦПб. Питер. 2006. с.9
[110] Российский рынок лизинга в 2007 году. http://bo bdc.ru/2008/4.lizing.htm
[111] www.raexpert.ru/Leasing (Конференция Лизинг в Россиии: высокие темпы роста)

- ✓ դատական պրակտիկան խոչընդոտում է լիզինգառուի կողմից լիզինգավճարների չվճարման դեպքում լիզինգի առարկայի արագ բռնագրավմանը,
- ✓ սարքավորումների երկրորդային շուկայի զարգացած չլինելը խանգարում է լիզինգի առարկան որպես երաշխիք ընդունելուն և այլն:

Այսպիսով բելոռուսական, ռուսական և մյուս նորանկախ երկրների, այդ թվում նաև Հայաստանի լիզինգային շուկաները բացառություն չեն, ամենայն հավանականությամբ, իրենց զարգացման ընթացքում անցնելու են այն փուլերով, որոնցով ժամանակին անցել են զարգացած երկրների լիզինգային հարաբերությունները: Իսկ դրա համար շատ կարևոր է համակողմանի ուսումնասիրել լիզինգային հարաբերություններում նվաճում ունեցող երկրների փորձը, չկրկնել նրանց պրակտիկայում թույլ տրված բացթողումները, կիրառել ստացված դրական արդյունքները, որպեսզի այդ ճանապարհը հաղթահարվի առավել սահուն ու սեղմ ժամկետներում: Մեր երկրի համար, այս պարագայում շատ կարևոր է ժամանակին արձագանքել շուկայում նկատվող փոփոխություններին, լիզինգային գործարքների համար ապահովել բոլոր օրենսդրական պահանջները, իսկ գործադիր իշխանությունների կողմից նպաստել այդ հույժ կարևոր միջոցառումների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 3

ԼԻԶԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1 Հայաստանում լիզինգի ձևավորման ու զարգացման խնդիրները

Լիզինգը որպես տնտեսության զարգացման ու հիմնական կապիտալի վերականգնման ու թարմացման կարևոր միջոցի, էական նշանակություն ունի Հայաստանի համար, հատկապես շուկայական հարաբերություններին անցումից հետո, երբ ձեռնարկությունները, ֆիրմաները և նյութական արտադրության առանձին ճյուղեր (մասնավորապես ՀՀ գյուղատնտեսության ոլորտը), իրենց երբեմնի տնտեսական ներուժը վերականգնելու և շուկայում կայունդիրք գրավելու համար պետք է հայթայթեն ֆինանսական ռեսուրսներ, իրականացնեն ներդրումներ, ձեռք բերեն նոր տեխնիկա ու առաջավոր տեխնոլոգիա, բարձրացնեն արտադրանքի մրցունակությունը, այլապես շուկան դրանց անողոքաբար դուրս կմղի այդ ոլորտից:

Շուկայական հարաբերություններին անցնելուց հետո, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների ու կազմակերպությունների բացարձակ գերակշիռ մասը հայտնվեց ֆինանսատնտեսական վատվիճակում, որոնք չէին կարողանում ձեռք բերել առաջավոր տեխնիկա և տեխնոլոգիա, արդիականացնել արտադրությունը և իրականացնել նորմալ վերարտադրություն: Վերջին անգամ հանրապետության արտադրության ոլորտի տեխնիկական վիճակի հետազոտություն է կատարվել ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004 թվականին: Պարզվել է, որ արդյունաբերության ճյուղի հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմում է 63,4 տոկոս, իսկ առանձին ենթաճյուղերում՝ 70.1-71.6 տոկոս[112]: Դա հստակ ձևով փաստում է, որ արտադրության տեխնիկական վերազինումը և առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը հանդիսանում է հանրապե-

[112] “Արդյունաբերություն” ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2004 թ., էջ 24

տության առջև ծառացած առաջնային հիմնախնդիրներից մեկը, ինչի լուծումը պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, որոնք սեփական միջոցներով ու սովորական վարկերի ձևով գրեթե անհասանելի են տնտեսվարող շատսուբյեկտների համար:

Տնտեսական պատմությունը և տարբեր երկրների փորձը, լիզինգի կիրառման ասպարեզում, ցույց են տալիս, որ կապիտալ ներդրումների ամենաարդյունավետ ուղին հանդիսանում է լիզինգը: Լիզինգի բազմակողմանի ներգործությունը տնտեսության արդյունավետության վրա պայմանավորված է նրանով, որ լիզինգը խթանում է ներդրումների ընդլայնմանը մասնավոր հատվածում, բարելավում է դրանց ֆինանսական վիճակը՝ պայմաններ ստեղծելով բարձարցնելու ձեռնարկությունների տնտեսական գործունեության ցուցանիշները:

Մեր հանրապետության համար լիզինգ հասկացությունը համեմատաբար նոր երևույթ է, որը գրեթե զարգացած չէր նախկին Խորհրդային Միությունում, բացառությամբ որոշակի ժամանակահատվածներում առանձին սահմանափակ ոլորտներում և ճյուղերում: Լիզինգային հարաբերությունների առանձին նմուշներ տեղ էին գտել Հայրենական պատերազմի (1941-1945 թթ.) տարիներին, իսկ այնուհետև 60-ական թվականների վերջում ու 70-ական թվականների սկզբին: Այդ ժամանակվա լիզինգային գործարքների օբյեկտներ են հանդիսացել հաստոցները, տրանսպորտային միջոցները, հաշվողական տեխնիկան, նավերը, ավիացիոն տեխնիկան, բեռնատար ավտոտրանսպորտը և այլ տեխնիկական միջոցներ, որոնք ծավալային առումով մեծ չափերի չէին հասնում: Միայն 20-րդ դարի 80-ական թվականներից սկսած օտարերկրյա մի քանի ընկերությունների (Ավտոէքսպորտ, Սովտրանսավտո, Տրակտորէքսպորտ, Աէրոֆլոտ) հետ պայմանագիր կնքեցին լիզինգի կիրառման շուրջը: 1989 թվականին ֆրանսիական “Credit Lionnais”-ը խորհրդային բանկի հետ միասին ստեղծեցին լիզինգային ընկերություն, որը զբաղվում էր բեռնախցիկների, տրանսպորտային միջոցների լիզինգով: Այդ ժամանակ լիզինգի արտասահմանյան փորձի ուսումնասիրությամբ սկսեց զբաղվել

նյութատեխնիկական մատակարարման՝ ԽՍՀՄ պետմատի գիտահետազոտական ինստիտուտը[113]:

Հայաստանը լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ինքնուրույն չէր կարող զբաղվել նման հարցերով, քանի որ նյութատեխնիկական մատակարարումը իրականացվում էր կենտրոնական կառավարման մարմինների կողմից համապատասխան լիմիտներով՝ հիմնավորված գիտական նորմատիվներով:

Հայաստանն անկախություն ձեռք բերելուց հետո մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, չէր կարող սկզբնական շրջանում զբաղվել այդ կարգի խնդիրներով: Երբ կատարվեց պետական արտադրության միջոցների մասնավորեցում, անցում կատարվեց շուկայական հարաբերություններին, աստիճանաբար զարգացում ապրեց մասնավոր ձեռնարկատիրությունը, ձևավորվեցին ֆինանսավարկային շուկաները, այդ ժամանակ էլ նախադրյալներ ստեղծվեցին լիզինգային գործարքների իրականացման համար:

ՀՀ-ում լիզինգային ընկերությունների ստեղծման առաջին փորձն իրականացվեց 1997-ին՝ նախատեսվում էր ստեղծել □Հայլիզինգ□ բաժնետիրական ընկերությունը, մշակվեց դրա կանոնադրությունը: Բայց այդ ժամանակ, առկա իրավական խնդիրների պատճառով ծրագիրը մնաց թղթի վրա:

Հանրապետությունում այնուհետև փորձ կատարվեց կազմավորելու 30 մլն դոլար կանոնադրական կապիտալով առաջին ՓԲԸ-ն՝ “Տրանսլիզինգը”, որի հիմնադիրներն էին “Կանազ” ԲԲԸ, “Հայռեսուրսիմպեքս” և “Տոսպ” ձեռնարկությունները, “Հայռեկլամը”, “Տրաստ Բանկը”, “Հայէլեկտրամեքենա” ԲԲԸ, “Արմեբել” ՍՊԸ, “Քիմռեակտիվ” ԲԲԸ և “Սպառողական ընկերությունների միությունը”: Նախատեսվող լիզինգային ընկերությունը պետք է զբաղվեր միջնորդային գործունեությամբ, միջազգային լիզինգով սարքավորումների ներմուծմամբ, ներքին ռեսուրսների բացահայտմամբ ու օգտագործմամբ: Սակայն այդ ընկերության գործունեությունն էական արդյունքներ չտվեց և ենթարկվեց լուծարման:

[113] Лизинг, Ревю Газман В. Сколько лет российскому лизингу? – М., 2004, N5.

Հայաստանի Հանրապետությունում առաջին լուրջ լիզինգային գործարք է համարվում 1998 թվականի հունիսի 11-ին “Հայկական ավիաուղիներ (ՀԱՈՒ)”ՓԲԸ-ի և ֆրանսիական “Airbus indust” ֆիրմայի միջև կնքած պայմանագիրը, համաձայն որի “ՀԱՈՒ” ՓԲԸ-ն “Airbus indust” ֆիրմայից վերցրել է մեկ A-310 մակնիշի ինքնաթիռ ամսական 235 հազ. ԱՄՆ դոլար վարձավճարով: 1999 թվականի ապրիլի 24-ին կողմերի միջև կնքվել է մեկ այլ պայմանագիր, որով A-310 ինքնաթիռի պայմանագրի պայմանները փոխարինվել են երկարաժամկետ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանների: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1999 թ. հունվարի 1-ից, 10 տարի գործունեության ժամկետով: A-310 ինքնաթիռի պայմանգրով արժեքը սահմանվել էր 17 մլն ԱՄՆ դոլար, իսկ լիզինգի տոկոսադրույքը 7.5 մլն ԱՄՆ դոլար:

1998 թվականի հունիսի 9-ին “ՀԱՈՒ” ՓԲԸ-ի և “Sabena Tecnik” ֆիրմայի միջև կնքվել է պայմանագիր վարձակալված A-310 ինքնաթիռի տեխնիկական աջակցության վերաբերյալ: Համաձայն պայամանգրի ծառայությունների սակագինը ամսեկան կազմում էր 206.8 հազ. ԱՄՆ դոլար: Պայմանագրով չնախատեսված մյուս աշխատանք-ների կատարման համար նախատեսվել էր լրացուցիչ վճարումներ՝ կողմերի ներկայացված հաշիվների հիման վրա:

1998 թվականի սեպտեմբերից մինչև 2002 թ-ի հունվարի 1-ը “Sabena Tecnik”-ի կողմից A-310 ինքնաթիռի համար տեխնիկական աջակցության և վերանորոգման աշխատանքների դիմաց հաշվարկվել է 9196441 ԱՄՆ դոլար, վճարել է 9727232 ԱՄՆ դոլար, կամ “Sabena Tecnik”-ի պարտքը “ՀԱՈՒ “ ՓԲԸ-ի հանդեպ կազմել է 530791 ԱՄՆ դոլար:

“Արմավիա” ընկերությունը (ստեղծվել է 1996 թվականին) նույնպես ավիատեխնիկայի համալրման միջոց էր ընտրել լիզինգը: 2003 թվականից ընկերությունը չվերթներ է իրականացրել, որի իրավունքը նախկինում պատկանում էր “Հայկական Ավիաուղիներ” ընկերությանը: Ներկայումս “Արմավիայի” ինքնաթիռային պարկը համալրում են 2 Airbus, մեկական միավոր A-319, Airbus 320, Boing B737-300, Як-42, Ил-86, 1-CRJ-100 ER, որոնցից առաջին երկուսը վերցված են օպերատիվ լիզինգով ամերիկյան ALFC լիզինգային ֆինանսական կորպորացիայից:

Հանրապետությունում ավիատեխնիկայի լիզինգով աջքի են ընկնում նաև “Էյր Արմենիա” ընկերությունը, որը գործում է 2003 թվականից՝ իրականացնելով բեռնափոխադրումներ, իսկ 2004-ից՝ նաև ուղևորափոխադրումներ՝ վարձակալելով ինքնաթիռներ “Rolang Aviation”-ից և “Awas”-ից:

1990-ական թվականների վերջերից Հայաստանի ֆինանսական շուկան սկսեց հետաքրքրել նաև արտասահմանյան ընկերություններին: Նրանք ուսումնասիրել են հանրապետության ֆինանսական շուկան: 1999-ին ամերիկյան UNIDO կազմակերպության օտարերկրյա ներդրումների բաժնի աշխատակիցները ֆինանսական լիզինգ ներդնելու արդյունավետությունը պարզելու նպատակով կատարել են ֆինանսական շուկայի ուսումնասիրություն, որում ընդգրկված էին ֆինանսական հատվածի՝ բանկերի, իրավական դաշտի տեղական հնարավոր գործընկերների պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները, որոնք կարող են ցուցաբերել ֆինանսա-տեխնիկական աջակցություն: Հետազոտության նպատակն էր սահմանել շուկայի չափերը, առանձնահատկությունները, շուկայական համակարգի ներկա վիճակը, բացահայտելու լիզինգի անհրաժեշտությունը տնտեսության ճյուղերում, վերհանելով ռիսկերի աստիճանը[114]:

ՀՀ-ում առևտրային բանկերից ԱԳԲԱ (ACBA) բանկն է, որը սկսեց իրականացնել լիզինգային գործարքներ և ներկայումս էլ առաջատարն է լիզինգային գործունեության ոլորտում: Բանկի լիզինգային գործունեությունը բավականին բուռն է և 1996-2003 թվականների ընթացքում բանկը տրամադրել է 67 միլիոն ԱՄՆ-ի դոլարի վարկ: Բանկի հիմնական նպատակը գյուղատնտեսության վարկավորումն է: ԱԳԲԱ բանկն իր գործունեությունը սկսեց երբ հանրապետությունում առկա էր գյուղատնտեսական արտադրանքի խիստ դեֆիցիտ, իրականացնում էր գյուղմթերքների ներկրում Ռուսաստանից, Եվրոպայից, Իրանից: Ծնորհիվ ԱԳԲԱ բանկի ներկայումս հանրապետությունում գրեթե վերացել է գյուղմթերքների դեֆիցիտը:

[114] G.Politakis, K.Movsesjan, «UNIDO investment promotion and institutional capacity-building branch Market and financial analysis for financial leasing in Armenia», January, 2000, p.17-25

Հայաստանում լիզինգային ներդրումների գործում էական է նորից “ԱԳԲԱ Լիզինգ” վարկային կազմակերպության դերը, որն իրականացնում է հիմնական միջոցների վերազինման պահանջարկ ունեցող տնտեսություններին արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, կապի, առևտրի ոլորտներում: “ԱԳԲԱ Լիզինգ” վարկային կազմակերպությունը Փակ բաժնետիրական ընկերություն է (ՀՀ ԿԲ N4 արտոնագիր), ստեղծել է 2003 մարտի 20-ին:

Կազմակերպության հիմնադիրներն են.

1. ACBA-CREDIT AGRICOLE բանկը, որը հիմնական բաժնետերն է, ընդհանուր պորտֆելը 32% բաժնեմասով,
2. Credit Agricole Leasing ընկերությունը, որը մտնում է “Credit Agricole” ֆրանսիական խմբի մեջ և մասնագիտացված է լիզինգային գործառնությունների իրականացման մեջ:
3. IFC (Միջազգային ֆինանսական Կորպորացիա)՝ մասնակցություն ունի “ԱԳԲԱ Լիզինգի” կապիտալի մեջ, ապահովում է ընկերությանը վարկային ռեսուրսներով:
4. Լիբանանյան Լիզինգային ընկերությունը:

“ԱԳԲԱ Լիզինգ” ՓԲԸ-ն լիզինգային գործունեություն է իրականացնում Երևանում և հանրապետության բոլոր մարզերում, համագործակցում է ոչ միայն տեղական, այլ նաև արտասահմանյան մատակարարների հետ: Լիզինգի առարկաներ են ներմուծվել աշխարհի ավելի քան 30 երկրներից, այդ թվում՝ Ռուսաստանից, Բելգիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իտալիայից, Ուկրաինայից և այլն, համագործակցելով շուրջ 100 մատակարար ընկերությունների հետ:

“ԱԳԲԱ Լիզինգ” ընկերության կողմից լիզինգի տրամադրման ընդհանուր պայմաններն են.

- ✓ լիզինգի պայմանագրի առավելագույն չափը՝ 300 հազ. ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք ՀՀ դրամ;
- ✓ լիզինգի պայամանգրի տևողությունը՝ 6-60 ամիս;
- ✓ կանխավճար գույքի արժեքից 20-50%՝ կախված գույքի տեսակից;
- ✓ պայմանագրի տարեկան թանկացում 8.9-13.5%;
- ✓ որոշումների ընդունման ժամկետը պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 3-10 բանկային օր:

2014 թվականի տվյալներով ԱԳԲԱ բանկի պորտֆելն ըստ տրամադրված լիզինգի առարկաների ունի հետևյալ կառուցվածքը[115]:

Աղյուսակ 3.1

ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի տրամադրած լիզինգի կառուցվածքը (%-ով)

1.	Ավտոբուսներ և բեռնատար մեքենաներ	9.5
2.	Գյուղատնտեսական տրակտորներ	8.6
3.	Սարքավորումներ հասարակական աշխատանքների համար	8.5
4.	Տպագրական սարքավորումներ	11.8
5.	Մեքենաներ	28.3
6.	Գյուղատնտեսական սարքավորումներ	6.0

Աղյուսակ 3.1-ի շարունակություն

1	2	3
7.	Արդյունաբերական սարքավորումներ	19.4
8.	Բժշկական սարքավորումներ	5.1
9.	Այլ սարքավորումներ	3.8

“ԱԳԲԱ Լիզինգ” ընկերության վարկային պորտֆելն աչքի է ընկնում լիզինգի առարկաների բազմազանությամբ: Ընդհանուր ներդրումների մեջ 36.4 տոկոսը բաժին է հասնում արդյունաբերության ոլորտին, 9.8 տոկոսը՝ գյուղատնտեսությանը և 53.8-ը՝ առևտրի ու սպասարկման ոլորտին:

“ԱԳԲԱ Լիզինգը” համագործակցում է ֆրանսիական, գերմանական, ճապոնական, չինական, չեխական, ռուսական, իտալական, դանիական, նույնիսկ հեռավոր ամերիկյան ու ավստրալիական մատակարարների հետ, ինչպես նաև հայրենական մի շարք ֆիրմաների ու կազմակերպությունների (Արմենիա Լադա ՓԲԸ, Կարկոմավտո ՍՊԸ, Մուրան, Արեգ, Մեգնա, Մեծ անիվ, Թոփ մոտորս, Եվրովագեն և այլն) հետ: Նման կապերը հնարավորություն են տալիս տեղական գործընկերների համար մատակարարել սարքավորումների մեծ տեսականի և ներմուծել առաջավոր տեխնիկաու տեխնոլոգիա:

“ԱԳԲԱ Լիզինգ” կազմակերպությունը գյուղատնտեսական տեխնիկա՝ տրակտորներ, կոմբայներ և գյուղատնտեսական այլ մեքենաներ ու սարքավորումներ է ներկրում և լիզինգի միջոցով

[115] ACBA-CREDIT AGRICOLE BANK. Annuak Report, 2014

տրամադրում գյուղացիական տնտեսություններին: Լոռու մարզում ստեղծվել է “ԱԳԲԱ” լիզինգ կազմակերպությունը, որը “Չին-Վան” (Չինաստան-Վանաձոր) համատեղ ձեռրակության արտադրված փոքր շարժական 4 տրակտոր է գնել և հանձնել տարբեր համայնքների 4 գյուղացիական տնտեսությունների 5 տարի ժամկետով՝ փոքր տոկոսադրույքով: Գյուղտեխնիկան վարձակալության է տրվել առանց գրավի: Արտադրվող ձեռնարկությունը պատրաստ է սպասարկել նաև պահեստամասերով: Տրակտորնունի 18 ձիաուժ հզորություն, շարժունակ է, կատարվում է 10-ից ավելի գործողություն, հարմարեցված են տարբեր սարքերով՝ գաթան, շարքացան, կալսիչ, խոտհնձիչ և այլն:[116]

Ագրոգիտություն ինֆոլրատվական գործակալության կողմից հրատարակված տեղեկատվության համաձայն, “ԱԳԲԱ Լիզինգ” ՓԲԸ-ն ֆինանսական հիմնական ցուցանիշներով առաջատար դիրք է գրավում հանրապետությունում գործող տասը վարկային կազմակերպությունների մեջ.[117]

- ✓ ակտիվների մեծությամբ՝ ընդհանուր ակտիվների մեջ նրա բաժինը կազմում է 24.9 տոկոս;
- ✓ ընդհանուր եկամուտների ծավալով՝ ընդհանուրի 29.8 տոկոս
- ✓ վարկային ներդրումների ծավալի մեծությամբ 1218 մլն ՀՀ դրամ (շուրջ 2.6 մլն ԱՄՆ դոլար);
- ✓ հաշվեկշռային շահույթի մեծությամբ;
- ✓ շահույթի աճի տեմպերով

Համաձայն ընկերության կանոնադրության □ԱԳԲԱ-Լիզինգի□ հիմնական նպատակներն են.[118]

- ✓ միջնաժամկետ ֆինանսավորման միջոցով օգնել գյուղացիական տնտեսություններին, արդյունաբերության, առևտրի, սպասարկումների ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը;
- ✓ ապահովել լիզինգային ընկերության գործունեության անընդհատությունը:

[116] Գ.Վ.Դավթյան, Ն.Ռ.Տիգրանյան Լիզինգային ծառայության օգտագործման անհրաժեշտությունը ագրարային ոլորտում “Ագրոգիտություն” N 3-4, 2009, էջ 103
[117] “ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ Ագրիկոլ Բանկ” ՓԲԸ-ի տարեկան հաշվետվություն, 2014թ., էջ 45
[118] http//acbaleasing.am

Հայաստանի Հանրապետության լիզինգային շուկայի առաջատարը լիզինգ է տրամադրում և ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, Երևան քաղաքում և հանրապետության բոլոր մարզերում, որոնց վերաբերյալ տվյալները բերվում են աղյուսակ 3.2-ում:

Աղյուսակ 3.2

2014 թ. "ԱԳԲԱ Լիզինգ" ՓԲԸ-ի տրամադրած լիզինգի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի

N	ՀՀ մարզերը	տոկոս
1	Երևան քաղաք	76,5
2	Կոտայք	9,2
3	Լոռի	7,0
4	Արագածոտն	1,9

Աղյուսակ 3.2-ի շարունակությունը

5	Արարատ	1,6
6	Շիրակ	1,4
7	Գեղարքունիկ	1,0
8	Սյունիք	0,4
9	Արմավիր	0,4
10	Տավուշ	0,4
11	Վայոց Ձոր	0,2
12	Ընդամենը	100,0

"ԱԳԲԱ Լիզինգ" վարկային կազմակերպության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացումն է: Նրան բաժին է հասնում ՀՀ շուկայում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող լիզինգային գործառնությունների շուրջ 72% -ը (տես գծապատկեր 6):

Միաժամանակ միայն լիզինգային վարկային կազմակերպությունների ներդրումներում նրա բաժինը գերազանցում է 93%-ը:

Ընկերության կողմից տրամադրվող գյուղատնտեսական և գյուղմթերքների վերամշակման ոլորտի սարքավորումների լիզինգի առարկակարող է հանդիսանալ .

- ✓ մինի տրակտորներ և մոտոբլոկներ,

- ✓ 40 ձիաուժ և ավելի հզորություն ունեցող տրակտորներ,
- ✓ գյուղատնտեսական գործիքներ և սարքավորումներ,



Գծապատկեր 6. Ֆինանսական վարձակալության գործարքներ իրականացնող կազմակերպությունների գործարքների տեսակարար կշիռը 2014 թվականին

Լիզինգառուներ կարող են հանդիսանալ ինչպես առևտրային տնտեսությունները, այնպես էլ անհատական գյուղացիական տնտեսությունները:

Հանրապետությունում լիզինգային ծառայություններ է տրամադրում նաև "Կասկադ Կրեդիտ" ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, որը հիմնադրվել է 2004 թվականի դեկտեմբերին (ՀՀ ԿԲ թիվ 9 արտոնագիր): Հանդիսանում է "Կասկադ Քեփիթալ Հոլդինգի" դուստր ընկերությունը, ինչի լիիրավ սեփականատերն է Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամը: Ընկերությունը տալիս է վարկեր, իրականացնում է լիզինգ և ֆակտորինգ: Ընկերության կանոնադրական հիմնադրամը կազմում է ավելի քան 1 մլն ԱՄՆ դոլար:

Ներկայումս, երբ տնտեսվարողները խոշոր կապիտալ ներդրումներ կատարելու համար ֆինանասական միջոցների խիստ պահանջարկ են զգում, լրիվ տեսանելի է դառնում լիզինգային բիզնեսի դերի բարձրացման անհրաժեշտությունը: Հետևաբար, հարկ է ստեղծել լիզինգային գործունեության ծավալման բարենպաստ պայմաններ, որը կհանգեցնի լիզինգային ընկերությունների թվի ավելացմանը, դրանց գործունեության շրջանակների ընդլայնմանը, ինչպես նաև արտասահմանյան լիզինգային ընկերությունների մուտքի ապահովմանը տեղական շուկա:

Պետք է նշել, որ լիզինգի իրականացման փորձերը ՀՀ-ում տեղի է ունենում տեխնիկական և տեխնոլոգիական ցածր ակտիվության պայմաններում, անհրաժեշտություն է զգացվում լիզինգային ծառայությունների ոլորտն ընդլայնել ոչ միայն հայրենական արտադրողների գործունեությունը խթանելու, այլ նաև սարքավորումների միջազգային լիզինգը ներգրավելու միջոցով:

Դրա վառ օրինակ կարող է ծառայել ԱՄՆ-ի Գյուղատնտեսության Դեպարտամենտի Մարքետինգի Աջակցության ծրագիրը (USDA) Հայաստանին աջակցության ծրագրի շրջանակներում 1996 թվականից սկսեց իրականացնել գյուղատնտեսության և բիզնեսի ֆինանսավորման միջոցառումներ՝ ԱՄՆ-ի Կառավարության տրամադրած միջոցներով: Այն Հայաստանում գործունեություն էր ծավալում 6 ուղղություններով.

1. գյուղատնտեսության ռազմավարական վարկավորում;
2. ագրոլիզինգ;
3. վարկային միությունների ֆինանսավորում;
4. նպատակային վարկերի տեղաբաշխում;
5. փոքր ձեռնարկությունների օժանդակում;
6. նպատակային դրամաշնորհների տրամադրում:

Ծրագրի ագրոլիզինգի ուղղությունը գյուղատնտեսության լիզինգային գործարքների ֆինանսավորումն էր, որն իրականացվում էր □Ագրոլիզինգ□ մասնավոր կազմակերպության միջոցով և հիմնականում տրամադրվում էր գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկություններին սարքավորումներ ու տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար: Այդ նպատակով կառույցը վերջին երկու տարվա ընթացքում 800 հազ. դոլար է հատկացրել լիզինգային ծառայությունների տրամադրման միջոցով:

Ծուկայական տնտեսավարման արդի պայմաններում, երբ առևտրային բանկերը դժկամությամբ են տրամադրում վարկեր գյուղացիական տնտեսություններին, առաջնային կարևորություն է ստանում օտարերկրյա ներդրումների կիրառությունը լիզինգային գործարքների զարգացման և կատարելագործման միջոցով: “Դեռևս 1990-ական թվականների կեսերին, աշխարհի ավելի քան 100

երկիր արտոնյալ պայմաններ էին նախատեսել օտարերկրյա ուղղակի ներդրումների համար, որն ունեցել է դրական արդյունք այն երկրների տնտեսությունների վրա, որտեղ իրականացվել են ներդրումները[119]»: Սակայն դրա համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ, որոնց դեպքում հնարավոր է ակնկալել միջազգային լիզինգային հարաբերությունների ակտիվացում ու հետագա կատարելագործում, որն էլ իր հերթին կարող է նպաստել երկրի տնտեսության վերականգնմանը և ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը:

Ներկայումս ՀՀ ագրարային ոլորտում գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների համար համեմատաբար դժվար է գնել անհրաժեշտ տեխնիկա և սարքավորումներ, ինչը հիմնավորվում է դրանց ձեռք բերման և պահպանման համար միանվագ ծախսերի իրականացման անհրաժեշտության հետ: Այս դեպքում կարելի է կիրառել <u>կոոպերացիայի հենքով լիզինգը</u>[120], որը հնարավորություն կտա ցածր եկամտաբերությամբ տնտեսություններին, միավորելով իրենց ֆինանսական միջոցները և, անհրաժեշտության դեպքում օգտագործելով վարկային ռեսուրսներ, լիզինգի միջոցով ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկան, գույքը, հետագայում սեփականացնելու կամ վերադարձնելու ակնկալիքով:

Հայաստանի Հանրապետությունում լիզինգի ներդրման ուղղությամբ գործունեություն իրականացվեցին բանկային համակարգում, ինչի համար առկա էին անհրաժեշտ ու բավարար պայմաններ: Ներկայումս Հայաստանում գործող շուրջ 30 բանկերից մի քանիսն են իրականացնում լիզինգային գործարքներ: Դրա հիմնական պատճառն ապահովագրական կազմակերպությունների, պետական աջակցության և այլ կարգի երաշխիքային ենթակառուցվածքների ոչ լրիվ կայացումն է: Արտասահմանյան փորձը հաստատում է, որ լիզինգային գործունեություն կարող են ծավալել ոչ միայն առևտրային բանկերը, այլ նաև արտոնագրված

[119] Caves, Richard E. Multinational Enterpise and Economic Analysis. 2nd edition, Cambridge, New York and Melbourne: Gambridge University

[120] Маренков Н.Л., Маренков Н.Н. Управление инвестициями российского предпренимательства: Учебное пособие. – М. 2001

լիզինգային ընկերությունները, արտադրողլ ֆիրմաների աջակցող լիզինգային հիմնադրամները, ներդրումային, վարկային, ապահովագրական, բրոքերային և այլ կազմակերպություններ, որտեղ առաջնությունը պատկանում է բանկային համակարգին: Այսպես, 2000 թվականից սկսած ՀՀ բանկերի ասոցիացիայի կողմից բանակցություններ էին վարում Համաշխարհային բանկի հետ համատեղ խոշոր լիզինգային կազմակերպություն ստեղծելու շուրջը: Բանկերի ասոցիացիայի հարցումներին մեծ մասը դրական էր վերաբերվել և պատրաստակամություն հայտնել որպես փայատեր հանդես գալ՝ լիզինգային ընկերությունում դրամական վարկեր տրամադրելով, սակայն գործնականում քայլեր դանդաղում էր: Պատճառը, թերևս, լիզինգային շուկայի ձևավորման անկատարությունն է, բարձր տոկոսադրույքները, ինչպես նաև տեղեկատվության պակասը[121]: Հայաստանի Հանրապետությունում լիզինգի զարգացմանը, բացի նշվածներից, խոչընդոտում են նաև երկրորդային շուկայի բացակայությունը, բանկերի կողմից առաջարկվող վարկերի բարձր տոկոսադրույքները, լիզինգային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությունը:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ ագրարային ոլորտում լիզինգային ծառայություններ մատուցելու ուղղությամբ առաջին լուրջ գործունեություն իրականացվեց 1999 թվականին, երբ ստեղծվեց "Ագրոլիզինգ" կազմակերպությունը: Դա հիմնադրվել ԱՄՆ գյուղ դեպարտամենտի աջակցությամբ, որի հիմնական նպատակը Հանրապետության գյուղատնտեսական արտադրության համակողմանի զարգացումն էր: Ագրոլիզինգը մինչև 2004 թվականն իր գործունեությունն իրականացնում էր ԱՄՆ-ի միջազգային աջակցության շրջանակներում, ինչի պատճառով նրա եկամուտը չէր հարկվում ԱԱՀ-ով: 2003-ին այդ ֆինանսական կազմակերպությունը վերակազմավորվեց լիզինգային ընկերության՝ գործելով արդեն առևտրային սկզբունքներով: Օրենքի պահանջներից ելնելով, "Ագրոլիզինգ" ՍՊԸ-ն 2003 թվականի օգոստոսի 26-ին վերագրանցվել է

[121] Մարտիրոսյան Ա. Ֆինանսական լիզինգի ներդրման տնտեսահրավական ասպեկտները. Երևան 2006

ՀՀ Կենտրոնական բանկում, որպես “Ագրոլիզինգ Լիզինգային Վարկային Կազմակերպություն” ՍՊԸ՝ ստանալով լիզինգային և վարկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ արտոնագիր: Սկսած 2003 թվականից ընկերությունը տրամադրում է նաև առևտրային վարկեր իրավաբանական անձանց և անհատձեռնարկատերերին: Ընկերության միակ մասնակիցը և տնօրենը հանդիսանում է Սամվել Մխիթարյանը: “Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացվում է գծապատկեր 7-ում[122]:

“Ագրոլիզինգ” կազմակերպության առաքելությունն է վարկավորման և ֆինանսական վարձակալության միջոցով ՀՀ գյուղատնտեսության ու սննդի արդյունաբերության ոլորտում փոքր և միջին ձեռներեցության խթանումը: Կազմակերպությունն իրականացրել է բազմաթիվ լիզինգային ու վարկային ծրագրեր, ֆինանսավորելով հիմնականում գյուղատնտեսական մթերքների արտադրող և վերամշակող ձեռնարկություններին: Բացի դրանից նա աջակցում է իր հաճախորդներին՝ տրամադրելով նրանց խորհրդատվությունը սարքավորումների ընտրության, տեղադրման, թողարկման և շահագործման ժամանակ: Ագրոլիզինգը տրամադրում է սարքավորումներ և վարկեր, ինչպես նորաստեղծ արտադրության կազմակերպման, այնպես էլ գործող արտադրությունների ընդլայնման, գյուղատնտեսության զարգացման համար:

[122] agroleasing.am պաշտոնական կայք



Գծապատկեր 7. “Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ վարչակազմակերպական կառուցվածքը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ “Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ-ն արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում և չունի փոքր մասնակցություն ունեցող բաժնետերեր, ընկերությունը չի իրականացնում ՀՀ ԿԲ-ի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված տեղեկությունների հրապարակումը[123]:

“Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ-ն նպաստում է գյուղացիական տնտեսություններին լիզինգով տրամադրելու գյուղտեխնիկա, օժանդակում այն տնտեսություններին բարձրացնելու արտադրության արդյունավետությունը, թողարկելու մրցունակ արտադրանք, նվաճելով տեղական և օտարերկրյա նոր շուկաներ:

“Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ-ի գործունեության պայմանները ներկայացվում են աղյուսակ 3.3-ում:

Աղյուսակ 3.3

“Ագրոլիզինգ ԼՎԿ”-ի գործունեության պայմանները [*]

[123] agroleasing.am պաշտոնական կայք
[*] “Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ-ի կանոնադրությունը

N	Ցուցանիշները	Իրականացման պայմանները
1	Լիզինգի առարկայի արժեքը	500 հազ. ՀՀ դրամից – մինչև 500 մլն, կամ համարժեք արտարժույթ
2	Մարման ժամկետը	12-ից մինչև 60 ամիս
3	Տարեկան անվանական տոկոսադրույքը	12-20%
4	Լիզինգի վաղաժամկետմարում	Ժամկետից շուտ մարման դեպքում առանց տույժի և տուգանքների կիրառման
5	Լիզինգի մարման գրաֆիկ	Ամսական հավասարաչափ վճարումների գրաֆիկով: Հնարավոր է մայր գումարի մարման դադարի շրջաններ
6	Լիզինգի կանխավճար	0-50%
7	Լիզինգառուի այլ ծախսեր	Գույքի ապահովագրություն, այլ ծախսեր
8	Լիզինգի ապահովվածությունը	Լիզինգի առարկան հանդիսանում է պայմանագրի ապահովվածությունը
9	Լիզինգի հայտի ուսումնասիրության վճար	Միանվագ վճար՝ 5000 ՀՀ դրամ
10	Ժամկետանց գումարի գծով հաշվարկվող տույժ	Չվճարված գումարի նկատմամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տույժ
11	Ժամկետանց տոկոսի գծով հաշվարկվող տույժ	Չվճարված տոկոսի 0,5%-ի չափով յուրաքանչյուր օրվա համար
12	Լիզինգային հայտի ուսումնասիրության և որոշման կայացման ժամկետը	Մինչև 5 աշխատանքային օր

Ընկերությունը ֆինանսական վարձակալությամբ գյուղատնտեսական սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ է տրամադրում իրավաբանական և ֆիզիկական անձանց: Նրա գործունեությունն ընդգրկում է հանրապետության բոլոր մարզերը, 2014 թվականի համար ունենալով հետևյալ կառուցվածքը (տես գծապատկեր 8):



Գծապատկեր 8."Ագրոլիզինգ ԼՎԿ" ՍՊԸ-ի ծառայությունների մատուցման կառուցվածքն ըստ մարզերի [124]

Ընկերությունն առավել ակտիվ լիզինգային հարաբերություններ է իրականացնում միջին և խոշոր ձեռնարկությունների հետ, քանի որ այդ ձեռնարկություններն ընդլայնելով իրենց արտադրությունը ներկայացնում են թանկարժեք սարքավորումների հանդեպ պահանջարկ: Ագրոլիզինգի սարքավորումների պահանջարկի կառուցվածքի վերաբերյալ տվյալները 2008-2015 թվականների համար բերվում է աղյուսակ 3.4-ում:

Ամփոփելով "Ագրոլիզինգ ԼՎԿ" ՍՊԸ-ի տնտեսական գործունեության վերլուծությունը կարելի է միանշանակ փաստել, որ այդ կազմակերպությունը նպաստում է գյուղացիական տնտեսությունների տեխնիկական վերազնիմանը և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Աղյուսակ 3.4

Ագրոլիզինգի սարքավորումների ծառայությունների կառուցվածքը ըստ արտադրության տեսակների (տոկոս)

[124] «Ագրոլիզինգ ԼՎԿ» ՍՊԸ-ի տրամադրած նյութերից

(2009-2015թթ.)

N	Արտադրությունների տեսակները	Տեսակարար կշիռը, (%)
1	Կաթնամթերքների արտադրություն	60
2	Խմիչքների արտադրություն	7
3	Մսամթերքի արտադրություն	6
4	Կաթի հավաքման և պահպանման սարքավորումներ	10
5	Մրգերի և բանջարեղենի վերամշակում	7
6	Այլ արտադրություններ և ծառայություններ	10
	Ընդամենը	100

2008 թվականին ՀՀ Կենտրոնական բանկը գրանցել և արտոնագրել է “ՎՏԲ Լիզինգ” լիզինգային վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Ընկերության առաքելությունն է նպաստել ՀՀ ձեռնարկությունների վերազինմանը և մրցունակության բարձրացմանը՝ հիմնական կապիտալի ձեռք բերմանը: Ընկերության նպատակն է “ՎՏԲ Լիզինգ” կազմակերպության և ընդհանուր առմամբ ՎՏԲ խմբի դուստր ձեռնարկությունների հաճախորդների ցանցի ընդլայնումը, Հայաստանի վարձակալական ծառայությունների շուկայում առաջատար դիրքերի գրավումը: “ՎՏԲ Լիզինգի” մրցակցային առավելություններն են.

- ✓ “ՎՏԲ Լիզինգ” ՓԲԸ կողմից երաշխավորված հուսալիություն և կայունություն;
- ✓ բարենպաստ պայմաններով երկարաժամկետ ծրագրերի իրականացման հնարավորություն;
- ✓ վարձակալական ծառայությունների տրամադրման գծով ձեռներեցության թափանցիկություն;
- ✓ աշխատանքային բարձր հեղինակություն և կադրերի արհեստավարժ կազմ:

Ընկերության 100%-ոց բաժնետերը ՎՏԲ բանկ ՓԲԸ-ն է: “Fitch Rating և Standart & Poors” միջազգային ռեյտինգային կազմակերպություն-ներն ընկերությանը շնորհել են BBB+ վարկային չափանիշները և բնորոշել որպես “Կայուն”: ՎՏԲ Լիզինգ ընկերությունն իր տրամադրության տակ ունի կառուցվածքային ստորաբաժանումներ ՌԴ-ի տասնմեկ քաղաքներում և դուստր ընկերություններ՝ Ուկրաինայում, Կիպրոսում, Բելոռուսում և ՀՀ-ում:

“ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ” վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն ստեղծվել է հիմնադիրների 2008 թ-ի մարտի 3-ի որոշմամբ գրանցվել է 2008 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ ԿԲ-ի կողմից N 4 արտանագրային համարով: Կազմակերպության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացումն է, ինչպես նաև վարկերի և փոխառությունների ներգրավում և տրամադրում, ֆինանսական խորհրդատվության և այլ ֆինանսական ծառայությունների մատուցումը, հանդիսանում է շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն: Ընկերության նպատակը ֆինանսավորման միջոցով շահույթի ստացումն է՝ օգտագործելով լիզինգային գործառնություններում կիրառվող մեթոդների և/կամ արտադրական ակտիվների լիզինգը: Այդ լիզինգային կազմակերպությունը գործունեություն իրականացնելու արտոնագրի հիման վրա կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով թույլատրված բոլոր ֆինանսական գործառույթները՝ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ)[125]:

Ընկերության կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ներդրումների հաշվին և կազմում է 120 մլն ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալը բաժանված է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10 հատ հայկական դրամ անվանական արժեքով:[126]

[125] “Յունիլիզինգ” վարկային կազմակերպություն ՓԲԸ կանոնադրություն, 2008, պունկտ 2.1 և 2.2
[126] “Յունիլիզինգ” վարկային կազմակերպություն ՓԲԸ կանոնադրություն, 2008, պունկտ 5.1

“ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ ՎԿ” ՓԲԸ-ի ակտիվների գումարը 2014 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է 132179 հազ. դրամ, նախորդ տարվա վերջին եղել է 130240 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում դրական երևույթներից մեկն էլ այն է, որ գնալով մեծանում է բանկերի կողմից հետաքրքրությունը լիզինգային բիզնեսի հանդեպ, ինչն արտահայտվում է լիզինգային գործարքների նկատմամբ, նրանց ուշադրության արժանանալը: Որպես փաստ կարելի է նշել 2010 թվականի “Ամերիա” բանկի կողմից լիզինգային գործարքների արտոնագրի ձեռք բերումը և կիրառությունը: Մեր կարծիքով, այս միտումը ամենայն հավանականությամբ, կշարունակվի և կտարածվի մյուս առևտրային բանկերի վարկային կազմակերպությունների վրա, քանի որ լիզինգային շուկան արդեն ապացուցել է իր կենսունակությունը և որոշակի առավելությունները բիզնեսի մյուս տեսակների նկատմամբ:

ՀՀ վարկային չորս կազմակերպությունների կողմից հատկացվող լիզինգային ծառայությունների տրամադրման տնտեսական ցուցանիշները 2014 թվականի դրությամբ բերվում է աղյուսակ 3.5-ում:

Այսպես, 2014 թվականին Հայաստանի տարածքում առկա է 20 առևտրային բանկեր, որոնց ընդհանուր ակտիվների գումարը կազմել է 75812 մլն ՀՀ դրամ: Դրանից 4 կազմակերպություն զբաղվում են լիզինգային գործունեությամբ՝ 7589.7 մլն դրամով (ընդհանուր 10.76 տոկոսի չափով):

Եթե հաշվի առնենք, որ ցանկացած ձեռներեցության նպատակը շահույթի ստացումն է, իսկ վարկավորումը և լիզինգի տրամադրումը շահույթ հետապնդող բիզնես է, ապա բերված տվյալները ցույց են տալիս, որ լիզինգից ստացվել է ավելի մեծ շահույթ քան վարկերից: Այսպես, լիզինգային չորս կազմակերպություններն ունենալով վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների միայն 10.76 տոկոսը, ստացել են հաշվարկային շահույթի 12.67 տոկոսը: Տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման ամփոփիչ ցուցանիշը հանդիսանում է շահութաբերությունը, որի

մակարդակը բոլոր չորս լիզինգային կազմակերպություններում 17-67 տոկոսով գերազանցում վարկային կազմակերպությունների միջին մակարդակը:

Աղյուսակ 3.5

ՀՀ վարկային և լիզինգային կազմակերպությունների ընդհանուր բնութագիրը 2014 թվականի դրությամբ *

	Ակտիվներ		Վարկային ներդրումներ և լիզինգային գործարքներ		Վարկային ներդրումներ			Լիզինգային գործարքներ			Կապիտալ		Շահութաբերության մակարդակը, %
	մլն դրամ	տես. կշիռ (%)	մլն դրամ	տես. կշիռ (%)	մլն դրամ	տես. կշիռ համակարգում (%)	տես. կշիռ ակտիվներում (%)	մլն դրամ	տես. կշիռ համակարգում (%)	տես. կշիռ ակտիվներում (%)	մլն դրամ	տես. կշիռ (%)	
ՀՀ վարկային կազմակերպություններ՝ որոնցից իրականացվում եմ լիզինգային գործարքներ՝	75812	100	49210.7	100	44075	100	58.14	5135.6	100	6.77	26247.1	100	3.74
1. "ԱԳԲԱ Լիզինգ" ՎԿ	7589.7	10.01	5032.3	10.23	0	0.00	0.00	5032.3	97.99	66.3	2077.6	7.92	6.24

* Աղյուսակը կազմվել է "Кредитные организации Армении" - по данным финансовых отчетов кредитных организаций Армении. Ер., 2010, էջ 5-39 և նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հիման վրա

2. “Ագրոլիզինգ” ԼԿԿ	291.0	0.38	279.9	0.57	247.3	0.56	84.98	32.6	0.63	11.2	196	0.75	4.44
3. “ՎՏՆ Լիզինգ”	167.65	0.22	0	0.00	0	0.00	0.00	0	0.00	0.00	165.8	0.63	5.00
4.”Յունիլիզինգ” ՎԿ	124.57	0.16	62.8	0.13	0	0.00	0.00	62.8	1.22	50.44	124.3	0.47	4.37

Այսպիսով վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում լիզինգային գործարքների իրականացման արդի վիճակը, կարելի է նշել, որ կազմակերպությունները որոշակի աշխատանքներ են կատարում արտադրության միջոցների վերականգնման, թարմացման և առաջավոր տեխնոլոգիաների արմատավորման ուղղությամբ: Սակայն, դա դեռևս շատ քիչ է, որպեսզի հանրապետությունում զգացվի հիմնական կապիտալի արդիականացման արդյունքները, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որը պահանջում է ավելի մեծ ուշադրություն դարձնել ձեռներեցության կազմակերպման այդ առաջավոր մեթոդի վրա:

3.2 Լիզինգային գործունեության կիրառման հնարավորությունները և մեխանիզմները ՀՀ գյուղատնտեսությունում

1990-ական թվականների սկզբից, Հայաստանի անկախացումից հետո. նրա տնտեսական հիմքը կազմող արդյունաբերության ոլորտն ամբողջությամբ փլուզվեց, քաղաքային բնակավայրերում գործազրկության մակարդակը զգալիորեն բարձրացավ, տեղի ունեցավ պարենային և էներգետիկ ճգնաժամ, որի պատճառով մարդկանց փրկության միակ հույսը մնաց գյուղատնտեսությունը: Այդ ժամանակ էլ տնտեսության առանցքը տեղափոխվեց դեպի գյուղատնտեսության ոլորտը: Արդեն 1993 թվականին գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմեց 50 տոկոսից ավելին, իսկ 1994 թվականից ձեռնարկված կոշտ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության շնորհիվ, աստիճանաբար արձանագրվեցին կայունացման դրսևորումներ: Առևտրի և գների ազատականացումը, ձեռներեցության խրախուսումը, պետական ձեռնարկությունների և կապիտալի մասնավորեցման գործընթացի ակտիվացումը, գործարարության համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ձևավորումը լուրջ ազդակներ հանդիսացան շուկայական հարաբերությունների արմատավորման համար:

Գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների շնորհիվ տնտեսավարման պետական ձևը փոխակերպվեց մասնավոր սեփականության վրա հիմնված անհատական գյուղացիական տնտեսավարման ձևի: Դա բերեց նրան, որ տասնյակ հազար հեկտար վարելահողեր դարձան անմշակ, կրճատվեցին պտղատու այգիների և խաղողի այգիների տարածքները, անասնագլխաքանակը, փոշիացվեց գյուղատնտեսական տեխիկան, նվազեց բուսաբուծության բերքատվությունը և անասնապահության մթերատվությունը, որոնք իրենց հերթին առաջացրին մի շարք սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրներ:

ՀՀ ագրարային ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորումը առաջադրեց տեսական և գործնական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներին բնորոշ մեթոդներով հնարավոր չէր լուծել: Անցումը վարչահրամայական համակարգից շուկայական տնտեսավարմանը տեղի ունեցավ ոչ նորմալ պայմաններում՝ նախկին տնտեսական կապերի վերացում, շրջափակում, սեփականաշնորհման հապճեպություն և այլն, որոնք պահանջում էին յուրահատուկ մոտեցումներ:

Ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազ անհատական գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսությամբ զբաղվող բազմաթիվ առևտրային կազմակերպություններ, սպասարկման, իրացման և վերամշակման մի քանի հազար մասնավոր ընկերություններ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 97-98 տոկոսն արտադրվում է մասնավոր հատվածի կողմից:

Ներկայումս ՀՀ ագրարային ոլորտն ավելի շատ կարիք ունի ներդրումների, քան ազգային տնտեսության մյուս ոլորտները, որը բացատրվում է հետևյալ հանգամանքներով՝.

1. Երկրի պարենային ապահովվածությունը հանդիսանում է նրա անվտանգության հիմնական ռազմավարական խնդիրը;
2. գյուղատնտեսության արտադրությունը ելնելով իր բնորոշ գծերից և առանձնահատկություններից պահանջում է

համեմատաբար ավելի մեծ և մշտական ներդրումներ, քան նյութական արտադրության մյուս ճյուղերը;

3. 1990-ական թվականներից սկսած գյուղատնտեսությունում իրականացված բարեփոխումների հետևանքով ավելի մեծացավ գյուղտեխնիկայի ինտենսիվ օգտագործման աստիճանը, որը զգալիորեն բարձրացրեց դրանց մաշվածության աստիճանը;
4. նախկին տնտեսական կապերի փլուզումը վերջ դրեց նյութատեխնիկական մատակարարման կապերին և մեքենատրակտորային պարկի համալրմանը և այլն:

Հայաստանի գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմը նորացման կարիք ունի: Հաշվարկները ցույց են տալիս, որ ներկայումս շահագործվող տրակտորների միայն 4.5 տոկոսն ունի մինչև 12 տարվա շահագործման ժամկետ, մնացածը շահագործվում է 13 տարուց ավելի, որի հետևանքով մեծանում են շահագործման ծախսերը, միջին հաշվով 30 տոկոսով նվազում է արտադրողականությունը: Տնտեսական և կազմակերպական առումով ծայրաստիճան հնացած տեխնիկայի օգտագործումը մեծ վնաս է հասցնում գյուղացիական տնտեսություններին: Վերջիններիս ցածր վճարունակությունը և կոոպերացիայի զարգացման դանդաղ տեմպերը դեռևս խիստ սահմանափակում են նոր տեխնիկա գնելու հնարավորությունը [127]:

Գյուղատնտեսական տեխնիկան հնացել է (միջին տարիքը կազմում է 25-30 տարի), որն էլ խոչընդոտում է ոչ միայն տնտեսության զարգացմանը, այլ նույնիսկ նույն մակարդակի վրա պահպանմանը: Ֆերմերային և մյուս գյուղացիական տնտեսություն-ները պրակտիկորեն չեն իրականացնում տեխնիկայի վերանորոգում, չունենալով ֆինանսական միջոցներ պահեստամասեր ձեռք բերելու և վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

Արտադրության արդյունավետության տեսանկյունից ագրոարտադրությունը դեռևս զիջում է ազգային տնտեսության մյուս ոլորտներին՝ կապված արտադրության սեզոնայնության, կապիտալ ներդրումների ետգնման երկարաժամկետայնության, բնա-կլիմայական պայմանների, կենսաբանական օրենքների

[127] Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրոմշակումը. Եր., "Լիմուշ", 2010 էջ 112

ազդեցության և մի շարք այլ գործոնների հետ: Գյուղացիական տնտեսությունների ցածր եկամտաբերությունը և վնասաբերությունը հնարավորություն չեն տալիս ֆինանսավորել ներդրումները սեփական եկամտի հաշվին, իսկ առևտրային բանկերի վարկերը հիմնականում անհասանելի են դառնում գյուղատնտեսական ապրանք արտադրողների զգալի մասի համար:

Հանրապետության գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնները բազմաթիվ են և բազմաբնույթ: Դրանց մի մասը կախված է կոնկրետ գյուղացիական տնտեսության, գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեությունից, մի մասը՝ արտադրությունում կիրառվող տեխնոլոգիաներից, արտադրության կազմակերպման ձևից, արտադրական ռեսուրսների օգտագործումից, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների և այլն[128]:

Գյուղատնտեսության ոլորտում արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական գրավականը հանդիսանում է ֆինանասական միջոցների ներգրավման հուսալի աղբյուրների հայթայթումը, որոնք նպատակամղված կլինեն արատդրվող ապրանքների և ծառայությունների մրցունակության մակարդակի բարձրացմանը: Եթե այսօր գյուղացու համար վարկային ռեսուրսները դարձել են դժվարամատչելի ու անհասանելի, ապա միակ հուսալի ճանապարհը մնում է լիզինգային ներդրումները, որը մեր հանրապետության համար թեև նոր, բայց հուսալի ուղի է ներդրումների ծավալը մեծացնելու գործում:

Հայաստանում լիզինգի ներդրման սկզբնական քայլերը կատարվեցին բանկերի կողմից, ինչը օրինաչափ էր, քանի որ լիզինգի իրականացման համար լիզինգատուն պետք է ունենա ազատ դրամական միջոցներ և "Էժան" դրամական ռեսուրսներից օգտվելու հնարավորություն: Բանկային ծառայությունների շուկայում մրցունակության ուժեղացման պայմաններում լիզինգային գործարքների իրականացումը կարող է լուրջ խթան հանդիսանալ

[128] Մարկոսյան Ա., Երանոսյան Տ. Հայաստանի գյուղատնտեսության արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները //Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում// Գիտաժողովի նյութեր: ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ. Եր., 2007, էջ 273

լիզինգային հարաբերությունների ընդլայնման և գործարքների ծավալների մեծացման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիզինգային գործարքների համար ներկայումս ավելի գրավիչ են արդյունաբերական և սպասարկման ոլորտները: Ու թեև գյուղատնտեսությունը տեսականորեն կարող է լինել գրավիչ, այնուհանդերձ այդ ոլորտը դեռևս հստակեցված չէ, ունի "չհղկված" կողմեր, որոնք խոչընդոտում են ֆինանսական միջոցների ներհոսքին, դեպի գյուղատնտեսությունը: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել ու կիրառել միջոցառումների համալիր շարք, որոնք կխթանեն լիզինգային գործունեության առավել արդյունավետ ներդրման՝ նպաստելով հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացմանը:

Սովորաբար գյուղատնտեսական լիզինգային հարաբերություններում մասնակցում են սարքավորումներ արտադրողները (մատակարարները)՝ լիզինգատուները, լիզինգի գույքի օգտագործողները՝ լիզինգառուները, ներդրողները, ֆինանսավարկային կազմակերպությունները (առևտրային բանկեր), մեծածախ և մանրածախ առևտրային կազմակերպությունները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունները, ապահովագրական, սպասարկման, ուսումնական, տեղեկատվական ծառայություններ մատուցող սուբյեկտներ:

Միջազգային, հատկապես ԱՊՀ երկրների (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա) լիզինգային գործունեության փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական լիզինգի իրականացումը պահանջում է ընդգրկել հետևյալ հարցերի լուծումը՝

- ✓ սարքավորումների քանակի և ծառայությունների կառուցվածքի հստակեցում;
- ✓ գյուղատնտեսական տեխնիկայի և գույքի ձեռքբերում (գնում);
- ✓ լիզինգատուների ընտրություն;
- ✓ լիզինգառուների ցուցակի կազմում;
- ✓ լիզինգային պայմանագրերի կնքում և հարաբերությունների ձևակերպում:

Գյուղատնտեսական լիզինգի զարգացման կարևոր նախապայմաններից կարող է լինել լիզինգային ծառայությունների դիմաց բնամթերքով փոխհատուցման հնարավորությունը և նպատակահարմարությունը: Վճարման այս ձևը փոխշահավետ է ինչպես ֆերմերային տնտեսության, այնպես էլ լիզինգատուի և պետության համար, որը հնարավորություն է տալիս գյուղատնտեսական արտադրանքն իրացնել դրամական միջոցների սակավության դեպքում, վարձակալած տեխնիկայի դիմաց վճարները կատարել բերքահավաքից հետո, միաժամանակ թեթևացնելով գյուղատնտեսական արատադրանքի իրացման հոգսերը:

Տնտեսավարման արդի պայմաններում գյուղացիական տնտեսությունների համար բավականին դժվար է ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ, ինչը բացատրվում է ֆինանսական միջոցների միանվագ վճարման անհրաժեշտությամբ, որը գրեթե անիրականանալի է գյուղացիական փոքր տնտեսությունների համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է ձեռնարկում գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերել Բելոռուսից և ՌԴ-ից, որոնք որակի և շահագործման առումով առավել նպաստավոր են քան չինական մեքենաները: Բայց այստեղ հայ գյուղացին դեմ է առոնում գնային խնդիրների առաջ, քանի որ դրանք ավելի թանկ են քան չինականները: Կոմբայնի միջին գինը կազմում է շուրջ 25 մլն դրամ, իսկ տրակտորինը՝ շուրջ 15 հազար ԱՄՆ դոլար[129]: Մանր գյուղացիական տնտեսությունները վճարունակ չեն դրանց ձեռք բերելու համար: Փաստորեն այդ շուկան դուրս է մնացել վերահսկողությունից, ինչի առիթից էլ օգտվում են առանձին անհատները՝ կիրառելով մոնոպոլ իշխանություն: Նրանք ձեռք են բերում գյուղտեխնիկա և իրենց սակագնային պայմանները թելադրում հողագործին՝ 1 հա վարելու դիմաց պահանջում 20-30 հազար դրամ, գրեթե այդքան էլ արտը հնձելու համար: Հասկանալի է, որ եթե տվյալ շուկայում չկա մրցակցություն, ապա գյուղացին ստիպված է լինում համաձայնելու առաջարկվող պայմաններին: Այս պարագայում հիմնախնդրի լուծումներից մեկը կարող է հանդիսանալ ցածր շահութաբերությամբ տնտեսություններին միավորել

[129] "Սուր անկյուն" վերլուծական ծրագիր: "Արմենիա" հեռուսահաղորդում, 30 մարտի 2014թ

դրամական միջոցները, իսկ անհրաժեշտության դեպքում օգտագործել առևտրային վարկերը, հնարավորություն ստեղծելով զարգացնել տնտեսությունը նոր տեխնիկայի ձեռք բերման ու շահագործման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում ներմարզային, իսկ առանձին դեպքերում միջմարզային միավորումների ստեղծումով կարելի է ձևավորել կազմակերպչական-իրավական բնույթի ընկերություններ, միություններ, բաժնետիրական ընկերություններ, որը թույլ կտա զուգակցել տնտեսվարող սուբյեկտների շահերը, ապահովել արտադրության բարձր արդյունք:

Գյուղմթերքների արտադրության և վերամշակման ուղղությամբ տնտեսությունների ներմարզային և միջմարզային ընկերություններ կազմավորելու դեպքում, տարածաշրջանի կամ մարզի ղեկավարությունը լիզինգային գործարքի համար կարող է դառնալ երաշխավոր՝ ապահովելով լիզինգային հարաբերությունների իրավական կողմը: Այս դեպքում վարձակալական վճարի մարման տեխնիկայի սպասարկման և մյուս պարտականությունների ամբողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում միավորման ղեկավարությունը, որոնք նպատակ ունենալով բավարարելու միացյալ տնտեսությունների պահանջներն ագրարարար

գյուղատնտեսական արտադրանքի համակենտրոնացման գործընթաց և գյուղատնտեսության ոլորտում ուղղահայաց կողմնորոշմամբ հոլդինգային կազմակերպությունների ստեղծում և զարգացում: Այս իմաստով հետաքրքրություն է ներկայացնում Ռուսաստանի Դաշնության փորձի ուսումնասիրությունը[131]: Ռուսաստանում անվճարունակ կազմակերպությունների հետ աշխատանքը բարելավելու նպատակով շատ տարածաշրջաններում ձևավորվեցին մասնագիտական հանձնաժողովներ, որոնք մշակեցին տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու կոնկրետ միջոցառումներ: Այդ հանձնաժողովի ձևավորմամբ, որի մեջ մտնում էին գործադիր իշխանության, հարկային, ֆինանսական ծառայությունների ներկայացուցիչներ, իրականացվեցին գյուղմթերքների արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման, իրացման և օգտագործման հետ կապված միասնական ծրագրեր:

Գյուղական վայրերում նման կառույցների ստեղծման, միասնական մոդելի ձևավորման և լիզինգային գործարքների միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի թարմացման համար շատ կարևոր է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել կոնկրետ տնտեսությունում ստեղծված արտադրա-տնտեսական, սոցիալական և շուկայական ենթակառուցվածքների առկա վիճակը ու զարգացման հեռանկարները:

Վերջին տասնամյակում, Ռուսաստանի Դաշնությունում գյուղացիական տնտեսությունների մեքենատրակտորային հավաքակազմի նորացումը հիմնականում իրականացվում է լիզինգի միջոցով, որի համար ստեղծվել է ֆեդերալ ու մունիցիպալ բյուջետային, ինչպես նաև օրենքով չարգելված ուրիշ աղբյուրների հաշվին: Ռուսաստանում բյուջետային միջոցները գյուղատնտեսության նախարարությանն են հատկացվում վերադարձման պայմանով, որի պարագայում, որպես լիզինգային օպերատոր հանդես է գալիս հատուկ այդ նպատակով ստեղծված բաժնետիրական ընկերություն: Ընդհանուր առմամբ ՌԴ-ում լիզինգի զարգացման գործընթացին նպաստեց ժամանակին (1998 թ.)

[131] Джуха В.А. Лизинг. Ростов-н/Д.”Феникс”, 1999.

“Լիզինգի մասին” ֆեդերալ օրենքի ընդունումը[132], ինչպես նաև բավարար քանակությամբ մասնագետների առկայությունը, գործադիր մարմինների կողմից մեծ ուշադրության հատկացումն այդ հիմնախնդրի լուծմանը:

Նշված օրենքի նորմերով օրենսդրորեն ամրագրվեց լիզինգի կարգավիճակը, որպես ներդրումային գործունեության առանձնահատուկ ձև: Այդ օրենքում նշված է, որ որպես լիզինգի առարկա կարող է ծառայել անշարժ ու շարժական գույքը, ինչը կարող է օգտագործվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ժամանակ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների մեծամասնությունը գործնականորեն չեն կատարում գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում, քանի որ թանկարժեք պահեստամասեր գնելու համար մշտապես առկա է ֆինանսական միջոցների պակաս: Ավելացել է առկա տեխնիկական միջոցների բարոյական և ֆիզիկական մաշվածությունը (ավելի քան 93 %-ի շահագործման ժամկետը լրացել է) դրանց անբավարար քանակը բարձրացնելով տեխնիկայի ծանրաբեռնավածությունը, հանգեցրել է շահագործման ծախսերի, գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամկետների և հետևաբար դրանց սակագների ավելացմանը:

Հայաստանում յուրաքանչյուր տարի գյուղացիական տնտեսությունները արտադրական միջոցների խիստ կարիք են զգում, իսկ առևտրային բանկերը կողմից ներկայացվող պահանջները վարկավորման հանդեպ դժվարամատչելի են դառնում: Ստեղծված իրավիճակից դուրս գալու, ինչպես արդեն նշվել էր, հանրապետության ամբողջ տնտեսության և հատկապես գյուղատնտեսության համար, հանդիսանում է լիզինգի ամենուրեք կիրառությունը:

Գյուղատնտեսության ոլորտում լիզինգի կիրառությունը կբերի՝

- ✓ գյուղտեխնիկայի և գյուղատնտեսական արտադրանքի գների անհամապատասխանության հաղթահարմանը;

[132] Федеральный закон Российской Федерации “О лизинге” от 14.10.98.

- ✓ գյուղմեքենաների և գույքի վաճառքի ծավալների մեծացմանը;
- ✓ գյուղատնտեսական սարքավորումների հանդեպ պահանջարկի ընդլայնմանը, ինչպես ֆերմերային տնտեսությունների, այնպես էլ առևտրային կազմակերպությունների կողմից;
- ✓ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարների, վարձակալների և լիզինգատուների շահերի օպտիմալ զուկացմանը:

Հաշվի առնելով գյուղատնտեսության առանձնահատկությունները և բնորոշ գծերը, լիզինգն այստեղ հանդես է գալիս իր ուրույն ձևով, ինչը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- ✓ պետության կողմից գյուղատնտեսությանը տրված արտոնություններով;
- ✓ լիզինգային վճարի ներառումը գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի մեջ;
- ✓ ֆյուչերսային գործարքների օգտագործումը գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացում;
- ✓ արտադրության տեխնիկահագեցվածության աճով և սարքավորումների օգտագործման շրջանառելիության բարձրացմամբ և այլն:

Վերջնական արդյունքի մեջ ներդրման չափերը, յուրաքանչյուր ուղղությամբ ստացված տնտեսական ազդեցությունը պետք է բաշխվի գյուղատնտեսական արտադրության լիզինգի մասնակիցների միջև համապատասխան չափաբաժիններով: Փոխադարձ հաշվարկների նման մոտեցումը համապատասխանում է ինչպես գյուղացիական տնտեսությունների, այնպես էլ լիզինգատուների ու պետության շահերին: Ֆյուչերային հաշվարկները հնարավորություն են տալիս դրամական միջոցների սղության պայմաններում կազմակերպել գյուղատնտեսական արտադրություն, իսկ գույքի վարձակալության դիմաց վճարումներն իրականացնել բերքահավաքից հետո: Ընդհանրապես երկրում գների աճի պայմաններում ֆյուչերսային գործարքներում ագրոլիզինգը ծառայում է որպես

ագրոարդյունաբերական համալիր կապիտալի օգտագործման լավագույն մեխանիզմ:

Ինչպես արդեն նշել ենք ագրոլիզինգը գյուղտեխնիկայի վաճառքն է սպառողներին տարաժամկետ վճարման պայմաններով, քանի որ իրականում մեքենա սարքավորումները սպառողին են տրվում երկարաժամկետ վարձակալությամբ՝ արժեքը վճարելով մաս-մաս՝ երկու և ավելի տարիների ընթացքում: Սպառողը (վարձակալը) վճարում է վարձատուին վարկի որոշակի տոկոսը, ինչպես նաև մատուցված ծառայությունների արժեքը: Այսպիսով, գյուղատնտեսական ապրանք արտադրողի համար լիզինգը միաժամանակ լուծում է երկու կարևոր հարց՝ տեխնիկայի ձեռքբերում և դրա ֆինանսավորում: Արդյունքում ապահովվում է գյուղացիական (ֆերմարային) տնտեսությունների մրցունակությունը համապատասխան շուկաներում:

Ագրոլիզինգի ընդհանուր համակարգի գծապատկերը՝ ներկայացվում է գծապատկեր 9-ում:

Հայաստանի գյուղացիական տնտեսությունները, բացի արտադրական բնույթի շրջանառու միջոցների անբավարարվածությունից, ունենում են մեծ քանակության պահանջարկ բնական աղետների հետևանքների վերացման ուղղությամբ, որն իր հերթին պահանջում է կորուստների ապահովագրում, ինչը մեր հանրապետությունում լուրջ ուշադրության չի արժանանում՝ գյուղատնտեսության ապահովագրական գործակալությունների թույլ զարգացման պատճառով:

Գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրներից է նաև գյուղմթերքների վերամշակման կազմակերպումը: Հայաստանը Խորհրդային Միության ժամանակ ուներ համեմատաբար մեծ ներուժ վերամշակվող արտադրությունների գծով՝ նա ժառանգել էր, անկախացումից հետո, գինեգործության, մրգի և բանջարեղենի պահածոների, ծխախոտի, մսի ու կաթի վերամշակման, ոչ ոգելից խմիչքների և գարեջրի արտադրություններ:

Դրանց հզորությունները, տեխնոլոգիական մակարդակները չէին համապատասխանում ներքին շուկայի պահանջարկի ծավալներին, իսկ արտաքին շուկամտնելը խիստդժվարամատչելի է՝

կապված ոչ միայն խոշոր ֆինանսական ներդրումների, այլ նաև նախկին տնտեսական կապերի վերացման, շրջափակման, միջազգային շուկաներում արտադրանքների մրցունակության մակարդակի բարձրացման հետ: Այդ ամենի հետևանքով կրճատվեց գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրությունների կարողությունները, և միայն 2001 թվականից հետո այդ համակարգում նկատելի աշխուժացում գրանցվեց: Ելնելով ստեղծված իրավիճակից ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության մեջ համակարգի զարգացման գերակայություններ համարել [133].

- ✓ արտադրական հզորությունների ընդլայնումը, արտադրանքի մրցունակության բարձրացումը և տեսականու մեծացումը;
- ✓ որակի կառավարման, ստանդարտացման և հավաստագրման միջազգային չափանիշներին բավարարող համակարգի ներդրումը;
- ✓ վերամշակող արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը, հատկապես Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը;
- ✓ շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծման աջակցությունը;
- ✓ վերամշակող արդյունաբերության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանումը և այլ միջոցառումներ:

[133] "ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին"



Գծապատկեր 9 Ագրոլիզինգի ընդհանուր համարակը[134]

[134] Горемыкин В.А. Лизинг: Учебник – М. “Дашков и К⁰”, 2003, с. 830

Մեր կարծիքով անհրաժեշտ է այդ համակարգի մեջ ընդգրկել գյուղտեխնիկայի օգտագործման արդյունավետության տեսանկյունից ելնելով իրականացնել փորձարկումներ հանրապետության գյուղատնտեսության պայմաններին համապատասխանեցնելու պահանջներից ելնելով, քանզի ՀՀ-ում օգտագործվող տեխնիկան արտադրվում է այլ երկրներում (Չինաստան, Ճապոնիա, Բելառուս, Ռուսաստան), որտեղ հաշվի չեն առնում Հայաստանի բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները:

Սարքավորման և նրա տարրերի խափանումների վիճակագրական տվյալների բաշխվածությունը ցույց է տալիս, որ, եթե հնարավոր չէ իրականացնել ազդող գործոնների ամբողջ կոմպլեքսի միաժամանակյա ազդեցություն,[135] ապա անհրաժեշտ է իրականացնել առանձին դետալների տեխնիկատնտեսական չափանիշների ստուգում Հայաստանի պայմանների համար: Ագրոարդյունաբերական համալիրում նշված միջոցառումների իրականացումն ապահովելու և ծրագրված քաղաքականությունը կյանքի կոչելու համար խիստ անհրաժեշտ է լիզինգային ձեռնարկատիրական գործունեության արմատավորումը, առանց որի, սեփական միջոցների հաշվին, գրեթե անիրականանալի է:

Ռուս ականավոր տնտեսագետ, ագրոլիզինգի խոշոր մասնագետ Վ.Գորեմիկինը նշում է, որ ագրոլիզինգի պրակտիկ իրականացումը ենթադրում է ութ խումբ աշխատանքների իրականացում[136].

1. Մեքենաների և սարքավորումների ցանկի ճշգրտում՝
- ✓ արտահանման գծով նոր և հին օգտագործված մեքենաների ձեռք բերման հեռանկարային հնարավորությունների գնահատում;
- ✓ արդյունաբերական, շինարարական ու տրանսպորտային կազմակերպություններից ժամանակավորապես ազատ մեքենասարքավորումների ներգրավման հնարավորություն և գների հետազոտում;

[135] Վ. Բեգլարյան, Կ. Ստեփանյան, Հ.Մանուկյան Չափման միջոցների կոմբինացված փորձարկումների ազդեցությունների ռեժիմների ընտրում և արդյունքների մշակում, Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի տարեկան գիտաժողով: Նյութերի ժողովածու , 2հատորով. - Եր.: ՀՊՃՀ, 2006, էջ 491-494:

[136] Горемыкин В.А. “Основы технологии лизинговых операций”. Учебное пособие. М., Ось-89, с. 357-360; Горемыкин В. Лизинг: Учебник. “Дашков и К⁰”, 2003 с. 829-832.

- ✓ մաշված մեքենաների հնարավոր վերականգնման հարցի լուծում;
- ✓ ծառայությունների մատուցման հստակեցում;
- ✓ սարքավորումների վերանորոգում և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բացահայտում;
- ✓ աշխատանքների ժամկետների, կարողությունների, սակագների պատշաճ իրականացման հնարավորությունների գնահատում;
- ✓ մեքենա-սարքավորումների տեղափոխման շուրջ բանակցությունների վարում:

2. Ծառայությունների կազմի ճշգրտում՝
- ✓ տեխնիկայի վերանորոգում և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բացահայտում;
- ✓ աշխատանքների կատարման հնարավորությունների գնահատում (ժամկետները, սակագները, հզորությունները);
- ✓ մեքենաների տեղափոխման շուրջ բանակցությունների վարում,
- ✓ պատվիրատուների կողմից տեխնիկայի տեղափոխման հնարավորությունների գնահատում;
- ✓ մեքենաների պատրաստման նախալիզինգային հարցերի մշակում;
- ✓ ապահովագրական հարցերի կողմնորոշում:

3. Մեքենաների և ծառայությունների առանձին տեսակների մշտական, սեզոնային և միանգամյա պահանջարկի բացահայտում:

4. Գյուղատնտեսական տեխնիկայի գնում՝
- ✓ մեքենաներ արտադրողների հետառքու վաճառքի պայմանագրերի կնքում;
- ✓ ժամանակավոր օգտագործման վերցնելու վարձակալության պայմանագրերի կնքում;
- ✓ մեքենասարքավորումների նախալիզնիգայիննախապատրաստում;
- ✓ անհրաժեշտության դեպքում մեքենաների պահպանման կազմակերպում:

5. Լիզինգառու-հաճախորդների ցուցակի կազմում՝

- ✓ ագրարային ոլորտի կազմակերպությունների և կառավարման մարմինների հետշփումների հաստատում;
- ✓ հաճախորդների ընտրության ընթացակարգի մշակում;
- ✓ հաճախորդների ցուցակի կազմում:

6. Վարձատուների ընտրություն (նախագիծ)՝
- ✓ հնարավոր հաճախորդների հետ գովազդա-ուսումնական միջոցառումների անցկացում;
- ✓ ընտրության ընթացակարգի իրացում:

7. Լիզինգային հարաբերությունների ձևակերպում՝
- ✓ լիզինգային ծառայությունների պայմանագրերի կնքում;
- ✓ հաճախորդներին տեխնիկայի մատակարարում:

8. Լիզինգային վճարումների դիմաց գյուղատնտեսական արտադրանքի տեսականու որոշում՝
- ✓ ֆյուչերսային պայմանգրերի կնքում կամ լիզինգային պայմանագրում գյուղատնտեսական արտադրանքի քանակի, որակի, տեսականու և մատակարարման ժամակացույցի պայմանների ձևակերպում;
- ✓ բանակցությունների վարում և պայմանագրերի կնքում արտադրանքի տեղափոխման, վերամշակման, անհրաժեշտության դեպքումնաև իրացման գծով:

Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրում լիզինգի ներդրման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն անհրաժեշտ են, սակայն ուսումնա-սիրությունները ցույց են տալիս, որ դրանք բավարար չէն: Մեր կարծիքով, դրամեջ մեղքի իր բաժինն ունի Կառավարությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, որոնք չեն կատարել գիտա-գործնական ուսումնասիրություններ տնտեսության կազմակերպման այդ առաջավոր մեթոդի արմատավորման ուղղությամբ: ՌԴ-ում և ԱՊՀ այլ երկրներում լիզինգային գործունեության արդյունավետությունն ավելի բարձր է, քանի որ առկաե պետական աջակցությունը:

ՀՀ գյուղատնտեսությանը պետության կողմից աջակցությունը կարող է իրականացվել, առաջին հերթին, պետական լիզինգային հիմնադրամի ստեղծումով, որի միջոցները պետք է ուղղվեն առավել

արդյունավետ գյուղացիական տնտեսություններին ու վերամշակվող ձեռնարկություններին: Այս պարագայում վերադարձելիության սկզբունքի խստիվ պահպանումը հնարավորություն կտա բազմաթիվ անգամ օգտագործել լիզինգային գույքը և աստիճանաբար ավելացնել լիզինգային միջոցների ծավալները: Եթե տնտեսվարող սուբյեկտները չունեն տնտեսապես արդարացված նախագծեր, դրանց իրականացնող մասնագետներ և գաղափարներ, ապա այդ դեպքում լիզինգն արդյունավետ լինել չի կարող:

3.3 Լիզինգի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Ցանկացած երկրի կառավարություն տնտեսական գործունեություն չի իրականացնում միայն ամբողջ երկրի մասշտաբով, այլ նաև նրա առանձին ճյուղերի, ոլորտների կտրվածքով, որոնք թելադրվում են շուկայական տնտեսավարման թերությունների նվազեցման անհրաժեշտությունից: Եվ քանի որ լիզինգը շուկայական տնտեսավարման կարևորագույն կատեգորիաներից է, ապա լիզինգի արդյունավետ զարգացումն ապահովելու համար, զարգացած շուկայական տնտեսության երկրներում պետության կողմից իրականացվում են մի շարք գործառույթներ, որոնցից կարելի է առանձնացնել.

- ✓ օրենսդրորեն կարգավորող գործառույթ՝ ուղղված լիզինգի գործունեության և զարգացման համար իրավական դաշտի ստեղծմանն ու իրականացմանը;
- ✓ գործադիր գործառույթ՝ իրականացվում է գործադիր իշխանության երեք թևերի կողմից, կոչված է տնտեսվարող սուբյեկտների միջև փոխհարաբերություններում սահմանված նորմերի փաստացի իրականացմանը;
- ✓ վերահսկող գործառույթ՝ իրականացվում է կառավարման բոլոր լիազոր հաստատությունների և կազմակերպությունների կողմից (լիզինգային միավորումների, ասոցիացիաների և այլն), որոնց նպատակն է լիզինգային

հարաբերություններին մասնակիցների իրավունքների պահպանումը:

Պետության դերը մեծ է լիզինգային գործունեությունը խթանելու գործում, քանի որ դրա աջակցությունը կարագացնի լիզինգային հարաբերությունների զարգացմանը հանրապետությունում, մասնավորապես՝ ագրոարդյունաբերական ոլորտում: Պետության աջակցությունը ֆինանսական լիզինգի դեպքում ավելի ճկուն պետք է լինի, որոնք պետք է դրսևորվեն հիմնականում հարկային, մաքսային արտոնությունների ձևով: Արտոնությունների ընդլայնումը խթանում է լիզինգի մասշտաբների մեծացմանը, իսկ դրանց կրճատումը և սահմանափակումները՝ նվազեցնում են լիզինգային ակտիվությունը:

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտում լիզինգային հարաբերությունների հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել պետական միջամտության մոտեցումները, մասնավորապես.

- ✓ պետության կողմից երաշխիքներ տրամադրել լիզինգային ծրագրեր իրականացնողներին;
- ✓ լիզինգային հարաբերությունների մասնակիցներին իրավունք տալ ինքնուրույն սահմանել ամորտիզացիոն նորմաներ, կուտակել ամորտիզացիոն հատկացումները և դրանք ներդնել հետագա տնտեսական գործունեության մեջ;
- ✓ կախված լիզինգային գործունեության տնտեսական նշանակությունից լիզինգային կազմակերպությանն ազատել (1-3 տարի) լիզինգային վճարումների հարկերից, իսկ լիզինգառուներին արտոնություններ տրամադրել շահութահարկի կտրվածքով;
- ✓ ֆինանսական լիզինգի գործառությների իրականացման համար երկարաժամկետ վարկ տրամադրելիս առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին ազատել շահութահարկից;
- ✓ լիզինգային հարաբերությունների մասնակիցների իրավական և տնտեսական շահերը պաշտպանելու նպատակով ձևավորել ու կատարելագործել նորմատիվ-իրավական դաշտը, ձևավորել

մրցակցային առողջ միջավայր, թույլ չտալ մենաշնորհային դրսևորումներ շուկայի այդ հատվածում:

Այստեղ մենք ամբողջովին համամիտ ենք Վ.Բոստանջյանի և Ա. Մելիքյանի հետ, որոնք նշում են՝. "Ինչպես գործարար միջավայրի, այնպես էլ ներդրումային գրավչության բարձրացման կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում ազատ մրցակցության ապահովումը: Ընդհանուր առմամբ, մրցակցության խթանման քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա բարեխիղճ մրցակցության համար հավասար պայմանների ստեղծումը, որը կնպաստի ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխմանը և կայուն տնտեսական զարգացմանը: Պետությունը չպետք է նախապատվություններ կամ արտոնություններ տրամադրի առանձին ձեռնարկություններին: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա սեփականության իրավունքի նկատմամբ ոտնձգություններից, անբարեխիղճ մրցակցության դրսևորումներից, պետական իշխանության մարմինների կողմից սեփական գործունեությունը ապօրինի միջամտությունից դատական պաշտպանության իրավունք"[137]:

Շուկայական տնտեսության պայմաններում պետության միջամտությունն իրենից ներկայացնում է արտադրության զարգացման, բնակչության սոցիալական պաշտպանության կառուցակարգեր կիրառելու, ձեռնարկատիրական գործունեության ծավալման նորմալ պայմաններ ստեղծելու, ագրարային ոլորտում գյուղացիական տնտեսությունների առաջընթացի զարգացմանը նպաստելու, զբաղվածության մակարդակը բարձրացնելու և մի շարք հիմնախնդիրների լուծման միջոցով:

Այդ բնագավառների կարգավորումը և հետագա զարգացումը չի կարող ամբողջությամբ իրականացվել ոչ պետության ոչ էլ շուկայական տնտեսավարման միջոցով: Գոյություն ունեն կոնկրետ ոլորտներ, որոնք լիովին վերահսկվում ու իրականացվում են պետության կողմից ու պետության միջոցներով՝ երկրի պաշտպանությունը, ներքին կարգուկանոնի ապահովումը, ազգային

[137] Բոստանջյան Վ., Մելիքյան Ա. Գործարար միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները: //Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: Գիտաժողովի նյութեր: ՀՀ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Եր., 2007, էջ 480

անվտանգությունը, բնապահպանությունը, օրենքների և նորմատիվների ընդլայնումը, եկամուտների բաշխման վերահսկողությունը և այլն: Առանձին ոլորտներում միաժամանակ կարող են ներգրավվել պետության և մասնավոր բիզնեսի միջոցները՝ առողջապահություն, կրթություն, արտադրական ենթակառուցվածքներ, կապիտալ ներդրումներ, նոր տեխնիկայի ու առաջավոր տեխնոլոգիաների մշակում ու կիրառում և այլն: Իսկ ինչ վերաբերվում է նյութական բարիքների արտադրությանը, ապա այն հիմնականում իրականացվում է մասնավոր ձեռներեցության կողմից, քանի որ այստեղ բարձր է նյութական շահագրգռվածության աստիճանը՝ ինչի շնորհիվ բարձրանում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը: Բացի այդ, դրա հետ միասին, պահանջվում է իրականացնել տնտեսության կարգավորում, տնտեսական երևույթների և դրանց կապերի սատարում և կայունության ապահովում, որտեղ հնարավոր չէ առանց պետական միջամտության:

Շուկայական տնտեսությունում պետական կարգավորումը պետության ներգործությունն է տնտեսվարող սուբյեկտների գործունեության և շուկայական կոնյուկտուրայի վրա՝ նպատակ ունենալով ապահովել նորմալ պայմաններ շուկայական կառուցակարգի, գործունեության, սոցիալական հիմնախնդիրների լուծման և որ ամենահիմնականն է՝ տնտեսության հավասարակշիռ զարգացման համար: Պետական կարգավորման գործառույթների շրջանակն ավելի ընդարձակ է լինում անցման շրջանի երկրներում: Տվյալ դեպքում պետական կարգավորման օբյեկտ է դառնում նաև շուկայական տնտեսավարման անցման գործընթացը: “Փոփոխությունների ժամանակ կառավարությունը պետք է ուժեղացնի այն հիմնարկությունները, որոնք զբաղվում են վարչական ղեկավարությամբ, այն է՝ համակարգմամբ, ծրագրերի մշակմամբ, անձնակազմով, ֆինանսների ղեկավարմամբ և հետազոտություններով: Այդ ծառայությունները կազմում են և միշտ կկազմեն ցանկացած ձեռնարկության ուղեղն ու կամքը[138]”:

[138] Դենիարդ Բ. Լոբերո Արիզոնայի նահանգային համալսարան, □Հանրային կազմակերպության տնտեսություն□, Եր. “Անտարես”. 2006, էջ 85

Տնտեսության պետական կարգավորումը պետք է իրականացվի կոնկրետ մշակված տնտեսական քաղաքականության միջոցով, ինչը կառուցվում է որոշակի սկզբունքների հիման վրա՝

- ✓ պետության ակտիվ միջամտություն տնտեսական գործընթացներին;
- ✓ տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների և ազդեցության գործոնների ապահովում;
- ✓ տնտեսության զարգացման գերակայությունների հստակ սահմանում և դրա հիման վրա միջոցառումների ու լծակների ընտրություն և այլն:

Հայաստանի հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության ձևավորումն է: Սակայն ցանկացած ժամանակահատվածի և ոլորտի համար անհրաժեշտ է ունենալ տնտեսական այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի տվյալ ժամանակի հիմնախնդիրների լուծմանը: Դրանք իրականացնելու համար պետությունը պետք է օգտագործի կարգավորման լծակներ, որոնք խմբավորվում են ըստ ուղղությունների՝

- ✓ դրամավարկային քաղաքականության ապարեզում՝ շրջանառության համար փողի քանակության որոշում, միջբանկային վարկի տոկոսադրույքի սահմանում, առևտրային բանկերի դեպոզիտի նորմատիվի որոշումը, ինչը անմիջապես առնչվում է լիզինգային գործարքների հետ;
- ✓ հարկային քաղաքականության ոլորտում՝ հարկերի տեսակների, հարկադրույքների չափերի սահմանումը, հարկային արտոնությունները;
- ✓ սոցիալական քաղաքականությունն ընդգրկում է սոցիալական վճարների համակարգը, պետական ինվեստիցիաների ծավալները, դոտացիաները և սուբվենցիաները;
- ✓ արտաքին տնտեսական քաղաքականությունում կարգավորվում են մաքսատուրքերը, արտարժույթի կուրսերը, արտահանման-ներմուծման սահմանափակումները:

Պետական կարգավորման կառուցակարգի անհրաժեշտությունն զգացվում է իրավական ու տնտեսական այնպիսի դաշտի ստեղծմամբ, որի պայմաններում տվյալ համակարգը կգործի անխափան ու արդյունավետ: Այստեղ էական դերակատարություն ունի նաև տնտեսագիտությունը, հատկապես ագրոտնտեսագիտությունը, քանի որ տնտեսագիտական հետազոտությունների օգնությամբ կարող են բացահայտվել ու վերլուծվել գյուղատնտեսության զարգացումն ու դրա ինտենսիվությունը պայմանավորող գործոնները, դրանց վրա ազդելու հնարավորությունները, միջնորդներն ու ուղղությունները, ուսումնասիրել ու լուծել այդ նպատակների իրականացմանն առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրները[139]:

Տնտեսական քաղաքականության կարևոր լծակներից է հանդիսանում ներդրումային քաղաքականությունը: Ներդրումները տնտեսության զարգացման խթանման հիմնական գործոններից են, ինչի միջոցով ապահովվում է հասարակական վերարտադրությունները՝ նպատակ հետապնդելով խրախուսել այն արտադրությունները, որոնք անհրաժեշտ ռեսուրսների և իրացման շուկաների առումներով հեռանկարային են, խոստանում են բարձր եկամտաբերություն, ցածր ռիսկայնության պայմաններում:[140]

Ներդրումային միջոցների սղության պայմաններում գյուղատնտեսական արտադրության գործընթացների կազմակերպումը խիստ պահանջ ունի օտարերկրյա կապիտալի ներգրավմանը, քանի որ դրա բացակայության դեպքում հնարավոր չէ իրականացնել գյուղտեխնիկայի թարմացում, առաջավոր տեխնոլոգիայի արմատավորում, նորագույն սարքավորումների ձեռք բերում: Ինվեստիցիոն գործունեության ռազմավարությունում էական տեղ են զբաղեցնում ինվեստիցիաների ներգրավման հնարավորությունների գնահատումը և կանխատեսումը ոչ միայն ամբողջ համակարգի կտրվածքով, այլ նաև առանձին մարզերով, որոնք պետք է համաձայնեցված լինեն հանրապետական ներդրումային քաղաքականության հետ:

---

[139] Ղազարյան Է.Ս. ՀՀ ագրարային տնտեսագիտության դերը ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում:/Եր. “Հայ գիտակ”, 2003, էջ 145

[140] Ղարիբյան Ա. “Ինվեստիցիոն կատեգորիայի մի քանի առանձնահատկությունների մասին”, “Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում”, թիվ 4, 2004, էջ 154-159

Առանձին մարզերում ներդրումային գնահատումն անհրաժեշտ է գնահատել վերլուծության ենթարկելով միջմարզային զարգացման անհամաչափության պատճառները և մարզերի վարկանիշների դասակարգումը՝ օգտագործելով մարզի ընդհանուր տնտեսական ու ներդրումային ցուցանիշները, շուկայական ենթակառուցվածքների առկա վիճակը և հետագա զարգացման մակարդակները:

Հանրապետության ներդրումային հնարավորությունների գնահատումը նոր ռեզերվներ կբացահայտի հայրենական և արտասահմանյան ներդրումների ներգրավման համար, բարձարցնելու դրանց գործունեության արդյունավետության մակարդակը: Նման գնահատականը և անհրաժեշտությունը հնարավորություն կտա մշակել հիմնավորված միջոցառումների ծրագրեր և տնտեսությունների զարգացման ներդրումային ռազմավարություն:

Ներդրումային գործունեության սուբյեկտներից է պետությունը, որը կարող է լինել ներդրող և միաժամանակ կարգավորել ներդրումները, ընդունել դրանց համար իրավական նորմեր, որոնցով բնորոշվում է ներդրումների և ներդրումային գործունեության հասկացությունը, կարգավորել ներդրողի և այլ սուբյեկտների միջև ծագող իրավահարաբերությունները, ամրագրել ներդրումների և ներդրումային գործունեության պետական կարգավորման չափանիշները, ներդրողների իրավունքների երաշխիքները:[141]

Պետական ներդրումների իրականացման շրջանակներում կարող են ձևավորվել հիմնադրամներ հետևյալ ուղղություններով՝ տարածաշրջանային զարգացման, էկոլոգիական, երկրի համար առաջատար նշանակություն ունեցող ճյուղերի և այլն: Որպես կանոն ներդրումային գործունեության պետական կարգավորումն իրականացվում է հետևյալ միջոցներով.

ա) պետական ներդրումային ծրագրի ընդունմամբ;

[141] Գասպարյան Հ.Ա. "Ներդրումային գործունեության մեջ լիզինգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում": Ատենախոսություն, Ը.00.02 "Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում" մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար. Եր., 2008, էջ 107

բ) պետական ներդրումների ուղղակի կառավարմամբ;

գ) առանձին տարածքների, բնագավառների զարգացման համար բյուջետային հատկացմամբ;

դ) փոխառությունների միջոցով ֆինանսական օգնության տրամադրմամբ;

ե) հողի և բնական այլ ռեսուրսների օգտագործման պայմանների սահմանմամբ;

զ) հակամենաշնորհային միջոցառումների իրականացմամբ:

Քանի դեռ մեր հանրապետությունում համարյա թե չեն ստեղծվել գյուղացիական կոոպերատիվներ, հետևաբար շեշտը պետք է դրվի մարզային, կամ գուցե նաև միջմարզային կառուցների ստեղծման ճանապարհով՝ կազմակերպչա-իրավական հիմքի վրա ընկերությունների, միությունների միջոցով իրականացնելու լիզինգային ծառայությունների մատուցում գյուղացիական տնտեսություններին: Այս դեպքում շրջանի կամ մարզի ղեկավարությունը պետք է երաշխիք հանդիսանա լիզինգային գործարքի կատարման համար:

Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգի պարագայում վարձակալական վճարի մարման, սպասարկման և մյուս պարտականությունների կատարման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ընկերության կամ այն մարմնի ղեկավարության վրա, որոնք ագրարատերերի հանձնարարականով կազմակերպում են ֆինանսական վարձույթով (լիզինգով) վերցրած սարքավորումների շահագործումը:

Գյուղատնտեսությունում ներդրումային աճող պահանջարկը լիզինգը դարձնում է առավել գրավիչ, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում լուծելու գյուղատնտեսական արտադրության երկարաժամկետ վարկավորման հարցը: Բայց այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել կառավարության կողմից տրամադրվող միջոցների սահմանափակությունը և լիզինգառուների զգալի մասի ցածր վճարունակությունը:

Այս իրավիճակում ուրախալի և հուսադրողը հանդիսանում է այն, որ Հայաստանի Հանրապետությունը սկսել է լիզինգային հարաբերություններ ձևավորել Ռուսաստանի Դաշնության և

Բելառուսի Հանրապետության հետ: Այսպես 2012 թվականի հունվարին Երևան ժամանեց "Ռուսսելխոզբանկի" խորհրդի նախագահը, որի հետ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պայմանավորվածություն ձեռք բերեցին լիզինգային տարբերակով գյուղատնտեսական տեխնիկա մատակարարեն մեր հանրապետությանը:[142] Նույն ժամանակ Երևան ժամանեց նաև Բելոռուսի "Պրոմագրոլիզինգ" ընկերության ներկայացուցիչը, որի հետ պայմանավորվեցին Հայաստանի Հանրապետությանը լիզինգով վաճառել գյուղատնտեսական տեխնիկա ու սարքավորումներ, իրականացնելով նրա սպասարկումը և հետագա վերանորոգումը[143]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՊՀ շատ երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելոռուսում գյուղատնտեսության ոլորտում լիզինգային գործունեության արդյունավետությունն առավել բարձր է, եթե առկա է պետության աջակցությունը: Մեր կարծիքով տվյալ հիմնախնդրով զբաղվող մասնագետները առաջին հերթին պետք է ուսումնասիրեն նշված երկրների փորձը, ապա այն տարածեն հանրապետությունում: Այս բնագավառում պետության կողմից գյուղատնտեսությանն աջակցությունը կարող է իրականացվել տարբեր ճանապարհներով: Համեմատաբար արդյունավետ է թվում պետական լիզինգային ֆոնդի ստեղծումը, որի միջոցները, վերադարձելիության սկզբունքով լիզինգային օպերատորների կողմից կարող են ուղղվել ավելի արդյունավետ աշխատող տնտեսություններին: Վերադարձելիության պայմանների հստակ պահպանումը հնարավորություն կտա բազմաթիվ անգամ օգտագործել և անընդհատ մեծացնել լիզինգային միջոցների չափերը:

Սակայն այստեղ պետք է հաշվի առնել մեկ այլ սկզբունք, այն է՝ նախագծի նախաձեռնությունը չպետք է բխի պետությունից, այլ կոնկրետ տնտեսվարող սուբյեկտներից (արտադրանք թողարկողներից), իսկ պետական միջոցները հատկացվեն միայն տնտեսապես արդարացված նախագծերին: Հետևաբար, անհրաժեշտ է ստեղծել

---

[142] "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 25 հունվար 2012թ., ՀՀ Կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն:

[143] ԱԱԽ քարտուղարն ընդունել է "Պրոմագրոլիզինգի" պատվիրակությունը, "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 25 հունվար 2012թ.

լիզինգային օպերատորների աշխատողների կառույց, որտեղ մրցույթային կարգով նրանց կողմից կառաջարկվի և կհիմնավորվի լիզինգային արդյունավետնախագծեր:

Առանձին դեպքերում ճիշտ կլինի տարածքային սկզբունքով (մարզերում, տարածաշրջաններում) ստեղծել լիզինգային ընկերություններ՝ ըստ տնտեսության ճյուղերի, որոնք կմասնագիտանան կոնկրետ արտադրանքի (հացահատիկ, պտուղ-բանջարեղեն, խաղող, անասնամթերքներ և այլն) արտադրության գծով տեխնիկա և սարքավորումներ տրամադրելու համար: Այս խնդրի հետ կապված, մեր կարծիքով, հստակ առաջարկություն են արել պրոֆեսոր Գ.Դավթյանը և Ն.Տիգրանյանը՝. "Կարծում ենք, ճիշտկլինի ներկրվող տեխնիկան ոչ թե վաճառել առանձին հողօգտագործողներին, այլ դրանց միավորով ստեղծել տեխնիկայի կենտրոնացված հավաքակայան, որը ծառայություններ կմատուցի գյուղացիական տնտեսություններին: Նման փորձ արդեն կա հանրապետությունում: Այսպես, Նորվեգիայի կառավարության և ՄԱԶԾ-ի աջակցությամբ, Ծիրակի մարզի Բավրա գյուղում հիմնվել է գյուղատնտեսական մեքենաների հավաքակայան՝ համալրված նորագույն տեխնիկայով, որը սպասարկում է Աշոցքի տարածաշրջանի 4 սահմանմերձ համայնքների: Կարծում ենք, որ գյուղտեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման միտումը պետք է խրախուսվի պետական մարմինների կողմից, որովհետև դա հանդիսանում է մեքենաօգտագործման և արտադրական սպասարկման անմխիթար վիճակից դուրս գալու ուղիներից մեկը"[144]: Այս պարագայում հնարավոր է հավաքագրել բարձորակ մասնագետներ, որոնք ի զորու կլինեն գնահատել նախագծի ներուժը, լիզինգառուներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվական օգնություն գույքի օգտագործման և արտադրության արդյունավետության բարձրացման գծով: Տվյալ դեպքում պետությունը կորոշի թե ինչքան և ինչպիսի լիզինգային օպերատորներ են անհրաժեշտ:

Ուսանելի է Ռուսաստանի փորձը՝ կապված լիզինգային մասնավոր ընկերությունների լիզինգային օպերատորների

[144] Գ.Վ.Դավթյան, Ն.Ռ.Տիգրանյան Լիզինգային ծառայության օգտագործման անհրաժեշտությունը ագրարային ոլորտում. "Ագրոգիտություն" N 3-4, 2009, էջ 103-104

ներգրավման հարցում: Որպես կանոն, մասնավոր ոլորտում առավել նվիրվածությամբ և պատասխանատվությամբ են վերաբերվում նախագծի ընտրության, գործընկերոջ վարքագծի ու համանման դրսևորումների հանդեպ: Իսկ պետության աջակցությունը կայանում է "խաղի կանոններ" ապահովել տնտեսվարող սուբյեկտների համար լիզինգային գույքի ձեռք բերման, փոխանցման և կիրառության ապարեզում:

"Ներդրումային գործունեության մասին" ՌԴ օրենքը, որի միջոցով կարգավորվում է լիզինգային հարաբերությունները Ռուսաստանում, բացահայտում է նպատակային ծրագրերի իրականացման հասկացությունը, ինչի տակ հասկացվում է պատվերների տեղադրման, գույքի մատակարարման, պետական նպատակային հատկացումների և պետական կարիքների բավարարմանն ուղղված գործարքների ամբողջություն: Այդ ծրագրերի իրականացման հիմնական պատասխանատուն պետության անունից հանդես եկող պատվիրատուն է, որը պատասխանատվություն է կրում ծրագրի ժամանակին կատարման և բյուջետային միջոցների նպատակային օգտագործման համար: Կառավարության կողմից պատվիրողի գործառույթների մեջ են մտնում գնումների իրականացման սակարկությունները, մրցույթների կազմակերպումը և անցկացումը, տնտեսական պայմանագրերի կնքումը, իրականացնողներին գույքի ընդունման և վճարման, աշխատանքների, ծառայությունների երաշխիքների տրամադրումը, նրանց կողմից պետական պայմանագրերի ֆինանսավորման իրականացումը և մի շարք այլ պարտականություններ, որոնք կարող են կրել մասնավոր բնույթ՝ կախված լիզինգի ձևից, ժամկետներից, տոկոսադրույքից և կիրառման տնտեսական նշանակությունից:

Ռուսաստանի Դաշնությունում, համաձայն ՌԴ "Լիզինգի մասին" օրենքի ֆինանսական լիզինգում օգտագործվող գույքի պահպանման ծախսումները հատուցում է լիզինգառուն, իսկ վարձակալության դեպքում՝ ընդհանուր կարգով, որտեղ պայմանագրի մյուս կողմը՝ վարձատուն է պարտավոր կատարել գույքի կապիտալ վերանորոգումը: Լիզինգառուի կողմից պայմանագրի խախտման

դեպքում վարձատուն իրավունք ունի պահանջել վնասների փոխհատուցում:

Ներկայումս մեր հանրապետությունում գործում է լիզինգի երկու նորմատիվ ձևակերպումներ.

ա) լիզինգը, որպես ձեռնարկատիրական գործունեության ձև;

բ) լիզինգը, որպես երկարաժամկետ վարձակալության պայմանագրի հատուկ ենթատեսակ;

Լիզինգը, որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակ, իրականացվում է շուկայական հարաբերությունների օրենքներին համապատասխան, ենթարկվելով շուկայական կառուցակարգի տարրերի պահանջներին: Բայց հայտնի է, որ շուկան ներկայումս չի կարող ամբողջությամբ կարգավորել տնտեսությունը, չի կարող ապահովել երկարատև զարգացում, եթե դրանք չեն երաշխավորված համապատասխան օրենսդրական նորմատիվ ակտերով: Լիզինգը, որպես զարգացող ձեռներեցության ձև պետք է ամրագրված լինի անհրաժեշտ իրավական միջավայրով: Լիզինգի համաշխարհային փորձի ուսումնասիրության ժամանակ բացահայտեցինք, որ լիզինգի բիզնեսն ավելի լայն զարգացում է ունեցել այն երկրներում, որտեղ գոյություն ունի լիզինգի վերաբերյալ օրենք և իրավական նորմատիվային ակտեր:

ՀՀ-ում լիզինգի զարգացմանը զգալիորեն խոչընդոտում է լիզինգի մասին օրենքի բացակայությունը, իսկ այդ բացը որոշակիորեն լրացվում է հետևյալ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով՝

- ✓ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք;
- ✓ ՀՀ օրենքը “Վարկային կազմակերպությունների մասին”;
- ✓ ՀՀ օրենքը “Սպառողական կրեդիտավորման մասին”;
- ✓ ՀՀ օրենքը “Փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին”;
- ✓ ՀՀ օրենքը “Բանկերի և բանկային գործունեության մասին”;
- ✓ ՀՀ օրենքը “Բաժնետիրական ընկերությունների մասին”;
- ✓ ՀՀ Կենտրոնական բանկի 13, 14 և 15 կանոնակարգերը և այլն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում լիզինգի հանդեպ գոյություն ունի մեծ պահանջարկ՝ որպես շահավետ ապրանք

սպառողների, բանկային և վարկային համակարգերի, ինչպես նաև ընդհանուր տնտեսական զարգացման տեսանկյունից: Սակայն լիզինգի գործունեության համար գոյություն ունեն էական խոչընդոտներ, որոնք հնարավորություն չեն տալիս լիզինգը կիրառել բուն նպատակի համար: Դա առաջին հերթին վերաբերվում է լիզինգային գործունեության օրենսդրական կարգավորմանը, որի մշակողը, իրականացնողը և վերահսկողն անմիջապես հանդիսանում է պետությունը:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով տրվում է լիզինգի ընդհանուր բնութագիրը, իսկ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտով (ՀՀ ՀՀՍ) որոշակի չափով կարգավորվում է լիզինգի գործունեությունը, այնուհանդերձ պետությունը համապատասխան պայմաններ չի ստեղծում լիզինգային ծառայությունների հետագա զարգացման համար:

Հանրապետությունում լիզինգային հարաբերությունները կարգավորող օրենքներն ու նորմատիվ ակտերը բացահայտում են մի շարք հիմնախնդիրներ, որոնք առաջանում են լիզինգային հարաբերությունների իրականացման ընթացքում: Լիզինգի պայմանագիրը կողմերի իրավունքները և պարտավորություններն ամրագրում է սարքավորումները վարձակալության ժամանակավոր կիրառության հանձնելու դեպքում: ՀՀ քաղաքացիական օրեսնգրքի 677 հոդվածում նշվում է, որ “Լիզինգի պայմանագիրը կնքված է համարվում կողմերի պայամանգրի բոլոր էական պայմանների շուրջ համաձայնության կայացման պահից: Պայամանգրի օրենսդրական սահմանումը ընդգծում է դրա հատուցելի բնույթը, ըստ որի վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց գույքը հանձնել վարձակալի տիրապետմանը օգտագործելու համար[145] ”:

Հայաստանում վարձակալության և լիզիզնգի պայմանագրերի միջև տարբերությունը հիմնականում արտահայտվում է պատասխանատվությունների և ռիսկերի փոխանցման հետ կապված հարցում: Վարձակալության պայմանագրում վարձատուն պատաս-խանատվություն է կրում վարձակալի հանդեպ՝ ժամանակին նրա տնօրինությանը գույքը չտրամադրելով, թերությունների և այլ

[145] Սուքիասյան Գ.Ա., Սուքիասյան Ն.Գ. Ֆինանսական իրավունք: Եր., 2007, էջ 504

խախտումների համար: Լիզինգի պայմանագրում օբյեկտին վերաբերող պայմանների խախտման համար պարտավորությունը կրում է սարքավորում արտադրողը: Տվյալ դեպքում օգտագործողի հանդեպ պատասխանատու է ոչ թե սարքավորման սեփականատերը, այլ դրա արտադրողը, որը չի հանդիսանում պայմանագրի կողմ:

Արտասահմանյան շատ պետություններում լիզինգի պայմանագրում գույքի պահպանման ռիսկն ընկնում է օգտագործողի վրա, իսկ վարձակալության պայմանագրում՝ բոլոր ռիսկերն ընկնում են սեփականատիրոջ վրա: ՀՀ-ում լիզինգային հարաբերությունները կարգավորող իրավական և նորմատիվ ակտերում հստակեցված չեն լիզինգատուի իրավասությունները լիզինգառուի հանդեպ այն դեպքում, երբ վերջինս դառնում է անվճարունակ: Միջազգային պրակտիկայում օգտագործվում են բանկային երաշխիքները կամ հանձնարարականները:

Լիզինգային հարաբերություններն ընդգրկում են լիզինգային գործարքի համալիրությունն ամբողջությամբ, քանզի այն լիզինգի պայմանագրից բացի կարող է ներգրավել նաև առքուվաճառքի, վարկային, ապահովագրության, գրավի, գույքի մատակարարման պայմանագրերը: Բացի այդ եթե հաշվի առնենք, որ ներդրումային ծրագրերն իրենց էությամբ բարդ են, ենթադրում են ֆինանսավորման , երաշխիքների տրամադրման, բանկերի ու ապահովագրական ընկերությունների մասնակցության յուրահատուկ մեխանիզմների մշակում, ապա առանց պետական միջամտության դրանք դժվար իրականացվելի են:

Այս իրավիճակում տեղական և օտարերկրյա կապիտալային ռեսուրսների ներգրավմամբ լիզինգային կազմակերպությունների ստեղծման վերաբերյալ որոշումների ընդունումը կարող է գնահատվել և պայմանավորվել մի շարք հանգամանքներով, որոնցից կարելի է առանձնացնել՝.

- ✓ գույքի ձեռք բերման ծրագրերի և նվազագույն ֆինանսական միջոցների առկայությունը;
- ✓ լիզինգային ընկերություններին տրվող երաշխիքները;
- ✓ հարկման արտոնությունների տրամադրումը՝ ազատումը ԱԱՀ-ից;

- ✓ շահութահարկի տոկոսադրույքի և մարժային սահմանների իջեցում;
- ✓ մաքսատուրքից և գույքահարկից ազատումը որոշակի ժամանակահատվածում և այլն:

ՀՀ Քաղաքացիական օրենգրքի 677-րդ հոդվածում ֆինանսական վարձակալության (լիզինգի) մասին օրենքին ֆինանսական վարձակալության պայմանգրի առանձին տեսակների յուրահատկությունների սահմանմանը հղումը իր մեջ անհրաժեշտ չափի հիմքեր չի կրում, քանի որ բացակայում է “Լիզինգի մասին” օրենքը:

Այս իրավիճակում հաշվի առնելով լիզինգի կիրառման համաշխարհային փորձը Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ✓ ընդունել լիզինգի մասին առանձին օրենք, իսկ մինչ այդ ՀՀ Քաղաքացիական օրենգրքում լիզինգի հետ առնչվող հոդվածները համապատասխանացնել լիզինգի միջազգային չափանիշներին;
- ✓ լիզինգային հարաբերություններում լիզինգառու իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները և պարտականությունները նույնացնել;
- ✓ հարկային արտանությունների սահմանման միջոցով խրախուսել ներդրումային տեսակի լիզինգային գործարքները;
- ✓ լիզինգային գործարքների վերաբերյալ իրազեկության աստիճանի բարձրացում և տեղեկատվության ընդլայնում;
- ✓ պետության կողմից ձեռնարկել միջոցառումներ ուղղված Հայաստանի անդամակցության միջազգային ֆինանսական լիզինգի կոնվենցիային:

Լիզինգի զարգացման արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել այն բազային պայմանները, որոնք անհրաժեշտեն տնտեսության մեջ լիզինգային ներդրումների գործընթացների զարգացման համար: Ըստ էության դրանք պետք է ապահովվեն պետության կողմից, քանզի դրանց մենաշնորհը պատկանում է միայն պետությանը և ոչ մի

տնտեսվարող սուբյեկտ կամ կառավարում իրականացնող կառույց իրավունք չունի զբաղվելու այդ հարցերով, մասնավորապես ապահովել՝

- ✓ իրավական հիմքը;
- ✓ նորմատիվային հիմքը;
- ✓ հարկային ռեժիմը;
- ✓ հաշվապահական հաշվառումը:[146]

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առանց իրավական բազայի լիզինգային ծառայութեոնների շուկան չի կարող արդյունավետորեն զարգանալ: Լիզինգի մասին օրենքը պետք է հստակորեն սահմանի լիզինգային գործարքի կառուցվածքը, մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Լիզինգառուի սնանկացման դեպքում օրենքը պետք է պաշտպանի լիզինգի առարկայի նկատմամբ լիզինգատուի սեփականության իրավունքները մյուս վարկատուների հայցապահանջներից:

Արտասահմանյան փորձը ցույց է տալիս նաև, որ լիզինգային ծառայությունների ոլորտի կայացման սկզբնական փուլում պետք է սահմանել "խաղի միայն նվազագույն կանոնները": Օրինակ, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է լիզինգային գործարքների արտոնագրի անհրաժեշտությունը և կանոնադրական կապիտալի նվազագույն 100մլն դրամի չափը: Լրացուցիչ նորմեր և իրավական ակտեր կարելի է "ներմուծել" դրազարգացմանը զուգահեռ:

Լիզինգի զարգացմանը զարգացած երկրներում զգալիորեն նպաստել են հարկային արտոնությունները, որոնցից կարելի է առանձնացնել արագացված ամորտիզացիան: Դա լիզինգատուին հնարավորություն է տալիս նվազեցնել հարկման բազան: Բացի այդ, արագացված ամորտիզացիայի շնորհիվ լիզինգառուն պայմանագրի վերջում սարքավորումը գնելիս վճարում է չնչին մնացորդային արժեք: Մի շարք երկրներում (Անգլիա, Գերմանիա, Չեխիա, Ճապոնիա և այլն) գործում է նաև ներդրումային զեղչ, որը տրամադրվում է կազմակերպություններին ներդրումների նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:

Նմանատիպ արտոնությունների տրամադրումը ձեռնատու է նաև պետության համար՝ հնարավորություն տալով լիզինգառու

[146] www.cfcrus.ru (Лизинг)

կազմակերպությունների ներկա ժամանակահատվածում նվազեցնել հարկման բազան, խնայված դրամական միջոցներն օգտագործել արտադրության հետագա ընդլայնման համար՝ մեծացնելով հարկման բազան: Այս մոտեցումն առավել ձեռնտու և կիրառելի է փոքր ու միջին ձեռներեցության համար, քանի որ թույլ է տալիս նորացնել սարքավորումները, զարգացնել արտադրությունը և թողարկել մրցունակ արտադրանք, իսկ դրանց միջոցով նաև մեծացնել բյուջեի հարկային մուտքերը:

Համաձայն ՀՀ ՀՀՍ 17-ի ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները վարձակալի հաշվեկշռում հաշվառում են որպես ակտիվների ձեռք բերում: Այս պարագայում նպատակահարմար է, որ ֆինանսական վարձակալությունը վարձակալի հաշվեկշռում ճանաչվի թե որպես ակտիվ, և թե որպես ապագա վարձավճարներ մուծելու պարտավորություն:[147] Վարձատուն պետք է հաշվապահական հաշվեկշռում ճանաչի ֆինանսական վարձակալության տրված ակտիվները և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտիժ՝ վարձակալության մեջ զուտ ներդրումների մեծությանը հավասար գումարի չափով:

Լիզինգի ժամանակ կարևորվում է ֆինանսական երաշխիքների ապահովումը, ինչն անմիջականորեն կախված է կոնկրետ գործարքի ընդհանուր առևտրային ռիսկի մեծությունից: Դրա համար էլ լիզինգային պայմանագրերի կնքման ժամանակ պետք է մեծ ուշադրություն հատկացվի լիզինգային գույքի ապահովագրության հարցին, որը բխում է լիզինգատուի շահերից: Ներկայումս Հայաստանում բացակայում է լիզինգառուի կողմից վարձավճարների ոչ պատշաճ վճարման ռիսկից ապահովագրման համակարգը: Այս հարցի կարգավորումը նույնպես պետք է կատարվի պետության կողմից, որը համապատասխան օրենքներով ու նորմատիվ ակտերով պետք է միջամտի և օրինական հիմքի վրա դնի այդ գործընթացը:

ՀՀ լիզինգային ծառայությունների շուկան իրենից ներկայացնում է երկարաժամկետ ռազմավարական հետաքրքրություն ինչպես հայրենական այնպես էլ արտասահմանյան

[147] ՀՀ ՀՀ Ս 17

ընկերությունների համար: Սակայն դրա զարգացմանը խոչընդոտում են մի շարք սահմանափակումներ, որոնց լուծումը պետք է իրականացվի ինստիտուցիոնալ ճանապարհով, պետության անմիջական մասնակցությամբ և վերահսկողության ներքո:

Մեր հանրապետությունում լիզինգի զարգացման հիմնական խնդիրներ կարելի է ներկայացնել.

ա) լիզինգային հարաբերությունները կարգավորող ամբողջական իրավական համակարգի բացակայությունը;

բ) հարկային և մաքսային արտոնությունների ոչ բավարար կիրառությունը;

գ) սկզբնական կապիտալի սակավությունը և լիզինգային կազմակերպությունների ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը;

դ) պետական վարկային ռեսուսների բարձր գինը;

ե) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների կողմից լիզինգի էության և դրա արժանիքների ոչ բավարար իմացությունը;

զ) որակյալ և փորձառու կադրերի բացակայությունը;

է) կապիտալի երկրորդային շուկայի անմխիթար վիճակը կամ գրեթե բացակայությունը:

Լիզինգի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում բախվում է դրամական միջոցների հավաքագրման ու կենտրոնացման խնդրի հետ, որոնք կարող են աղբյուր հանդիսանալ լիզինգային գույքի գնման համար: Արտասահմանյան փորձը ցույց է տալիս, որ լիզինգային գործարքները նպատակահարմար է իրականացնել բանկերի միջոցով: Հեռանկարում նպատակահարմար է ստեղծել միջբանկային լիզինգային ընկերություններ, որոնք հնարավորություն կտան մեծածավալ ծրագրերի իրականացման համար օպերատիվ ձևով կենտրոնացնել ֆինանսական կապիտալը, նվազեցնել ռիսկի աստիճանը, արդյունավետ համագործակցել օտարերկրյա գործընկերների հետ, կիրառել լիզինգային գործարքների տարբեր ձևեր:

Այնուհանդերձ, պետք ընդունել, որ ՀՀ-ում, չնայած նշված բացթողումներին և խոչընդոտներին, լիզինգային

հարաբերությունները կայացել ու աստիճանաբար զարգանում են՝ որպես հիմնական կապիտալի ձեռք բերման առաջավոր ձևի, լիզինգային ծառայությունների նկատմամբ պահանջարկը օրեցօր մեծանում է գերազանցելով լիզինգային շուկայում առաջարկի ծավալը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հետազոտության շրջանակներում լիզինգի տեսության և պրակտիկայի ուսումնասիրությունը, փաստական տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարել մի շարք եզրակացություններ և դրանցից բխող առաջարկություններ.

1. Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար պահանջում են ոչ ավանդական տնտեսական մեխանիզմների ներդրում, որոնցից կարևորվում է, հատկապես աշխարհում իր կենսունակությունն ապացուցած լիզինգը: Բազմաթիվ երկրներում լիզինգը դարձել է ներդրումային քաղաքականության իրականացման կարևորագույն բաղկացուցիչ, որի գործառնությունների աճի տեմպերը զգալիորեն գերազանցում են ՀՆԱ-ի աճի տեմպերին: Առաջատար երկրներում արտադրության մեջ կատարված ներդրումների ընդհանուր ծավալի մեջ լիզինգի բաժինը կազմում է շուրջ 25-30 տոկոս:

Լիզինգն արդյունավետ տնտեսական գործիք է, որը կարող է ներգրավել ֆինանսական ռեսուրսներ, իրականացնել ներդրումներ, նպաստել արտադրության վերելքին, ձեռնարկություններում և տնտեսություններում մեծացնել կապիտալի չափերը, աջակցել փոքր ու միջին ձեռներեցության զարգացմանը, առևտրային բանկերին ապահովել կայուն եկամուտ և ընդհանրապես առողջացնելու տնտեսությունը ամբողջ երկրի մասշտաբով: Լիզինգը հնարավորություն է տալիս, սահմանափակ միջոցների շրջանակներում, ընդլայնել բիզնեսը, զարգացնել տնտեսությունը, կրճատել շրջանառու միջոցների շրջանառելիության տևողությունը և արագացնել պատրաստի արտադրանքի իրացման գործընթացը:

2. Լիզինգը ձեռներեցության առանձնահատուկ ձև է, որն իր մեջ ներառում է վարձակալական, ներդրումային և առևտրային կազմակերպչա-տնտեսական հարաբերություններ: Դրանք համադրվում և ինտեգրվում են մեկ միասնական համալիրի մեջ՝

ձևավորվելով ձեռներեցության նոր կազմակերպաիրավական համակարգ, ներկայացնելով լիզինգային գործառույթների ֆինանսական ու գույքային վարձակալության էությունը, ներգրավելով մասնակիցների ավելի մեծ քանակ:

Լիզինգն ունի մի շարք առավելություններ ֆինանսավարկային ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ, որը դրսևորվում է հետևյալ գործառույթներով.՝

- ✓ ներդրումային՝ ձեռնարկությունները լիզինգի միջոցով ներգրավում են հիմնական միջոցներ;
- ✓ ֆինանսական՝ բիզնես սկսելու կամ ընդլայնելու դեպքում սեփական կապիտալի անբավարարության պայմաններում ազատում է անհրաժեշտ միջոցներ ամբողջ արժեքի միաժամանակյա վճարումից, հնարավորություն տալով այդ միջոցները երկարաժամկետ վարձակալությամբ օգտագործել;
- ✓ արտադրական՝ արտադրական բնույթի հիմնախնդիրների գործառնական լուծումն է (բարոյապես մաշվող սարքավորումների ժամանակավոր օգտագործումը և վերադարձումը);
- ✓ սպառման՝ գնորդների շրջանակի ընդլայնում և սպառումն նոր շուկաների նվաճում, հատկապես այն սպառողներին, որոնք միանգամից չեն կարող ձեռք բերել իրենց արտադրանքը;
- ✓ հարկային՝ լիզինգով վերցրած գույքը կարող է չգրանցվել օգտագործողի հաշվեկշռում, հետևաբար այդ մասով չենթարկվել հարկման;
- ✓ ամորտիզացիոն՝ կրճատում է նոր տեխնիկայի յուրացման ժամանակահատվածը, բացի այդ գույքը կամ սարքավուրումը հնարավոր է ձեռք բերել առանց կանխավճարի;
- ✓ կարգավորող՝ ապահովում է ազգային տնտեսության տարբեր ոլորտների համամասնական զարգացումը, վերազինելով և շահութաբեր և վնասաբեր արտադրությունները;

- ✓ ձեռնարկատիրական՝ հնարավորություն է տալիս օգտագործել առաջադեմ տեխնիկա և սարքավորումներ, խթանելով նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և ձեռներեցության զարգացմանը:

Բացի նշվածներից լիզինգը նպաստում է միջազգային տնտեսական համագործակցության զարգացմանը և միջպետական տնտեսական կապերի ընդլայնմանը:

3. Լիզինգային ծառայությունների շուկան իրենից ներկայացնում է երկարաժամկետ ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող գործունեություն Հայաստանի Հանրապետության համար: Սակայն այս շուկայի զարգացմանը խոչընդոտում են մի շարք հանգամանքներ, որոնցից կարելի է առանձնացնել.
   - ✓ լիզինգային հարաբերությունները կարգավորող ամբողջական իրավական համակարգի բացակայությունը;
   - ✓ հարկային և մաքսային արտոնությունների չկիրառելը
   - ✓ ձեռներեցության զարգացման համար սկզբնական կապիտալի անբավարարության և լիզինգային ընկերությունների ֆինանասական միջոցների սղությունը;
   - ✓ լիզինգի էության, նրա արժանիքների մասին տեղեկատվության ապահովման համակարգի բացակայությունը;
   - ✓ լիզինգային ընկերությունների համար անհրաժեշտ որակյալ կադրերի և մասնագետների բացակայությունը;
   - ✓ կապիտալի և սարքավորումների երկրորդային շուկայի բացակայությունը;
   - ✓ վարկային ռեսուրսների բարձր տոկոսադրույքը և այլն:
4. Լիզինգային գործունեության շուկան հանդիսանում է շուկայական համակարգի ամենադինամիկ զարգացող հատվածներից մեկը, ինչի պատճառով էլ համաշխարհային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դրանց արդյունքներն օգտագործել ՀՀ-ում: Աշխարհի բոլոր

զարգացած երկրներում լիզինգը բավականաչափ ձևավորված տնտեսական գործիք է, որը սակայն յուրաքանչյուր երկրում ունի իր կիրառության առանձնահատկությունները, մեխանիզմը և մոտեցումները: Այսպես, Եվրոպայում տարածված է անձնական և արտադրական նպատակներով մեքենաների լիզինգը՝ կապված մեքենաշինական ֆիրմաների թողարկած արտադրանքի իրացման բարդությունների հետ:

Սակայն Հայաստանի համար առավել հարկավոր և ընդունելի մոտեցումը ԱՊՀ երկրների և մասնավորապես ՌԴ-ի փորձի ուսումնասիրությունն է, որի հետ մեր հանրապետությունը կապված է բազմաթիվ տնտեսական, քաղաքական, պատմական և այլ գործոններով: Լիզինգային ծառայությունների ռուսաստանյան շուկայի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն դեռևս գտնվում է կայացման փուլում և դրան խոչընդոտում են.՝

- ✓ լիզինգային գործարքներում առկա առևտրային ռիսկերի ապահովագրման համակարգի փաստացի բացակայությունը;
- ✓ սարքավորումների երկրորդային շուկայի թերզարգացվածությունը խանգարում է լիզինգի առարկան որպես երաշխիքային գրավ ընդունելուն;
- ✓ դատական պրակտիկան խոչընդոտում է լիզինգառուի կողմից լիզինգավճարների չիրականացման դեպքում լիզինգի առարկայի ժամանակին բռնագրավմանը և այլն:

Այս պարագայում մեր հանրապետության համար շատ է կարևորվում ժամանակին արձագանքել շուկայում նկատվող փոփոխություններին, լիզինգային, գործարքների զարգացման համար ապահովել բոլոր պայմանները, իսկ գործադիր մարմինների կողմից նպաստել լիզինգի հետ առնչվող միջոցառումների իրականացմանը:

5. ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների գերակշիռ մասը իրականում չի կատարում գյուղտեխնիկայի նորոգում պահեստամասերի բարձր գների և ֆինանսական միջոցների քրոնիկ սղության պատճառով: Բարձրացել է առկա տեխնիկական միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանը (կազմում է ավելի քան 93 % մաշվածություն), ինչը

հանգեցնում է շահագործման ծախսերի, գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների և դրանց սակագների ավելացմանը:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ամենաիրատեսական ուղին համարվում է լիզինգի կիրառությունը, որը գյուղատնտեսության ոլորտում կբերի՝

- ✓ գյուղատնտեսական մեքենաների և գույքի վաճառքի ծավալների մեծացմանը;
- ✓ գյուղատնտեսական սարքավորումների հանդեպ պահանջարկի ընդլայնմանը ֆերմերային տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների կողմից;
- ✓ գյուղտեխնիկայի մատակարարների, վարձակալների և լիզինգատուների շահերի օպտիմալ զուգակցմանը:

Գյուղատնտեսությունում լիզինգային գործարքների հաջողությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ✓ պետության կողմից գյուղատնտեսությանը տրված արտոնություններով,
- ✓ լիզինգային վճարի ներառումը գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի մեջ;
- ✓ ֆյուչերսային գործարքների օգտագործումը գյուղատնտեսական արատադրանքի իրացման գործընթացում;
- ✓ արտադրության տեխնիկահագեցվածության աճով և սարքավորումների օգտագործման շրջանառելիության բարձրացմամբ և այլն:

6. Ուսումնասիրելով համաշխարհային լիզինգի առաջավոր փորձը (ԱՄՆ, Եվրոպայի զարգացած երկրներ, Ճապոնիա, ԱՊՀ երկրներից Ռուսաստան, Բելոռուսիա) պարզվում է, որ գրեթե բոլոր երկրներում պետությունը խթանում է լիզինգային գործունեությունը՝ դրանում տեսնելով ռազմավարական նպատակներին հասնելու առաջավոր մեխանիզմ: Հայաստանի լիզինգային կազմակերպություններում տրամադրվում է հիմնականում կարճաժամկետ և միջնաժամկետ լիզինգ: Հայտնի է, որ երկարաժամկետ լիզինգի ռիսկի աստիճանը զգալիորեն բարձր է, ինչի համար էլ լիզինգային կազմակերպությունները ձգտում են կարճաժամկետ և

միջնաժամկետ լիզինգներին: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում հիմնականում կնքվում են ոչ երկարաժամկետ լիզինգային պայմանագրեր, որոնք գյուղացիական տնտեսություններին հնարավորություն չեն տալիս իրենց նպատակին հասնելու համար կիրառել լիզինգ: Երկարաժամկետ լիզինգը կբերի ՀՀ գյուղատնտեսության ռազմավարական խնդիրների լուծմանը: Այս պարագայում ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի լիզինգի զարգացման և խթանման քաղաքականություն՝ երկարաժամկետ լիզինգային պայմանագրեր երաշխավորել ավելի ցածր տոկոսադրույքով, որը կհանդիսանա լիզինգի պայմանգրի լրացուցիչ երաշխիք և ապահովվածություն:

7. Գյուղատնտեսության մեջ լիզինգային գործունեության ծավալումը պետք է հանդիսանա պետության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Ներկայումս ագրարային ոլորտն ավելի շատ կարիք ունի ներդրումների, քան ազգային տնտեսության մյուս բնագավառները: Մեր կարծիքով հանրապետության գյուղատնտեսության ոլորտում լիզինգային գործունեության խթանման համար անհրաժեշտ է նաև.՝

- ✓ լիզիգային ծառայությունների դիմաց կիրառել բնեղենով փոխհատուցում: Դա ձեռնտու է ինչպես լիզինգատուին, այնպես էլ լիզինգառուին (գյուղացուն) և նույնիսկ պետության համար: Նման ֆյուչերսային գործարքները հնարավորություն կտան կազմակերպել գյուղատնտեսական արտադրություն ֆինանսական միջոցների սղության դեպքում, իսկ տեխնիկայի վարձակալման վճարումները՝ բերքահավաքից հետո: Այս մեթոդը կիրառվում է Ռուսաստանի Դաշնությունում;
- ✓ կիրառել կոոպերացիայի հենքով լիզինգ, ինչը թույլ կտա ոչ բարձր շահութաբերությամբ աշխատող կազմակերպություններին և տնտեսություններին, միավորել իրենց նյութական և ֆինանսական միջոցները, ձեռք բերել լիզինգի միջոցով տեխնիկա և սարքավորումներ, դրա միջոցով լուծել ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական հարցեր;

- ✓ քանի որ Հայաստանի գյուղական բնակավայրերը համեմատաբար իրար մոտ են տեղաբաշխված, նույնիսկ տարբեր տարածաշրջանների ու մարզերի կտրվածքով, ապա նպատակահարմար կլինի ստեղծել մարզային և նույնիսկ միջ-մարզային միավորված կազմակերպչա-իրավական հիմքի վրա լիզինգային միությունների, ընկերությունների, բաժնետիրական ընկերությունների տեսքով: Դա հնարավորություն կտա համակցել արտադրության բոլոր մասնակիցների շահերը՝ ապահովել նրանց համագործակցության բարձր արդյունք: Միջտարածաշրջանային և միջմարզային միավորումներ ստեղծելու դեպքում, լիզինգային գործարքի ժամանակ տարածաշրջանի կամ մարզի ղեկավար մարմինները կարող են երաշխիք հանդիսանալ, ինչպես դա արվում է գույքը լիզինգով տրամադրելու դեպքում:

8. Լիզինգի իրականացման փորձերը ՀՀ-ում տեղի է ունենում տեխնիկական և տեխնոլոգիական ցածր ակտիվության պայմաններում, ինչի համար անհրաժեշտ է լիզինգային ծառայությունների ոլորտն ընդլայնել ոչ միայն հայրենական արտադրությունը խթանելու, այլև սարքավորումների միջազգային լիզինգը ներգրավելու միջոցով:

Դրա վառ օրինակ կարող է ծառայել ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի Մարքետինգի Աջակցության ծրագիրը (USDA) Հայաստանին ցուցաբերված ծրագրի շրջանակներում գործունեություն էր ծավալում 6 ուղղություններով:

- ✓ գյուղատնտեսության ռազմավարական վարկավորում;
- ✓ ագրոլիզինգ;
- ✓ վարկային միությունների ֆինանսավորում;
- ✓ նպատակային վարկերի տեղաբաշխում;
- ✓ փոքր ձեռնարկությունների օժանդակում;
- ✓ նպատակային դրամաշնորհների տրամադրում:

Նշված ծրագրի ագրոլիզինգի ուղղությունը գյուղատնտեսության ոլորտում լիզինգային գործարքների

ֆինանսավորումն է, որն իրականացվում է “Ագրոլիզինգ” մասնավոր կազմակերպության միջոցով և հիմնականում տրամադրվում է գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկություններին սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար:

Ծուկայական հարաբերությունների արդի պայմաններում, երբ առևտրային բանկերը դժկամությամբ են տրամադրում գյուղացիական տնտեսություններին վարկեր, կարևորություն է ստանում օտարերկրյա ներդրումների կիրառությունը լիզինգային գործարքների զարգացման միջոցով:

9. Լիզինգը նպաստում է ներդրումների ծավալների մեծացմանը, խթանում հայրենական արտադրության զարգացմանը, տնտեսության առաջատար ճյուղերում և ոլորտներում կապիտալի ավելացմանը, ձեռներեցության զարգացմանը, ֆինանսական կազմակերպությունների համար կայուն եկամտաբեր գործունեության ապահովմանը:

Լիզինգը բնութագրվում է որպես ազատ միջոցների ներդրում, որի դեպքում լիզինգատուն պարտավորվում է պայմանագրով ձեռք բերել սարքավորում, գույք և տրամադրել լիզինգատուին: Ժամանակավորապես օգտագործման դիմաց վճարելով՝ հետագայում ձեռք բերման իրավունքով: Լիզինգային գործարքն իրենից ներկայացնում է լիզինգատուի, լիզինգառուի և լիզինգի գույքի վաճառողի միջև կնքվող պայմանագրերի ամբողջություն:

Հայաստանի Հանրապետությունում լիզինգի հետագա զարգացմանը կարող է նպաստել ԱՊՀ երկրներում “Լիզինգային գործունեության ընդլայնման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կազմակերպչական պայմանագրի ստեղծման մասին” համաձայնագիրը, որը ստորագրվել է 2005 թվականի հոկտեմբերի 12-ին Մոսկվայում: Համաձայնագրով սահմանվող պայմանները, նորմերը և կանոնները գործում են մասնակից երկրների համար և կիրառվում են միջպետական լիզինգի պայմանագրերի իրականացման դեպքում: ԱՊՀ միջպետական լիզինգը կարող է հանրապետության համար դառնալ կամուրջ ներքին լիզինգից միջազգային լիզինգային հարաբերություններին անցնելու համար:

10.ՀՀ-ում լիզինգային հարաբերությունների զարգացումը խիստ կարիք ունի պետական աջակցության, ինչը դրսևորվում է պետության կողմից վարվող քաղաքականությամբ՝ լիզինգի շուկայի և նրա մասնակիցների միջև փոխհարաբերությունների համակարգի ձևավորման սկզբունքներով: Այստեղ պետությունը պետք է իրականացնի՝

ա) կազմակերպչական միջոցառումներ, որոնք վերաբերվում են լիզինգային ծառայությունների զարգացման սկզբունքների ձևավորման հարցերին,

բ) գործառույթային միջոցառումներ, որոնք առնչվում են ֆինանսական շուկայի կազմում լիզինգային ծառայությունների սեգմենտի սկզբունքների ձևավորմանը:

Մեր կարծիքով լիզինգային գործունեությունը խթանելու համար պետությունը պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները:

- ✓ ապահովել աջակցություն լիզինգի զարգացման համար ազգային տնտեսության որոշիչ ճյուղերում, հատկապես ագրարային ոլորտում, հաշի առնելով գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները, նրա դերը երկրի բնակչությանը պարենամթերքով ապահովելու հարցում, մասնավոր բիզնեսի կողմից այդ ոլորտում կապիտալ ներդրումների թույլ շահագրգռվածությանը և այլն,
- ✓ կատարելագործել օրենսդրական դաշտը և նորմատիվ իրավական հարաբերությունների մասնակիցների միջև,
- ✓ մշակել ճկուն հաշվառման և հարկային համակարգ, ինչը կարող է խթանել լիզինգային գործունեությունը և ներդրումների ֆինանսավորումը,
- ✓ տրամադրել պետական երաշխիքներ՝ տնտեսական և սոցիալական առաջնային նշանակություն ունեցող գործարքների, ինչպես նաև տնտեսության առանձին ճյուղերի զարգացման համար (արտադրության միջոցների և նոր տեխնիկայի արտադրության, գյուղատնտեսության և այլն),
- ✓ պետական միջոցների հաշվին ստեղծել լիզինգային գործունեության աջակցող հիմնադրամներ՝ կադրերի

պատրաստում, խորհրդատվության իրականացում, լիզինգային ընկերությունների ստեղծում և այլն:

11. Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության կարգավորման հարցում պետական միջամտությունն ուղղված է արտադրության զարգացմանը՝ բնակչության սոցիալական պաշտպանության մեխանիզմներ կիրառելու, ձեռնարկատիրական գործունեության ծավալման նորմալ պայմաններ ստեղծելու, ագրարային ոլորտում գյուղացիական տնտեսությունների առաջընթացին նպաստելու, զբաղվածության մակարդակը բարձրացնելու և մի շարք միջոցառումների իրականացման միջոցով:

Մեր կարծիքով, այս համատեքստում ՀՀ ագրարային ոլորտում լիզինգային ծառայությունների շուկայի հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել պետական միջամտության մոտեցումները՝

- ✓ պետության կողմից երաշխիքներ տրամադրել լիզինգային ծառայություններ իրականացնելու;
- ✓ լիզինգային հարաբերությունների մասնակիցներին իրավունք տալ ինքնուրույն սահմանել արագացված ամորտիզացիոն նորմաները, կուտակել ամորտիզացիոն գումարները և դրանք ներդնել հետագա տնտեսական գործունեության մեջ;
- ✓ ելնելով լիզինգային գործունեության տնտեսական նշանակությունից լիզինգային կազմակերպություններին ազատել (1-3 տարի ժամկետով) հարկերից, իսկ լիզինգառուներին տրամադրել արտոնություններ շահութահարկի գծով;
- ✓ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին ֆինանսական լիզինգի գործարքների իրականացման համար երկարաժամկետվարկ տրամադրելիս ազատել շահութահարկից;
- ✓ լիզինգային հարաբերությունների մասնակիցների իրավական ու տնտեսական շահերը պաշտպանելու նպատակով ձևավորել և կատարելագործել նորմատիվ-իրավական դաշտը, ձևավորել մրցակցային առողջ միջավայր, թույլ չտալ մենաշնորհային դրսևորումներ շուկայի այդ հատվածում:

12. Լիզինգի միջազգային փորձը վկայում է, որ լիզինգային բիզնեսն առավել զարգացում է ունենում այն երկրներում, որոնցում առկա են լիզինգի վերաբերյալ օրենք և իրավական-նորմատիվային դաշտ:

ՀՀ-ում լիզինգի գործունեությունը խոչընդոտում է լիզինգի մասին օրենքի բացակայությունը: Ներկայումս այդ բացը որոշակիորեն լրացվում է ՀՀ հետևյալ օրենքներով և նորմատիվ ակտերով.

- ✓ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք;
- ✓ ՀՀ օրենքը "Վարկային կազմակերպությունների մասին";
- ✓ ՀՀ օրենքը "Բանկերի և բանկային գործունեության մասին";
- ✓ ՀՀ օրենքը "Բաժնետիրական ընկերությունների մասին";
- ✓ ՀՀ Կենտրոնական Բանկի 13, 14 և 15 կանոնակարգերը և այլն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով տրվում է լիզինգի ընդհանուր բնութագիրը, իսկ ՀՀ ՀՀՍ որոշակի չափով կարգավորում է լիզինգի գործունեությունը, սակայն պետությունը համապատասխան պայմաններ չի ստեղծում լիզինգային ծառայությունների հետագա զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ✓ ընդունել լիզինգի վերաբերյալ առանձին օրենք, իսկ մինչ դրա ընդունումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լիզինգի հետ առնչվող հոդվածները համապատասխանեցնել լիզինգի միջազգային չափանիշներին;
- ✓ լիզինգային հարաբերություններում նույնացնել լիզինգառու իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները
- ✓ հարկային արտոնությունների սահմանմամբ խթանել ներդրումային լիզինգային գործարքները;
- ✓ բարձարցնել լիզինգային գործարքների վերաբերյալ իրազեկության աստիճանը;
- ✓ ձեռնարկել միջոցառումներ Հայաստանի անդամակցությունը Միջազգային ֆինանսական լիզինգի կոնվենցիայի, ինչը կնպաստի ՀՀ-ում Միջազգային լիզինգային հարաբերությունների ընդլայնմանը:

13. Չնայած լիզինգի արդյունավետությունը հաստատված է ամուրեք, այնուամենայնիվ ՀՀ-ում այն դեռևս չափազանց դանդաղ է ձևավորվում , որի հիմնական պատճառներից են օրենսդրական դաշտի անկատարությունը, տեղեկատվության բացակայությունը և արտասահմանյան փորձի ուսումնասիրության անբավարար վիճակը:

Ներկա պայմաններում կարևորագույն խնդիր է համարվում հանրապետությունում լիզինգային գործունեության ծավալման բարենպաստ միջավայրի ձևավորումը, ինչը կհանգեցնի լիզինգային ընկերությունների ավելացմանը, դրանց գործունեության շրջանակների ընդլայնմանը, տեղական շուկան արտասահմանյան լիզինգային ընկերությունների ներգրավմանը և այլն:

Թեև Հայաստանի Հանրապետության կողմից որոշակի միջոցառումներ են, իրականացվում միջազգային և միջպետական լիզինգային հարաբերությունների զարգացման ու խորացման ուղղությամբ, այնուհանդերձ ՀՀ կառավարության կողմից իրականացվող քայլերը չի կարելի համարել բավարար: Մասնավորապես, հարցը վերաբերվում է ԱՊՀ շրջանակներում լիզինգային հարաբերություններին, հատկապես ՌԴ-ի և Բելոռուսի լիզինգային կազմակերպությունների հետ: Պետք է նշել, որ այստեղ որոշակի դրական շարժ նկատվում է: Այսպես, 2012 թվականի հունվարին ՀՀ կառավարությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պայմանավորվածություն են ձեռք բերել "Ռոսսելխոզբանկի" հետ ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա լիզինգային տարբերակով, իսկ Բելոռուսական "Պրոմագրոլիզինգ" ընկերությունն արդեն այս տարի կիրականացնի գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների մատակարարում՝ միաժամանակ կատարելով նրանց սպասարկումը և հետագա վերանորոգումը: Որպեսզի այդ գործարքները չկրեն մեկանգամյա բնույթ անհրաժեշտ է կնքել դրանց հետկառավարության մակարդակներով պայմանագրեր հինգ տարի և ավելի ժամկետով, հստակեցնելով կողմերի պարտականություններն ու իրավունքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պաշտոնական հրապարակումներ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 հատուկ թողարկում, 05.12.2005
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված ՀՀ ԱԺ կողմից 1988 թ. մայիսի 5-ին, 2003 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կատարված փոփոխություններով և լրացումներով, 431 էջ
3. ՌԴ քաղաքացիական օրենսգիրք, բաժին IV, գլուխ 36
4. "Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք" պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ "Տիգրան Մեծ" հրատ., 2007 թ., 295
5. "Օտարերկրյա ներդրումների մասին" ՀՀ օրենք, (ՀՀ ԳԽՏ 14(1066).31/7 1994 (Ն 1093-1 ՆՕ-115)
6. "Վարկային կազմակերպությունների մասին" ՀՀ օրենսգիրք (ընդունված ՀՀ ԱԺ կողմից 2002 թ., մայիսի 29-ին)
7. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 6, Ֆինանսական վարձակալություն (լիզինգ, էջ 225-227, ՀՀ ՊՏ N17 (50), 1998)
8. Միջազգային ֆինանասական լիզինգի մասին UNIDROIT համաձայնագիր (կնքված Օտտավա քաղաքում, 28.05.1988)
9. ԱՊՀ երկրների միջև կնքված Տնտեսական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների միջպետական լիզինգի մասին համաձայնագիր՝ հաստատված ՀՀ կառավարության 2002թ. մարտի 9-ի նիստում
10. "Ավելացված արժեքի հարկի մասին" ՀՀ օրենք, 15 հոդված, ՀՀ ՊՏ, պաշտոնական տեղեկատվություն, Երևան, 2005, էջ 41-42
11. "Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները" պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ "Տիգրան Մեծ" հրատ., 2007 թ., 295 էջ
12. "Վարկային կազմակերպությունների մասին" ՀՀ օրենք, ընդունված ՀՀ ԱԺ կողմից 2002 թ. մայիսի 29-ին
13. "Օտարերկրյա ներդրումների մասին" ՀՀ օրենք, (ՀՀ ԳԽՏ 14 (1066) 31/7/1994 (Ն1093-1. ՀՕ-115)
14. ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 14.04.2004թ. N 682-Ն որոշում

15. ՀՀ օրենքը “Փոքր և միջին ձեռնարկատիրական աջակցության” մասին: Միջպետական լիզինգի մասին կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ ԱԺ 2000թ. հոկտեմբերի 11-ին Ն-116-2 որոշում ՀՀ ՊՏ 123 31/10.00 0116
16. ՀՀՀՀ Ս17 “Վարձակալության” ստանդարտ

2. Տեղեկագրեր և պաշտոնական հրապարակումներ

1. ՀՀ Կենտրոնական բանկի տեղեկագիր “ՀՀ ԿԲ” հրատ. սեպտեմբեր 2008, 260 էջ
2. Ակբա Կրեդիտ Ագրիկոլ ՓԲԸ-ի տարեկան հաշվետվություն, 2008թ., 2009., 2010 թ.
3. “Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ տարեկան հաշվետվություն, 2008թ., 2009., 2010 թ.
4. “Յունիլիզինգ” վարկային կազմակերպություն ՓԲԸ կանոնադրություն 2008թ.
5. “Արդյունաբերություն” ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2004
6. Գյուղատնտեսության նախարարության տվյալներ
7. “Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մասին” ՀՀ Կառավարության 2008 թ. որոշում
8. ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (վերանայված տարբերակ): Հաստատված ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի N 1826-Ն որոշմամբ
9. ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագիր (2007-2015թթ.). Եր., 2007
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007
11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008
12. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010
13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014
14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015
15. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016
16. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-դեկտեմբեր

17. Հայաստանի հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2005-2009, Եր. 2010
18. Հայաստանի հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, Եր. 2015
19. ՀՀ ԱՎԾ "Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում", 2006-2010. Եր., 2011
20. "Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում", 2011-2015. Եր., 2016
21. "Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության մասին 2006 թ. հունվարի 1-ի դրությամբ" ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2007
22. Պարենային ապահովությունն և աղքատությունը, 2007 թ հունվար-դեկտեմբեր, Եր., 2008
23. Армения в цифрах. Краткий статистический сборник. Госуправление по статистике, государственному регистру и анализу РА. Ереван, 1992
24. "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 24 հունվար 2012, ՀՀ Կառավարության տեղեկատվություն
25. "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթ, 25 հունվար 2012, ՀՀ Կառավարության տեղեկատվություն
26. "Սուր անկյուն" վերլուծական ծրագիր: "Արմենիա" հեռուսահաղորդում, 30 մարտի 2014 թ.
27. Գյուղատնտեսական հանրագիտարան. ՀՀ ԳԱԱ - Եր., Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1096 էջ
28. Հայաստանի Հանրապետության սոցիա-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբեր

3. Մասնագիտական գրականություն

1. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը: Եր.: "Լիմուշ", 2010, 238 էջ
2. Բանկային գործ Բ.Ասատրյանի խմբ. Սարվարդ հրատ. 2004, 720 էջ:
3. Բոստանջյան Վ., Մելիքյան Ա. Գործարար միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները

Հայաստանում//Գիտաժողովի նյութեր Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ. Եր.: 2007, էջ 478-483
4. Գասպարյան Հ. Լիզինգային հարաբերությունների էությունը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում
5. Գասպարյան Հ. Ներդրումային գործունեության մեջ լիզինգի զարգացման հիմնախնդիրները: Ատենախոսություն, 2006, 135 էջ
6. Դավթյան Գ., Տիգրանյան Ն., Լիզինգային ծառայության օգտագործման անհրաժեշտությունը ագրարային ոլորտում "Ագրոգիտություն", N3-4, 2009, էջ 101-104
7. Դենիարդ Բ. Լոբերո Արիզոնայի նահանգային համալսարան "Հանրային կազմակերպության տնտեսություններ": Եր., "Անտարես", 2006
8. Ղազարյան Ս., Դավթյան Գ. Գյուղատնտեսության զարգացման մի քանի հիմնահարցեր և դրանց իրականացման ուղիները: ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվան տնտեսագիտական ինստիտուտի գիտաժողովի նյութեր. 2009, էջ 376-382
9. Ղազարյան Է.Ս. ՀՀ ագրարային տնտեսագիտության դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում: Եր., "Հայ ագիտակ", 2003, 184 էջ
10. Ղարիբյան Ա. Ինվեստիցիոն կատեգորիայի մի քանի առանձնահատկությունների մասին//Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում: Թիվ 4, 2004, էջ 154-159
11. Եզեկյան Ա., Էֆենդյան Պ. Հողային կադաստր. Եր., ՀՊԱՀ, 2008 284 էջ
12. Հակոբյան Ա.Ա. Ֆինանսական վարձակալություն: Հեղինակային հրատ. Եր., 2001 256 էջ
13. Սուվարյան Յու.Մ. "Ռազմավարական կառավարում" մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը/ Երևան, Տնտեսագետ, 1996, 152 էջ
14. Սուքիասյան Գ.Ա., Սուքիասյան Ն.Գ. Ֆինանսական իրավունք/Երևան, 2007, 504 էջ
15. Լիզինգը որպես սեփականության իրավունքի օտարման արդյունավետ ձև և դրա զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետության: Ֆինանսներ և էկոնոմիկա, - N 8-9, 2004

16. Կոմերցիայի հիմունքներ Ս.Բուլանիկայնի խմբ./"Տնտեսագետ", Երևան, 2003, 334 էջ
17. Կիրակոսյան Գ.,Ղուշչյան Հ., Տիգրանյան Ի. "Տնտեսագիտական բացատրական բառարան"/"Տնտեսագետ", Երևան, 1999, 188 էջ
18. Տնտեսագիտության տեսություն (սեմինար պարապմունքների ձեռնարկ): Եր., ՀՊԱՀ, 2008, 340 էջ
19. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ) Գ.Կիրակոսյանի և Ի. Խլղաթյանի խմբ./Երևան, "Տնտեսագետ", 2009, 752 էջ
20. Մելքումյան Մ. "Բիզնեսի էկոնամիկա"/"Տնտեսագետ", Երևան, 1999, 211 էջ
21. Մարտիրոսյան Ա. Ֆինանսական լիզինգի ներդրման տնտես-իրավական ասպեկտը, Երևան, 2006
22. Մարտիրոսյան Ա.(ատենախոսություն) Լիզինգը և դրա ներդրման հարցերը անցումային տնտեսությունում (ՀՀ օրինակով) Երևան, 2002
23. Մխիթարյան Ա.Ս. Լիզինգայի ռիսկերի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում: Ատենախոսություն. տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2009, 124 էջ

4. Русская литература

1. Адамов Н.А., Тилов А.А. Лизинг. 2-е изд. Исправление и дополнение – СПБ, Питер, 2006, 160с.
2. Акобян (диссертация) "Управление лизинговыми операциями в Республике Армения в современных условиях ", Ереван, 2004, 159 с.
3. Аристотель Риторика. – М., 1984, 93 с.
4. Борисов Е. Экономическая теория. Юрист. – М., 1997, 420 с.
5. Бутанина Н.В. Лизинг в Великобритании/ Лизинг-ревю 2000, 2-3, 70-75 с.
6. Бочаров В. Инвестиции. – Питер. 2004, 282 с.
7. Газман В.Д. Лизинг теория, практика, комментарии. – М., 1997, 117 с.
8. Газман В.Д. Финансовый лизинг ГУ ВШЭ 2005, 392 с.
9. Герчикова И. Международное коммерческое дело. – М., 199, 383 с.
10. Горемыкин В.А. Лизинг. Изд. Дашковико, 2003, 994 с.

11. Горемыкин В.А. Лизинг. Практическое учебно-справочное пособие. – М., Инфра-М., 1997, 384 с.
12. Горемыкин В.А. Лизинг. Изд. Информцентр XXI века, 2006, 943 с.
13. Гуккав В.Б. Лизинг правовые основы, учет, налогообложение. – М., изд. Главбух, 2002, 144 с.
14. Грейсон Дж., Оделл К., Американский менеджмент на пороге XXI века – Экономик, 1999, 145 с.
15. Демин Ю.Н., Горемыкин В.А., Бочков В.Е. Экономика инвестиционных лизинговых процессов. – М.: МГИУ, 2003, 228 с.
16. Джуха В.М. лизинг, финанс – Ростов на Дону, 1999, 320 с.
17. Долан Дж, Линедеи Д. Рынок микроэкономическая модель. Пер. с англ. под общей ред. Б.Лисовика и В.Ликашевича – СПБ, 1992, 496 с.
18. Закон РФ “О лизинге” от 29.10.1998, N 64-ФЗ
19. Закон РФ “О финансовой аренде” от 29 октября 1998
20. Жарковская Е., Арендс И. Банковское дело – М., 2002, 240 с.
21. Каботова Е.В. Лизинг. Правовое регулирование, практика. – М.: Инфра.М, 1998, 204 с
22. Кавынев С.Л. Лизинговые сделки//Рекомендации по избежанию ошибок. 2-ое изд. Вершина – М., 2008, 182 с.
23. Кавынев С.Л. Лизинговые сделки//Рекомендации по избежанию ошибок. 2-ое изд. Вершина – М., 2008, 182 с.
24. Карасова Т.А. Основы лизинга. – Ростов на Дону, Феникс, 2003, 224с.
25. Карп М., Махмутов Р., Шабамен Е.Ф. Финансовый лизинг на предприятии – М.: Финансы и статистика ЮНИТИ, 1998, 260с.
26. Киркорова А.Х. Управление финансами лизинговой компании – М., Изд. “Алфа-пресс”, 2006, 164 с.
27. Кисурина Л.Г. Лизинг: Налоговые, бухгалтерские и правовые аспекты, 2-ое изд. – М.: “Экономико-правовой Бюллетень”, 2007, 192 с.
28. Комаров В.В. Инвестиции и лизинг в СНГ – М.: Финансы и статистика, 2001, 327 с.
29. Комментарии к федеральному закону “О финансовой аренде”.
30. Коршунов Н.М. Лизинг экономические и правовые основы. – М. 2004
31. Красавина Л. Международные валютно-кредитные и финансовые отношения. – М., 2000, 274 с.

32. Красова Т.А. Основы лизинга. – Ростов на Дону, Феникс, 2003, 224с.
33. Лаврушина О. Банковское дело. – М., 2000.
34. Лаврушина О. Банковское дело. – М., 2005, 617 с.
35. Лапыгин Ю.Н., Сокольских Е.Б. Лизинг. – М., 2005, 277с.
36. Лещенка М.И. Основы лизинга. – М.: Финансы и статистика, 2001, 224 с.
37. Лизинг в России в 2000 г// Вестник Российской ассоциации лизинговых компаний. Технологии лизинга и инвестиций. 2001, с. 1-8.
38. Лизинг, экономические и правовые основы. 3-изд. – М.: ЮНИТИ-Дана, 2004, 320с.
39. Ломакин В. мировая экономика. – М.: Финансы. ЮНИТИ, 1998, 727 с.
40. Лукин Е.В. Лизинг: Бухгалтерский учет и налогообложение. 2005, 116 с
41. Лизинг, Ревю Газман В. «Сколько лет российскому лизингу». 2004, М., N 5
42. Распоряжение премьера Правительства от 13 мая 1996 г. N 442-РП «О привлечении средств банков для финансирования лизинга».
43. Ренкинг кредитных организаций Армений. 31.12.2009 N 23. 01.02.2010. Информационное Агенство Арм Инфо.
44. Макесва В.Г. Лизинг. – М.: Инфра- М., 2003 192 с.
45. Малышев А. Мировой рынок услуг по лизингу оборудования// Основные средства. N 7, 2003.
46. Маренков Н. Упрваление инвестициями российского предпринемательства. Учебное пособие. 2001.
47. Осипова Л., Синяева Л. Основы коммерческой деятельности. – М. 1997, с.259
48. Прилуцкий Л.Н. Лизинг: правовые основы лизинговой деятельности в РФ. – М., 1996, 281 с.
49. Прилуцкий Л.Н. Финансовый лизинг. – М., 1997, с.67-72.
50. Райзберг Б., Лозовский Л., Стародубцева Е. Современный экономический словарь. – М., 2001, 336с.
51. Рынок капитала в Армении, август, 2002, 32 с.
52. Серегин В., Халевинская Е. Организация, учет и налогообложение лизинговых организаций. – М.: Юрист, 2001, 282 с.
53. Сидельников Л.Б., Назарян Е.Н., Чесноков А.С. Бухгалтерский учет лизинговых операций/ Учебное пособие. – М., 2001, 291 с.
54. Синяев И., Осипова Л. Основы коммерческой деятельности. – М., 1997, 260с.
55. Стровский Л. Внешэкономическая деятельность предприятия. – М., 1999, 661с.

56. Табасиев А.м. Лизинг: экономические, правовые и организационные основы. 3-е, 2005, 320 с.
57. Трушкевич Е.У., Трушкевич С.В. Лизинг. – Минск, Амалфея, 2001, 224 с.
58. Фаминский И.П. Международные экономические отношения. – М., 2004, 739 с.
59. Францева Е.Ф. Лизинг. Справочное пособие. – М., 1998
60. Харитонова Ю. Договор лизинга – М.: Юрайм М., 2005, 224 с.
61. Хойер В. как делать бизнес е Европе – М., 1990, 290 с.
62. Циринщиков В.С., Антюшина Н.М. Лизинг в Западной Европе. Выводы для России. М.: Доклад-Институт Европы, 1999, 73 с.
63. Чекмарев Е.Н. Лизинговый бизнес. Парктическое пособие – М., 1994, 184 с.
64. Шариков Ф. Сосотояние и перспективы развития крестьянских (фермерских) хозяйств.
65. Шариков Ф., Исламиев Р. Эконимика с/х и перерабатывающих предприятий. 1997, с. 23-25.

5. Արտասահմանյան գրականություն և ինտերնետային կայքեր

1. AGBA-CREDIT AGRICOLE BANK Annual Report, 2010
2. World lessons: View from the top Asset Finance and leasing digest N22 Sept.1999
3. Tom Dark Leasing Finance- London Euromney Books, 1990
4. Collins Словарь по Экономике, Санкт-Петербург, 1998, 289 с.
5. European leasing, a joint leascrope and KPMG publication, 2008, p 7-8
6. www.zaexpert.ru /leasing (конференция: Лизинг в России высокие темпы роста)
7. www.ist-leasing.co uk/howitworks Leasing Asset Finance online
8. www.imorentcr (glossary)
9. www.leasing.ru (Лизинг за рубежом)
10. www.setcom.com (Лизинг в цифрах и фактах)
11. http/www.nootage.com/lease Glossary
12. http//acbaleasing.am
13. www.minargo.am